


4903-490f

297
X-81

2010

Ms. 917
p. 2



297

Q-81

ur

Արքային

200

Ի Մ Ա Մ Ա Թ

ՊԱՏՐԿԵՆ ՀԵՏԶՈՑՈՒԹԻՒՆ

2001

Տպարան „ՇԻՐԱԿԻ Արևմտագրախուզութեան”

1906
(36)



9743




1874
39

100

и.

ՀԱՅՈՒԹԵՐՆ



ՀԱՆՆԻՃԻՆ

Արտադրության համարաբերից

Թէ կատաներկու դար հայերս ապրել ենք ովաս պարսիկների հետ, նրանց զբացի կամ իշխանութեան տակ, չըփւել ենք այդ ժողովրդի հետ, առարել ենք նրանց հետ անթիւ շար ու բարի, բայց ոչ միայն մինչև օրս մենք հիմնովին շենք ծանօթացել այդ զբացիների կրօնական հայեացների հետ, չենք ըմբանել նրանց գաւանական վարդապետութիւնը, չենք ունեցել մի ամփոփ զբածք նրանց կրօնի էական կէտերի և աշխարհայեցութեան մասին, մեր ինպելիդէնտ դասը շատ թիւր կարծիք ունի Խոլամի այս աղանդի վրա, այլ տասնըվեց դարի մեր զբականութեան մէջ էլ որեէ որոշ գործ չունենք սրանց վերաբերեալ: Որպէսզի կարողանամ բացարել, թէ ինչ ոյժ ունի շիտ կղերը, որ կարողանում է ներգործութիւն ունենալ Խրանի ոչ միայն ներքին գործերի, այլ մինչև անգամ արտաքին քաղաքականութեան վրա, հարկ անսա սոյն յօդւածովս ծանօթացնել հայրենակիցներիս շիակերի կազմի և գաւանանքի հետ:

1. Խոլամի վարդապետի-Մահմէջի մահից յետո, յայտնի է, որ նրա հետևողները արաբական սովորութիւնների համեմատ հաւաքիցան և Զուրանի որոշ այաթի, հանգուցեալի տւած աւանդութեան համաձայն իրանց Մարգարէին յաջորդ (լսալիք) և համակրօն համայնքի առաջնորդ (իմամ) ընտրե-

ցին կրօնի հիմնադրի տներոջը՝ Աբուրեքրին, որ մեծ չափ
էր զործ դրել Խոլամի տարածման և հասատման զործին:
Այս ընթարութիւնը բարոքեց մարգարէի հօրեղոր որդուն և
սիրելի զատեր Փաթիմէի ամուսին Ալիին, որը միայն իր ան-
ձըն էր համարում օրէնսդրին արժանաւոր յաջորդ և հաւա-
տացեալներին օրինական առաջնորդ: Թէի անշափ վշացաւ
այս ընտրութիւնով, բայց շյանդզնեցաւ տմբուխ կամքին
հակառակել, լուից, հրապարակով հպատակւց և համակեր-
պել ձաւցուց, յուսալով որ ծերունի Աբուրեքրից յետո, իրեն
կյաջողութ առաջնորդի (իմամ) գաւաղանը ժառանգել: Աբու-
րեքրից յետո հաւատացեալների ծերակրյալը, համաձայն հան-
գուցեալի օրոշման՝ յաջնորդ (խալիֆ) հրատարակեց Էօմէրին,
որով բոլորսկին բորբոքւց Ալին: Մարգարէի փեսան անձա-
րացած, ոչ միայն հպատակւեց Էօմէրին, այլ որան կնութեան
տւեց իր աղջկան՝ Եւմմի-Քիլսիւնին, խողհրդական գարձաւ
նրա ժողովներում: Բայց սրախ վրա կուտակւած դառնութիւ-
նը չկարողանալով տանել, մտերիմների և կուսակիցների շր-
ջանում սկսեց քարոզել, թէ համաձայն Ղուրանի և արիմակ-
ցի՝ մարգարէի կամքին, ինքն է ժողովրդի առաջնորդը և
Նոր-գրքի բացատրազը: («Մէն Քունքու մովլա, լահազա Ալի-
ուն մովլան»).—Արոնց համար որ ես սիրելի եմ, նրանց հա-
մար Ալին էլ պիտի սիրելի դասնա): Ալին պնդում էր, որ
ժողովուրդը իրաւունք չունի խալիֆ ընտրելու, քանի որ ին-
քը երկնքից սահմանւած է կրօնը և գիրքը հաւատացեալնե-
րին բացատրելու: Ղուրանի անորոշ և խրթին այաթների բա-
ցաւուրինը նախասահմանութիւնից Ալիին յատկացած լի-
նելը զաւանում էին վերջինիս կուսակիցները: Էօմէրը, որ
զեռ Մահմէդի կենդանութեան, որպէս անձնէր ախոցեան
եսլամի վարդապետութեան, կաշկանդեց Մարգարէին,—երբ

վերջինս մտհամնը եղէզը պահանջեց կտակ գրելու, արգե-
լեց ասկիլով:—«Ալլահի գիրքը բաւական է—երջինա քիթար-
ուլլահ», կարսդ է հակառական բան գրել՝ ուշքը կորցրած
է, —չկարսղացաւ սահնձել այս գաղտապողի վարդապետութիւ-
նը տարածողներին, որոնք Ալիին մեկնիչ (ժիրէյին) Ղուրանի էին
հաշակում: Ալին ոչ միայն գաղտապողի խրախուսում էր կուսա-
կիցներին այս վարդապետութիւնը՝ տաբածելու, այլ նրանց
էլ աւելի ողերում էր իր տւած մեկնութիւններով: Մի ան-
գամ երբ Ալիից հարցրին, թէ «Այաթի-Քիլսիւն» բնչ միծ
նշան է, որ մի լոպէում Մահմէդը Մէդինէից հասաւ երուսա-
ղէմի տաճարը, երկինք համբարձաւ ու դարձաւ, նա պատաս-
խանեց, թէ —«Ալլահը ինձնից մեծագոյն համբաւարար չկա» (Մա-
լլիլահի համար ինձնից մեծագոյն համբաւարար չկա): (Մա-
լլիլահի այաթիւն աքքերէ, վէ մա լիլահի նէրէյուն ահազամէ
մինի): Էօմէրի խօսքերը—զիրքը բաւական է—այնքան չէր
բաղխւում Խոլամի գաւանողների ականջին, որքան տարած-
ւում էր Ալիականների շրջանում ականջից ականջ վերջինի
պատղամը, —«Էնա-Ֆելամ-ուլլահի Լենարիկ»—(Յս Աստուծո
կենդանի խօսքն եմ):

2. Զբաղաշտի կրօնի վարդապետութեան դարեօր աշա-
կերտածների համար գժւար էր հպատակւել ժսղովրդից ըն-
արւած սոսկ մահկանացու առաջնորդին: Քաղզէաստանի, Բա-
րէլաստանի, Սուզանիայի, Փարսատանի ժողովուրդը, որ միայն
անմաններից շառաւիլած գերբնական իշխանապետներ և
առաջնորդներ էր սրոնում իր արքունի վառապահծ գահի
վրա, չէր կարսդ երկրպագել Էօմէրի նման սակաւապետ ու
պարզանէր խալիֆին, որը գիշերում էր Կամասկոսի մզկիթի բա-
կում, աղքատ ծածկոյթով, սառը սալայտակի վրա, և արգե-
լում էր Խոլամի հետեւղներին բէհէզն ու ծիբանին, զիպակն

ու թաւիշը։ Փարսիստանի քուբմերը, արեւաշատ մողերը իրանց հետևողներով միացան Ալիխն, որպէս Գերբնականից նախառահմանաւած քարոզիչի շառաւելիդին։ Սրանց համոզումով մահկանացու և սփառական մարգը անկարող էր աղգեր կառավարել, օրէնքներ գնել և կարգեր սահմանել։ Պէտք էր Ալիխ նման Աստւածներից սերւած դիւցազն, որին ժողովուրդը պարտաւորէր անպայման խոնարհել և երկրպագեր։ Արեւելիցին չէր կարսղ հաշտւել Խոլամի այն յայտնութեան հետ, թէ ժողովուրդն է իրեն առաջնորդ ընտրելու և այդ ընտրեալը պարտաւոր է ժողովարդի խորհրդով կառավարելու պետութիւնը։ Արեւելքցիների հետ ունեցած շփումներից յետո, Ալիխ աւելի առաջ գնաց իր պահանջների մէջ և յայտարարեց, որ ինքն էլ Գերազոյնի հետ յարաբերութեան մեջ է, Անտեսանելին տէսնելու եւ անյայտը նկատելու ժնորհին ունի։ Թէկ Ալիխն շյայտարարեց իր անձը նոր մարգարէ, նոր յայտնութիւն, այլ սոսկ օրէնսդրքի պարզաբանող առաջնորդի (իմամ) իրաւունքն էր պահանջում, բայց նրա հետևողները երկրպագեցին և մինչև անգամ «Ալիխ-Ալլահ» կանչեցին։ Խոլամի վարդապետութիւնը այնքան թարմ էր, Մահմէդի հետ զրոյց անողները այնքան բաղմաթիւ էին, մարգարէի խոռքերը այնպէս տարածւած և հաստատւած էր ամբոխի սըրտում, հաւատի էական մասերը այնպէս իւրացրած էին հաւատացեալները, որ Ալիխ շհանդուրժեց և իրան Ալլահ անւանողներին դիմատել տւեց։ Ճիա աստւածաբանները և առապելները հաւատացնում են, որ կտրւած դլուխների լեզուներն անդամ—«Ալի-Ալլահ»-էին աղաղակում մինչև սաւչիլը։

3. Էօմէրի մահից յետո, Խոլամ հաւատացեալների ժողովը Ալիխ պահանջեց, որ խօսք տա սոսկ խալիֆ լինել, հետեւ նախորդ երկու խալիֆի ընթացքին և ղեկավարւել Զու-

րանով։ Բայց նա յամառած կրկնեց.—Ո՛չ, իս էլ որոշումն ունիմ» (Վէլիէ-ըէյսէն)։ Ալին դարձեալ չընտրւեց մի միայն այս պահանջի համար և ժողովը Օսմանին յանձնեց Խոլամի տիրած երկիրների վարչութիւնը։ Ալին այլիս չկարսպանալով համրերել, սկսեց ընտրեալ խալիֆին՝ Օսմանին տապալելու հարքներ որոնել։

Եյդ օրերը Արութէրսի որդուն՝ Մէհմէդին Օսմանը մի յանձնարարականով ուղարկեց Գամասկ այնտեղի ոստիկան Մոււլիկի մօտ։ Այս Մէհմէդի և Օսմանի յարաբերութիւնը լարւած լինելով, վերջինս ճանապարհին բացեց յանձնարարականը և կարդաց, որ խալիֆը հրամայել էր ոստիկանին նրան Դամասկ համնելու պէս սպանել։ Ուստի Մէհմէդը ճանապարհից ետ դարձաւ, բողոքեց, մհծ ազմուկ բարձրացրեց և վրէժը լուծեց՝ Օսմանին սպանելով։ Այս խոսվութեան ժամանակ Ալիխն խալիֆ ընտրեցին, որի հետեւողները պատռեցին իրանց քօղը, հրապարակով պահանջեցին, որ իրանց կառավարել, հրամայել, դատել, դատապարտել և առաջնորդել կարող է մի միայն հրածին մարգարէի շառաւելից սերւած օրինական ժառանգը։ Ալիխ Մէդինէից գնաց Քիւֆէ (Հին-Բարէլոնի մօտ, ներկայումս աւերակ քաղաք), սկսեց պատկաներ արձակել, ոստիկաններին փոփոխել և պաշտիլ իրան «միւրիդ» (անձնւէր) Պարսիկներից և արեւելքցիներից։ Որովհետեւ Օսմանին սպանող Մէհմէդին Ամիր-իւլ-միւմինինը (հաւատացեալների ամիրապետ—Ալիխ) դատաստանի շմատնեց, մարգարէի կինը Այիշն Ալիխն Օսմանի սպանութեան դաւակից հրատարակելով, ժողովրդից պահանջեց հետանալ օրինադանց Ամիր-իւլ-Միւմինից։ Այս ժամանակ Ալիխ էլ Գամասկի ոստիկան՝ Մոււլիկին պաշտօնանկ անելով և նոր կառավարից նշանակելով, նրան բորբոքած էր իր դէմ։ վերջինս

Ել միանալով Այլշէլին, հինգ տարի շաբանակ նկարին կախ շաբունակեց իր հակառակորդ Ալիի դէմ: Խոլամի հետեւզները պարտաւորեցան առժամանակ դադարեցնել իրանց աշխարհակալութիւնները, աւարառութիւնները և սրածութիւնները, ձեռնամուխ եղան ներքին երկպառակչական, առանին պատերազմներին և զարհութելի արիւնահեղութիւնների: Այս պատերազմներից խոլամները այնչափ ճնշեցան, զգեցան պառակտումներից, որ մի քանի ժողովրդասէր մարդիկ ու տեսցին և որոշեցին մի օրւա ընթացում տեսորի ենթարկել Ալիին, Մուտավիլին և Եգիպտոսի ոստիկան Էմրասին, որպէսզի հաւատացեալներին աղատին դարհութելի արիւնահեղութիւններից: Բայց բազզը Մուտավիլին տղատեց տեսորի ճանկից, որոշւած օրը մղկիթ շգնալու պատճառով, որը, Ալիի մահից յետո, տիրեց խալիքական գահը և Դամասկից սկսեց կառավարել իսլամ ոչխարհը:

4. Ալիի մահով վերածնեց իմամութը (առաջնորդութիւն), քանի որ նու իւր կենդանութեանը՝ յատուկ յայտնութիւնով—հաղիսով իմամական Գաւազանի յաջորդ, խոլամին առաջնորդ նշանակել էր իւր որդուն՝ Հասանին, որը այդ ժամանակ առ քում էր Մէջինէում: Ալիի մահից յետո, Մուտավիլն նենդութիւններով կաշառեց և գրաւեց Հասանին շրջապատող գորքերին և զօրականներին, որոնք հետզհետէ Արտիայից Սուրխա փոխադրուեցան: Եթի Հասանին զինուռափական ոյժից զրկեց, Մուտավիլն իր լիազօրների ձեռքով այնպէս նեղը գըրեց մարդարէի թոռին, որ նրանից հպատակութիւն էլ կորդեց: Բայց և այնպէս, արենիքցիների համար Գուրանի իւրաքանչիւր բառի հօթանասունը երկու նշանակութիւնը ով կարսող էր իմանալ և բացատրել, իթէ ոչ Ալիի և Մահմէզի սիրելի դստեր Փաթիմէլից շառաւիզած Հասանը: Ամբողջ Մի-

ջագետքի, Մուզանիայի, Պարսկաստանի և Մարաստանի հայկացքը ուղղւած էր այս շաստիպի կողմը: Նրան էր ընդունում մարգարէի տահմի ժառանգ, հաւատացեալների ամիբապետի յաջորդ: Մուտավիլի նման քաղաքագէտ մարդը, որ շատ կարճ միջոցում կարողացել էր ձեռք բերել խալիքական գաւաղանը, չէր կարող չնկատել Հասանի կուսակիցների կողմց իր գահին սպառնացող վասնպը: Թէկ Հասանը այնքան թոյլ մարդ էր, որ երբէք դէնք չէր կարող բարձրացրել Մուտավիլի դէմ, բայց վերջինս իր որդու յաջորդութիւնը բոլորովին ապահովելու համար, պատգամաւորներ ուղարկեց գաղանապէս Հասանի կնոջ մօտ և խոստացաւ նորան, իր որդուն Եղիզին կիութեան առնել, իթէ համաձայնի թիւնաւորել Հասանին: Խարբեցաւ խեղճ կինը, Հասանին աղուեց, բայց Եղիզին կընանալու էլ շարժանացաւ՝ դաւաճանութեան համար:

5. Հասանը մհունելու պէս, Փաթիմէի երկրորդ սրդուն չիւսէյնին իմամ ընդունեցին նրա հօր երկրպագուները: Հիւսէյնի կացութիւնը սոսկալի էր. Մէջքէ—Մէջինէյում նրան սպառնում էին. հալածում խալիֆ Եղիզի ոստիկանները, իսկ Քիւֆէցիք անվերջ նրան հրաւէր էին կարգում, որ գնա նրանց մօտ և հօր գահը բազմի: Մուտավիլն և ապա որա յաջորդ Եղիզը այնպէս կենդրոնացրին խոլամի իշխանութիւնը, այնպէս ժողովեցին կուսակալների և ոստիկանների սահնձրիանց մէջ, այնպիսի վարչութիւն ստեղծեցին, որ կամ թէ ակամա Ալիի երկրպագուները հեռացան նրա ժառանգից, կամ երկիւղից չէին կարսպանում հրապարակով նրան մօտենալ: Հիւսէյնի և նրա հարազանների գրութիւնը անտանելի էր. սրանց սպառնում էր թոյնը, կամ յանկարծական դաշտոյնը: Ամէն բովէ նա սպասում էր մի այղպիսի սոսկալի հարւածի: Եղիզի լրտեսները նրան հետեւում էին: Վերջապէս

զիջու չիւսէյնը, հախապատիւ համարեց քաջութեամբ մեռնել, ոչ թէ դաւաճանի ձեռքով սովանել: Նա իր ընաանիքով, հարազատներով, անձնէրներով—ընդամենը եօթանասունը հինգ մարդով՝ կտրեց արարական անապատներն ու լեռները, արևմուտքից դէպի արեելք, եկաւ, հասաւ Եփրատի (Հաթէլ—արարի,) ափոնքը: Մարդ ուղարկեց Քիւֆէ և իր զալուսար իմացըց: Մեծ ուրախութեամբ սկատամարերին ընդունեցին քիւֆէցիները և ահաւոր բաղմութիւն նրան տարաւ մզկիթ աղօթելու: Այս միջոցին Եղիդի ներկայացուցիշը՝ Իբնի Զեադը մունետիկ հանեց քաղաքի փողոցները և սպառնաց մահով պատժել այն բոլոր անձերին, որոնք կհետեւն չիւսէյնին և նրա լիազօրներին: Չիւսէյնի ներկայացուցիշը աղօթքը շաւարտած, քիւֆէցիները ահարեկւած, կիսատ թողին նամազը և դուրս եկան մզկիթից: Ներկայացուցիշը մենակ դուրս եկաւ մզկիթից և թօթը հասցըց իր տիրոջը: Սա այնքան քաջութիւն ունեցաւ, որ պատրաստւեց միայն իւրայիններով դիմադրել թշնամիններին: Դամասկոսից Եղիդի ուղարկած հրամանատարը՝ Էօմէր Իբնի Ստագը շհամարձակւեց մարդարէի արիւնից շաւաւերդւածի վրա ձեռք բարձրացնել, անցաւ իր գօրքով Սլիի ժառանգի կողմը, բայց քիւֆէցի Շիմրին անցաւ Եղիդի բանակի գլուխը, կոտորեց եօթանասունը երկուսին: Այնքան գաղանացաւ Շիմրին, որ կանանց ու երիխաններին անդամ շթողեց ջուր խմել և ծարաւները կոտրել անապատի սոսկալի ջերմութեան մէջ: Ճակատամարտում սոսկալի՝ բայց անհաւասար կուի մէջ ընկաւ հերոսաբար Չիւսէյնն էլ և իր արիւնով ներկելով «Քէրբէլան» (պատուհասի վայր), Շիաների վարդապետութեան գրօշը ծիրանացըց և պատակը բոլորեց: Եղիդը սովանել աւեց չիւսէյնին, բայց չկարողացաւ ընկճել չիտ վարդապետութիւնը, որն աւելի գօրք-

ցաւ շնորհիւ Քէրբէլայում կոտորւած մարտիբոսների: Քէրբէլայի անցքը ամէն տարի Մուհարէմի սկզբներին կատարելով Շիանները, նորանոր ոգեսրութեամբ ամրապնդւում են իրանց վարդապետութեամբ, անիծելով Եղիդն ու նրա նախորդ և յաջորդ խալիֆները, որոնք բռնութեամբ յափշտակեցին մարդարէի ժառանգներից նրանց հասանելի իշխանութիւնը՝ իմամաթը:

6. Չիւսէյնը արդէն կտակով իրան յաջորդ, շիաններին իմամ էր նշանակել իր սրդին Զէյնալ-Արդինը: Այս իմամը աշքի առաջ սւնենալով հօր և հօրեզրօր անցեալը, թէկ լսելիայն կառավարում էր չիտ աղանդաւորներին և նախորդներից մնացած հաւատաքիմ երկրպագուներին, բայց չկարողացաւ կեանքը փսկել խալիֆների հալածանքից, որոնք շինայիցին սրան էլ, թոյնով սպանել աւին իրանց մարդարէի այս ձետին էլ: Համաձայն Զէյնալ Արդինի կտակին, նրան յաջորդից սրդին՝ Բազրը, որը շիանների հինգերորդ իմամն է: Խոլամի քարոզչի մահից յետո, խալիֆների օբեկում մօտ չարս հարիւր հոգի մարդարէին աեմուղները և նրա զրոյցակիցները օրէնսդրից լսած առակները, առածնդութիւնները, հրամանները, պատէրները, որոշումները, վճիռները և կարգադրութիւնները գրեցին և իրար կցելով կազմեցին սիւննիների հալիֆսները (աւանդութիւն) կամ Սիւննան: Մարզարէի մահից հարիւր տարի յետո, այս բոլոր զրոյց աւանդութիւնները, Զուրանի հետ համեմատութեամբ, դառաւորեց և կարգի բերեց նշանաւոր խոլամ աստածաբան և յայտնի գիտնական Սարիթի սրդու նէմանի սրդին՝ Մէհմէզ Արու Հանիֆին, կազմեց մի գիրք, որն անւանեց «Թափագուհ» (ըմբռնում): Այս զրոյում սահմանւած է Խոլամ հաւատացեալի պարտականութիւնները և իրաւոնքը ամբողջապէս: Այդ գիրքը սովորաց-

նում է իսլամի հետհողին, թէ ինչպէս կատարելու է իր լացումը, ազօթքը, ծովագահութիւնը, ողոմութիւնը, ընտանեկան և զբացիական յարաբերութիւնները, առնտրական և այլ զաշնազբերը, դէպի հասարակութիւնը և պիտութիւնը ունեցած պարտաւորութիւնը, պատերազմի զնալը, աւարից սատնալիք մասը, հատուցանելիք տուրքը և հարկը, իսլամի ըայաների հետ (հպատակ) ունենալիք վարւեցողութիւնը, և իսլամի գոյութեան համար կատարելիք զոհողութիւնները։ Սրու. Համբակին այս վրքով ուզում էր ամէն մի միւսլիմանի ըմբոնել տալ իսլամի հաւատալիքը, զաւանակի էական կէտերը, պարագն ու իրաւունքը։ «Թափագուհ»-ն Սրու. Համբակի հոչակը անշափ տարածեց իսլամ աշխարհում, որ նրա համբաւը հասաւ Սմիրնապետի ավարանքից մինչեւ ամենայիտընկած պարտիզանի հիւրը։ Իմամ Բաղրը և որս մահից յիշու որդին Իմամ Զափէրը սիւննիների հաղիսները և Սրու. Համբակի գոյութիւնը, «Պայիֆ» (վախ) հոչակեցին։ Սրանք հետեւաշխատութիւն, «Պայիֆ» (վախ) հոչակեցին։ Սրանք հետեւալով իրանց նախորդներին պնդում էին, որ միայն զերազոյնի նետ յարաբերութեան մէջ գտնող եւ աներեւոյը տեսնող իմամները լիազօր են հաղիսներ զբելու, կարգեր սահմանելու, զուրանի այաժնիները և մարգարէի աւանդութները պօրգաբանելու, Եւ բացատրելու։ Հետեւարար Իմամ Բաղրը և ազգական սրբազնութիւնը հաղիսների հատուրութիւնը, որոնք չորս անդամ աւելի ճոխ են սիւննիների և Սրու. Համբակի գոյութիւնը, որոնք չուարաբուր շիաներ մի տեղ զըտնուած ժամանակ, նրանց մէջ մի սիւննի յալտնիք, պարաւոր էին իրանց գոյութիւններին, կեանեերը վանդակ չենթակելու համար։ Այսպէսով շիա վարգագիտութիւնը խալիֆութեան հզօր գարերում արծոծուում և տալածուում էր զաղանարար, ինչպէս իրանց գոյութիւնը նիրկայում պահպանում են սաւարօվեցիները և ուրիշ աղանդաւորները Խուսաւանում։ Բէնի Սրբաօի խալիֆները Բաղգագում իրանց փառքի գարգաթին հասած շրջանում, չարուն-Էլ-Բաշիզը, որպէսզի կարաղանա իր

իր նախորդներին հետեւելով, իրան յաջորդ հրատարակեց իր անդրանիկ սրդին համայիլը, քայց որովհետեւ սա անձնատուր եղաւ հարբեցութեան, չպահպանեց Դուրանի պատւիրանները, մարգարէի աւանդութիւնները և նախորդ իմամների դիբքը, հայրը պարտաւորւած մի երկրորդ յայտնութիւն սաւացաւ զերազոյն երկնքից, որով հեռացրեց իմամի յաջորդական րազմոցից համայիլին, նրա տեղը նշանակեւավ Մուսաչին։ Այս Ալահատուր պատգամի վափոխութիւնը թէկ մեծ պառակտում ձգեց շիաների մէջ, (այդ մասին «աղանդաւորների» մէջ խօսելու ենք) բայց մեծամասնութիւնը խոնարհեցաւ Երկեքի նետ յարաբերութեան մէջ գտնող իմամի կամքի առաջ և հետեւց Խուսայիլն։ Չիաները այնպէս ցրել և իմամներին հետեւալու խալիֆները սարսափներից այնպէս ծածկում, ուրանում էին իրանց նեղքին համոզումները և զաւանանքը, որ Գամասիկի Օմմէկան խալիֆների չնշտիլուց յետո, Բէնի-Սրբաօի (Սրբասեան) խալիֆները Բաղգագում թագաւորած շրջանում մուսացել էին անգամ սրանց գոյութիւնը։ Իմամ Բաղր և իմամ Զափէրը թէկ սիւննի իւլէմների զիրքերի հակառակ շատ ծէսերը փափոխել էին, բայց խստիւ պատւիրել էին իրանց աշակերազներին, որ եթէ հաղարաւոր շիաներ մի տեղ զըտնուած ժամանակ, նրանց մէջ մի սիւննի յալտնիք, պարաւոր էին իրանց ծէսերը և կարգերը բալորովին ծածկել և հետեւ սիւննի սովորութիւններին, կեանեերը վանդակ չենթակելու համար։ Այսպէսով շիա վարգագիտութիւնը խալիֆութեան հզօր գարերում արծոծուում և տալածուում էր զաղանարար, ինչպէս իրանց գոյութիւնը նիրկայում պահպանում են սաւարօվեցիները և ուրիշ աղանդաւորները Խուսաւանում։ Բէնի Սրբաօի խալիֆները Բաղգագում իրանց փառքի գարգաթին հասած շրջանում, չարուն-Էլ-Բաշիզը, որպէսզի կարաղանա իր


վրա բարգւած անաստածի և անկրօնի կասկածները փարութել, յիշեց իր պապերի, պապի եղբօր ժառանգների զոյսւթիւնը, փնտուել տւեց Մահմէդի դստեր՝ Փաթիմէից և Ալիից սերւած Խմամ Մուսային, հրաւիրեց աբքունիք և պահում էր անշափ պատուվ ու յարգանքով։ Խմամ Մուսան միշտ բազմած էր Հարուն-Էլ Ռաշիդի աջ կողմը, թէ խորհուրդների ժամանակ և թէ խնճոյքներում։ Խոլամի իշխանութեան այս վեհապանծ տէրը միշտ կրկնում էր Մուսային, թէ նա արդեօր որեէ ցանկութիւն կամ պահանջ չունի, իսկ իմամից շարունակ բացառական պատասխան էր ստանում։ Հաւատացեալների ամիրապետը (Ալիի տիտղոսը իւրացըել էին Բինի Սրբասի խալիֆները, որպէս խմամ և յաջորդ մարգարէի) մի օր դւարթ ժամում նորից կրկնեց իր սովորական առաջարկը և թափանձագին Մուսայից պատասխան ուզեց։ Խմամը դիջանելով ամիրապետի ստիպմունքից խնդրեց, որ իրան վերադարձնեն Փաղագ կոչւած այն արմաւենիների այգին Մէջինէի մօտ, որը Մուհամմէդից ժառանգութիւնն էր մնացել նրա դստեր՝ Փաթիմէին։ Այս այդին Մարգարէինն էր, որի մահից յետո էօմէրը գրաւեց որպէս «Բէյթ-իւլ-Մալ» (հասարակական սեփականութիւն)։ Փաթիմէն շատ բողոքեց էօմէրի որոշման դէմ, բայց խալիֆը անդրգւելի մնաց, չլսեց բողոքը, առարկելով որ Մարգարէի ամրող գոյքը պատկանում է հասարակական գանձին, ոչ թէ ժառանգներին։ Խմամ Մուսան խորհրդաւոր մտքով էր պահանջում այս այգին։ Հարուն-Էլ-Ռաշիդը, չմրոնելով Փաթիմէի ժառանգի նպատակը, ծիծաղեց և Փաղագի փոխարէն առաջարկեց Բաղդադի այգիներից ամենաշանտարը կամ Մուսայի սրտի ուզածը։ Ճիւների խմամը մերժեց խալիֆի առաջարկը՝ յամառելով իր պահանջի վրա։ Հաւատացեալների ամիրապետը թուղթ ու գրից ներկայացնե-



ՖԱԺԼԻ ՈՒԵՐԻՆԻ

լով Մուսային առաջարկեց, որ այդ Փագագ այդիի տեղը և սահմանները որոշէ, որպէսզի հրաման արձակէ Մէղինէի կառավարչին անմիջապէս այդին ժառանգներին յանձնելու: Մուսան այդիի սահմանները գրեց, արեւլքից՝ ենդոս գետը, արևմուտքից՝ էրրօ գետը (Սպանիայում), չիւսիսից Կովկասի և Պիւսինեան լեռները, և չարաւից Կարմիր ծովն ու Հնդկական Ավկիանոսը: Հարուն Էլ-Բաշիղը զգալով որ իւր գաճն է պահանջում Մուսան, նրան թունաւորել աւեց:

8. Հարուն Էլ-Բաշիղը սրգին Մամուն-Էլ-Բաշիղը աւելի փառքով և աւելի պատւով էր պահում իր արքունիքում՝ Խորասանում Մուսայի որդուն՝ հմամ Բզային. Ծզատամիտ Էլ-Մամունը այնպէս էր զբաւած, որ Բզային գաճին ժառանդ էր հրատարակել, հեռացնելով իր զաւակները: Էլ-Մամունը հաւատացած էր, որ հսկամի պետի աթուր իսկապէս պատկանում էր Ալիի ժառանգներին և ոչ թէ իրանց՝ Բէնի-Արասիներին: Բայց երկրում ծագած և Էլ-Մամունի գէմ զբրդուած ամրոխի յարուցած խոռովոթեան առաջն առնելու համար, նրա Էլ կեանքին թոյնով վերջ աւին, թէն սիւննիները շնն խոստովանում: Բզայի որդուն՝ նազիի և նորա յաջորդ թագիին չիաները թունաւորած են համարում նոյն արքունիքի ինտրիկներավ: Տաօնը մէկերորդ իմամ՝ Հասան Ասքերին աշխարհից հեռացած, մեկուսացած ապրում էր Բաղդադի մօսերքը Սուլթէ-Մէրրա աւանում: Սրա կանաքն ամուլ էին: Հասան Ասքերի քոյրը՝ Հալիմէն նորանոր կոյսերի հետ Էր ամրուսացնում եղորը, ջանալով ժառանդ-յաջորդ ունենալու իմամի գաճին, բայց զուր, նպատակին չէր հասնում: Վերջապէս մի օր Հասան-Ասքերին աւեսեց քրօջը, թէ կինը յդի է և շուտով զաւակ կունենա: Քոյրը զննելով եղրօր կնոջը աւետած յօյը՝ շնաւատաց: Մի քանի ժամանակից յիտո, երբ



Հալիմէն կրկին եղրօրն այցի էր եկել, հմամը նորան արգիլից, հաւատացնելով որ այդ իրիկուն ծնելու էր ժառանգը: Թերահաւատ քոյրը կրկին քննելով հարսի կողերը, զգում է եղրօր յուսախարութիւնը, բայց վերջինո նորան համոզում է սպասել և տեսնել: Գիշերը անցնելուց յետո, լուսադէմին պայծառ լոյսով ծածկում է Հասան-Ապէրի տունը և նրա կինը ծնում է տղա, որին անւանում են Մէհթի: Քոյրը տարակուսելով նախընթաց գիշերը կատարած քննութեան վրա, նորից զնում է տղոցկանին և դառնալով եղրօրը պնդում է, որ երբէք իր հարսից չի ծնել այդ զաւակը:

—Սխալ ես, պատասխանում է հմամը, նա է ծնել, բայց ոչ արգանգից, այլ ազգըց, ծնից...

Այս հանելուկից բան շհասկանալով քոյրը, վերսառնում է տուն: Մի ամիս յետո, կրկին եղրօրը այցելելիս, նկատելով գաւթում խաղացող մի երեխա, հարցնում է, թէ—ումն է այդ տղան:

—Ժառանգի է, նա է, պատասխանում է հմամը, առշեցնելով քրոջը:

Սրանից յետո, Հասան-Ապէրին իր ընտանիքով ամարանոց է զնում երեք ամսով: Վերագրածին երբ քոյրը «բարեկարի» է զնում և տեսնում է տանը մի դեռահաս պատանի, հարցնում է եղրօրից, թէ—ով է այդ ջիւանը, երեսը ծածկելով:

—Ինչի՞ ես ծածկում, քայրիկ, տսում է հմամը, չես ճանաշում, նա է, մեր ժառանգը, որդիս:

Այս պատմութիւնը աւանդել է քոյրը՝ Հալիմէն շիա կղերին, Հասան-Ապէրի մահից յետո: Համաձայն շիա աստւածարան պատմիչների խօսքին, Հասան-Ապէրին մեռել է 28 տարւան և այդ ժամանակ Մէհթին միայն վեց տարւան էր:

9. Մէհթին, հօր մահւանից յետո չորս հինգ տարի երեցաւ իւրայիններին: Օտարները պատմում են, որ նրան էլ սպանել տւին, հորը զցեցին, կամ թունաւորեցին խալիֆի գործականները: Բայց միրեւերի (չէրիական—ուղղափառ) կամ խոկապէս Խանա աշարի (տասներկու իմամներին Ելիթ շառաւիղներին հաւատացողները) շիաները հաւատում ե դաւանում են, որ այս անձնաւորութիւնը ջուրանում իրանց խոստացւած Մէհթին էր որը իր կեանք ամիրապեաների հալած անքից փրկելու համար, Յաղղատի մօտելքը, Քեաղիմէյնից հիւսիս Սուլըրէ Մէրրա կալւածքում փակւեց 73 տարի, որը կոչւում է Պիյաբէրի սուլքա (փոքր աներեւոյթացում): Այդ եօթանասունը երեք տարւա ընթացքում Մէհթին կառավարում էր իր շիա հօտը նախիններով (փոխանորդ օգնականներ): Տօրս հոգի իրար յաջորդեցին այդ ժամանակամիջոցում: Այս աներեւոյթացումը տարակուսաների տոիթ էր ժամանակին շիա հաւատացեալների համար, որոնց ցանցից շարունակաբար ուխտաւորներ էին գալիս, իրանց իմամին ահագին նույնութիւնով և թէև իրիս փափագում էին անձամբ տեսնել, ցաւերը բացատրել, սրոշուն ու վճիռը ստանամ է ամսով և ամսով առաջնորդիչներով, իրը իմամի հըրամանով ոչ սքի չէին թողնում անձամբ ներկայանալու:

Համաձայն իմամ Յաղըրի և Զափէրի տւած որոշումներին, մահկանացուները որքան որ առաջինի և արգարասէր լինէին, կարող էին դարձեալ մոլորւել, սխալւել, ինչպէս մոլորւած էին և սխալւած սիւննի ամենանշանաւոր իւլէմանները՝ Յրուչանիֆին և ուրիշները: Շիա իմամների Խոթիֆթանների համաձայն՝ մահկանացուն շի կարող արգար և ճշմարիտ վճիռ կայացնել, քանի որ ամենազիտուն մարդն էլ թէև համաձայն չէրիաթի, բայց դարձեալ իր խելքով, դատաղութեամբ է եղ-

բակացութեան հասնելու, որոշամներ ու վճիռներ արձակելու, ուստի կարող է և սխալւել։ Այս հիման վրա, ամէն մի ժամ իր խճճւած գործի արդար վճիռը իմամից պիտի ստանար, որ խիզը կարողանար կասկածանքներից փարասել, քանի որ մ/այն գերազոյնի հետ յարաբերութեան մէջ գտնւող և անյայտը նկատող իմամը չէր կարող սխալւել։

Եօթանասնամեա թափստի պատմութիւններից յուսահատւած, իմամի շրթունքից իրանց գործի վճիռը լսելու և խղճահարութիւնից ազատւելու փափազողները, իրանի խորքերից տնագին ընծանելով եկել հասել էին Սուրբէ-Մէրրա և ակեղայման ցանկանում էին տեսնել իրանց իմամի գէմքը և նրա շրթունքներից լսել նրա ձայնը և ցանկանալի հրամանները։ Երբ այս պատգամաւորները յամառած, ուզում էին բոնութեամբ մտնել իմամի թափստարանը, նախը զուրս եկաւ յայտնեց, թէ իմամը նրանց բանութիւնից զայրացած, թողեց Սուրբէ-Մէրրան, զնաց Ճաբուլզա և յանձնաբարից յայտաբարել այս նրա գրած պատգամը իր հետեւողներին։

«Նայեցէք այն մահկանացուի գէմքին, որ զիտնական է, որը կարող է կրքերը դապել, արգելածները չգործազրել, որն Սլահի սուրբ զբանվ պատւիրածներին հպատակուում է, աշխարհային ճոխութիւններից և վայելչութիւններից խոյս է տալիս, որովհետեւ նա իմ հոգուս բնակարանն է—«Զաննիշին»։

Այս պատգամը գրած էր կանանց գոյնով, երկաթաքարի լուծւածքով։

Այս աներեոյթանալը կոչւում է «Պէլաբէրի սուրբ» (մեծ աներեոյթացում), որը շարունակուում է մինչև օրս։ Համաձայն ուղղափառ շիաների իսնա աշարի (առանելիու իմամ ճանաչողների) վարդապետութեան՝ այս Մէհմին նա է, որի մասին ակնարկւած է Ղուրանում, թէ պիտի աշխարհ

դա, որ մարդիկ ապականութիւնից փրկէ և ամբողջ մարդկութիւնը գարձնելով հսկամի գէնին, մի հօտի և մի հովու վերածէ։ Սրա մէջ Կոտուծութեան անդրադարձումն են դաւանում, որը աշխարհ զալիս՝ պիտի բերէ իրան հետ Յիսուն, որպէս օքնական, որը չախչախիլու է ների գլուխը։

10. Մահեանից ազատուած այս վերջին իմամի գրաւոր պատգամի համաձայն, չիտ ժողովուրդը սպասելով նրա՝ Մէհմի վերադարձին, իր աղօթքը կատարում է վերոյիշեալ առաւելութիւնը ունեցող մի միջթէհիզի հետեւելով, որը քննում է նրա բոլոր դաշն ու դատաստանը, զրում է, վաւերացնում դաշնագիրը, կապալազիրը, կարածադիրը, ամուսնագիրը, ապահարզանի թռւղթը, ստանում է եկամուտի տառանորդը, աղքատի մասը, ժառանդրութեան երթորդական մասը, բաժնագիրը հաստատում է բոլոր կրօնական և քաղաքացիական զործերը։ Այս միջթէհիզը համարում է բացակա անմահ իմամ Մէհմի ակղապահը աշխարհի վրա, որը տիրելու է միւսլիման շիաների ամբողջ երկրին և հսկելու է համաձայն Ղուրանի և հաղիսների՝ չէրիաթի անպայման գործադրութեան վրա։ Միայն այսպիսի միջթէհիզի են հպատակւելու շիաները, միայն սա կարող է հրամայել ժողովուրդին, «Ճանազ» (կրօնական պատերազմի) զնալ, կամ կուել և մաքառի նոյն իսկ իրանց երկրում գտնելող բոնակաների, նկանց շահերի գէմ էլ։ Միջթէհիզը կարող է հրամայել, որ ժողովուրդը շհնազանդի շահերի, կամ թափաւորների կրօնի հակառակ տւած կարգերին ու օրէնքներին, շթողնէ զործադրել այդպիսի հրովարտակները և օրէնսդրութիւնները։ Ուստի իրանի շահերը—պետերը ժողովրդին հպատակեցնելու համար՝ պարտաւոր են միշտ սիրաշահել այս միջթէհիզներից ամենաշատ ժողովրդականացածներին, որոնք միլիհօնաւոր

հետեղներ ունին, որպէսզի իրանց իշխանութեան գէմ որոգայթներ չլարեն:

1890 թ./երբ նասրէդին շահը անգլիացիներին կապալով տւեց իրանում ծախունլիք ծխախոտը, Թաւրիզի միւշթէհիդ՝ Միրզա-Զաւադ ազան հրամայեց բոլոր վիճակներին՝ փշրել կալիօնները, չիքումները և գաղարել ծխելուց—անգլիացիների ձեռքից գնւելիք ծխախոտը հարամ—ապականած հրատարակելով: Միրզա Զաւագի որոշումը երբ հստափեց Միրզա-Ազա-Ջիբաղին, որ այն ժամանակ ամենաժողովրդական միւջթէհիդն էր Քէրրէլայում, ամբողջ իրանի կալիօնները փշրեցան մի օրւա մէջ և ծխախոտները թափեցան տղանոցները: Մինչեւ անգամ խանխաւանը՝ իրանի ծառալող—ազնւականութիւնը չյանդնեց ծխել, վախենալով իրանց ծառաների մատնութիւններից և ամբոխի զրգումից: Շահը նահանջեց, քանդեց անգլիացիներին տրւած դաշնակիրը և հազիւ խաղաղացրեց զրգուած տմբոխը:

Քայց ինչպէս իմանալ, թէ ո՞րն է այն կատարեալ իւլէման, որն ունի այն բոլոր առաւելութիւնները, որոնք թւել է անմահ իմամը՝ Զարուլգա գնալուց առաջ: Ընդհանքապէս Քիւֆէի մօտ Մէշէդի-Ալի նէջէֆ կոչւած վայրում և Քէրրէլայում են գտնում շխաների ամենաշանառոր կրօնականները:

Այդաեղ է դիմում շիա կղերը կատարելագործելու իր ուսումնասիրած հոլամի աստածաբանութիւնը և իրաւագիտութիւնը: Իմամ Մէհթիի մեծ թագստեան օրից մինչեւ այսօր շիիզմի նշանաւոր քարոզիչները, անձնւէր հետեղները, այդաեղ են դիմում և հստափում: Այդաեղ է դիմում ուխտիքի քիչ թէ շատ կարողութիւն ունեցող քաղաքացին ու զիւղացին, զրանց հետ ծանօթանում, այդ կղերի նիստն ու կացը, վարքն ու բարքը, հաւկացողութիւնն ու ընթացքը քննում

է շիա հաւատացեալը և դրանցից որ մէկի մօտ որ նկատում է կարենը առաւելութիւնները, նրան ընդունում է իրան միւջթէհիդ, նրա անձնաւորութիւնը դաւանում է անմահ իմամի հոգու բնակարան—«Ճաննիշին»:

Ջիա կրօնի հիմնական և էական օրէնքների համաձայն, իրանց առաջնորդը (իմամ) կամ դատաւորը սահմանում է նախախնամութիւնից, որին Ալահը անյայքը տեսնելու կարողութիւն է առլիս: Այսպէս էին դաւանում շիաները իրանց տասներկու իմամների օրով, այս է իմամ Բաղրի և իմամ Զափէրի տւած պատգամը: Սիւնիիների նման շիաները իրանց Զափէրի տւած պատգամը: Սիւնիիների նման շիաները իրանց Սիւնիիների նման շիանական և բարեպաշտ մարգկանց սիրտը իրան ընթարելու գիտական և բարեպաշտ մարգկանց սիրտը հատը ճշմարմնակարան, որպէսզի որանց միջոցով հոգէ իր հօտը ճշմարմնակարան և աշխաղալով՝ մինչեւ իր աշխաղի վերադառնալը: Ուստի շիաները իրանց կրօնապետ կամ գործերի վերահասուլինող (միւջթէհիդ) չեն նշանակում, չեն ընթրում, այլ այնպիսի հեղինակաւորներին, որոնց քայլերից և գործերից նկատելի է լինում երկնային շնորհը, կուրաբալ հետեւում և նւիրում են:

11. Քանի որ մարգիկ տարբեր հայեացք ունին, տարբեր համոզում ու զգացում, մինոյն անձնաւորութիւնը շի կարող ընդհանրութեան վրա համանման ներգործութիւն ունենալ: Մահաւանդ բարոյականութեան և առաքինութեան մասին պիտիկ անշափ տարբեր հայեացք ունին, շերիաթն ու համարգիկ անշափ տարբեր հայեացք ունին, պրովինցիան ամենագէտ պիտիկ անշափ առաջգական են: Ոլովհեակ ամենագէտ

իմամ Մէհթին յայտնապէս շի որոշել իմամի հոգու բնական անձնաւութիւնը, որպէսզի մրցման մղի առաքինիները, անշահանելիները, արդարասէրները, ժողովրդասէրները և զիտնականները, այլ թոյլ է տւել, որ շիաներն իրենք իրենց առողջ դատողութիւնով հետեւն նրան, որի մէջ կնկատեն կատարելութիւնը: Պէտք է նկատի առնել, որ շիական աստւածարանութեամբ, մարդու կամքը աղատ է ստեղծւած և թողնեած: մահկանացուն իւր դատողութեամբ է շարն ու բարին որսչելու և նրանց հետեւլու: նախասահմանաւթիւնից նրան չնորհւած ընդունակութեան և արժանաւորութեան համեմատ: Աւստի ամէն մի շիա-իսնաւաշարի միւլիման իւր հայեցքով այդպիսի կատարելատիպ իւլէմաններից մէկի վրա նկատելով, նրան է ընդունում Մէհթիի հոգու բնակարան, որը դանում է իւր միւջթէհիգը: Այս պատճառով Մէշէղ Ալիսում, Քէփրտլայում, Նէջէֆում, Խորասանի Մէշէղում, Թէհրան, Խսֆահան, Թաւրիզ և ուրիշ տեղներ հարիւրաւոր միւջթէհիդների կան, որոնք իրենց միւրիդների (անձնւէրների) համոզումով Մէհթիի հոգու բնակարաններն են, ախում են ժողովրդին, դատում են ազգաբնակութիւնը, պաշտպանում իսլամի շէրիաթը և կառավարում ազգարնակութիւնը: Այսոք է եղել Մէհթիի աներեւյթանալուց մինչեւ մեր օրերը:

Ամէն մի շիա գեռահաս զիտնական, որը իւր կանդիտասուրան դնում է ժողովրդի առաջ, որպէս պատրաստակամ նրա վարչութեան հսկածութիւնը յանձն առնելու, նա քարոզում է իւր տեսութիւնները, հրատարակում և ցրւում է բրոշիր, որպէս իւր զարգացման աստիճանը և բարյական տեսակերը, շէրիաթի բացատրութիւնը և ժողովրդի պարտականութիւնը ցոյց է տալիս հաւատացեալիներին: Իրանի և Թուրանի քաղաքների, աւանների և զիւղերի ախունդները (կրօնա-

կան—երէց) իրենց աղօթարան յաճախողներին հրապարակապէս կարգում և բացատրում են այդ բրոշիւրները, որի իւրաքանչիւր նոր միտքը, բառը, ոճը և դարձւածները ամիսների քննութեան նիւթ է մատակարարում: Արժանաւորները ժողովրդի հետարքբարութեան առարկա են զառնում երկար ժամնակ, իսկ թոյլերը ծաղրի են մատնւում: Բայց միայն տէօրիտով ոչ չի կարող միւջթէհիդ դառնալ: Երբ ժողովուրդը մի կանդիտատի աստւածաբանական, իրաւաբանական և բարյական զիտական բարձր ընդունակութիւնների հետ ծանօթանում է, ըմբանում է նրա քարոզած մաքերը և զրաւում է նրա հեղինակութիւնով, տասնեակ տարիներ քննութեան նիւթ է գարձնում այդպիսի զիտնականի վարչը: Մէհթիի պատզամի համաձայն միմիայն այնպիսի զիտնականի կողմը պիտի զարձնի ժողովուրդը իւր հայեցքը, որը «Կարող է զսպել իւր կրքերը, չկատարել արգիլածը, հայտակւել Ալյահի սուրբ կամքով պատիրածներին եւ խոյս տալ աժխարհային վայելչուրիւններից, նոխուրիւններից եւ ռույրուրիւններից»: Միւջթէհիդացուն ոչ միայն բարձր զիտնական պիտի լինի, ոչ միայն ծանօթ պիտի լինի Կուրսանի վարզապետութեան, իմամներից դրւած հագիսներին, այլ կեանքում այդ բոլորը զսրծագրով, բարյական, սակաւապետ, արդարասէր, անփառասէր, անշահասէր, անկաշառ և ժողովրդին նիւրւած մարդ պիտի լինի: Այս զարսում այսպիսի յատկութիւններով մարդ կասկածելի է գանել, բայց շիա կղերը անցեալ XIX դարում կարող է պարծենալ այդպիսի կղերականներով, որոնց առաջ թափում էր իւր գանձերը և երկրպագում: Ըէլի Մուրթուզա Ըլին արժանացած էր երկրպագութեան իւր անպատմելի բարեգործութիւնների, առաջենութիւնների և անշահասիրութիւնների համար: Նրա ուղերի տակ թափւած

միլիոնները ետ էին զառնում շիա ժողովրդի ամենաթշւառների տառնը և դադարեցնում արտասունքները: Միլիոն-Ազագիրագին, որ սրանից 7—8 տարի առաջ մեռաւ Քէրքէլայում, համարեա ամբողջ շիաներից պաշտած մի անձնաւութիւն էր, որից սոսկում էր Նասր-Էդ-զին շոհը: Երանի ժողովուրդը տարեկան երկուսից մինչև երեք միլիոն բուրդի փող էր ուղարկում նրան, որը տասնց ձեռք տալու ետ էր դարձնում այդ գումարը Պարսկասահնի այնպիսի չքաւորներին, որոնց արժան էր համարում: Այս մարդը որ 20—30 տարի այսպիսի ահաւոր գումար էր ստացել, գուցէ աշխարհի ամենատակաւապետ անձնաւորութիւնն էր: Հասցնելով այդ խոշոր գումարները թշւառ ու կարօտ հօտին, ինքը սոսկ արմաւով էր կերակրուում, գիշերում էր Քէրքէլայի մղկիթի զաւթում խորի վրա, որտեղից պատզամ էր տալիս թագաւորներին, իշխաններին, կղերին ու բոլոր հաւտացեալներին: Մեանելիս նա միայն մի-երկու բուրդու գոյք թողեց իր ժառանգներին այն ահագին միլիոններից: այն ինչ Ազոն ժդի. Ժառանգները ահաւոր կապիտալ դիզեցին՝ շնորհիւ իրենց ոլալ աղքականի:

Ներկայիս միւջթէհիգներից նշանաւորներն են Շէյխ Հագի Թէհրանցի, Մոլա Քեաղիմ Խորասանցի, Փաղըլի Զէլէրիանի Ղարադաղցի, Շէյխ Հասան Մամաղանի, Հաջի Միրզա Հիւէյն-Հաջի Խալիլի Թէհրանցի, Շէյխ Արդիլ Հիւէյն—Մաղրի Խսֆահանցի և ուրիշները: Թէհրանցից շատ հետեղ ունի Շէյխ Հաղի Թէհրանցին, բայց ամենից աղքեցիկն է Փաղըլի Զէլէրիանի Ղարադաղցին և Շէյխ Հասան Մամաղանցին, (մեռան ոյն տարուա ընթացքում) որովհետեւ սրանց հետեղ Ասրպատականի ժողովուրդը բոլորը բորբոքւող թիւքքեր են և իրենց Միւջթէհիգների հրամաններին կազմ ու պատրաստ

անձնանւէր զինւորներ: Այժմ Թէհրանի կինտըռնական վարչութիւնը աւելի ակնածում է Փաղըլիից, որը համարեա գերիշխող է միւջթէհիգների մէջ:

12. Համաձայն Ղուրանի այաթների և իմամների հազիսներին, ամէն մի հաւատացեալ շիա իւր տարեկան զուտ վաստակի տասանորդը տալու է աղքատի, կարօտեալի և թշւառի: Այս գումարը հին ժամանակ ժողովուրդը յանձնում էր հմամին՝ Մարգարէի տեղապահին, իսկ հմամ Մէջթիի բացակայութիւնից յետո՝ միւջթէհիգին, որպէսզի բաժանեն արժանաւորներին: Երանի շիա աղքարնակութիւնը ամէն տարւա վերջին, պաշտօնեա թէ զործակալ, վաճառական թէ արհեստաւոր, երկրագործ թէ մշակ պարաւոր է տարեկան հաշիները քննել, ելեմուաքը սատուգել և իւր վաստակի գուտ տասը տոկոսը անմիջապէս փոխազրել այն միւջթէհիգին, որին անձնաւաւը է եղած: Բացի այս, ամէն մի կարգութեան տէր հաւատացեալի մահից յետո, նրա ժառանգութեան երրորդ մասը նոյնպէս համոււմ է միւջթէհիգին, որի ձեռքով բաժանւելու է աղքատներին, թշւառներին: Ամէն մի աւրախ բոպէին, հարասնիքին, որդէննողեան, յաջորդ զործերին, ուխտով ամէն մարդ կարձեալ որոշ բաժին է ուղարկում Միւջթէհիգին՝ կարօտեալներին ցրւելու:

Միւջթէհիգները ծառայելով աղքարնակութեան, վարձ սաանալու իրաւանք շունին. այդ ծառայութիւնը կատարելու են անձնելիքարը: Արգարիցի Միրզա Սլէքպէր միւջթէհիգը տարին տասներկու ամիս իւր երկրպագուներից ողարմաւթիւն է հաւաքում և աղքատներին ցրւում, կարօտեալներին կերակրում ու հազցնում է: Նո զես կեանքում ժողովրդից ոչ ոքի ոչ մի պատառ հացն է կերպէլ և ոչ լի թէյն է խմել: Ոչ ոքի տառն հիւր շի զնոտ, ոչ ոքի նւիբած հազուս-

ուր չի հագնիլ, թէև ինքն էլ շտա շնչին, տարեկան 2—300 լուրի եկամուտ ունի: Խոլամի միւջթէհիդները խոյս են տալիս վարձ ստանալուց, որը խստիւ արգելուծ է, իսկ աղքատի բաժնից զեղելուց մեծ յանցանք չկա:

Սմէն մի միւջթէհիդ իւր նախրն է (փոխանորդ) կարգում Պարսկաստանի դանագան քաղաքներում, կամ տւաններում, իւր ժողովրդի ծէսերը կատարելու, քաղաքացիական, վաճառականական թղթերը վաւերացնելու, հովելու, կառավարելու, քարոզելու, միմիթարելու և հոգեոր պէտքերը լրացնելու: Ենչպէս Քէրրէլայում շատ է միւջթէհիդների թիւր, ամէն քաղաքում էլ ազգաբնակութեան շատութեան և համոզման տարբերութեան համեմատ մեծ է և այսպիսի նախրների թիւր: Այս փոխանորդները, որ ախունդ էլ են կոչւում, իրենց բոլոր գործափարութիւնը կատարում են իրենց լիազօրութիւն տրող միւջթէհիդի անունով, որը յիշատակում են մինչեւ անգամ վաւերացրած իւրաքանչիւր թղթի ճակատին: Այս նախրներն ինչ տասանորդ, նւէր, կամ որիէ գումար որ ստանան իրենց գործափարութեան ընթացքում, ամբողջապէս պարտաւոր են հասցնել իրենց լիազօրութիւն տրող միւջթէհիդին, որը յիշատակում են մինչեւ անգամ վաւերացրած իւրաքանչիւր թղթի ճակատին, կամ նրա որոշման համաձայն բաժանել ուր հարկն է, վեր առնելով միայն իրենց համար իշխանութիւց սահմանած բաժը, կամ ոռնիկը:

13. Ենչպէս զերե ասացի, թէև ամէն մի շիա պարտաւոր է գէմքը, հայեացքը ուղղել գէսի մի միւջթէհիդ, բայց ոչ ոքի շեն կարող բռնադատել, որ առաջնորդ (հմամ) ընդունի այս կամ այն միւջթէհիդին: Ճաւատացեալը իւր համոզումով աղատ է հետեւելու հաւանած մօլլախն, որին համարում է Մէհթիի ծրագրած ուղու վրա կանգնած: Կան միւջթէհիդներ,

որոնք միւխոնաւոր հետեւղներ ունին. կան այնպիսիները, որ տաս հազար, հինգ հազար, հինգ հարիւր ժողովուրդի աէր են և ձգառում են միլիոնի հասցնել իրենց ծխերի թիւր: Մի միւջթէհիդ մեռնելիս, նրա հետեւղներից իւրաքանչիւրը ընտրում է իրեն նոր միւջթէհիդ, հետեւում օրան: Ամէն մի անհատ կարող է իւր համոզումը փոխել, եթէ միւջթէհիդի գործի—կեանքի ընթացքում որևէ գալթակղեցուցիչ, կամ միտք պղտորող բան նկատի: Այսպիսի գէտքերում գալթակղութեան պատճառից շհեռանալը յանցանք է շիա կղերի վարդապետութեան համաձայն:

Պարտաւորնեցուցիչ չէ, որ միւջթէհիդը նոտի Քէրրէլա, Քիւֆա, Մէշէդ, կամ մի ուրիշ տեղ. այդ կախւած է միւջթէհիդի կամքից. ժողովուրդը կապում է անձնաւորութեան, ոչ թէ միակավայրի հետ: Բայց ընդհանրապէս շիաները անձնատուր են լինում Քէրրէլայի միւջթէհիդներին, քանի որ Թիւրքիայի խորքերում դրանց կեանքի խորշերը թափանցելու, ուստիմնասիրելու և ծանօթանալու հնարաւորութիւն քիչ ունին և գտահանում են համբաւներին: Մանաւանդ իմամ չիւսէյնի նահատակութեան վայրը կապում է շիաների սիրալ նրա գերեզմանի շուրջը պատած ողբանացների հետ:

Միւջթէհիդների այսքան բազմութիւնը այնպիսի հակառակութիւններ չի ծնեցնում շիաների մէջ, որքան կոյութիւն ունին ուրիշ կղերի գասում: Թէև ամէն մի միւջթէհիդ ինքնապուխ է գործում, նա չի ճանաչում որևէ հեղինակութիւն, համարելով իւր անձը ուղղակի Մէհթիի հոգու բնակարան, բայց երբեք չի խանգարում գործափարութիւնը շիաների մէջ Պարսկաստանում: Սրա պատճառն այն է, որ միւջթէհիդները ամէն ճիգ գործ են դնում հեղինակութիւնները պահպանելու, արգարանէր, խաղաղաւէր, համբերող, հեզ, համերաշխ,

անշահասէր և անփառտսէց երենալու, սրպէսզի այս առաքինի յատկութիւններով ազգաբնակութեան համակրութիւնը գրաւեն և պաշտուին: Մինչև անգամ, եթէ ժողովուրդը մի միջթէհիդի թողնելով՝ միւսի կողմն անցնի, մերժւած կղերականը չի յանդգնի որեէ գործով անբաւականութիւնը արտայայակ: Եյսպիսի գէպգում անհամբերատար խլեման կրգրկի լոլոր հետեղներից: Մանաւանդ որ մեծամեծ միջթէհիդների երկրպագուները շատ գժւարութեամբ են փախում իրենց առաջնորդին, և եթէ դաւաճանեն էլ, միջթէհիդները հաղիւ թէ որեէ կորուսա ունենան: Խոկ դեռահաս միջթէհիդները, փոքր թւով հետեւ րդ ունեցողները, միշտ խոնարհւում և համակերպւում են մեծամեծներին:

14. Անցեալ զարում, քաղաքներում ապրող շիա կղերը այնպէս գուրս եկաւ իրեն պարաւորութեան ուղուց, որ պարօիկ քաղաքացուն և զիւղական ամբոխին ցնցեցին ու արթնեցցին իւր գաւիսը թմրութիւնից: Հին ժամանակիները շիա կղերը շտփաւորութեամբ ապրելով, իւր եկամուտի մեծագոյն մասը բաժանում էր չքաւորներին և կարիքներից ճշշւածներին: Զիա կղերի նշանաբանն էր, ազգաբնակուրիւնը չծանրաբեռնել հարկերով եւ նրա կեաները դառնուրեամբ չխեղդել: Մօլլաները սակաւապետուրեան կենդանի օրինակ դարձած, բարոգում էին ամենաշով բաւականալ եւ չըռնաւուրել սուսանելի տուրերով հասարակուրեան կեաները: Զիա քաղաքարնակ կղերը կանդնելով իւր պարտաւորութեան սահմանի մէջ, վայելում էր թէ ժողովրդի, թէ պետութեան վարիչների և պաշտօնակալների և թէ ամբոխի յարգանքը, պահպանում էր իւր դիրքը և ստիպում Շահերի գործակալներին խոնարհւութիւնը ժաղավարդական ոյժի առաջ: Զիա կղերի գերիշխանութիւնը ժողովրդի վրա, ինչպէս վերե տ-

սայի, անհանման է և ահաւոր, ուստի ամբոխին դեկավարող հարսող այս ոյժից ակնածում էին աշ միայն իշխանաւորները, այլ մինչև անդամ միջթէհիդներից սոսկում էին անհաւատ աւաղակները, անդուսպ յափշտակիշները և բռնութեամբ այս ու այն գաւառները, վիճակները, սաբերն ու ձորերը տիրող ինքնիշխանունները: Ենիբաւութիւն, բռնութիւն և յափշտակութիւն կատարողները միշտ սարսափում էին կղերի վրէժինդըրութիւնից:

Բայց երբ մօլլաները—միջթէհիդ անւանուղները թողին իրենց քարոզութիւնը, և ձկտեցին կալւածատիրութեան, նըրանց վարկը ընկաւ թէ ամբոխի և թէ պաշտօնակալութեան տչքում: Կղերը երբ կաշտակեր, կեղեքող, հարստահարող խանխաւանից իրենց կարւածական խնդիրներում պաշտպանութեան կարօտ զարձաւ ամբոխը երես շուռ տես իւլէմաներից: Մանաւանդ որ ունեոր զասից նրանց վատանւած աղքատներին, անանկներին, թշւասներին, սովածներին, միրկերին, հիւանդներին ու զսուցածներին բաժանելի գումարները, երբ կղերը ոչ միայն իւրացընց, այլ այդ զբամով իշխանականների ձեռքից կալւածներ զնեց, —ժողովուրդը ճիառութափից: Եյսօր երանի քաղաքների ու աւանների մօլլաները բոլորն էլ կալւածատէր են գարձել և իրենց ճիկն ու ջանքը զործ են զնում, որ կալւածները ընդարձակեն, ճոխացնեն և զարդարեն: Մրան հետեւ և շռայլութիւնը, սարսափելի ծախուեր, փարթամ կեանք և ճոխութիւն:

Ագահութիւնը բուն զնելով այս կղերի հոգում, զինւած չէրիտթով, ընկան կեաների մրցման մէջ, պաշտպանելով իրենց ոյժով, զիրքով և զիտութիւնով կողմնակի ստնձգութիւններից: Մասախլապատ մութ կեանքում դիմագրելով պատահարներին, կեղեքում են ազգաբնակութիւնը և հաղարներ դի-

զում, նորանոր գիւղեր, կայքեր զնելու և իրենց կալւածները ընդարձակելու: Խոլամակոն օրէնքով, կալւածատէրը կամ երկրագործը իրեն տան կարեոր հացահատիկից աւելորդը պարաւոր է անպայման քառասուն օրւա ընթացքում, իսկ սովորամանակ—շորո օրւա մէջ ծախել: Սմբարել զահելը ամենամեծ յանցանք է և սոսկալի մեղք, որի համար ներումն չկա: Կալւածատէր մօլաները իրենց գարեոր քարոզութեան հակառակ սկսեցին ամբարել գիւղերից ստացւած մթելքը, արհեստական սով առաջացնել, որպէսզի հացը թանկ ծախեն: Երբ կառավարութիւնը նրանց շէրիաթն յիշեցնելով, պահանջեց բանալ ամբարները և ծախել ցորենը, գարին, ժողովրդին սովից ազատելու և երկիրը խռովութիւններից փրկելու համար, սրանից տասը տարի առաջ յայանի Թաւրիզեցի միւջթէնիդ չաջի միրզա Զաւադը Ղուլսնից մի նոր այաթ մաանացոյց արաւ, որը անսահման իրաւունք է տալիս տպրանքատիպոջ իր գոյքի հետ կամքի համեմատ վարւելու *): Այս շէրիաթական նենդամութիւնը աւելի ուշաբերեց խոր քնի մէջ թմբածներին, որոնք սթափւած՝ էլ հեռացան կղերական պարագիտներից:

15. Սրանից մօտ երեսուն տարի առաջ մեռնող միւջթէնիդ Միրզա Բաղրը երեք-չորս գիւղ ունէր, իսկ այսօր նրա թոռը՝ որ գիտութիւն բնաւ չունի, բայց քառասուն արշինոց ապարօշ է վաթաթում, հարիւր յիսուն գիւղ ունի: Այս միւջթէնիդի եղբայրը՝ Միրզա Զաւադը, որ հօրից մի, թէ երկու անյայտ գիւղ էր ժառանգել, քսան տարւա պաշտօնավարութեան ընթացքում երկու հարիւր գիւղ իւրացըց և

*) Էնաս միւսալլաթիւնէ էլա էնվալինիմ, քիմէսալլիթիւ միւսքի իմաքինիմ, (արարածը իւր կայքի տէրն է, ինչպէս կալւածատէրը իւր կայքի):

իօթը տարի առաջ մեռնելիս, այդ ահաւոր հարստութիւնը թողեց զաւակներին, որոնք ժառանդարար մօլլա էին: Քսան տարի հաղիւ կա, որ այս միւջթէնիդի վորը եղբայրը՝ Միրզա Հասանը պաշտօն է վարում և այսօր վաթառն—եօթանասուն գիւղ ունի:

Տամնը հինգ տարի առաջ Թաւրիկ գարձած Միրզա Մէօհսինը այսօր քառասուն—յիսուն գիւղ ունի և այլն:

Առաջ միւջթէնիդները մրցում էին իրենց ասաքինութիւնով, բարեգործաթիւնով, սակաւապեառութիւնով, արգարասիրութիւնով, ողորմածութիւնով և հետեսզների զնդերով, այսօր մրցում են գիւղերի թիւը շատացնելով, գանձեր զիւկերով, իրարից հող ու սայաթ (երկրագործ դաս) յափշտակերով: Թաւրիկի մօլաները, Թէնրանի իւլէմները տարիներով իրար հետ կուռւմ են, վիճում են զանազան կալւածների, կայքերի սահմանների կամ ջրերի համար: Նորերս աքսորւած Միրզա Հասանը սուսահպատակ նազիկին ճնշելու համար, որը յանդկնել էր նրա վարձում զանւած Քիւր գիւղը զնելու, իր հոգատակ Բախչէրշցիներին սովորացնում էր, զնալ հարւածել, աւարել, յափշտակել Քիւրի բնիկներին և նրանց գոյքը, սրպէսզի նազիկը ընկճակի, յուսահտաւի և աժան զնով նրան ծախէ այդ գիւղը: Կարելի է հարիւրաւոր վաստեր բերել կալւածական վէճերից, թէ ինչպէս իրար դէմ թակարդներ են լարում մօլլաները, որ յափշտակեն իրար կալւածները, բայց քանի որ Պարսկաստանում պետական հիմնարկութիւններ չկան, դատարաններ, արխիւներ, գրադրութիւններ զայութիւն չունին, մարդ չի կարսդ կարգին ստատիստիկա պարապատել և հետեսանքները հրատարակել:

Մօլլաների իրար գէմ բացած այս գէճերը, հակառակութիւնները, կալւածներ յափշտակելու համար կատարած նեն-

գութիւնները, սխակալութիւնները, զբէժինդպութիւնները այնպէս է ստորացըել նրանց վարկը, պատիւը նրանի ժողովուրդի աշքում, միւջթէհիդները այնպէս են թուլացել և այնքան են խզացել, և ստօրացել, որ ոչ միայն ամբոխը, վարձական ծառայողները և անհատները նրանց արհամարհում են, այլ կասկած է ծնել և հաւատները խախտել է Մէշէդի, Քէրբէլայի միւջթէհիդների մասին և օրից օր թեհեհաւատութիւնը տարածւում է:

16. Ջիա կղերի քարոզած դաւանութեան համեմատ, ինչպէս ասացի, իմամ Մէհթիի ջաննիշինին է տրւած ամրով ժողովուրդը և երկիրը կառավարելու իշխանութիւնը: Սրանից հետեցնում են, որ իրանք՝ միւջթէհիդներն էլ պիտի կառավարեն պետութիւնը: Ինչպէս տասներկու իմամները պահանջում էին ջնջել ընարողական խալիֆութիւնը, իրենց՝ որպէս հախախնամութիւնից սահմանուած իմամի (առաջնորդի) հպատակի, այնպէս էլ ջաննիշինները միշտ պահանջել են, որ ջնջեն իոլամական Սուլթանները, իրենց՝ երկրի չէրիտկան իշխանաւորներին յանձնել պետութեան կառավարութեան դեկը: Ինչպէս տասներկու իմամները բողոքել են խալիֆների դէմ, այնպէս էլ միւջթէհիդ—ջաննիշինները բողոքել են սիւննի Սրբառահանների, Սէլջուկների, Զինդիկանի, Տուղրիլի, Ղանկթէմուրի դէմ, նոյնպէս էլ բողոքել են չիտ Սէֆէդի, կամ Ղաջար շահնշահերի իշխանութեան դէմ, համարելով բոլորին յափշտակիշներ, բռնակալ ուղորդառներ:

Սէֆէդի շահերը, որ իրենց համարում էին իմամ Մուսայի ուերոնդից, Մահմէդի Փաթմաս դստեր և Սլիի արիւնից առաջացած Սէիդներ, բանադրւած էին միւջթէհիդներից, ինչպէս նազիր Զահը և Ղաջարները: Ջիա թագաւորների, իշխանների լուծը այնքան դառն է չիայի համար, որքան

անտանելի է սիւննի, կամ քրիստոնեա թագաւորի գերիշխանութիւնը: Ահա, թէ ինչ վիճ է բացել չիտ կղերը ժողովրդի և նրա իշխանակալների մէջ, ահա, թէ ինչ է պատճառը, որ իրանի գահակալները այնքան խախուա դիրք են ունեցել, չնայելով որ ամէն միջոցի զիմել են, չըրիաթին հպատակւել են, որ հաշտւեն կղերի հետ և սիրւին հպատակներից: Ժողովրդի սէրը և համարումը գրաւելու համար, նասրէզդին (պաշտպան կրօնի) շահը իրեն Կուլամ-Մէշէդի (Մէշէդին սպասուոր) և իմամ Բզայի գերեզմանի վուշին աւելող էր անւանում: Այդ ուխտատեղի եկամուտած սաացւած ցորենից նրա համար յատուկ հաց էին պատբասում, որ չերմեռանդ նկատուի հասարակութիւնից, բայց ժողովուրդին այնպիսի քարոզում շիտ կղերը, որ այդպիսի ցոյցերը նրա համոզումները չէին կարող փոխել:

Ջիա հաւատացեալները երթէք և ոչ մի դէպքում չի կարող հպատակւել որիէ աշխարհային իշխանութեան: Զաննիշինից զատ, բոլոր իշխանութիւնները բռնակալութիւն է նկատում և ձգտում է աղատւել այդ բռնակալներից: Բայց մինչեւ աղատւելու, նա իւր կեանքը փրկելու (Թագիէ) համար պարտաւոր է կեղծել, հպատակութիւն ձեւցնել, հաւատաբութիւն որսալ, համաձայն իմամ Զաֆէրի հաղիմների: Բացի այս՝ պէտք է նկատի ունենալ, որ ինչպէս ամէն մի ոսոկ չիտ իրեն առաջնորդ, իմամին ջաննիշին ընդունում է միւջթէհիդներից մէկին, երանի շահերն էլ որպէս չիտ հաւատացեալներ, գաւանում են և ընդունում են միւջթէհիդներից ամենաժողովրդականին իմամի հոգու բնակարան և հպատակւում սրա արձակած վճիռներին: Այս պատճառով միւջթէհիդները ժողովրդին քարոզում են, թէ քանի որ համայնքը հովի կարիք ունի և իրենք հնարք չեն գտնուա բռնակալութիւնը ջըն-

ջելու, ուստի նախապատիւ համարկէ շիա հաւատացեալ զահերին մնացեալ բոհակալներից, քանի որ Դուրանին անպայման հպատակուում են, կամ խոստանուում են հպատակւել իմամների ջաննիշիների վճիռներին:

17. Թէկ իրանի ներկա շահնշահը ջերմ հաւատացեալ է, յարգում, խոնարհուում է ջաննիշիներին, նրանց գծած կրօնական շաւզից հազիւ թէ դուրս կա, բայց Թէհրանում կատարւած վերջին փոփոխութիւնը չի կարելի վերապրել միայն կղերի—Քէրբէլայի միւջթէհիպների ազգեցսթեան։ Ամրող իրանի խանխաւանը (աղնւականութիւն, պաշտօնակալութիւն) շատ խոժոս հայեացք է զցում եւրոպացի պաշտօնականների դէմ, որոնք կատավարում են պարսկական մաքսատունները և պրոտը։ Այս հիմնարկութիւնների արդինքի մեծագոյն մառը առաջ կլանում էր այդ իշխանական դասը, որը այսօր անպաշտօն է մնացել։ Մանաւանդ որ մինչեւ եւրոպացիների երենալը մաքսիրը կապալով էր տրուոմ պարսիկ խոււան կարողութեան տէրերին, որոնք համարեա թէ կէսուկէս օգտուում էին իրենց ձեռնարկութիւններից։

Պարագ մնացած իշխանական կապալառու դասին միացան կղերը, սարբաֆները և կալւածտէր խանխաւանը, քանի որ պաշտօնանկ Սթարէզը մտածում էր երկրի Փինանսը ամրողապէս յանձնել այդ եւրոպացիներին։ Երանի եկամուտի մեծագոյն մասը երկրի բաւուկանութեան տասնորդական, կալւածտէկան և տղարնակութիւնից ստացւած ծխական հարկերից է կազմւած։ Ենչպէս յայտնի է, պետական այս հարկը մինչեւ օրս գանձուում են և պետութեան սնդուկը հասցնում են կալւածտէրները, յայտնի բան է կլանելով ոլետական բաժնի երեք քառորդ մասը։ Եթէ Սթարէզը կարողանար իւր ծրագիրը իրագործել, կալւածտէր կղերը, խաւանը և

սարբաֆները պիտի դրկւէին իրենց ահաւոր եկամուտից։ Այս պատճառով կալւածտէրները միացան կղերին, խաւաններին և զիմնեցին Քէրբէլայի միւջթէհիպներին, որ խափանին Աթարէզի ծրագիրը։ Պարսիկ երիտասարդութիւնը անհեռատեսութեամբ և նրա մամուլը, որ գժգոհ էր նոյնպէս Աթարէզի պօլիտիկայից, միացան կալւածտէրներին, երկիրը կեղեկող մաքսային կապալառու խաւանին, միահամուռ ոյժով մնշեցին կենզրոնական վարչութեան Աթարէզին։

Աթարէզին մեզագրում են գլխաւորաբար այն պետական պարտի համար, որ նա առաւ ուստական Փինանսխոսներից և այն էլ շատ անձեռնառու պայմաններով, այն էլ զրաւ զնելով երկրի մաքսային հասոյթը։ Բացի այս, Աթարէզին յանցաւոր են համարում, որ նա երկաթուղային գծեր անցկացնելու կօնցէսեա տւեց։ Այս պատրւակները զէնք շնելով, կալւածտէրները կարողացան Քէրբէլայի միւջթէհիպներին իրենց կողմը զրաւել և այնքան մնշեցին, որ չթողին երկրի Փինանսները Բէլջիքացւոց ձեռքն անցնի և իրենք զրկւեն այն իւզալի պատասխից՝ կալւածներից, պետութեան հասանելի բաժնի տւելորդը իւրացնելուց։



ԹԱՂՎԻԱԹ

ԹԱՂՎԻՄԹ

Ահա տարին մօտենում է, ինչ մեր հարեան շիա-թուրքերը մեղ հետ համբուրտում, հաշտում և իրենց սուրբ գրքի՝ դուրսնի վրա երգուում և գարձեալ դրժում են: Դիտական աշխարհին, քննող և հետամտող հասարակութեան անշափ անրացարելի է մնում, թէ ինչ պատճառով այդ մարդիկ այդրան զիւրութեամբ դրժում են իրենց երդումը և սահատակ են տալիս այն խոստումները, որոնք արել էին իրենց սրբազնագոյն գրքի դուրսնի առաջ:

Այս հարցը մասամբ շոշափել է մեր և օտար մամուլը, որի որոշ եղբակացութեան շհամնելը ինձ սահիպեց մի քանի տողով բացարել և պարզել բնթերցողներին իրերի ճշմարտութիւնը:

Ինչպէս մենք հարեաններս, նոյնպէս եւրոպացիները, շատ փորձերով համոզւած են, որ շիա-թուրքերը շեն կարող անկեղծ յարարերութեան մէջ մտնել ոչ շիաների հետ: Ըստ շատ դէպքերը ապացուցել են շիաների նենգամտութիւնը, իստրդախութիւնը և կեղծիքը, որը նիւթ է տւել Հաջի-Բաբաների արկածների նկարագրութեան եւրոպայում, որոնց համար պարսիկ բառը համանիշ է գարձել—կեղծաւոր եւ նենգ բառերին: Եյն հին պարսիկները, որոնք պարծենում

Էին ճշմարտասիրութեամբ, որոնց վէպերն ու առակները շըրջում էին անարտառութեան և ճշմարտութեան շուրջը, այսօր գուցէ նրանց հոգիները ցնցւում են, նկատելով իրենց յաջորդների այս ամօթալի կեանքը:

Ճշմարիտ է, անտեսական պայմանների ներդործութիւնն է, որ փոփոխումէ—յեզարջում է կեանքը, բայց այս խընդրում նողաստաւոր դեր է կատարել նոյնուհան կրօնական պատգամը:

Մահմէդից ոչ շատ ուշ յետո, իմամ Հանիֆին, Մահմէդի հետ ապրող երեք հարիւրից աւելի հասակաւոր կրօնակլիցների գրաւոր, բերանացի պատմւածքները հաւաքեց և դրանց կարգի բերելով կազմեց Սիւնի—Խոլամների օբէնողիրքը—Սիւնեան, որին այսօր հետեւում է ամբողջ միւսիւման աշխարհը, բացի շիաներից: Ճշմարիտ է, բայցի իմամ-Հանիֆի հետեւպներից Մալիքի, Թէմբէլի, Շաֆի, աղանդաւորներ ել կան, բայց որպանց տարրերութիւնը այնքան աննշան է, որ բոլորին էլ կարելի է անբաժան սիւնի համարել, այն ինչ զիաները հիմնաւորապէս անջատւած և հերձւած են իսլամից, որի օբէնքները խմբազրեցին իմամ-Շաֆէրը և իմամ Բաղրէմը՝ իմամ Հանիֆիի հակառակ:

Պէտք է ասել, որ իմամ Հանիֆին ինքն անձամբ տեսել ե լուլ էր իսլամի հիմնաբրին և ամենաբարեխիղդ կերպով հաւաքել ու գրել օբէնողիրքը՝ Սիւնան, այն ինչ իմամ Շաֆէրը ոչ միայն չէր տեսել օբէնողիրին, ոյլ չէր էլ ուզում լըսել ականատեսների պատմւածքները և գրւածքները:

Իմամ-Շաֆէրը և իմամ Բաղրէմ Մարգարէի Թոուի՝ իմամ Հիւսէյինի թոռնու ծոսն էին և շիաների հինգերորդ և վեցերորդ իմամները: Եշպէոյայտնի է, Ալին և որա յաջորդները հրատարակեցին, թէ իրենք՝ որպէս մարգարէի օրինական յաջորդները, յարա-

բերութեան մէջ հն Գերազայնի հետ և տւած բոլոր պատգամները ամենաղէտից է բղիած: Հետեարաբ այս իմամների բոլոր հաղիսները—բացարարութիւնները համարւում է շիաների համար—Գերազոյն յայտնութիւն:

Իմամ Զաֆէրի տւած բոլոր պատգամները հակառաւմ էին եմամ Հանիֆի պատգամներին, և խալիֆները Մաւավեա, Եղիպ և յաջորդները, այս հակավարդապետութեան համար, ոկուցին հալածել շիաներին: Հարածանքն այնտեղ հասաւ, որ շիաներին բանտարկում, տանջում և սպանում էին շարաշաբ կերպով:

Ճնշումը այն առաջնանի սառակացաւ, որ իմամ Զաֆէրը հետեւղներին փրկելու համար ուզգակի հարիս—բացարարութիւն և պատգամ տւեց շիաներին, որ կհանքերը փրկելու համար պարաւոր են Թաղվիար անելու, այսինքն կեղծելու, ծածկելու իրենց ներքին-աշխարհը և միաւմները իրենց հակառակորդներից:

Այս Թաղվիարի հաղիսներում առւած է, որ եթէ մի տեղ հարիւր շիտ լինի և մի սիւնի, բոլոր շիաները թէ բացումը և աղօթքը պիտի կատարեն սիւնիների իմամի—Հանիֆիի պատրիքած ձևով: Եթէ մի տեղ հազար շիտ լինի և մի սիւնի, շիաները պիտի ջանան սիւնի ձևանալ և կեղծել սիւնիի առաջ: Զիաները պարտաւոր են շատ ճարպիկ կերպով կեղծել և շլոյլ առլ, որ սիւնին կասկածի և նըանց կեանքը վատնգի մասնի: Չիան նեղ ընկած պարագային պարտաւոր է միշտ կեղծել և ծածկել իւր ներքին աշխարհը հակառակորդներից: Այս հաղիսին հակառակ վարւողը դատապարտելի է, թէ իւրայինների շրջանում և թէ հանդերձեալ կեանքում:

Չիանների այս ծպաեալ վիճակը ամբողջ դարեր տեսից,

մինչև որ կարողացան աղատ համարձակ դաւանել իրենց կրօնը: Այս գարերի ընթացքում այնպէս կեղծելու և ծպտելու վարժեցան, որ կեղծելը դարձաւ սրբազն պարտականութիւն ամէն մի շիայի համար: Ոչ միայն սոսկ քաղաքացիները, այլ և պաշտօնականները և կղերը պարտաւորւած էին կեղծելու:

Իմամ Զաֆէրի անրնական հաղիսներից մէկն էլ այն է, որ ի հարկին, շիաները կեանքերը փրկելու համար, ոչ միայն կարող են կեղծել, այլ կարող են երդւել և այդ երդումը ոչ մի նշանակութիւն չի կարող ունենալ, ոչ մի յանցանք չի կարող համարւել նրանց հետեղներին: Այս զրական բացառութիւններից և Գերազոյնից ներշնչւած իմամի օրէնքները իւրացնելուց յիսո, ամբողջ տասը գար շիա աշխարհը ապրել է կեղծիքով, կեղծել է ամէն մի պարագային և կեղծում է մինչև օրս:

Մինչև անգամ շիա ամինամեծ կղերականները միւջթէ-հիդները, որոնք իրենց անձը իմամի-Մէհթիի հոգու բնակարան են համարում, կեղծում են սիւննի կղերի առաջ, երբ Մէքը ուխտի են գնում և կատարում են իրենց կրօնական պարտականութիւնը: Այդաեղ գնացող բոլոր շիաները—նոյն խոկ միւջթէհիդները կարող են մեծ հալածանքի ենթարկել, տանջւել, եթէ չկեղծեն, թէ իրենք սիւննի—Զափի աղանդին ևն պատկանում:

Այսպէս կեղծիք—կեղծելը կրօնական պարտականութիւն է դարձել շիա թուրքի համար և ով շատ ճարպիկ է կեղծում, նա ամենաօրինակելի հետեղն է համարում և ամենքն էլ ջանք են գործ գնում իրար գերազանցելու:

Ես կարծում եմ, թէ պարզ է ընթերցողների համար, որ երդմնազանցութեան պատճառները, որաեղ պէտք է փնտուի:

Փ.

Բ Ա Բ հ

Պ Ա Մ

Բ Ե Հ Ա Յ հ

ՅՈՐԻ ԿԱՄ ԲԵՇԱՅԻ

Պատմական տեսուրին

Արտասարք „ԼՈՒՐԱՅԻ“ տմագրից 1905 թ. № 3

1. Պարսկաստանի վիճակը XIX դարի սկզբներին.
2. Արտաքին աշխարհի ներգործութիւնը Խրանի վրա. 3. Ջիա—կոկորի անկեալ վիճակը. 4. Բարի յայտնութիւնը. 5. Բարի ձնունդը և մանկութիւնը.
6. Սկզբնական քարոզութիւնները. 7. Ջիկմի աղանդները և ընդհանուր տրամադրութիւնը. 8. Ջէլսի վարդապետութեան նպաստաւոր պարագաները Բարի քարոզութեան. 9. 19 միջթէհիգների գարձը և Բարէլ-քար.
10. Հալածանք և Բարի Մաքու աքսորը. 11. Ընդհանուր ըէֆօրմների կարիքները. 12. Թէրէրոի թերդում ապաստանած Բարիները. 13. Պատերազմների, արիւնահեղութիւնների սաստկացումը. 14. Բարիների անձնատուր լիները. 15. Նէյրիզի Բարիների խռովութիւնները. 16. Պարսից գործերի անդութիւնները. 17. Զէնջանի խռովութիւնը. 18. Զէնջանի կոստուածը. Ժաննա գ' արք. 19. Զէնջանի Բարիների գերեզարութիւնը. 20. Բարին փոխազում են Սալմաստի 21 չիրիչի քերզը. 21. Բարի գործի քննութիւնը Թաւրիզում. 22. Բարի հոչակը և նրա այցելող ուխտաւորները. 23. Բարի խաչելութիւնը և գնդականարութիւնը. 24. Բարի սոկերուալքի Քարմել 1 հուն գագտթը փոխազրելը և Տաճարը. 25. Բարի ընտուրութիւնը և ընտառուր ձիբքերը. 26. Թահիրէ-խանումի քարոզութիւնները. 27. Թահիրէի տղականներից հալոծուիլը և ընկերակիցների մահը. 28. Թահիրէի հոչակը—Թէհրանի ժողովները. 29. Եօթը Բարիների զլխատսութիւնը Թէհրանում. 30. Սիւլէյման—Խանի շարշարանքը—մահը: 31. 370. բարիների զարհուրելի տանջանքներով սպանուելը Թէհրանում. 32. Բէհայի կալանաւորումը. 33. Բէհայի Բաղդազում. 34. Թէհայի Սիւլէյմանէ. 35. Բէհայի բա-

բողոքիւները Բազգակում. 36. Բէհային կանչում են Կ. Պոլիս. 37. Բէհայի յայտնութիւնը. 38. Բէհայի աքսորը Ագրիտնուպոլիս. 39. Բէհայի և եղիլի հակառակութիւնը և աքսոր Եքքէա—Կիպրոս. 40. Բէհայի քարոզութիւնները.—զինաթափութիւն. 41. Բէհայի սկզբունքները. 42. Ծամկավարութիւնը. 43. Ժողովրդական ընտրութեամբ ժողովները. 44. Խնքնապաշտպանութեան արգելք. 45. Քաղաքացիական օրէնսդիր ժողով. 46. Բէհայի կեանքը Աքքէաում. 47. Բէհայի դաւանանքի հանգանակը. 48. Կասթի-Յաղչէ և ընդունելութիւնները. 49. Քարոզութեան վախճանը. 50. Կատկը. 51. Բէհայի զաւակները. 52. Աքքասի յաւակնութիւնները. 53. Բէհայի քարոզութեան գէմ Ապէմի ընթացքը. 54. Աքքէրի բողոքը. 55. Ազէմիների փասահեր. 56. Աքքէրիների ապացոյցները. 57. Աքքէրի հակառակութիւնները. 58. Ազէմի շրջապատողները. 59. Միքաս Ազաշան—քարտուղարը. 60. Ազէմի ննչումները.—Բրդեհ և Նէրիլլ: 61. Ազէմի կեղծումները. 62. Ազէմի հօր գրերի ապագրութեան գէմ բռնած ընթացքը. 63. Բարիզմի գէվիլլ. 64. Յարիների թիւը. 65. Յարիների հերձուածները:



ԲԱԲԻ ԿԱՄ ՏԵՇԱՅԻ Ա. ԲԱԲԻ

1. Խնչպէս Խոյամի վարդապետութեան սկզբնական շրջանում, Մահմէզի մահից անմիջապէս յետո, կազմակերպուեց Զիա աղանդը զբաղաշտական կրօնի սերունդի ձևորով, որն այնքան նորանոր աղանդների ծագման պատճառ գարձաւ, ինչպէս Պարսիկի վաս երեակայութիւնը իսլամի օրէնսդրին, սրա արիւնակից՝ Ալիին և սրանից սերուած տասներկու յաջորդներին զիւցազնացքներ Սքէմէնեան Արշակունի և Սասանէան թագաւորների նման և այդ սերունդը գերբնականի հետ յաբարեսութեան մէջ զնելով՝ մի ֆանտաստիքական զիւցարանութիւն յօրինեց, սրանց ծագումը նախասահմանական հըից արտագրուիլը դաւանեցրեց, միենոյն բանը գարէկար շարունակեցին բուռն երեակայութիւններով յափշտակուած «կըակի-որդիքը»—«արեի զաւակները», որոնք հազարաւոր կերպարանափոխութիւններով ընդարձակեցին, բազմացրին և տարածեցին այն անթիւ աղանդները, որոնք ներկայիս զոյութիւն ունին ամբողջ Պարսկաստանում: Եթէ ամէն մի պարսիկ անհատ, որպէս մի հիւլէ այն գերընականութեան, որին զաւանում ու պատկանում է, իւր մտաւոր աշխարհով չի կազմում մի ինքնուրոյն աղանդ, գոնէ ամէն մի զբագէտ, ամէն մի

գէրփիշ, ամէն մի մտածող, վիլիսոսփա այնպիսի ինքնուրբայն ներքին դաւանակը ունեցել է և ունի, որ բոլորսպին անկախ ժիա աղանդ է կազմում, լիովին մնացեալներից տարբեր հայեացըռվ: Ջքեղ բնութեան սքանչելիքներից հիպնուած պարսկի երեակայութիւնը ի՞նչեր չէ զուշակել, մակարերել և այդ երազանքներով հրապուրուած ի՞նչ առասպելները չէ արծարծել տարածել դարերի ընթացքում, որոնք զիսթել ու թմբեցըրել են ժողովրդի միաքը և խոր քնով քնացըրել են նըրան: Սյա անուրջների մէջ կաշկանդուած պարսիկը, լիթարգիական քնով թմբած, չէր էլ զգացել, թէ ինքը որբան ետք ընկել, քաղաքակրթութիւնը ի՞նչ հսկայական քայլեր էր զործել և թէ ի՞նչ էր նրան սպառնում:

2. XIX դարի շոգեարժ մեքենաների զգրգիւնը, երկաթուղիների շոգենաւոների սուլիչների որոտը, մեքենաներով պատրաստուած կիսաքաղաքակիրթ և վայրենի ազգերի մէջ սփոսուած ապրանքները, միջազգային յարաբերութիւնների դիւրութիւնները և մաքերի շփումները չէին կարող իրենց ներգործութիւնը շունենալ Պարսկաստանի վրա: Սյա երկրում ապրող Արիական ցեղի ընդունակ դաւակներին ցնցից ու յանկարծակի ոթափեցըրեց երոպական կուլտուրան: Մանաւանդ Ռուս-Պարսկական 1800—1828 թ. պատերազմները, արծուի յաղթանակները առիւծի դէմ, Կովկասի անջատումը անտակընկալ կերպով զգաստացըրին գոռող շիաներին, որոնք երեակայում էին, թէ իրենց է պատկանում ամենավիճ կրօնը, ամենավսեմ գիտութիւնը, ամենահզօր զօրական ոյժը, գեղարուեստական սքանչելիքներ արտազբելու հանձարը, ապակ, յաղճապակ և սէֆլէ-մէթալիք զանգուածներ յարգաբելու, յօրինելու ձիւքը, բրդի, բամբակի, քաթանի, մեապափի և ոսկեթել կերպասներ գործելու արհեստը: Պարսկական առաս-

պիները, վէտերը՝ բարին, գեղեցիկը, սքանչելին, ազնիւն ու անգինը կենարսնացըրի էին իրենց հայրենիքում, խոպանն ու բիբաը թողել աշխարհի մնացեալ ազգերին: Յանկարծ այս բոլորի հակառակ կատարեածը չօշափեցին: Երբ նկատեցին երապական գործուածների առակելութիւնը, իրենց զարեսքնէածութիւնը, զգացին իրենց սխալը: Նրանք նախ ենթագրում էին, որ ամբողջ աշխարհը չուռ է եկել, նախառահանական կարգերը այլանդակուել են և ամէն բան իրենց հակառակ է թուռմ: Նրանց անշարժ դժւար էր ահսնել, թէ ի՞նչպէս պարսկական գործաբանները օրէցօք փակում էին, արհեստագործների ձեռագործները չէին ծախւում, հետզհետէ վաճառանոցները քայլայում էին, ապրանքի ապսորդանքը նւազում, իսկ բանտորները կարիքից տանջւում, պանդիտում... Սյա սթափումը կարեկից սրաերի մէջ արհամարհանք ծնեցըրեց զէպի իրենց տիբող անշարժութիւնը, և ձգտում՝ զէպի առաջազիմութիւն: Յայանի բան է զարգացածն ու ամրութ չէին կարող միենոյն հայեացքով զնիել շուրջը կատարուածները, ամէնքը միենոյն ահսակէտով չէին կարող քննել անցըրելը, բայց բոլորի համար զգալի էր իրենց ողորմելի թմրած ու ետ մնացած վիճակը, ամէնքն էլ ըմբռնում էին, թէ ի՞նչ էին կորցըրել և բոլորի սրափ մէջ եռում էր մի ձրգառում, որը նրանց մզում էր առաջ, որոնելու, գտնելու մի բան, որը կարողանար կորուստը փոխարինել: Բայց երկրին աիբած մառախուղը, ափիսութիւնը նրանց մոլոցեցըրել էր, չէին իմանում ուր զիմել, նրանք մի հովուի, մի ուժեղ տուաջնորդի պէտք էին զգում, բայց երկիրը չէր կարող խաւարից մեծ մարդ ծննցնել:

3. Այս անկումը չէր կարող խոր ներգործութիւն չունենալ նոյնպէս շիա կրօնի վրա, որի պատկամատունները ոչ

միայն առաջւան նման խոր խուզում էին իրենց ոշխաբները, այլ դարսի ոգու համեմատ հետամտում էին ժօղովրդին մաշկել, ճարպն էլ պոկել, մեծամեծ դրամագուխ դիպել, կալւածները իւրացնելու, եկամուաները ճոխացնելու, իրենց փարթամ կեանքի շոայլութիւններին յագուրդ տալու համար: Ճիա կրօնի աղանդաւորները իրենց առածիզ վարդապետութիւններով մշանչենաւորապէս իրար դէմ կախ էին մղում, մրցում և մէկը միւսի արատները մերկացնելով, ծաղրի նիւթէին գաղձեկ կրօնի էական գտանութիւնները և գայթակղեցրել ամբոխին անդամ: Կղերը վազուց պարզութիւնը մոռացել, անձնաւուր էր եղել փարթամութեան, անձնուրացութեան յաջորդել էր զեղսութիւնը, պորտաբուժութիւնը, սակաւագետութեան՝ տպահութիւնը, ժողովրդասիրութեան՝ ցոփութիւնը, արդարագատութեան՝ կաշառակերութիւնը, աշառութիւնը: Ժողովրդը զդուել էր միւջթէհիդներից, նորանոր աղանդաւոր քարոզիչներից, որոնք ձգտում էին իրարձեսքից յափշտակել ամբոխը: Ճիական վարդապետութիւնը այնքան էր մաշուել: Մեհթիի, Զարուգաի տասապեները այնպէս էին թուլացել, որ ոչ միայն կրիտիքայի չէին դիմանում, այլ այնպէս ծաղրւած էին, որ ամենքը սպասում էին որեւէ հիմնական վերանորոգչի:

4. Պարսիկ ժողովուրդի գարգացած անհշան գասը արտաքին—երօպական վերանորոգութեան կարիք էր զգում, իսկ ամբոխը սպասում էր ճաղար տարիից իվեր անյայտացած Մէհթիին (Աստւածայայտնութեան). յուսալով որ նա վերադառնուզ Զարուլգաից կասաջացնէ աշխորհի վրա այն երանելի վիճակը, որ բոլոր ազգերը մի հոտի վերածած, մի հովուի հովանիի տակ բարերադութեան մէջ կապեն և աշխարհը մշանչենաւոր դրախտի կվերածւի, իրենք էլ զար-

ձեալ իրենց առաջնակարգ դիրքը կպաւեն: Այն խառնաշփոթութեան մէջ առաջացաւ Բաբիականութիւնը, որն ապա առաջնորդողի անունով Բեհականութիւն կոչուեցաւ: 1844 թ. զիրազցի Սէիդ-Ալի Մէհմէդ երխտառապէը, որ հասարակ վաճառական էր, ոչ այնքան մտաւոր և նիւթական կարողութեան տէր, Մէքքէի ուխտագնութիւնից ծննդավայր վերադասալով, քարոզեց թէ ինքը Գիտութեան—Ճշմարտութեան դուռն է (բար), Աստուածաշնչի, և զուրանի ռորշ ցուցումների համեմատ ինքն այն մարգարէն է, որ եկել է կարապետելու, աւետելու աշխարհին շուտով երենալիք «Ասւածայայտնութեան» մասին, աղդերին պատրաստելու ընդառաջելու Գիրազոյնին և ժողովուրդներին ուղղել դէպի ճշմարտութեան դուռը (բար): Նա քարօզում էր համարձակ, համոզւած, դիւթում ու զրաւում էր լսողներին. կապում էր իրեն հետ ոչ միայն ժողովուրդի, այլ իսլամի գիտնականների սիրտը: Կարճ ժամանակամիջոցում այնքան շատ հետազողներ ունեցաւ, այնպիսի նշանաւոր շիա—իւլմներ, միւջթէհիդներ նրա վարդապետութիւնը զաւանեցին, նրա քարոզութիւնից այնպիսի նըշանաւոր հակառակորդներ պատահնձուեցան, որ մեծ զարմանք ու խլրաւմ առաջացաւ «Արկ-Ասիւծի» աշխարհում:

5. Բարը ծնել է 1819 թւականի հոկտեմբերի 5-ին (1 Մուհարէմ 1235 թ. հիջիբի): Նրա հայրը Սէիդ-Թզան Զիրազում հասարակ կտաւի վաճառական էր, վորք զբամագլխի տէր և հազիւ ընտանիքը կերպարող: Հայրը մեռնելիս մանուկ Սէիդ-Ալի-Մէհմէդը եօթը տարւան չկար, նա մեծացաւ քեռիի՝ չաջի-Սէիդ-Ալիի խնամակալութեան տակ: Ընդհանրապէս Սէիդ-Ալի-Մէհմէդը սակաւախօս, լուակեաց, համեստ և հանդարտ տղա էր: Մայրը պատմում էր, որ զաւակը երբեք փողոցում երեխաների հետ խոզով չի զրազուել, նա

տանը մի անկիւն քաշուած՝ անվերջ խօսասուզւած է եղել իւր իւնհերով։ Եօթը աարեկան հասակից նա անձնատուր է լինում ազօթքի, բացի օրական սովորական հինգ ժամերի ազօթքը, նա շաբունակ կարդացել է զուբանից ալիեալ ազօթքներ և ընկրմիլ է այդ փառաբանութիւնների ներգործութեան տակ։ Երբ առաջին անգամ վարժապետը նրան յանձնեց այրենաբանը և ասաց, — «Դարդա վերնազիքը, «ՆԱ Է բանակին զիտութեան», «Երեխան հարցրեց ախունգ վարժապետից — «իսկ այս «ՆԱ»ն ով է։ Ման՛այթեան մասին շատ քիչ տեղեկութիւն կա, այն էլ կասկածելի, նրա կմնապիրները լսութեամբ են անցկացրել Սէիդ-Ալի-Մէհմեդի կեանքի այս շրջանը։ Տասնեութ տարեկան հասակում նա զեաց Քէրբէլա ութափի, իմամ Հիւսէյնի գերեզմանին, ուր երկու ամիս բնակուեցաւ և ծանօթացաւ յայտնի Հաջի-Սէիդ Քիազիմ Բէշափի վարդապետութեան և աշակերտների հետ։ Եյս քարոզութիւնները — Ըէլիսի վարդապետութիւնը նրա հոգու վրա մեծ ներգործութիւն ունեցաւ, այնպէս որ Ըէլիսի գառնալով նրա մատածութիւնները կենաբոնացած էր այդ վարդապետութեան շորջը։

6. Բարի քարոզները այնքան հետաքրքրում է, այնպէս հրապուրում է, որ ամէն մի քիչ թէ շատ գրագէտ պարսիկ — շիս հետամտում է նրա քարոզութեան, ձեռք է բերում գրւածները, լսում է ներքնատներում գաղտազողի նրա քարոզները, յաճախում է ժողովներին, և, առանց վախենալու ուրացագ միւսկիմանի մասին սահմանւած զարհուրելի պատգամներից՝ քարիութելուց, եթէ ոչ յայտնի, համարձակ զոնէ զադոնապէս իրեն բաբի և համարում, երեսը շուր է տալիս իւր աւանդական կրօնից, որը նրան յօւսախարել և կործանման դուռն էր հասցըի։ Ըիրազում այնպէս ապրածուից

այնքան բաղմացան բարի հետեւզները, որ կառավարչապետը անձարացած կալանաւորեց Սէիդ-Ալի-Մէհմէդին, սաստիկ զանակոծեց, բաց գուր սրանով աւելի բորբոքեց նորազանդութիւններին։ Բարիզմի յաջորդութեան և շուտափոյթ աարածման զլիսաւոր պատճառն այն էր, որ Սէիդ-Ալի-Մէհմէդը իւր բար քարոզութիւնները հիմուում էր զուրանի որոշ այթների վրա, Աստուածաշնչից հատւածներ էր բերում և իւր ճարտար լեզուով զիւթում էր լսովներին։ Մանաւանդ նա իւր զրւածներով աւելի զրտում էր զիտականներին, որոնք զարմանում էին, թէ ինչորէս այդ թերսուը այդպիսի սքանչելի սճով ալարերէն էր զրում։ Բարի քարոզած Ալան էլ Մովսէսի, Մահմէդի գաւանած Եհովան էր։ Նա ասում էր, որ մարդարէնների, առաքեալների զործերի լրացման, օրէնքները կարգաւորելու, պատուիրանները հաստատելու համար Աստուածութիւնը յայտնական է աշխարհին, որպէսզի ամրող մարդկութիւնը միացնէ, եղբայրացնէ, խաղաղութեան թագաւորութիւնը երկրի վրա տարածէ։ Ղուրանի «Լիզա» այտի համաձայն իսլամն սպասում է մի այդպիսի յայտնութեան, որի մասին ահաւոր գրականութիւն և անվերջ վէճեր են ունեցել սիւննինները շիաների հետ, որոնք իրացից բոլորովին տարրեր գաւանանք ունին այդ գտլողի մասին։

7. Բարը աներկիւզ սկսեց քարոզել, թէ — նա, որին գիտութեան, անյայտի, գերբնական գաղտնիքների աղբիւրն ու ակն եք համարում, նա, որին Մէհմէթի (Մահմի) անուան տակ սպասում էր, որը իրը թէ գալու է Զարուղալից, այդ ե՛ս եմ։ Զարուղա քաղաք կամ երկիր չկա, այդ առասպելական անունը երեակայութեան ծնունդ է, որով Քէզադիմէն կամ Սուլը-րէ-Մէրւա (Քաղաքի մօս) նստող շորս նայիրները (իմամի փսխանորդները — Մէհմէթի օգնականները) խարեցին ժողովը՝

զին ութուն տարի և այն թւականից մինչեւ օրս հազար տարի ես: Եյլ շորս նայիրների տւած բոլոր հազիսները առապելիներ են, զբանք բոլորը ճշմարտութեան և դուրսնի հակառակ են, զբանց հաւատացողները միւշըիք (Սոստոն ընկերակից յատկացովնեղ-բազմաստածեան) են, մոլորուած են, պէտք է զգաստանալ և պատրաստուել այն տատածայտանութիւնը ընդունելու, որը շուտով երեալու է աշխարհին և ջնջելու մարդապաշտութիւնը:

Եյս քարոզութիւնը մի յանդուզն քայլ էր զիս հՍնԱՅ-ԾԵՐԻ-ՄԻՒԹԵԶԵՐԻ կղերի դէմ, որոնք տիրում են Պարսկատանին: Միթէշէրները որբապղծութիւն հրատարակեցին Բարի վարդապետութիւնը, իրան էլ մահապարտ: Բայց Բարն արհամարհերով միւջթէհիդների (գենպետ) սպասնալիքները, շարսնակում էր իւր քարոզներով հրապարել անհամար ունկընդիրներին, որոնք ոգեսրուած, դիւթւած խոստովանում էին, գաւանում նըա վարդապետութիւնը:

Բարի քարոզութիւնից քառասուն—յիսուն տարի առաջ, յայտնի Շէլի-Ահմէդ Բահրէխնին հիմնել էր Շիաների «Շէլիսի» աղանդը, որը միւթէշէրիների վարդապետութեան բոլորովին հակառակ հայեացք ունէր Մէհթիի մասին: Միթէշարիները համաձայն իրենց հագիսների գաւանումնեն, թէ Մէհթին—տասներկուերորդ իմամը ծննդով մի գերազոյն Սոտւածայտանութիւն էր, կատարեալ Սատւած, որի համար մահ չէ նախասահմանւած յաւիսեան: Նա Քարոզգա հետացել է, ուր ընտանիք, զաւակներ և ահաւոր սերունդ ունի, (լայանի բան է զարձեալ անմտհ), որոնց հետ մի օր վերագտոնալու է Միջագետք, որ տիրէ երկրին և հիմնէ երկրային յաւիտենական հաւատաբութեան և եղբայրութեան դրախտը: Շէլի Ահմէդը հերքեց այս վարդապետութիւնը, հիմնելով

զուրանի վրա, Սստածութիւնը երբէք չի կարող մարմնանալ, նա աննիւթէ է: Ամէն մարմին փէժութէան-նեխման, քայլայման ենթակա լինելով, երբէք մարմնացած Մէհթին հազարաւոր տարի ապրել էլք կարսդ: Շէլի զաւաննքով Մէհթիի հոգին միշտ աշխարհի վրա է եղել, միշտ իրեն ընտակարան է ունեցել որեէ բարեկան զիանականի սիրաբ, որի շըթունքներով քարոզի է Աստուծու խօսքը աշխարհին: Այս քարոզութեան համար այնպէս սխակալնցան միւթէշէրիները, որ Շէլի—Ահմէդը պարաւորւած հեսացաւ Քէրբէլայից: Սրա աշակերտ չաջի Մէհթի—Քիաղիմը մեռնելիս կտակեց աշակերտներին, թէ չուտով երենելու է աշխարհին Մէհթիի հոգին, պէտք է հետամահել նրան գտնելու: Ըշակերտները իրենց ուսուցչի մոհից յետո, քառասուն օր ծոս պահեցին, ակօթեցին և ցրւեցին զանազան կողմեր հետամտելու, գտնելու Աստւածային հոգով ներշնչուած հոգիորականի, Մէհթի—Քէաղիմին յաջորդ անւանելու համար:

Երբ իրար ետեից «Շէլիի» աղանդի նշանաւոր առոնենու վիլէմները (զիտնականներ) խստովանեցին և զաւանեցին Բարի վարդապետութիւնը, Մէհթ-Ալի Մէհմէդին յաջորդ ընտրեցին Շէլի-Ահմէդին, Մէհթ-Քէաղիմին, ամբողջ Պարսկաստանում այնպիսի հոչակ ստացաւ Բարը, որ Մէհմէդ-Ջահը այս շփոթութիւններից վախենալով, եղիդի հոչակաւոր տղա Մէհթի-Ջափէր Քէաշի որդուն—ազա Մէհթ-Եահիային ուղարկեց զիրազ, որ շիաներին Բարի մոլորութիւններից ետ դարձնի և նրա խարէւաթիւնը բացարելով՝ խայտառակի: Երբ Մէհթեահնեան մօահցաւ Զիրազին, ճանապարհորդութեան վերջին գիշերը մի երազ տեսաւ: Այս տեսիլը մեծ ներգործութիւն ունեցաւ, Եահիան, որպէս ներշնչման հաւատացող շիա, ընկաւ խօր մաքերի մէջ: Մէհթ-Եահիային երազում թւում էր,

թէ ինքն արդէն հասել էր զիրագ, մաել էր Բարի բնակաբանը, որի հետ երկար վիճելիս, Բարը իւր խմած թէյի կիսատ բաժակը նրան մնկնելով առաջարկել էր խմել և նա երազում հնազանդուելու կատարել էր Բարի խնդիրը: Այս երազի ներգործութեան տակ, երբ Սէիդ-Եահեան զիրագ համելուց յիշո, ներկայացաւ Բարին, վերջինս ձեռքի կիսատ բաժակով թէյը նրան առաջարկեց, ասելով—«իմիր այս կիսատ բաժակի մնացորդ թէյը, որը զիշերս դարձեալ միասին խմեցինք»: Բարի այս խօսքերը, ձայնը, դէմքը, կազմը և շարժումները այնքան նման էին տեսիլքին, որ Եահեան շուարած առաւ բաժակը, խմեց և շարունակեցին իրենց «անուրջներում» թերատ թողած վիճարանութիւնը: Զիա կղերի և ամբոխի համար մի սոսկալի պարտութիւն էր, երբ ամբողջ Պարսկաստան-լուր տարածուեց, շրջաբերականներ ցըսւեցին, թէ Բարի դէմ հակածառելու և նրան խայտառակելու համար ուղարկուած յայտնի միւջթէհիդը պարտւեց, խոստովանեց և դաւանեց Բարի վարդապետութիւնը:

Գայթակութիւնը հասաւ զագաթնակէտին:

8. Բարի քարոզութիւնները գտւանող և հետևողները խոս տովանում էին, թէ Միրզա-Սէյիդ Ալի-Մէհմէդը ինքը Մէհթին էր, որին սպասում էին պարսիկները, այն ինչ իսնա աշարիմիթէշէրիների գաւանութեան համաձայն, Մէհթին չպէտք է որեէ կնոջից ծնէր, այլ որպէս «գերբնական կատարելութիւն» պիտի վերակառնար երկիր: Հետեարար Բարը իւր քարոզութիւնով ոչ միայն հակասում էր շիանիրի հադիսներին, ոչ միայն աւանդութիւններն էր եղծում, այլ գաւանանքը, հաւատի էական մասն էր հերքում, այնպէս որ, մի ահաւոր ըսպառնալիք էր այդ քայլը, որ կարող էր իսպառ ջնջել շիական կրօնը: Ամբողջ զիրագի ազգաբնակութիւնը ճանաչում

էր Աղա Սէիդ-Թզա վաճառականի որգուն, որբին, ամէնքը տեսել էին նբա ծնունդը, հետեարար ամբողջ տասը գար Զարուկայից Մէհթիի վերադարձին սպասող շիաները ինչպէս կարող էին դիշել և դաւանել, թէ այս երեխայից մնծացած Բարը նոյն ինքը Մէհթին է: Դրութիւնը այնտեղ հառաւ, որ հարկ եղաւ կառավարութեան խիստ միջամտութեան, որը մինչ այդ աատանում էր: Կառավարութիւնը գանդաղելու էլ իրաւունք ունէր, քանի որ Մէհթիի վարդապետութիւնն զինտափաթի գոյութեան հակառակ ներշնչումներ էր տարածում ժողովրդի ամէն գասում, որոնք հաւատացած էին, թէ Մէհթիի վերադարձը պիտի ջնջէ ոչ միայն պարսկական, այլ ամբողջ հողագնդի թագաւորութիւնները: Ջէյխ-Ահմէդ-Քահրէինի Արաբացիի քարոզութիւնները և վարդապետութիւնը բոլորին տարբեր հիմունք ունենալով իսնա աշարի—միւթէշէրինների զաւանանքից, բաւական խախտել էր շիաների զաւանանքը՝ Մէհթիի մնծագօր գալստեան մասին, որով ամբապնդել էր աշբունական տան զրութիւնը: Կառավարութիւնը շէր կարող իրեն նպաստաւոր վարդապետութեան աշակերտողներին հալածել, քանի որ Ջէյխ-Ահմէդի, Հաջի Սէիդ Քեազիմի բոլոր նշանաւոր աշակերտները շրջապատել էին Սէիդ-Ալի-Մէհմէդին՝ Բարին, իսկ սրանք իրենց վարդապետութեամբ արդէն տիրել էին Պարսկաստանի շիա հասարակութեան կէսից աւելի մասը: Ջէյխ-Ահմէդի վարդապետութեան համաձայն, ինչպէս Աստւած երբէք չի կարող մարմնանալ, նոյնպէս որեէ մարմին չի կարող աստւածանալ, այլ աստւածային ողին անդրադառնալով որեէ մաքուր մարգկային սրտում, նրան ներշնչէ Աստուծո բանը—Երկնաւորի պատուիրանը խօսելու մարդկային ցեղին: Մինչե անգամ նա պնդում էր, որ աշխարհիս վերջին էլ մարդկային մեսած, վթած դիտկները

չպիտի կենդանանան, չպիտի վերստանան իրենց հոգիները, այդ այդ հոգիները պիտի նոր-թարմ մարմին հաղնեն, ինչպէս ծիրանի կորիզից աճած ու հասած ծառը տալիս է, արտադրում է ճիշտ իր նման ծիրան, տանձի ուրբմից աճած ծառը՝ տանձ է տալիս, նոյնպէս նոյն հոգի մէջ փթած մարմինները պիտի իրենց համանմանները ծնեցնեն, որոնք իրենց հոգիներով պիտի վերակենդանանան: Այս վարդապետութիւնը աւելի ազաւազեց չաջի Քէրիմ-խան Դաջարը, որ քարոզում էր, թէ իւր կուրծքը բնակարան է Մէհթիի հոգուն և պատկամներ էր տալիս: Բայց, երբ արքայական տանից արիւնակիցները քննութիւն բացին, Առևածութեան բանը խօսելու յաւակնող այդ արքայազնը քաջութիւն չունեցաւ պաշտպանելու իւր հրատարակութիւնները և նրան պատասխանատութեան ենթարկեցին:

9. Շէյխի վարդապետութիւնը անշափ նպաստեց Բարի վարդապետութեան տարածման, իսկ շէյխի ազանդաւորների տասնեութ նշանաւոր կզերականները Բարին յարիլը, որորովին հաստատեց Բարիական ազանդը Պարսկաստանում: Այս տասնեութ աշակերտները իրենց քարոզութիւնների մէջ ամէն տեղ մատնանիշ էին անում Շէյխ-Ահմէդի և Սէիդ-Քեազիմի այն զրուածները, այն քարոզութիւնները, որոնք ակնարկում էին Բարի գալաւարը, սրա յայանութիւնը և այդ քարոզութիւններով, այս տասնեութ աշակերտների ձեռքով իրանի ամէն կողմ կատարուած պրօպագանդան տարաւ յաղթանակը, Բարիզմը բաւն զրեց Պարսկաստանի նշանաւոր քաղաքներում, աւաններում, նոյն իսկ զիւղերում: Այս տասնութը ուլէմների աւած զաւանութիւնը, կատարած քարոզութիւնը այնպիսի սպառութիւն ներշնչեց Սէիդ-Ալի-Մէհմէդի վրա, որ սա Բարի իր տնունն էր աւելացնելով—կցելով նրանց թրին, հրաշ-

գործ տասնեիննը թիւը կազմեց, տարին բաժանեց տասնեիննը ամսի, ամիսը տասնեիննը օրուան: Այս տասն և իննը անձերը համարուեցան նոր կրօնի սիւները և Բարիական շատ թւեր տասն և իննի վերածուեցան: Հարկը 19-րդ բաժին է հաւաքւելու, տուքերը 19-րդ մասն է զանձւելու, ժառանգութեան տասնեիններորդը պիտի տրուի հասարակական գանձարանին, քաղաքական; արդարութեան ժողովի անդամները 19-ից է բաղկանալու, հայն, հայն:

Բիշրօյէցի Մօլլա Հիւսէյն Միւջթէհիզը, երբ Քէրէլայից բաժանեց իր ընկերուկիցներից, իրենց հանգուցեալ վարժապետին՝ Սէիդ Քեազիմին մի արժանաւոր յաջորդ գտնելու յոյսով, նա որոշեց ուզգակի զիրագ գալ և իջնել իւր մահերիմ Սէիդ-Ալի-Մէհմէդի տունը, տառը-քսան օր հանգստանալ, կազդուրել: Սէիդ-Ալի-Մէհմէդը մեծ յարգանքով ընդունեց բարեկամին և շատ սիրալիր անցկացրին: Գիշերը երկար խօսակցութիւնից յետո, տան տէր երիտասարդը հարցրեց Բիշրօյէցիցից, թէ—«Ըրգեօք շէխիների պարագլիխն վայել արժանաւորութիւնները ինքը չէ իւրացըրած, ինքը արժանի չէ այդ կոշման»: Բիշրօյէցին ժպտալով ասաց,—«Երբէք: Ուզիդ է, վարքով, բարքով, խելքով զուք շատ արժանաւորութիւն ունիք, բայց Սէիդ-Քեազիմին յաջորդելու համար անհրաժեշտ է բարձր զիտութիւն ունենալ, անսահման մասւոր հայեացք, հակտորական ձիրը, բնատուր տաղանդ, որոնցից բարեկամս, դուք զուրկ էք»: Այս խօսքերից շյուսահատուեց Սէիդ-Ալի-Մէհմէդը, բայց երիտասարդի յանցուզն երեակայութիւնը վեթորիկ բարձրացրեց Բիշրօյէցիի գանկում: Մտքի ալէկոծման առաջն առնելու նպատակով, հիւրը սենեակի թափճակից մի զիսք վերցրեց կարդալու, որի ճակատին զրուած էր «Բէզարա—Սուրիմի» «մէկնութիւնը» (զուրանի բ. զլիսի), որը լարեց

Բիշրօյէցիի հետաքսքրութիւնը: Այդ արարական գրուածքից մի քանի երես կարդալով, նրա թարմութեամբ բոլորովին յափշտակուեց հիւրը և հարցրեց, թէ—մի է զրել այս «մեկնութիւնը»:—Մի յաւակնութիւն ունեցող երիտասարդ, պատասխանեց տանտերը: Բայց այնքան հմառութեամբ և այնպիսի ճարտար ոճով էր գրուած այդ «Մեկնութիւնը», որ Բիշրօյէցին տարակուսելով հիւրընկալի վրա, նրան մեկնեց զիրքը և ասաց,—«Ես յոզինել եմ, խնդրում եմ դուք կարդաք, ես քիչ ատրածւած լոեմ»: Սէիդ-Ալի-Մէհմէդը կարգում էր դանդաղ և վատ առողանութեամբ, որից հիւրը եղբակացրեց, թէ դա նրա գործը չէր կարող լինել: Հետեւալ օրը Բիշրօյէցին տարան մզկիթ քարողելու, բայց նու կարկամից և յոզնածութիւնը պատրաւկ բերելով՝ տուն դարձաւ: Երբորդ, չորրորդ օրերն էլ շկարողացաւ քարողի, այնպէս որ նրա մըտքում գամլած էր հիւրընկալի առաջարկը, կարգում էր նրա զրած «մեկնութիւնը» և մտածում: Այդ գիշեր նորից կրկնեց տանտերը իւր հարցը, թէ—«արդեօք ինքը արժանի չէ Մէհմէդ-Քեազիմին յաջորդելու»: Այս անգամ Բիշրօյէցին մի խրատական խօսեց, երիտասարդին մոլորութիւնից և մանիակց ազատելու և իր միտքն էլ խաղաղացնելու դիտմամբ՝ նրան մի քանի շատ խրթին հարցեր տուեց: Երբ Բիշրօյէցիի հարցերի դէմ տանտերը երիտասարդը սկսեց արարական լնտիր ոճով ինքնարուղիս այաթներ կարդալ, բայց արել իրեն արքուած հարցերը, Բիշրօյէցին շւարեց: Այս անգամ Սէիդ-Ալի-Մէհմէդին բոլորովին ընկճելու համար հարցրեց, թէ «—ինչ է պատճառը, որ զուրանի «Յովոէփ Սուրբէն» համարում է պատճութիւնների սրանչելիքը: Սէիդ-Ալի-Մէհմէդը պատասխանեց, թէ—«այդ հարցը տւել էիք Սէիդ-Քէազիմին, հապատասխանել էր, թէ զրտ ժամանակը դեռ չէ հասել: Իսկ

և ասում եմ, ահա այսօր լրացաւ այն ժամանակը» և իրար ետեկց երեք չորս հարիւր այաթով արարելին լեզուով մի ճառ արտասանեց, որից Բիշրօյէցին մոլորւած, արձանացած մնաց: Տանտէրը թողեց հիւրին հանգստանալու, մտաւ կանանցը, որտեղից մի-երկու ժամ յետո վերագարձաւ Բիշրօյէցիի մօտ, նրա համար մի բաժակ թէյ բերեց, առաջարկեց և սթափեցրեց միւջթէհիգին խորասուզւած մտքերից: Այս սթափսումից յետո խստովանեց հիւրը, թէ ճշմարիտ որ Մէհմէդ-Ալի-Մէհմէդը աստւածայայտնութիւն է, որի առաջին գաւանողը, ամենայաշանի քարողիշը և մարտնչողը զարձաւ, որի համար էլ նրան կանչեցին Բար-Էլ-բար (Դոան-դուոր):

10. Ջիբաղի կառավարչապետ՝ Մահարի իխթիարը նորադանկներին սանձելու համար, Բարի հետեւրդներից նշանաւորներին կալանաւորեց, մօրուքները կարել տւեց, ապարոշները բացեց, երեսները մբռաեց, Եշերի վրա նստացնելով պաշերը ձեսքերը տւած ման ածեց քաղաքի փողոցները, Ջիբաղի թաղերը, մունետիկների միջոցով խայտառակեց և սպանաց քաղաքացիներին նոյն խայտառակութեամբ պատժելի, ով որ յանդկնի հետեւլու աղանդաւորներին: Բայց այս հալածանքը աւելի բորբոքեց Բարի հետեւրդներին, որոնք աւելի զրգուած՝ էլ համարձակ քարողեցին Մէհմէդ-Ալի-Մէհմէդի վարդապետութիւնը: Խսփահանի կառավարչապետ՝ Մութէմէդ-Գօվլին Մանուչէհր խանը, որ ազգով վրացի էր և փոքր հասակից գերւած, ներքինիացած ծառայում էր ալքոնիֆում, իւր մօտ հրաւիրեց Բարին Ջիբաղից, որը երկար հակածութիւն ունեցաւ Խսփահանի միւջթէհիգների հետ, բայց որեւ եղբակացութեան շհառան: Մանուչէհր-խանի մահից յետո, որա եղբօրորդին՝ Գէորգին-խանը յաջորդելով, մեծ-վէզիրի հրամանի համաձայն կալանաւորեց Մէհմէդ-Ալի-Մէհմէդին

և ուղղակի ճանապարհեց Թաւրիդ: Կենզրսնական վարչութեան կարգադրութեան համաձայն, Թաւրիդից էլ մի քանի օր յետո ուղարկեցին Մաքու, ուր բանաբարկուտծ մնաց բներդում երկար ժամանակ, Մաքուի իշխան Ըլի խանի մօտ, որից անշափ յարգւած էր: Պարսից կառավարութիւնը կալանառը բարին, բայց չկարողացաւ չղթայել, կտակալել նրա քարոզութիւնը, որը հսկայական քայլերով մտնում էր Պարսկաստանի նշանաւոր քաղաքները, աւանները, ժողովուրդը, պաշտօնականները, զօրքը, մինչև անզամ կղերը խոնարհում և հպատակում էին այն կալանառորին, որը Մատոսի լանջերից աշքերը յառած գէպի արեկելք, այդ ժողովրդի վիճակով էր տոշուրում և գրիշը սրտի արիւնի մէջ թաթախելով, նրանց յորդոր էր զրում սթափւելու իրենց դարեսը լետարգիտանքնից: Յարի քարոզութեան երբորդ տարին, երբ նրան տարան Մաքուի բերդը, արգէն եզր, Քիրման, հսկանան, Թէհրան, Թէշա, Մազանդարան, Ղազուին, Զինջան, Թաւրիդ ահաւոր հետեւողներ ունէր Յարիկալանութիւնը, այն էլ երկրի հսկացող գասից, նշանաւոր կղերից և Սէիդ Ալի-Մէհմէդի նամակները, բրոշիւրները, գրքերը նրա աշակերտները անխափան Մաքուից տանում էին, տարածում էին երանի ամէն կողմը. ամէն տեղ արտաքրում և սփռում էին ժողովրդի բոլոր խաւերում: Հատ կարճ ժամանակամիջաց քարոզեց Յարը, եօթը տարի, որից շորս տարին բանտարկուած էր և այդ եօթը տարուան ընթացքում անշափ գրուածներ թողեց, որոնցից նշանաւորներն են, 1. Թէյանը Երարի (մեկնութիւնսուրիէ-թէկարա), նոյնը Փարսի, 2. Անսան Էլ Ֆաս (պատմութիւնների սքանչելիքը), 3. Թափոսիրի սիւրիէի Քէֆուէր (Քէֆուէրի բացարութիւնը), 4. Գելափիլի Սէթէշ (եօթը փաստեր), 5. Նամակներ Հաջի-Միրզա-Ազասի մեծ վէղիրին և ու-

րիչներին, 6. Ղայսւմ-Էլ-խսմէա (անունների հաստատութիւնը), 7. Միւթէֆէրիքա (այլ և այլք), 8. Նուրուվէթի-խասսէ (խսկական-մարզարէութիւն), 9. Թափոսիրի Սիւրիէի-վկալիէս (բացարութիւն) և ուրիշները: Այս գրուածներից մեծ մասը նու Մաքուի բերդում շարազրեց և տարածեց: Այս գրուածները ձեռքէ ձեռք իլում, ընդօրինակում, տարածում էին և ամէն մի պարսիկ իլեն մեծ փառք էր համարում, եթէ կարողանում էր այս նոր մարզարէի գրուածներից մի քանի տող ձեռք բերել, կամ գոնէ պատճէնը գտնել: Ամբողջ Պարսկաստանի քաղաքներում և աւաններում զաղտագողի հաւաքրում էին ներքնատներում ZERZEMIN [Չէրջէմի], մեծ հրճանքով կարդում, բացատրում էին այդ գրուածները և անհասկանալի կէտերի մասին նորանոր մեկնութիւններ էին խնդրում Սէիդ Ալի-Մէհմէդից, որ ամենայն սիրով բոլոր հարցերին պատասխանում և շրջաբերականներով տարածում էր, հետեւզների—սիրելիների շրջանում: Յարը կալանառորուած էր, բայց նրա գրիշը քարոզում էր ամբողջ երկրում: Արքան խստացնում էին հսկողութիւնը, այնքան շատ սաստկանում էր թղթակցութիւնը:

11. Ինչպէս յայտնի է, Խոլամի հետեւողների աշխարհանցիացքով սրեէ կրօնական բէֆորմ, պետական—քաղաքական վերանորոգութեան նշանակութիւն ունի, քանի որ Խուամի վարդապետարանը—Ղուրանը և հաղիսները միւսուլմանների համար մի կրօնաքարաքական—կանոնական և օրէնսդրական կօդէրս է, մի սահմանադրութիւն է Ալահից նախասահմանւած ժողովրդի իրար մէջ, համայնքի, կղերի և տուաջնորդի մէջ, ընտանեկան, հասարակական, գատառանկան, քրէական, անհատական և առետրական բոլոր գործողութիւնների համար: Հետեւարար երանի բնակիչները այն

յոյսն էին տածում, թէ Բարի նոր—կողէքսը պիտի հիմնիվել տապալէր շիամների շէրիաթը և պիտի հիմնէր մի նորագոյն օրէնսդրութիւն՝ ժամանակի ողու և կարիքների համեմատ: Բարը ասում էր, թէ—«Ինքն է այն դուռը (Բար) որից խօսում է ամէնազէտի, Սմենակալը, և երկնային պատէրները մարդիկներին տրում է այդ դոնից»: Առաջ նա ասում էր, թէ ինքն է Զարուլգա հեռացածի դուռը, որից նա ստանում է պատգամները, ապա նա քարողեց, թէ նա ինքն է Զարուլգայից սպասւածը և ապա, թէ Զարուլգան առասպել է, իսկ իր մէջ է ընակում այն գերազոյն հոգին, որ քարողում է ճշմարտութիւնը և աւետում է աշխարհին շուտով զալիք աստածայտնութիւնը: Այս պատճառով կղերը—շիա միւջթէ-հիգները կասկածում էին, թէ կարող էին իրենց դիրքը կորցնել, կառավարութիւնը մտածում էր շփոթութիւնների առաջն առնել, երիտասարդ բէֆորմիստները տենչում էին Բարիանների ոյժից օգտեև, երկրում վերանորոգութիւն մըտցնել զրկւած, կեղերւած, անարդւածները ջանում էին կոսծանել հին կարգերը, դրանց պահպանողներին ու գործադաներին, երկրագործը երեակայում էր օձիքն ազատել անդոզներին, բարձրացնել իսկական առաջատառում էին Բարի աշուկերտներին, և երազում էին երկրից անիբաւութիւնը վերցնել, համաձայն քարողի, նոր մարդարէի խոստացած աւետիսներին:

12. Բիշրօյէցին, երբ լոեց Բարի Մաքու աքսորւելը և բանտարկւելը, նա զնաց Մաքու իւր պաշտելի վարդապետին այցելելու: Վերադարձին թէ Բարը նրան յայտնեց իրան պատահելիք փորձանքները, արիւնահեղութիւնները և սպանւելը, բայց Բիշրօյէցին աներկիւդ՝ ընկերակիցների հետ դի-

մեց Խոբասան: Ճանապարհին երբ լսեցին Մէհմէդ շահի մահը, վանգից զերծ մնալու համար մատծեցին մի առժամանակ մնալ Մազանդարան, մինչեւ նոր շահի Թաւրիզից Թէհրան հասնելը, գահ բարձրանալը, երկրում կալվերի վերահաստատելը և խաղաղւելը: Երբ ուղեցին Սարի քաղաքը մըանել, այնահեղի միւջթէհիգ՝ Սայիդ-իւլ-իւլէման, որ թէ Բիշրօյէցին և թէ Մոլլա Գուղկուսի մեծ հակառակորդն էր, հրաման ուղարկեց, որ այդ քեաֆիր (Հայհոյող) Բարիները չհամարձակուին ապականել իրենց քաղաքը: Քաղաքի գոներում սրբանց գնդակներավ հալած ելիս, Բարի վարդապետութեան համար ասացին անգամ երեք զոհ ընկան Սարիի պարփակների տակ, որի պատճառով սուր բարձրացրին Բիշրօյէցին և ընկերները պաշտպանւելու համար և բնութեամբ քաղաք մտան, Սարզա մէլգանի վրա մի քարվանսարայում տպաստանեցան: Քարվանսարայի կարից ազան կարգացող երեք Բարիներին իբար յետեց գարձեալ գնդակահար արին Սարիցիները, այնպէս որ Բարիները պարաւառւած ամբացրին քարվանսարայի զաները, պաշտպանւեցուն, որոնց պաշտպացին Սայիդ-իւլ-իւլէմի հետեւողները: Հինգ-վեց օր աեց կոփոր, երկու կողմից էլ զոհեր ընկան: Երբ կառավարչական պաշտօնականները միջամտեցան և ձգտում էին խաղաղացնել, միանգամայն կողոպտել Բարիներին, Բիշրօյէցին զարկեց սպանեց կառավարութեան ներկայացուցչին, քաղաքում և ըթակալում ունեցած կրօնակիցների աջակցութեամբ, մօտ 360 հազի, դուրս եկան Սարից, գնացին մօտակա Շէխ-Թէրէբսի աւերակ բերգը մտան, նորսզեցին, ամբացան և ամբողջ ինն ամիս կուեցան պարսկական բանակների դէմ:

13. Ամբողջ զիւղական աղգարնակութիւնը, նախապաշտուած դասը անցաւ Բիշրօյէցիի կողմը, ամենքը ընդունեցին

Բարի վասդապետութիւնը և ամէն մարդ իւր կարողութեան շափով օգնում էր, թէ բերդի շինութեան, նորոգութեան, ատաղձով, մթերքով, պաշարով, զէնքով, այնպէս որ կառավարութիւնը պարտաւորած ահաւոր բանակ ուղարկեց բարիների դէմ: Յաճախ կողմերը իրար դէմ յարձակում, տրիւնահեղ կոտորածներ էին անում, բարիները դուրս գալով բերդից կոտորում էին հակառակորդներին, ցրում նըանց ոյժը, կրակ տալիս դօրանոցներին, մթերանոցներին: Այնքան ծանրացաւ դօրքի ու շիաների վիճակը, որ Սայիդ-իւլ-իւլէման Զհագ (կրօնական պատերազմ) հրատարակեց: Բայց դաւր, քանի որ պարսիկները երբ տեսնում էին բարիների հերոսական կոխուը, մի բուռը մարդիկների այսպիսի աներկիւդ գիմադրութիւնը, իրենց ծանօթների և հարազատների մարմիններից անջատած և ցիցերի վրա բարձրացրած զլուխները, սրոնք անկած էին Թէրէրսի բերդի շուրջը, յուսահատ վերագունում էին իրենց բնակարանները: Այս յարձակումների ժամանակ բարիները մտան բարքուչ, աւերեցին, այրեցին Զհագագէի ապարանքը, որի բոցերի մէջ խանձւեցին շահզա զէները: Կառավարութիւնը անձարացած օրից օր աւելացնում էր զօրքի և թնդանօթների թիւը, որոնք գիշեր-ցերեկ տըքնում էին տապալել Թէրէրսի բերդը և բարիներին: Որպէսզի գիշերները հնարաւոր լինի գործելու, զօրքերը կրակ էին տալիս շրջակա անտառներին, որոնց յուսով յարձակում թշնամիների վրա: Մի գիշեր Արքաս-Ղուլի խանը՝ Մազանդարնի զօրքերի հրամանակալը կարողացաւ գնդակահար տապալել Մոլլա Հիւսէյն Բիշրօյէցիին, որին յաջորդից Մոլլա Գուղուսը: Բիշրօյէցիին թաղեցին Զէյլ-Թէրէրսի բերդում, բայց բերդին տիրելուց յետո պարսիկները նքա դիտկը հանեցին, մանրեցին և թափեցին շներին:

14. Պարսիկները 7000 զօրքով, թնդանօթներով և ձիաւորներով պաշարել էին Թէրէրսի բերդը, իսկ բարիները թէի անդին, առանց մթերքի, քաղցած, խոնաւութիւնից թուլացած, դարձեալ հերոսարար զիմագրում էին մինչ այն աստիճան, որ Զահղաղա Մէհմի-Ղուլի-Միրզան ընկճւոծ, զիջաւ դաշնակցիւու Բարիների հետ և պայմանաւորեց նրանց ազատ թողնելու, անցնել Պարսկաստանի միջով, զնալ Բաղդադ: Դաշնագիրը գրեցին, Ղուրանով երգւեցին պարսիկները, յանձնեցին Գուղգուսին: Բարիները անձնատուր եղան, երբ զէնքը, մթերքը յանձնեցին, երբ պատրաստում էին ճանապարհ ընկնելու, երբ նստած սեղանի ընթրում էին անդէն ընկճւածները, շիաները—զօրքերը վրա պըծան, զնդակահար արին բուրին: Ընձնատուր եղած 350 մարդուց միայն 16 հոգի կարսդացան աղաւուել, սրոնք պատերազմի մանրամանութիւնները տարածեցին ամրող Պարսկաստանում, Զահղաղա կառավարչառեալ մոլլա Գուղգուսին հազար թուլմանով ծախեց նրա հակառակորդ մոլլա Սայիդ-իւլ-իւլէմային, որը շարաշար տանջանքով կտրտել տեսեց Գուղգուսին իւր թալարաների ձեռքով և մարմինը թափեցին շների առաջ, 1849 թւականի աշնանը:

15. Մէիլ-Միրզա Եահեա Դարբարին, Բարի վարդապետութիւնը ընդունելուց յետո, խիստ հալածանքի ենթարկեց: Եսֆանից, Եղղից, Շիրազից ամէն տեղից նա պարտաւորած էր խոյս տալու, այնպէս որ նա մի խուլ անկին քաշեց՝ Նէյրիդ քաղաքը, իւր ընտանիքի մօտ: Ուր որ զնում էր Եահեան, նրա վրա յարձակում էին շիա կղերը, որպէս ուրացողի՝ հալածում էին, տանջում էին առանց միջոցների մէջ իւրութիւն զնելու, նոյն իսկ ձգտում էին նրան սպանել, զոյութիւնը չնչի աշխարհի երեսից: Հալածւածը կրկնում էր

ամէն տեղ.—«Հէս սր եռ այն միւջի էհիդն եմ, որին ամբողջ իրանը երկրպագում էր, հրամանները գործագում, ինչի այժմ ինձ այսպէս հալածում էր, մինչև անգամ շէք թողնում, որ քնտանիքիս մօտ քիշ ժամանակ էլ է խոզագնմ»: Սէիկ Եահեան Նէլլիգում քաւական հաւանգներ ունէր, այնպէս որ մշ բնիկ հակոռակորդները, ոչ կղերը, ոչ էլ կառավարչական գործականները չէին յանդկում նրա վրա ձեռք բարձրացնելու իոկ ատելութիւնը օրից օր սասականում էր, կենարոնական վարչութիւնը Մարդանգարանի արկածներից սարստիած, ուզում էր նարիականներին ամէն տեղ բնաջինջ անել: Երբ խոռոշութիւններին վերջ տալու նպասակով, երկրի կառավարիչը հրաւէր սաբբեց, կանչեց տեղական միւջթէհիդներին, իւլէմներին և Սէիկ-Եահեախին, որ բացատրւեն, պարզեն խընդիրը, վերջ տան քինականութեան և վէճներին: Երբ Սէիկ-Եահեան առանձնացաւ, կառավարիչը նրան կալանաւորեց: Բարինները երբ լոեցին, թէ իրենց առաջնորդը կառավարչի ընակաբանում արգելուած է, իսկոյն շրջապատեցին այդ առանը և ձգուում էին հանել, առանել Եահեախին: Ամբոխի աղմուկից և նրանց բազմութիւնից սոսկալով կառավարչը, երդումով խոստացաւ արձակել բոլորին, այնպէս որ Եահեան պարտաւուց իւրայիններին հրամայել ցրւել, վերադառնալ ըլլակարանները: Այս նենգութիւնով ժաղովրդին ցրւելուց յետո, Եահեախն գնդակահար արին և զիշերով մէկ մէկ մտան ապահովառների տները, գլխաւորներին կալանաւորեցին, սպանեցին, կին, աղջիկ, տղա՛ գերեցին և տւարի տւին նըրանց գոյքը, կարողութիւնը: Եյս բարբարսական լանութիւններից սարսափած թարինները իրենց ընտանիքով մանակ առաջարկուում էին առաջնորդներին, անոշութեան վերաբերութիւններին և առաջնորդներին: Եյս բարբարսական լանութեան վերաբերութիւններին առաջնորդներին առաջնորդներին և առաջնորդներին:

պարսկական դինուորների և տնկուշա պաշտօնակարների հետ, որոնք կեղեքում, կողովառում էին պատահածին և զուր զրբարտութիւններով տանջում էին նոյն իոկ ոչ Բարիններին: Պաշտօնականները և շիտ-կղերը զուր մատնութիւններավ, զրպարտութիւններով կեղեքում էին ամբողջ նահանգը և սղրացնում թշւառ աղդաբնակութիւնը:

16. Կուին այնտեղ հտսաւ, որ կտոռավարութիւնը տասը հազար զօրք ուղարկեց, թնդանօթներով և հեծելազօրքով, որոնք սմբակութում էին ապառաժները, այրելն ու անտառները: Յուսահատութիւնից բորբոքւած Բարինները անվերջ իշնում էին լեռներից, հարւածում, կատուում, ցրւում էին զինուորական զնդերը, սրանց վառողը, զէնքերը, ուտելիքը յափշտակելով՝ վերադառնում էին իրենց ապառաժները: Մինչև անգամ պարսիկ զինուորների ձեռքից թնդանօթները լոլեցին, լեռները տաբան Բարինները և զրանցով հալածեցին զօրքին: Կուող Բարինների թիւը թէ եօթք-ութք հարիւրից աւելի չէր, բայց նրանց սարսափը զողացնում էր բանակի սովորապետ Զահգազտ Փարման-Փէրմային, որը չէր իմանում, թէ ինչ հնարիով խորի տպստամբներին և նրանց չնչէ: Բայց և այնպէս քաղցը, ցուրտը մթերքի պակասութիւնը, կանանց, երիխանների տանջանքը, երկու տարւան անվերջ յագնածութիւնը, ջղերի զրգումները թուլացրին և ստիպեցին Բարիններին զիջանելու, հաւատալու պարսիկ զօրքականին, անձնատուր լինելու իրենց գահիններին: Հրամանատարը Բարինների զլխաւորներին կոտորել աւելց, նշանաւորներին ուղարկեց Ֆարսիստանի զանովան քաղաքները և աւանները խայտառակութեամբ տանջելու և սպանելու, երեխաններին, կանանց և աղջիկներին գերի վարեցին Զիրադ զարհուրեի անոարաններով: Զօրքերը իրենց նիզակների ժայրերին ցցուծ

տանում էին քաջ բարիների գուխները, կամ նրանց բալուլով երեխաները: Բարիների զեռահաս աղջիկներն ու կանայք հրապարակով պիտի յագեցում տային իրենց թշնամիների լոկիրշ կրքերին. . : Դեռ մինչև այսօր Փարսիստանի բնիկները ուարսափում են, երբ նկարպրում է նրանց բարիների կեանքից որևէ արկած, դեռ մինչ այսօր Շիրադի բնիկների ականջներից չէ հեռացել այն ողբի, կոծի ձայնը, որոնք բաղլուել են նրանց ականջներին կէս դար առաջ: Ամբողջ տասը-քսան տարի ամէն մի պարսիկ պաշտօնականի, մոլլախի, թալաբայի համար անոպառ աղբիւր էր բարիներին մատնելու և կեղեքի լու արհեստը: Ամէն մի սոված, ամէն մի վուժխնդիր թշուասցնում էր հակառակորդին՝ նրան Բարի հրատարակելով և ագահ կառավարիչները իրենց անհեռատիս ընթացքով քայրային երկիրը:

Եւ որքան հետամտում էին որքան առնջում էին, այն բազմանում էին Բարիները:

17. Բարի անձնուէր քարսպիշներից և տասնութը աշակերտողներից մէկն էլ Զէնջանցի Մոլլա-Մէնմէդ-Ալի միւջթէ-հիդն էր, որին անւանում են Հէօջաթ: Սրա հայրը Շէյս-Անմէդ-Բահրէինիի աշակերտներից էր, իսկ ինքը Մէիդ-Քէտ-ղիմի և ապա եռանգով մարտնչող Բարիզմի: Հայր ու որդի մեծ ահամբաւ տանից էին, ահաւոր հետեղներ ունէին իրենց ծննդավայրում և վիճակում, այնպէս որ Հէօջաթը շտա կարձ միջոցում տարածեց նոր վարդապետութիւնը Զէնջանում: Շէյսի ժողովուրդը այնպէս կապիեց Բարի եկեղեցու հետ, Հէօջաթի թալաբաները (ուսանող) այնպէս իւրացրին նոր վարդապետութիւնը, որ աներկիւդ ամէն տեղ Մէիդ-Ալի-Մէնմէդին քարոզում էին Մէնթի և զբացներին հրաւէր էին կարգում յառել իրենց գաւանանքին: Որովհետեւ քաղաքի ժո-

ղովրդի հասկացող, ապահով դասակարգը Հէօջաթին էր յառած, միւս կղերը նախանձից անվերջ բողոքներ էին սւզարկում արքունիք, պահանջում էին սահնձել նորազանգներին: Երկու անդամ Հէօջաթը Թէհրան կանչւեցաւ, որտեղ նա աներկիւդ պաշտպանեց իւր դաւանանքը և վերջին անպամ բանախց վախաւ ծննդավայրը, Մէնմէդ-Զահի մեռնելուց յետո, երբ ժառանգը դեռ չէր հասել մայրաքաղաք: Բայց Մազանգարանի, Նէյրիզի կուհների պատճառով տարբեկ ընթացք ստացաւ Բարիների հալածանքը: Մինչ այս Բարի քարոզութիւնը, Շէյսի շարունակութիւնը կամ մի նոր աղանդի յաւելումը համարելով, կառավարութիւնը այնքան էլ նշանակութիւն չէր տալիս, բայց երբ նկառուեց, որ աղանդաւորները հիմնովին ուղում են վոփոխել երկրի կաղմք, կարգերը, որոնց աջակցում էին «Թանդիմաթի» երազողները, կենտրոնական գարշութիւնը տակտիկան հիմնովին փնիեց:

18. 1850 թւականի մայիսին Զէնջանի կառավարիչ Ամիր Ասրան փանը մոնեստիկով հրաման արձակեց, որ Միթէշէրիները ջոկեն Բարիներից, որով քաղաքը երկու մասի բաժան էցաց, գետի մի կողմը հաւաքեցան Շիաները, միւսում՝ Բարիները: Մօսկարի էր ճգնաժամը, հայրը՝ որդուց, քոյրը՝ եղբարից, եղբարը՝ եղբօրից, կինը՝ մարդուց, աղջիկը՝ ծնովներից բաժանում և իրար հակառակ զինուամ էին: Երբ թշնամական գիրք բանեց կառավարիչը, Բարիները մատն իրենց թաղին կից աւերակ «Ալի-Մարդան-խանի» բերդը, իսկոյն նորոգեցին, ամրացրին, փոքրիկ մարտկոցներ շինեցին կառավարչական ոյժին դիմադրելու համար: Այստեղ էլ շիամիւջթէհրիները «Զհադ» հրատարակեցին, այնպէս որ ամրսին էլ միացած զօքին մարտնչում էր իւր եղբայր-քոյր Բարիների դէմ: Թէկ զօքին ու զօրականները անվերջ բողո-

քում էին, երբ նկատեցին հակառակորդների հերսուական զիմաղըութիւնը, թէ չնի ցանկանում իրենց հարազատների դաշնիները դառնալ, թէ իրենց հաճելի չէ անմեղների արիւնը թափել և հաւատացեալներին, մարգարէի շառաւիղից սերւածներին ջիմրիի նման կոտորել, բայց կառավարութիւնը փոփոխում էր զօրականներին էլ, զօրքերին էլ, որ ջնջէ նորադաներին։ Սմէնից զաժան դահիճներ դարձան Գերօւսի զնդի զօրականներն ու զօրքերը, որոնք դաժանաբար կոտորում, կողոպտում էին թշւառներին, անխտիր ծերին էլ, մանուկին էլ, էգին էլ, որձին էլ։ Բարիները համոզւած լինելով, որ պիտի աւարէին իրենց գոյքը, գերի պիտի վարէին իրենց կիներին ու աղջիկները, անխնա պիտի կոտորէին իրենց ամենավերջն զինակրին, միասիրտ, միահոգի, իրար թեսութիւնք դարձոծ ինն ամիս գիմաղըեցին։ Բոլորի գոյքը, մթերքը զիզել—հաւաքել էին մի տեղ, ամէն մարդ օգտառմ էր ընդհանուրի հարստութիւնից, ամէն բան հասարակական էր և ամենքը միայն մտածում էին ընդհանուրի շահի և իրենց զաղափարի իրագործման համար, կիներն անգամ չէին ուղում ետ մնալ իրենց այլերից, ոչ միայն պատրաստում էին կուտղների պէտքերը, այլ կարեոր դէպքերում յարձակում էին թշնամիների վրա։

Զէնջանի ժաննա Դ'Արքը—տղամարդի շորեր հազած և թուսթէմ Ալի անունն ընդունած այնպիսի հերսուական կուրներ մղեց Պարսիկների զէմ, այնպէս անվեճեր կերպով մարտնչում էր շիաների, մանաւանդ Գերօւսիների զէմ և կոտորում էր նրանց, որ այդ գեռահաս կնոջ երկոյթը սարսափ էր սփոռում, շանթահարում էր բոլորին և ցրւում։ Այս քաջառիք կինը իւր խիզախ յարձակումներով այնպէս էր բորբոքել բանակի զօրականներին, որ թակարդ մտած, մի անգամ

յարձակման ժամանակ, նորան գնդակահար արին։

19. Թէկ կառավարութիւնը հեազնեաէ զօրքի թիւը հասցեց երեսուն հազարի, տասնը իննը թնդանօթով, լայց արիաբար մարտնչող Բաբիները անխնա նրանց կոտորում և ցրւում էին։ Բազմաթիւ Ղարազաղից և Սփշար ձիաւրներն անգամ երես էին շուռ տալիս, փախչում Բաբիների յուսահատական կուներից։ Եօթը-ութը ամսի կոիւը վերջապէս սպառեց Բաբիների ոյժը, որոնց թիւը 1800 հոգից աւելի չէր, իսկ զբանց կիսից աւելին էլ արդէն քաջութեամբ ընկել էր, ահաւոր զնհ տանելով հակառակորդներից։ Խոկ երբ մի ուումբից վիրաւորւեց, մեսաւ չէօջաթը, բարիներին տիրեց յաւսահատութիւնը։ Զէնջանի կառավարիշը և զօրքի հրամանապարը Ղուրանի վրա երգեցան, կնքեցին և ուղարկեցին Բարիներին, հաւատացնելով որ կառավարութեան նպատակը չէօջաթին կալանաւորելն էր, ժողովրդի հետ զործ շունի։ Նրանք երգումով խոստացան, որ ժողովրդին, մարտնչողներին ոչ մի վնաս չեն հասցնի, եթէ անձնատուր լինեն և զէնքերը յանձնեն։ Թէկ Բաբիները համոզւած էին, որ շիաները չէին յարգելու իրենց երգումը, բայց անվեճ անձրեների նեղութիւնը, վերահառ ձմեռւա ցուրտը, մթերքի սպառումը, մանուկների մրմուճները նրանց զլորեցին իրենց թշնամու զիրկը, որն անխնա կոտորել աւեց այլերին, յափշատկեցին գոյքի մնացորդը, մինչև անգամ տների ծածկը քանդեցին, տարան, մանուկներին սաքերի աւակ արսորեցին, ծծկելներին սրերի ցցեցին, մանկահաս աղջիկներին, տղաներին, կիներին գերեցին, զարհուրելի տանջանքների հնթարկելուց յետո, որըերին, այլիներին և անպէտքներին վարեցին ջիրազ։ Միւջթէհիդի տանը ապաստանած հարիւրաւոր մանկահաս աղջիկներին, կիներին զարհուրելի տանջանքների մասնելուց,

զի արժեքաւոր հագուստներն անդում հանելոց յիշո, ցընցոտիկների մէջ պլած ճանապարհնեցին, ցըւեցին...:

20. Մաղանդաբանի, նէյրիդի կոտորածներից բոլորւած չաղի-Միբառ Ազատին՝ իրանի սարսափների հրամանակալ վէպիրը հրաման ուղարկեց Թաւրիզ, որ Մարտից 2էնրիք տեղափոխեն թարին, քուրդ թէզերին յանձնեն, խոտիւ հսկեն նրան, քանի որ այդ խիդախ քարազչի ձնուագիրները հատում էին մինչև անդամ իրանի շահնշանի պալատը և պղասրում մտքերը: Բայց Բարի լեզուն, վարքը, քարոզութիւններն ու աւետիսները դիւթում էին շրջապատողներին: Ըրեելեան բռնակալների ճնշումներից ընկճած ամէն մի սղաշտօնակալ, թէ ուսորագրեալ հոգւով պաշտօւմ էր այդ վերանորոգչին, որը սէր, միտրանութիւն, համերաշխութիւն, հաւասարութիւն, անկախութիւն, կարեկցութիւն և որ ամենազիստաւորն է ազատոքիւն էր քարոզում և հաւատայնում էր, թէ շուտով ամենակալի դօրութիւնը երեւու է աշխարհին, որ հաստատէ կարգերը և գործագրէ այդ բոլորը: Ուրմիի կառավարիչն էլ, 2էնրիքի բերդապահն էլ, զինորն էլ, ժողովուրդն էլ մեծ հաճողքով ուղում էին ծառայել այդ մարզարէին, փափագելով որ առաջ համնել քարոզութեան կատարւածին և գաղտնապէս կարեւոյն չափ նրան օգնում: Բարի հուշակն հասել էր մինչև Հնգիկաստան, որտեղից անդամ այցելուներ էին գալիս նրան տեսութեան, իսկապէս նրա շրթունքից լսելու այդ քարոզները: Բայց կառավարութեան լրտեսներից հակագութիւնն էլ այնքան սաստիկ էր, ուված պաշտօնեաների, մանաւանդ ստորին ծառայողների ընշաքաղցութիւնը այնքան մեծ էր, որ մի անդամ Բարին այցելող մի հնդիկի, մի դէվրիշի և մի սէխողի կարանաւորեցին, կողապահեցին, ծեծի տակ մէկին սպանեցին, միւսներն էլ հազիր կառողացան ճողովրել գահիների

ճանկից: Հաջի-Միբրդա-Աղասին այնքան սարսափում էր Բարի անունից, որ ամէն պոստի նորանոր հրամաններ էր արձակում Ատրպատականի կուսակալին, 2էնրիքի հրամանակալին, խոստ հսկելու Բարի վրա, նրան կտրել աշխարհից, խզել յարաբերութիւնները:

21. Վերջապէս գործն այնաեղ հասաւ, որ Հաջի-Միբրդա-Ազատին մինոր հրամանակալ հրամակեց Ատրպատականի կուսակալին, 2էնրիքից Թաւրիզ փսխաղըել Բարին և դատաստանի մատնելով գոյութիւնը ջնջել: Բարին բերին Թաւրիզ, բայց կոռավարութիւնը առանց կղերի միջամտութեան չէր կարսդ այդպիսի մի նշանաւոր Սէխողի սպաներ, իոկ միւթէշարի կղերը ձեռնագան մնաց, չուցեցան մի այզպիսի անձնաւորութեան դատապարտութեան մասնակցել: Կուսակալը մնացել էր շատրած, նու անձարացած դիմոց Ջէյխի միւջթէնիդներին, որոնք բորբոքւել էին. թէ ինչպէս այդ երիտասարդը կարողացել էր իրենց ընկերակից այնքան նշանաւոր իւլէմաների գիւթել և իրեն կողմը դարձելով: Թաւրիզում Միբ-Ալի-Ասկէր Ջէյխի-Խւլ-Խոլամը նրան դատի կանչեց իւր ընակարանում, որակ հաւաքւած էին: բոլոր շէյխի իւլէմաները: Երբ զանից ներս մտաւ, զահիճում նրա համար աեղ չէին թողել, այնպէս որ Բարը պարտաւորւած: «Սէլամ»-ը տեսց և նստեց չէմի վրա: Ջէյխի-Խւլ-Խոլամի հարցերին աներկիւդ պատասխանելով նա կրկնեց, թէ ինքն է այն դուռը, որտեղից աշխարհին պատգամներ է գալիս, ինքն է այն հոգին, որին սպասում էն միւլովիմները: Ջէյխի-Խւլ-Խոլամը հրամայեց, որ բերոնին-շրթունքներին խփին և լուեցնեն, բայց ոչ ոք չյանդզնեցաւ պաշտօնակալներից, թէ Փարբաշներից այդ հրամանը կտարերել: Ջէյխի-Խւլ-Խոլամը անձարացած ինքը վեր ելաւ, թակեց և մի սիւնի կտղելով սաստիկ ձաղկեց կարանաւորին:

Այնպէս սարսափ էր սփսել, այնպիսի ակնածութիւն ունէին պատսիկները բարի մասին, որ ոչ ոք չյանդգնեց զէլտ-իւղիսամին աջակցել, կառավարչական պաշտօնականերն էլ սարսափած նրան ետ ուզարկեցին 2էհրիք:

22. Բարի հոչակին այնպէս էր տարածւած ամբոխի մէջ, ամբողջ Պարսկաստանում նրա մասին այնպիսի առասպելական պատմութիւններ էր տարածւած, ժողովուրդը այնպիսի հաւատքով էր գիմում և վերաբերում, որ մարդ գժւար թէ կարսդանա հաւատալ, եթէ աշքով շահսնի և ականջով չլոէ ժողովը դրանց մանրամասնութիւնները: Թէի կենարոնական վարչութեան կարգադրութեան համաձայն Սէփ-Ալի-Մէնմէդին ծպանալ բերին Խսֆուհանից Թաւրիդ-Մաքու, բայց ամէն տեղ ժողովուրդը նրան ընդառաջ էր դուրս գալիս, հիւանդներ էին բերում, որ բուժէ, ցաւագարների համար տղօթք էին խնդրում և ամէն մարդ կարողացածի շափով աշխատում էր նրան հաճելի գառնալ: Ամանք ստելիք էին բերում, ուրիշը խմելիք, հագնելիք և բոլորն էլ չանում էին նրան աշանող պաշտօնականերին գրաւել, որ արժանաւոր յարգանքով նրան հասցնեն աքսորավայրը: Քանի՛ քանի՛ անգամ աշխատեցան նրան յափշտակել, պաշտօնեաների ձեռքից ազատել, բայց նա չյօժարեց գիմադրել իշխանութեան, որը նրան տանջանքի էր մատնել: Դեռ մինչեւ այսօր 2օրս զիւզում, Մաքուի մօտերքը, շիշերի մէջ պահում են Բարի երեսը լւացած ջուրը, որը որպէս «Հրաշալի-դեղ» տալիս են վտանգաւոր հիւանդներին կաթիլներով: Տան գանձը, անդրանիկներին այնքան խնամքով չեն պահում, ինչպէս այդ շիշերի ջուրն են պահում, որը աբւում է ամենակարենոր գէպքերում մի կաթիլ: Խոյի մօտերից անցած ժամանակ Բարին զիմաւորեց մի թշւառ հայր, խնդրելով որ իր մինուճար

հիւանդ աղջկան փրկէ: Բարը խղճալով ծերունի հօրը աղօթեց և աղբերակից մի գաւաթ ջուրը վերցնելով կէսը խմեց, կէսն էլ տւեց հօրը, որ տանի աղջկան ասելով.—Ես խնդրեցի ամենազթածից, որ օգնէ քո աղջկան, տար այս ջուրը, թնդի խմէ ու վեր կենա, Հաւատացնում են, որ աղջիկը գաւաթի ջուրը խմել և սաքի է ելել անկողնից: Այսպիսի անթիւ գէպքեր են պատմում, բայց սրանց քարոզութիւնը թէ բարից և թէ Բէհայից խստիւ արգելւած լինելով բարիներին, չի կարելի ամբողջութեամբ հաւաքել: Խոյի միւջթէհիգի՛ Մոլլա-հաքէնդէրի աղջիկը թոքախտով վարակած մահւան անկողնում տառապած ժամանակը, կողմնակի ճանապարհով զիմում են բերգի բանաբարկեալին՝ Բարին և խնդրում, որ ապօթէ և մի նշան տա աղջկան փրկելու: Կալանաւորը աղօթում է և ուրիշ բան չունենալով՝ արախչինը (գտակ) տալիս է, որ զնեն տղջկա գլխին: Աղջիկը առողջանում է, կազդուրում և զրանից յետո երեսուն երկու տարի ապրելով դառնում է Բարի եռանգուն քարոզիչը իւր սեռի շրջանում: Մինչ այսօր որպէս մի նշանաւոր «Հրաշալիք» պահում է այդ գըտակը և զրւում է ծանր հիւանդներին: 2էհրիք եղած ժամանակ, խաներից չորս հազի որոշում են հետի զնալ «Հաղաթի-Մահարին» (քրդերը այսպէս էին կանչում Բարին), տեսնելու և ճանապարհ են ընկնում: 2որս-հինգ փարսալի ճանապարհ կտրելու վարժւած չինելով, ինչում են մի քարվանսարա հանգստանալու: Այստեղ նրանք խօսում են, թէ այդքան յոգնածութիւնից յետո, ինչպէս կարող են մնացեալ 3 փարսալի ճանապարհը շարունակել-հասնել 2էհրիք Մինչի նրանք թէյերը խմելը, երեք քուրդ են գալիս և չորս ձի բերելով ներկայացնում են ուխտաւորներին և առում են.—«Հաղբաթը—Մահարը» զրկեց ձեզ, ասաց, որ դուք հէլրէթ չէք

կարող ստրով այսշափ ճանապարհ կտրել: Ուխտաւորները շւարած հեծան ձիերը և գնացին երկրպագելու «Հաղթաթիւ—Սահմարին»: Քայց հաւաքածներից ամենազարմանալին արև է, որ Մաքուի խանը առաւօտ վաղ գնում է տեսնելու իւր կալանաւորին, որը բերզում, ապաստի գլխի զօրանոցում էր բանտարկւած: Յանկաբծ ճանապարհի կիսին զառիվայրի վրա ապշած, անշարժանում է Ալի խանը, երբ նկատում է Սէիդ-Ալի-Մէհմէզին առւտկի մօս լւացմէիս:—Մի վախենալ, Ալի —խան, ասում է Բարը, ինձնից քեզ մնաս չի կարող համել: Ուղեցի այսօր քեզ ապացուցանել, որ ես ոչ քո, ոչ էլ քո իշխանաւորի կալանաւորը եմ, այլ այստեղ մնում եմ միայն Տիրոջս կամքը կատարելու համար: Բարձրացիր բերդը և պիտի համոզիս: Ալի-խանը զնդալավ բարձրանում է, տեսնում է, որ զինւորները նստած են պահականոցի առաջը, փականքով էլ կապւած է Բարի բանափ դուռը: Զինւորները բացույն դուռը և միում են շւարած:

Համանման արկածներից և բժշկութիւններից Սէիդ—Միրզա—Մէհմէթին արձանագրում է երեք հազար դէպք և ներկայացնամ է Յարին բանտում: Կալանաւորը հրամայում է մէկ մէկ բոլորը կարգալ: Երբ Սէիդ-Մէհմէթին աւարտում է ընթերցաւմը, ասում է:

—Ավոնս, շատ ես տանջւել, անշափ ես յոզնել, մինչև այդ բոլորը հաւաքել ու արձանագրել ես: Յայց ցաւում եմ, որ քեզ միծ տհաճութիւն պիտի պատճառեմ: Տար, այդ բոլորը պրածդ լւահ, զրանց հետքն անկամ շմհա այդ թղթի վրա: Ես հրաշք զործելու ոչ իրաւոնք ունիմ, ոչ էլ կարսպութիւն, այդ բոլորը Տիրոջ ողարմութեամբ կատարւած զէպքեր են: Այդպիսի գրւածները և պատմածները բնթերցողներին և հաւատացեալիներին կարող են մօլորութիւնների մէջ մղել և



ԲԱՐ

ԿՊՈՅՈ

տարակուսանքներ տուաջացնել, զայթակղեցնել։ Իմ իրաւունքս միայն շրթունքներից թուած խօսքն է, Աստուծո բանն է. իսկ հետեւը դնելով պիտի հաւատան քարոզութեանս միմիայն զբացու արտադրածներով։ Հրաշքի դարն անցաւ, մաքի դարը պիտի թագաւորէ, գաղափարը պիտի յաղթանակէ։ Այնպէս մաքուր լւա այդ գիլքգ, որ թուղթը գոնէ քեզ պէտք զա։

23. Նոսր-Էդղին շահը գան բարձրանալուց յետո, երկրի շփոթութիւնները գագարեցնելու նպատակով, խիստ հրաման ուղարկեց Թաւրիզ յատուկ պաշտօնակալներով, որպէս զի զտան և մահւան դատապարտելով վերջ տան Բարի քարոզութիւններին, որը տարւան ընթացքում այնքան կօսորածների, ծախսերի և խոռվութիւնների պատճառ էր գարձել։ Բարին կրկին Թաւրիզ բերին։ Միւթէշարի կղերը յամառած չուղեցին կառավարութեան ձեռքին գործիք դառնալ և Ալիի ու Փաթիմէի սերնդից շառաւիզած այդ քարոզին մահի ենթարկել։ Ատրպատականի կուսակալ Ճահղաղա-Համզա Միրզան Պիդատոսի նման ձեռները լւաց, կրկնելով թէ.—«Ինքը ոչ ո՞ի յանցանք շի տեսնում այդ մաքու ընթացքի մէջ»։ Ջէլսի կղերի աւագավոյնը՝ Մամազանցի Մոլո-Մէհմէզը, որպէս զի հաճոյանա կառավարութեան, միւթէշէրիների հալածանքից ազատուի, կառավարութեան հաւատարմութեան և համարստմին արժանանալով որոշ գիլք ստեղծի իւր և հետեւըների համար, վճիռ տուեց, թէ «Մէկս-Ըլի-Մէհմէզը, որ ժաղովրդից պահանջում է իրեն Մէհմէզի գաւանել, ճշմարտութեան դուռ ընդունել. իւր զբքին հետեւել. խօսած այդ սուտերի և հայ-հոյութեան համար մահապարա է, սպանութեան արժանի»։

1850 թւականի յուլիսի 27-ին (28 Զարան 1266 թ.) կէսօրից ասած Թաւրիզի Ճարախանայում Բարին և նորա տշակելուն Միրզա-Մէհմէզ-Ըլի Թարթիզին պատից շւանով կապ



կղած կախեցին. վերել Սէիդ-Ելի-Մէհմէզին, որա սարերի տակ աշակերտին: Ասորի գնդից արձակւած գնդակներից ոչ մէջը շփպաւ սրանց մարմնին, այլ չւանները կարտելով վար ընկան: Դահիճները մօտեցան մի քանի հարւած տւին և գլխի կանաչ ապարօշը վար պլորեցին տօնելով. թէ—«Այս ապարօշները (սէիդական) փրկեցին ձեր կեանքը և կըկին կապեցին երկուսին էլ, կախեցին նոյն պատից: Խասսա գնդի զինւորներին հրամայեցին կրակել, որոնց գնդակներից երեքը խրւեցան Բարի սիրտը, մի քանիսն էլ աշակերտի կուրծքը, ընկան գետին՝ քարոզութեան եօթերորդ տարսում: Նոյն իրիկունը Ռուսական կօնսուլը՝ Խանիկովը դիտեներից (ակւարել) ջրանկարեց սպանւուծների պատկերը:

24. Երկու օր գիտեները մնացին հրապարակում և երկրորդ գիշերը պալտական սենեկաղան չաջի Սիւլէյման խանի օդնութեամբ Բարի հետեղները նրանց գիտեները վերցրին, յատուկ մնդուկների մէջ ամփոփեցին և հեռացրին քաղաքից: Այս ոսկերսուիքը ապահովութեան համար երկար ժամանակ պահեւեցան Իրանի զանազան քաղաքներում և աւան ներում, վերջապէս 1909 թ. փոխազրեցին Աքէա, ուր թղեցին Կարմէլ լեռան լանջին, յատկապէս նրա համար կառուցւած տաճարում, որը կես աւարտած չէ: Բարի հետ կալունաւուած նրա միւս երկու աշակերտները, որ իւենց վարդապետի յատուկ հրամանի համաձայն նրան ուրացել էին դատաւորների առաջ, աղատեցան կապանքներից և իրենց օրէնսդրի զրւածների սնդուկները, իրենց բովանդակուծ կարեւոր թղթերով և զրւածներով, նրանց արւած յատուկ հրամանի համաձայն տղրան Թէհրան յանձնեցին Բէհային: Այս թղթերը ապա փոխազրեցան Բաղդադ, այնտեղից Կ. Պոլիս, Աղբիանապոլիս և Աքէա: Բէհայի փոքր եղբայրը Կիլլոս

աքսորւած ժամանակ եղբօրից պահանջեց այդ թղթերը: Բէհան հրամայեց արկղները բոլոր պարագաներով յանձնել եղբօրը էղէլիի պատգամաւորին, որոնք տարան Կիպրոս, որտեղ և մինչեւ այսօր պահուում է: Բարի շրթները գաղաքեցին քարոզելուց, նրա մատներից ընկաւ գրիշը, բայց այս գրւածները ցըւելով Իրանի և Թուրքանի ամէն կողմը, նրա սպանութիւնից յետո, աւելի մեծ թւով հետեւորդներ գտան, որտեղ սփռւած ամէն կողմը, մահւան դէմ կուելով տարածեցին իրենց վարդապետութեան թագաւորութիւնը ճնշւածների, թշւառացածների և զանացածների շրջանում:

25. Սէիդ-Ելի-Մէհմէզը՝ Բարը մելանխոլիք բնաւորութիւն ունէր. նա անշափ որամիտ և սաստիկ խորաքննին տեսողութիւն ունէր: Պատմում էր մայրը, քեսին, որ նա Սոկրատի նման տռանձնացած, ժամերով հայեացը մի կէտի վրա յառած մտածում էր անթարթ, անշարժ և յանկարծակի սթափւելիս, չէր էլ զգում, թէ ինքը ժամերով անզգա վիճակ է ունեցել: Մանուկ հասակից նա հնթակա է եղել այսպիսի խորասուզումների և անվերջ, մինչեւ կեանքի վերջը, շաբունակել է այս մտազրազումները, երեակայութեամբ մի տար տշիարհ տեղափոխւած: Երկար ժամանակ նա մտքով թափառել է գանելու, տեսնելու այն աշխարհը, ուր իրը ժամանակով առանձնացել է, ապրում է, ըստ շիական վարդապետութեան, իրենց վերջին իմամ Մէհթին, որտեղից վերաբառնալու է ահաւոր սերունդով: Ինչպէս երկում է Քէրըրէլայի ուխտազնացութիւնը, չաջի—Սէիդ—Քեազիմ Միւջթէհիզը, որա աշակերտների հետ ծանօթութիւնը շատ բարերար ներդումներին է ունեցել Բարի մտաւոր աշխարհի վրա, որը առապելական—վերացական աշխարհից անդրագարձել է բնական աշխարհը: Աւելի ևս զրականապէս փոխւեց Բարի աշխար-

հայեացը Մէքքէի Սկ-քարի ուխտից դառնալուց յիտո, այնպէս որ՝ նա սրոշեց եսլամի պարզութիւնից նախապաշարումների և մարդապաշտութիւնների մէջ խրւած ժողովրդին իր անդգայութիւնից սթափեցնել և մի զարկ տալ դէպի առաջադիմութիւն։ Նա իր այս կօչումի մասին մեծ հաւատ ունէր, նա համոզւած էր, որ ինքը աշխարհ էր եկել, որ մարդկութիւնը սթափեցնէ և առաջնորդէ այն երանելի խաղաղութեան վայրը, որին ձգտել և շեն հասել նախորդ մարդարէներն ու առաքեալները և մեծ յոյսով սկսեց քարսզութիւնները, որը անշափ աջողութիւնով առաջ տարաւ։ Անշափ փաստեր կան, որ Բարը իր խօսակցի, ընկերակցի մաքելը կարդալու և յայտնելու մեծ ընդունակութիւն ունէր, ուանաւանդ դիւթելու, կաշկանդելու։ Այս բնատուր կարողութիւնը Աստւածախն չնորհի մի հիւլէն համարելով, (Նուգգէի-Ռւլահը) Աստւածութեան մի կէալ զաւանելով, նա վստահ քարոզեց և նրան զաւանեցին հազարաւորներ։ Բաբ-Էլ-Բաբ Բիշբօյեցին երբ երեք չսրս օր կաշկանդեց, չկարողացաւ մզկիթում շուրջ շարժել և զաս—քարող խօսել, նա մինչեւ մահ այդ պարագան բացատրում էր. իրբ թէ մզկիթում իրենից բարձր հառկացողի, մտածողի և բացատրողի ներկայութիւնը նրան կարկամնեցը էր։ Բարի ազգու խօսքը այնքան մեծ հաւատ էր ներշնչաւմ, որ նրա հետ վիճող իւլէմները ոչ միայն անպայման զաւանում էին նրա աստւածայայտնութիւնը, այլ մինչեւ անդգամ բռուժում էին իրենց ախտերից։ Այնքան վստահ և ուժիղ կամք ունէր Բարը, որ նրա առաջ ընկճւեցին, լուսցին ամենանշանաւոր գիտնական պարսիկները, նրան պաշտեցին իւր զարի մաքի ու գրչի ներկայացուցիչ հայրենակիցները Եփրատից մինչեւ Քանգէս։ Նրա հայեացը այնքան զօրաւոր էր, որ կաշկանդել էր Նպատակական ամենախիզախի մեծամասնութիւնը։

Ներին, որոնք իսպառ մելժեցին Հաջի-Միրզա-Ազասիի—մեծ վէզիրի հրամանները և շյանդկնեցան ձեռք բարձրացնելու անմեղի վրա։ Նա մի հայեացքով այնպէս-դիւթեց արքունի սենեկապան Սիւլէյման խանին, որ նա իւր պաշտելի Բարին շուրանալու համար, աներեակայելի քաջութեամբ մահի հատ կուեցաւ։ Բայց այս պարագաները գեռ ևս աւելի խոր ուսումնասիրաթեան կարօտ լինելով, մինք չենք համարձակուում պնդելու, թսղնիլով ապագային նրանց ուսումնասիրութիւնը, մեր պատմութեան շաբանակալթեանն անցնենք։

26. Թէի Բարը մեռաւ, բայց բարիների զլխից օրէցօք նորանոր փորձանիքներն անպակաս էր և ամրող Պարսկաստանում ամէն մի շաբագործութեան հեղինակին ու զարանազործը բարիներն էին հանաւում, կաշտակուրծ պաշտօնակալների, ազան կղերի համար սրանից աւելի նպաստաւոր առիթ շեր կարող լինել։ Ամէն սճիր, ամէն յանցանք ներոնի նման վերագրում էին նորագանդներին և օրէցօք տանջանքները, զաժանութիւնները ստուտկացնում։ Հաջի-Մէկիդ-Քեազիմ Միւջթէ Հիդի, ամանանշանաւոր աշտկիրտուհին էր Զահրէ խանումը որին շէփիների վարդապետը «Նուրէթ-ուլ-էյն» (աշքի լոյս) տիտղոսն էր աւել, նորա անշափ տաղանդի, սուր յիշողութեան և պայծառ դատողութեան ու տեսութեան համար։ Զահրէ խանումը իւր զիտութիւնով և աստւածաբանական մեկնութիւններով ամրող շիտ կղերի համարումն էր վայելում, ինչպէս իրանում, նոյնպէս իրակ-Արաբում։ Հետեւով իւր բարունապետին նա աստւածաբանական լէկցիաներ էր կարդում Քէրրէլայսում հարիւրաւոր ունկնդիք ուսանողներին (թարարա), որի համար վերջինների երկրպագութեանն էր արծոնացու։ Զահրէ-իտանումը զրաւած համարումի, դիրքի պատճառով մտանել էր և Օսմաննեան Բ. Գոնից հրաման էր

արձակել, նորան պետութեան սահմաններից հեռացնելու:

Երբ Զահրէ-խանումը Քէրքէլայից Թէհրան էր գնում լէկցիաները շարունակելու, նորա հայրը՝ Մոլլա-Սալէհ-Ղազվինի միջթէհիղը շթողեց, որ աղջիկը ուղղակի նալատակին դիմէ, ճանապարհից տուն դարձրեց: Հայրակոն յարկի տակ, Զահրէ խանումը անվերջ ընդհարւում էր հօր, հօչեցոր և եղբայրների հետ, որոնք բոլորը մոլի միւթէէրի էին. իսկ ինքը միակ շէլիսի: Նա, որ ամուսնացած էր մանուկ հասակից հօրեղբօր որդու հետ, չէր սիրում, չէր համակրում ամուսնին և բաժան էին ապրում. Այս վիճակում հայրական յարկը դժոխից ծանր ներգործութիւն ունէր նորա հոգու վրա, որի մաքի թոփշքները սաւառնում էին լեռների ամպերի վրայով...: Այս տիսրութեան օրերին Զահրէի մսիթարութիւնը միայն ընթերցանութեան մէջն էր, նա ընթերցանութեան նիւթ շատ էր ստանում իւր լնկերակիցներից, աշակերաներից և համակրողներից, որոնք սփոսուած էին իրանում, Թուրանում և Տիգրիսի ափերի սրբավայրերում: Այս գրութիւններով նա ծանօթացաւ Բարի վարդապետութեան հետ, ձեռք բերեց նորա բոլոր գրութիւնները, ուսումնափրեց և զարձաւ Բարի անձնէր երկրպագովը: Զահրէ խանումը տեսել էր Քէրքէլայում այդ երիտասարդ քարոզչին, բայց այնքան չէին մտերմացել: Երբ Թիշբոյէցին Մազանդարանից գնում էր Զիրազ Բարին այցելելու, Զահրէ-խանումը նրան յանձնեց իւր գրաւոր գաւանները, որ տանի հասյնի նոր մարդարէին և ինքը սկսեց հուանգով քարոզել Բարի վարդապետութիւնը: Նա շտառով նամակի պատասխանը Բարից ստացաւ, որով նորա անունը փոխում «Թահրէ» (Մաքրուհինի) է կանչում, որից յետո այնպէս մակրմացան, որ շարունակ թղթակցում էին: Թահրէի գրութիւնները, մանա-

ւանդ շավական բանառեղծական երկերը մինչեւ այսօր մեծ հաճուքով կարգում են ոչ միայն Բաբիները, նոյն իսկ շիաները, նրանք հիպեռոսում են ընթերցողին, սքանչացնում և նրան մաքսվ երկրային դրախտոն առաջնորդում:

27. Այս քարոզութիւնները Թահրէի արխակիցների հետ ունեցած յարաբերութիւնը սոլորովին լարեցին այնպէս որ նրանք բորբոքւած հերսոուհիի դէմ, այնպէս ոխակալած նորան հայհոյում էին որ թշւառ Թահրէին շէր իմանում ինչ հնաբառվ գլուխը վրիկի հայրական որջից: Թահրէի հայրը այնուէս էր բորբոքւած աղջկա դէմ, որ ամէն առթիւ կրթնում էր.—Միթէ քո աստիճանդ այդտեղ է, որ զու, քո այդ հասկացողութեամբ ու կատարելութեամբ այնքան ստորանաս, որ գնաս խարուես մի տգէտի լեզուից, նրան գերազոյն յայտնութիւն գաւանես, խոստովանես, որ նա նախասահմանւած Մէհթին է. .: Այդ զու ոչքան մտքով կուրացար, որ ի որ անուննով գլուխեցար: Եթէ զու ինքով մարդարէանալու ձգուելիք, քո անձը Մէհթի հրատարակէիր, ես խոնարհած քեզ երկրպագութեան կգայի սիրով և քո մաւնեափէր կդառնայի, աշխարհին կքարոզէի քո մարերը: Իսկ զու, ասանց աստիճանդ կըսելու, երկրպագում ես մի տգէտ ստախոսի, զրպարտչի, որը քո աշակերտների ձեռքիրին ջուր տալու արժանաւորաթիւն չունի:

Այդ միջնորդներին մի օր քարոզի մէջ Մոլլա-Թաղին, Թահրէի հօրեղբայր—սկեսարը հայհոյեց յայանի Զէյխ Ահմէդ Բահրէինին: Քարոզին ներկա է լինում մի Զիրազցի որ առանձնութեան մէջ բացարութիւն է պահանջնում հայհոյողից: Երբ վերջինս ասանց բացարութեան կրկին հայհոյեց, Զիրազցի երիտասարդը գարան մտնելով սպանեց Մոլլա-Թաղին: Զարագործ աւթիւնը վերաբերով Թահրէին ու նորա մտե-

րիմ երեք մոլլային, Ղաղվինի դատաւորին ստիպեցին սբանց կալանաւորել, տանջելով խոստավանեցնելու: Ոճրագործը նկատելով, որ իւր փոխարէն անմեղներին են տանջում, ներկայանում է դատաւորին, անձնատուր է լինում, խոստավանելով մեղքը, փառտերով էլ ապացուցանում է, թէ ինքն է չարագործը և բացարում է պատճառները: Ղաղվինի կառավարի շը միջթէհիդի և մեռնողի որդիների թախանձանքից ստիպւած ոճրագործին, Թահիրէի և երեք մտերիմ իւլէմների հետ ուղարկում է Թէհրան, Հաջի-Միսզա-Աղասի վէզիրին: Այդտեղ չարագործը բանախց փախչում է, երեք իւլէմները դո՞ն են գնում զբաժանողների մեքենայութիմներին, քանի որ շեն զիջանում Բարին ուրբանալ, իսկ Թահիրէին յանձնում են Քալանթար—թաղապիտին իւր տան մէջ արգելելու:

28. Թահիրէն իւր քարոզութիւններով այնպէս համբաւ վաստակեց, որ ամբողջ Թէհրանի մաքի և զբշի ներկայացուցիչները, նշանաւոր պաշտօնականները հիանում ու յափշտակում էին նորա տաղանդավ: Թահիրէն հետեւով Բարին՝ քարոզում էր միակնութիւն, հաւասարութիւն երկու սեռի մէջ, քօղի ջնջում, սիրո ամսունաթիւն, կրքերի սանձում, ազգերի, ցեղերի, կրօննեցի անխարութիւն և եղբայրութիւն համայն մարդկաւթեան: Նա առաջինն էր, որ եղծեց ծոմը, աւելորդ ծէսերը, օրական հինգ անգամի աղօթքը, աւելորդապաշտութիւնները, որոնք գոյսութիւն ունեն խոլամի վարդապետութիւնները, որոնք գոյսութիւն ունեն խոլամի վարդապետութիւնների: Նու որ մի ժամանակ Փէրբէլայում վարագոյքի ետերից էր խօսում իւր ճառակը թալաբաններին, քօղն ու չարսաւը պատառելով համարձակ բարձրանում էր ամբիոն, հերարձակ և բաց կրծքով, քարոզում էր հաւաքրած երկուոս Բարիններին իւր խրոխտ և հուժկու որոտով, աղդու ոճով, քաղցը ձայնով և գրաւիչ շար-

ժումներով, որ սթափուին դարեսը քնչածութիւնից, պատուն խաւարի վարագոյքը և գիմն յառաջապիմութեան: Նա առանց յոզնելու ժամերով խօսում էր, համեմելով իւր քարոզները սեփական բանաստեղծական ոտանաւորներով, որոնք այնտեղ անգիր էին անում, զրի անցնում և տարածում: Իսկ ունկնդիրները հիացմունքից արձանացած, առանց ծղառունի, ջանում էին լոել, ըմբռնել և իւրացնել այդ լոյսի քարողաւու գաղափարները: Դարեց և անշափ դարեց էր անցել Արիան աշխարհի վրայից, մարդիկ կնոջ զէմքը միայն կանացում էին ահսել և յանկարծ բեմի վրայից Թահիրէի նման մի չքնաղից, բայց աւելի սքանչելի ճարտասանի խօսքերից ու մաքերից թոփուած, կեանքերը վանդի մատնած շրջապատում էին նորան, որպէսզի իրենց հոգեկան ծարաւը յագեցնեն, միիթարուին և յուսաղրուին մի այնպիսի երանելի տպագայով, որը նրանց անշափ մօա էր թւում: Բայց տարաբագտաբար երկու տարի էլ շտեց Թահիրէի քարոզութիւնները, յանկարծ մթնեց Թէհրանի հորիզոնը և զարհարելի տեսարանները ահարեկեցին ու ցրուեցին այս ժողովներին յաճախողներից շատերին:

29. Բարի շարաշար նահատակութիւնից անշափ բորբոքուած ու զգածուած նրա ծառան, իսկուեցի մի թուրք՝ Սաղը անունով, վրէժինդիր եղաւ և Թէհրանում նասըզդպին Զահի վրայ տարձանակ արձակեց 1852թ.: Թէկ շահը թեթե վնասուեց, քանի որ ցնորսամիտ Սաղըզը միայն գնդիկներով ու վառողով էր լցրել իւր ատրձանակը, բայց երբ ըմբռնեցին, որ չարագործը Բարի է և վրէժինդրութեան հոգով էր կատարել այդ սճիրը, սկսեցին ուրսափելի կերպով հալածել նորագանդներին: Եյս միջոցին մի ինչ որ խոհարարի քաշալաշկերտ մտանութիւններով ու ցուցումներով Թէհրանի ոս-

տիկանութիւնը սկսեց կալանաւորել պատահած մարդուն և լրցրին բանահերը: Մայրաքաղաքի խորքերը, ներքնասաները թագնուած Բարիներին խումբ խումբ կալանաւորում և տանձում էին, որ խոստովանեն ու մատնեն իրենց առաջնորդներին: Տանջանքից ազաւում էին միայն նրանք, որոնք հայնոյում էին Բարին և նրա վարդապետութիւնը, կամ նրանք, որոնք լրցնում էին գահիների գատաւորների գրպանները, իսկ մնացեալներին ենթարկում էին զարհութելի տանջանքների: Առաջին օրերին մի ժողովում ձերբակալուած 38 հագուց միայն եօթը մարդ չուրացան Բարին ու հաստատ մնացին իրենց գաւանանքի վրայ, մերժելով թախանձանք, խոստում, սպառնալիք, հերսոնաբար վզերը մեկնեցին գահիներին: Սրանցից մին Բարի խնամակալ քեռին՝ Սէիդ Ալին էր, 70 տարուան ալիոր, որին աղատելու համար թէկ 300 թուման խոստացան շիտ վաճառականները, որպէսզի Սէիդի արիւնը շըմնայ իրենց զզին, բայց որովհետեւ հաստատամիտ ծերուկը շուրացաւ հաւատքը, զարհութելի տանջանքով զլխատուեցաւ: Երկրորդը Թուրչիջի միւջթէհիդն էր, երրորդը Դումի միւջթէհիդը, չորրորդը Քիրմանի միւջթէհիդը, հինգերորդը մայրթակուհիի աղօթարարը, վեցերորդը Թաւրիզիցի յայտնի վաճառականի, որոնք բոլորը հերսոնաբար զոհուեցան իրենց զաղափարի համար: Եօթերորդը մե զեռահատ և շատ զեղեցիկ երիտասարդ էր, Մարաղացի ուիզ, որին ինչ խոստումներ արին, փակ, թոշակ, պաշտօն, պալատի մինիստրի աղջիկը, բայց շկարողացան համոզել, նա անվրդով կարդաց Բարի անոնը, նրա աղօթքը և ուրախութեամբ գլուխը յանձնեց զահին:

30. Զարհութելի, արեելքին յատուկ ինկվիդիցիական տանջանքներ տուին Հաջի Սիւլէյման-խանին: Երբ այս պա-

լատական սենեկապոնը համարձակ խոստովանեց իւր գաւանանքը, հերոսաբար արհամարհեց գահիների սպառնալիքը, ծաղրեց բանութեան ոյժը, հակառակորդների զօրութիւնը, առարկեց, թէ ոչ ոք իրաւունք չունի բոնանալու իւր հոգեկան զգացումների, կրօնական հայեացքների դէմ, նրան մերկացըրին, ձաղկեցին, մըստեցին ամբողջ մարմինը, ծակրտեցին խշաբիկներով մկանները, ծակերի մէջ մոմեր խրեցին և վառեցին, իշի վրայ նստեցրած Թէհրանի փողոցներում մանածեցին, մունետիկով և գահուլ-զուլնայով: Այս հրէշային տանջանքներին մատնուած Հաջի Սիւլէյման խանը առանց հառաչելու, առանց արանջալու, առանց վհատելու, սոսկալու առաջ էր գնում, երբեմն երբեմն իշից ցած զալով, մարմնից կար թափուած մոմերը կրկին խորում էր մսի մէջ արիւժեռ վէրքերում, պարելով, ցատկութելով անցնում հրառարակները հարսանիկան թագւորի նման հրճուանքով ու բերկրալի: Ամբողջ Թէհրանը փողոցները զուրս թափուած զիտում էր տեսաբանը, մարդիկ չէին ըմբռնում, թէ ինչն էր ռախալում Հաջի-Սիւլէյման-խանին արհամարհել փառքը, հարստութիւնը, կարսղութիւնը, աստիճանը, գիրքը, թոշակը, ընտանիքը և զաւակները, և յանձն առնել այս զարհութելի կոկիծներն ու մորմոքները, մի ինչոք նոր վարդապետի դտուացանքների համար: Վերջապէս Հաջի-Սիւլէյման խանը ինքը համարձակ պարզեց իւր թեկերը, սրումքները զահիճներին, որոնք անզութ սպանդների նման մաս կարտեցին-թափեցին նրա անդամները և ապա կարտեցին զլուխը...:

Հաջի-Սիւլէյման-խանի ընթացքը օրինակելի զարձաւ Բարիներին, որոնք աւելի անվեհեր անձնատուր էին լինում զաղափարի կառւին:

Այս ախուր օրերին շահի յատակ հրամանով զահիճները

ներկայացան Թահիրէին խեղդելու: Հերոսուհին առանց տատանւելու գահճից շուանը առաւ, հանգուստեց, գցեց վիզը և ծայրերը նրբանցքում սպասող գահիններին տալով հրամայեց որ քաշեն.... ... մինչև որ խեղդուած թաւալուեց....:

31. Մի ուրիշ խմբի Բարիներին, մօտ 370 հոգու, դատաւորները բաժանեցին Թէհրանի ժողովրդին՝ Էսնաֆի ամեն մի գասին, մսագործներին, դարբիններին, դերձակներին. հիւներինը, սափրիչներին, բաղնիսպաններին, որմնագիրներին, քանիքաններին, բէզագներին, սեղանաւորներին, ոսկերիչներին, ածխավաճառներին, կաղմարարներին, ներկարարներին, մոլլաններին, թալարաններին, ֆարաշներին, ներքինիներին, մինչեւ անգամ պալատական աղախիններին, որպէսզի ամէն մի արհեստաւորի դասը խորհուրդ անեն իրենց մէջ, իրենց արհեստին յատուկ գործիքներով տանջանքներ խորհին, տանջեն, չարչարեն և սպանեն այդ ուրացողներին: Ամրող մի շաբաթ Թէհրանի թաղերին տիրել էր վայնասունը, փողոցները ողողուել էր անմեղների արիւնով, ապականութեան հոտը ամրող ամսով շշմեցը էր ամրսին, գահինները ուժասպառ էին եղել, իսկ Բարինները նորանոր ոգեստութեամբ շարունակում էին իրենց քարոզութիւնները, գահիններին վրա պարզելով....: Այն պարսիկները, որոնց համար մարզասպանութիւնից մեծ ոճիր շկայ աշխարհում, որոնք մարզում մահուան պատճառ գարձողին, գահիններին և մարզասպաններին «պոսնիորդի» են կանչում, թթացել էին, զգացմունքները քարացել էին, չէին խնայում ոչ ծերին, ոչ մանուկին, ոչ արտին, ոչ էպին, ոչ էլ բալուլի ծծկերին, հաբակաւին թէ խորդին, հեղեղում էին. արիւնը հոսկցնու շատրւանի հման և հրճում....: Իսկ թէ ինչպէս էին կեղերում, կողապտում Բարիններին, կամ որպէս Բարի մտանուածներին, շիկարելի նկարագրելու....:

ԲԱՐԻ ԿԱՄ ԲԵՇՅԻ Բ. ԲԵՇԱ

32. Նահանգական վարչութիւններից ամէն օր նորանոր խումբեր էին համեստ Թէհրան, ամէն մի կառավարիչ, պաշտօնական, փարազ շատ ընդարձակ արտօնութիւններով էր օգտաւում կալանաւորելու, կողոպտելու, տանջելու իրաւունքից և վայն ու կոծը տարածել էին երանի ամէն կողմը: Այս կալանաւորների խմբերի հետ Սֆչէ գիւղից Զիմբան ամառանոցի բանակն հասաւ նախկին վեղիրի Մալիէ (Փինանսի-մինիստըր) Ազա-Բուզուրդի-Մասսի երկրորդ որդին՝ Միրզա Հիւսէին-Սլին, որին ամրող Թէհրանի նորազանդներին յայանի էր, որպէս Բարի նախանձախնդիր հետեւող: Աղա Բուզուրզը Մազանդարանի նուր գիւղիցն էր, որը գտնում է Դիմաւէնդի լանջերի վրայ և այս կալուածքը ժառանգել էր ծնողներից: Տոհմով սրանք աղնուական էին, անուանի գերգաստան ամրող Պարսկաստանում: Աղա Բուզուրզը Զիլի-Սուլթանի ազըստաւութեան և Առևաստանի փախստեան ժամանակ ընկերակցելով, վերջը անցել էր Ցանկաստան և Բաղդադ էր ապաստանել, որտեղ էլ մեւոււ: Թէրէսի կուտի ժամանակ, երբ Բարինները խմբով գնում էին Բարֆրուշից Բարէլ-բարին

օդներու, չիւսէյն-Ալին առաջին անգամ այնտեղ զարձեալ կալանաւորւած էր, բայց շնորհիւ իւր ծագման աղատ էր թողնւած: Իսկ այս անգամ արդէն դիրքն ու տոհմը նրան չէին փրկել խոտապահանջ և ընչաքաղ դահճների ճանկից, որին Շիմրանում քննելուց յետոյ, տարին և Թէհրանում գլորեցին արքունի խոնաւ գնդանը:

Երբ ամէն կոզմ կալանաւորումներն ոկտուել էին, չիւսէյն-Ալիի փոքր եղբայրը՝ Միրզա Եանեան, որին Բարը «Սուփ-Էպ-Էլ» էր անւանել, որը մեծացել էր մեծ եղբօր հովանու տակ և նրա հետ յաճախել էր միշտ Բարիական ժողովներն ու միտինգները, գէրփիշի տարագ հագաւ, քէշքիւը ձեռքը Արագստանից թափառելով գնաց թէշտ, գլուխը փրկեց: Այդ տարագով նա աներկիղ թափառում, մտնում էր ժողովրդի բոլոր խաւերը և քարոզում նոր վարդապետութիւնը բնհաւորը երի քթի տակ, նրանց ներկայութեան, որոնք առանց մի բան ըմբռնելու դեռ ողոքութիւն էլ էին տալիս և դիրքոցնում, որ նա տարածի իւր քարոզութիւնները.

Մազլդի գործի քննութիւնը երիտասարդ շահը իւր ներկայութեանն էր կատարել տալիս, շատ մանրամասնութիւնների էր հետամտում և անմեղներին աղատում էր տանջանքից: Միրզա-չիւսէյն-Ալին շահի ներկայութեան այնպէս համարձակ և այնպիսի աղդու ոճով պաշտպանւեց, որ շահը համոզւեց, թէ նա մասնակցութիւն չի ունեցել շարագործի անմիտ արարում: Մանաւանդ Ռուսական դեսպանի թախանձանքից էլ դիջած, աղատեց և թոյլատքեց բաղդադ ուխտի գնալու: Պարսիկ պաշտօնեաներ Ռուսական գեսպահատան սպառաւորների հետ չիւսէյն-Ալիին տարին բաղդադ. բայց սրանից յափշտակուած գոյրը, կալուածքները, կարսզութիւնը կուր տուին պաշտօնեաները:

33. Էղէլին երբ լոեց եղբօր Բաղդադ գնալը, շտապեց նրան գտաւ, որտեղ միասին ապրում էին շրջապատւած Բարի երկրպագուներով, որոնք հայածւած Պարսկաստանի այլ և այլ զաւառներից խմբում էին սրանց շուրջը, 1853 թ.: Չիւսէյն-Ալին դեռևս ծածկուած էր պահում իւր անձնաւորութիւնը, մաքերը եղբօր միջոցով էր արտայայտում հետեւորդներին, կամ նրա անունից էր խօսում մաերիններին, որոնց թիւը օրէցօր աճում էր: Էղէլին յափշտակուած Բարի նրա հասցէին տուած պատգամներով, ամփոփւած երեսկայութեամբ, իր անձը համօւրաւմ էր նոր մարգարէի «Մէրաթը» (Հայերին) և նրա աւանդութեան «վէսին» (լինամակալը): Սա չունենալով ոչ ճարատը լեզու, ոչ էլ համարձակութիւն, զուրկ լինելով բարձր կրթութիւնից, մտաւոր կարողութիւնից, ծըպտել էր համեստութեան շապիկով, բաւականացել էր գէրփիշական տարագով, թափառում էր քաղաքից քաղաք, երկրից երկիր և քարոզում բարի մաքերը: Բայց և այնպէս չէր էլ կարսզանում Բարի հետևողներին առաջնորդելու յաւակնութիւնից ձեռք քաշել, թէկ այս բանը չէր էլ համարձակուում զարկանապէս արտայայտել: Այս անհանգով, երբ Էղէլին, գինովցած իւր երեսկայութիւններով, ամուսնացաւ Բարի այսիի հետ, անշափ վրդովեց չիւսէյն-Ալիին, որը չկարսզանալով զայրոյթը զապել շարաշար նախատեց եղբօրը առելով.— «Միթէ զաւակը կարող է ամուսնանալ հօր կնոջ հետ: Եթէ զա քու հարազատ, քեզ ծնող մայրդ չէր, քո հօր, ամբողջ համայնքի հօր կաղակիյն էր, ինչպէս յանդգնեցար նրան կին առնելու»...: Դեռ Թէհրան եղած միջոցին, երբ զես չէին կատարուել Թէհրանի, Պարսկաստանի անգթութիւններն ու կոտըրածները, չիւսէյն-Ալին թղթակցութիւն և խիստ մտերմութիւն ունէր Բարի հետ, բայց շմատնուելու և շտուժելու

նպատակով այնպէս էին կարգադրել, որ բոլոր յարարերութիւնները կատարուի Միքզա Եահեաի՝ Էղէլի անունով, որը գես շատ գեռահաս էր և չէր կարող կառկածանքի առիթ դառնալ: Բարը իւր թղթերն ու կտակն անդամ երկու աշակերտների ձեռքով հասցընց չիւսէյն-Ելիին, որը ոչ միայն աւանդապահ էր Բարիդի այդ գանձին, այլ պիտի զեկավորէր համայնքը:

34. Հիւսէյն-Ալին Բաղդագում մի քանի տարի ապրեց իւրայինների շրջանում: Քարողեց, կառավարեց և յարարերութիւն հաստատեց ամբողջ Իրանում սփռուած համայնքի հետ, որոնք ոարօտինները անցնելուց յետոյ, նորից կազմակերպութիւնները հաստատեցին և շարունակեցին իրենց քարողութիւնները: Այսակ 1854 թ. Հիւսէյն-Ալին Բարի քեսիի առաջարկութեամբ զբեց իւր առաջին երկը «Եղան», որով բացարում էր Բարի վարդապետութեան չպարզւած կէտերը: Բայց որովհետեւ նու շրջապատւած էր ահաւոր հետառնորդներով, որոնք նրան միջոց չէին տալիս լրջութեամբ զբաղւելու, վարդապետութեան ոգին իւրացնելու և հիմնաւորելու, Հիւսէյն-Ալին ծպահեալ հետացաւ Բաղդագից, անհետացաւ իւրայինների համար, զիմեց զէպի հիւսիս, Կոսդուաց երկրի Սուլէյմանիէ քաղաքի մօտերը մի լեռնային աւան քաշուեց, Սերգելու, ուր ամբողջ երկու տարի առանձնութեան մէջ անցկացընց օրերը: Վերջապէս Սուլէյմանիէ բնիկները ծահօթանալով նրա գործերի, քարոզութիւնների, վարքի, բարքի հետ, եկան Սերգելու շրջապատեցին և տարան Սուլէյմանիէ, որտեղ Սիւնի կղերը յափշտակում էր նրա աստւածաբանական հմտութեան, ճարտար լեզուի, ոքանչելի ոճով արտայայտութիւնների վրայ: Այս լուրը Բաղդադ հասնելու ոէս, բարինները պատգամաւորներ ուղարկեցին և նրան վերապարձ

ձրին Արբասիների աւելքակ մայրաքաղաքը:

Մինչ այս՝ Բարի Բէյանների պատուիրանները պահպանում էին Բարինները, եռանգով ուսումնասիրում նրա գրւածները, ջանում էին իւրացնել նրա քարոզները, բայց զես որոշ կարգեր չէին սահմանւած, ժողովրդի պարտականութիւնները չէր բացարեւած ու գործազրւած: Պարզ չէր, թէ հարամի վարդապետութիւնից որը պիտի պահպանէր, և որը պիտի եղծւէր: Բարը, Բիշրօյէցին, չէօջաթը, Թահիրէն ջնջել էին ծոմը, հինգ անգամի աղօթքը, քօղը, բաղմակնութիւնը, թըլ-փատութիւնը, լւացումը, բայց զես շատ բաներ անորոշ էր, իսկ բէյանների մէջ, կամ ուրիշ զրւածներում որոշ բաներ չէին գտնում: Հիւսէյն-Ալին սկսեց բացարել և բարեկարգել կարեսրները: Բայց նա գարձեալ իւր անձնաւորութիւնը շրվանգելու համար խօսում էր եղրօր անունով, կամ նրա բերանով: Բարի վարդապետութիւնը ամբողջապէս սահմանաւորւած էր մարդկային մտքի աղատութեան, զարգացման, ըսթափման, գաղափարի արծարձման և տարածման շուրջը: Բայց այնքան անորոշ, այնպինի սաղմային վիճակում, որ Հիւսէյն-Ալիի նման մի հմուտ մտքի կարիքը կար, որ զբանը որոշ զիրք տանէին, պարզէին, զիւրըմբոնելի զանայիին ժողովրդի ամէն մի գասի համար: Բարի գրւածները ամփուփում էին հանրամարդկային սիրոյ, համերաշխութեան, եղրայրութեան, հաւասարութեան, պատերազմների, արիւնահղութիւնների գաղաքաման, զինուրականութեան ջնջման, բըսնութեան սահման, հոգեկան զդացումների—խօսքի, մտքի, զրւածքի կաշկանգումների անհետացման, մարդկային աղատութեան և անհատի անկախութեան անհրաժեշտութիւնները: Նու հերքում էր իսլամի պարզութեան մէջ մացրտծ բոլոր սնոտիւալաշտութիւնները, որոնք «հաղիսներսկ» (մեկնու-

թիւն գերբնական ներշնչումով յաւելւած) ներմուծել և աւելորդապաշտութիւններով շրջանակաւորել էին հետեւրդների մատասը աշխարհը, ուղեփակներ էին սահմանել մաքի տարածումների, ոլացումների առաջ: Հետեւելով Բարին, Հիւսէյն-Ալին հերքում էր այն բոլոր միսթիքական տառապելները, որոնցով Խմաճ-Ըլին և սրա ժառանգները՝ տասն երկու իմամները իրենց անձնաւորութիւնները կապել էին զերազոյնի հետ և զառանցական տեսիլների արձանագրութիւններով խճողել էին շիական դիցարանական օրէնքրութիւնը: Բարը քարոզել էր և Բէհան պարզում էր, որ Աստուծոյ շունչը խոռ-քը-զուրանը ոչ բացալութեան, ոչ մեկնութեան, ոչ էլ հօթանասունը երկու տեսակ նշանակութեան կարիք ունին: Դուրանը խնամակալի (վէսի) և բացայալութիւն (միւրէյին) պէտք շունի: Բայց որովհեակ Ղուրանը ժամանակի ուրուն չի համապատասխանում, ուստի նոր-յայտնութիւնով Սլահը նոր օրէնքներ է սահմանում մարդկային ազգի համար:

Բարի պատիքանների գործագրութեան, կատարման համար չիւսէյն-Ալին պահանջում էր հետեւրդներից սիրել մինչև անգամ դահիճներին, բանակալներին, յորդորում էր ամսահման համբերութիւնով, զոհողութիւններով ընկճի թըշ-նամիներին, գաֆան կեղերիչներին համոզմունքով և բարեգործութիւններով, յաղթահարել, հարստահարուղներին ամբողջ գոյքը յանձնելով անգերջ նպաստներով և օգնութիւններով բարութեան լոյսը ծագեցի ապաստացած սրակում, անդգայացած բթացած ջղելում:—Զեր միակ դէնքը, առամ էր, ձեր լիզուն և ձեր պաղափարը սիտի լինի:

35. Գոսոսդ շիաները, որոնք միտթէշարիներից զուրս, ամբողջ աշխարհի գրա զգուանքով ու արհամարհանքով էին ակնարկ գցում, որոնց համար համայն մարդկութիւնը, բացի

իմամների երկրպագուներից, ապականութիւն ու գարշանք էր ներկայացնում, չէին կարող համբերութեամբ լսել, տեսնել ու շրորդուել նորագանդների դէմ: Բաղդադ ու Քէազչիմէյն ապրող շիանները սրտմտած չիւսէյն-Նլիի դէմ, իրենց կօնսուլից պահանջում էին, սանձել իմամների «հաղիսները» հերքով, աւանդութիւնները եղծող, ժողովուրդը գայթակղեցնող Բարի վարդապետութեան յամառ քարոզողներին: Իրազ—Ըրարի սրբավայրերում ապրող իւլէմանները ամէն շաբաթ հասած ծըրարներ էին ուղարկում Թէհրան վկղիլներին ու շահին, պահանջելով որ միջոցներ ձեռք առնեն և այս հայհոյողի (քետիր) գոյութիւնը չնշել իրենց միջից: Նրանք բողոքում էին, թէ Նորագանդները պղտորում են սրբավայրերը այցելող շիտութաւունների միացը և թերահաւատութեան որոմը ցանում են ծմբարիտ հաւատացեալների սրտում, կասկածներ են զարթեցնում իմամների, չաղիսների, չարուլգայի և ուրիշ գերագոյն յայտնութիւնների մասին: Դրութիւնը այնտեղ հասաւ, որ կոնսուլը հրաւէր կարդաց Նէջէֆի, Քիւֆէի և Քէրբէլայի բոլոր իւլէմներին, որոնք ժողովեցան Քհազիմէյն քննելու և զատապարտելու Բարի աշակերտներին: Եյս ժողովով էլ շիանները չհասան ցանկութիւններին, քանի որ այն ժամանակի շիամիւթաշարիների յայտնի Միւջթէհրի չաջի Միրզա-Մուրթութաւակովից զուրս եկաւ կրկնելով, թէ—Ինքը որիէ կըրսոնի հակառակ և զատապարտելի ընթացք չի նկատում չիւսէյն-Նլիի զրքերում և վերադարձաւ Նէջէֆ: Եյս անյաջողութիւնից բորբոքած, երբ կրնուրը ջանում էր շահի որեէ հրօվարտակով կալանաւորել և պարսկաստան վերագարնել բարիներին, վերջիններս խմբով գիմեցին և ընդունեցին Օսմանիան հպատակութիւն և հովանաւորութիւն:

36. Բարիների Օսմանցիներից հովանաւորութիւնը աւելի

գրպանց—բարբոքեց բաղդադի պարսիկ գաղթականութեան և Հիւսէյն-Ալի սկսեց աւելի համարձակ քարոզել նորազանդի վարդապետութիւնը։ Պարսիկ կղերը շարունակ նրան այցելում էին և անդադար վիճում։ Մի օր եղբ նրանից նշան պահանջեցին, նա ասաց—հրաշքը այն սրբազն գրութիւններն է, որոնք թողել է մեր կրօնի հիմնադիրը։ Միթէ իսլամի վարդապետութեան ամենամհծ և միակ հրաշքը Դուքսնը չէր, որին հաւատացին ու դաւանեցին միլիոնաւոր ժողովուրդ։ Երբ առարկեցին, թէ անգրագէտ Մահմէզը Աստւածային ներշնչումով գրեց և յանձնեց Դուրանը, իսկ բարը իրանից է գրել, Հիւսէյն-Ալին բարբոքուած ասաց.—«Քնացէք կանչեցէք բաղարից սրե է թէդին (արար)։» Երբ թէդինը ներկայացաւ ժողովականներին, Հիւսէյն-Ալին հրամայեց մի խօսքով— «Դուլ, կարդա»։ Եէդինը ամբողջ կէս ժամ անդադար երեքշարս հարիւր «Այտթ» կարգաց ընտիր արարական գրական ոճով և առջեցրեց հանդիսականներին։ Հիւսէյն-Ալին թէդինին դադարեցրեց, երբ բոլորը հետաքրքրուեցան և համազւացան, որ նա անգրագէտ և տգէտ մարդ է, խօսում է արարական աղաւաղւած բարբառով, մնացին շւարած-տարակուած և շատերը հակւեցան բարիների կողմը։ Երբ մի ուրիշ ժողովում ամէն կողմից հարցախեղդ արին և Հիւսէյն-Ալիից նշան էլին պահանջում, նա կանգնեց և ասաց, թէ— «Բոլորդ յանգեցէք մի սրոշման, պահանջեցէք մի բան, մինչև անգամ եթէ կամնում էք այս Շաթ գետին (Տիգրիս) հրամայեմ, որ ետ գառնա»—բոլորովին բորբոքւեցան և ամէն միջոցի դիմեցին, մինչի որ համոզէցին խալիֆին և յատկ հրովարտակ, պաշտօնականներ զրկել առին բաղդադ, որոնք նորազանդներին իրենց առաջնորդի Հիւսէյն-Ալիի հետ տա-

րին կ. Պօլիս 1863 թուականին, բաղդադում տասն ու մի տարի քարոզութիւնից յետո։

37. Երբ պաշտօնականների հետ ճանապարհ էին ընկնելու դէպի կ. Պօլիս, Միրզա-Հիւսէյն-Ալին յայտնութեան ժամը հասած համարելով, նէջիր Փաշայի այգում հաւաքւած բարիների խմբին նա պարզեց իւր անձնաւորութիւնը, թէ ինքն է այն Բեհա-Ռւլահը (Սուտուծո լոյսը), որի մասին կարապետել էլ բարը իւր Բեյան գրքում։ Այդեղ տուած պաագամը («Լոհ») սկսում է.—«Նա է, որ բազմած և բնակրուած է այս լուսեղէն կենդանի տաճորի մէջ...»։ Այս խօսքերով նա ցոյց տւեց իւր կուրծքը և պաագամը վերջացնելով ճանապարհ ընկան։ Նորան ընկերակցում էին ընտանիքը, զաւակները, եղբայրները, բարի աղդականները և նշանաւոր հետեռդները ընդամենը 86—90 հոգի, որոնք միասին ուղիորւեցին մինչև կ. Պօլիս։ Էդէլին, որ տասներկու տարի անվերջ թափառելով վարժւել էր հետի ճանապարհորդութեան, անցել էր իրանը, Թուրանը, Ռֆուանը, Հնդկաստանը, ամրող Միջագետքը գէրփիշի Էւսկիւով, ուղեկցում էր հեռուից և այս կարավանին կողմնակի ճանապարհներով, հետի, որպէսզի Ժուրք սոտիկանութեան ճանկը չընկնի։ Պատւով մտան կ. Պօլիս, յարգանկով ընդունեցին Օսմանիան նախարարները այս տարօրինակ աքսորականներին, Հիւսէյն-Ալիին այցելեցին Հիւսէյն-Քերի մայրաքաղաքի բոլոր նշանաւոր պաշտօնականները և աշքի ընկնող անձնաւորութիւնները, որոնց մօտ շատ վեհ զիրը բանեց թէհան։ Տեսակցեցաւ մինխատըների հետ, և որովհետեւ սրոշ գաղափար չկարողացան կազմել, երեք ամիս կ. Պօլոււմ աղբեկուց յետո, Խալիֆի յատուկ հրովարտակով արսուիցան Աղբիանուալիս (Էտիրնէ)։

38. Աղբիանուալիսի աքսորավայրից թէհան սկսեց գրել

իւր «Հոհերը» (սատրիբանները) և աւարածել հետեղներին Միջնագիտք, Պարսկաստան և Հնդկաստան։ Այդտեղից զրեց և ուղարկեց նասրէղդին շահին այն ընդարձակ թուղթը, որով բացատրեց, թէ ինքը և իւր վարդապետութիւնը երբէք նպատակ չունին որևէ աշխարհային իշխանութեան ձգտելու, կամ որիէ պետութիւն—թագաւորութիւն տապալելու։ Նա վաստացի կերպով բացատրեց, որ թէ իւր և թէ բարի Հոհերը ստհմանաւորւած են միայն մարդկացին հոգու և բազըի կրթութեան կատարելութեան հաջոցներու նպատակով։ Թէ իւր հետեղներին խստիւ արգելւած է ոչ միայն որիէ իշխանութեան գէմ տալուամբիլը, հակառակիլը, կուրիլը, և արինահնեղութիւնը, այլ նրանք խօսքով, լեզով անգամ իրաւունք չունին վշտացնելու որիէ անհատի, ինչ աղջի, ցեղի ու աստիճանի էլ որ պատկանի, նրանք պարտաւոր են սիրել, ներել ոչ միայն թշնամիներին, հակառակորդներին, այլ մինչև անգամ իրենց կեղեքող, կողովառող և սպանող շարազործներին։ Այդ թղթով նա խոստովանում է, որ Թէրէրսի, Նէյրիզի, Զէնջանի ընդդիմութիւնները սփալմունք, աղիտութեան արդինք էին, իւր հետեղները մինչեւ անգամ անձնապաշտպանութեան իրաւունք չունին, շարին հակառակելու արտօնւած չեն, ոչ դինելու, ոչ պատերազմ զնալու և ոչ էլ որիէ պատճառով մարդ սպանելու. պիտի մեռնին, բայց շղիտի սպաննեն։ Մանաւանդ. նա յաւելացը էր, Սատրպի աշխարհը ոչ միայն հիմնովին հակառակ էր իւր վարդապետութեան հոգուն, այլ մի խելացնորի գործ էր։ Օսմանեան հպատակութեան անձարութիւնից զիմնելու պարտաւորւթիւն յաւանելուց յիշու, առաջարկում էր շահին իւր հովանաւորութեան տակ մի ժողով գումարել և շիտ միւջթէհիդների հետ վիճականների ուղամտութեան մասին հա-

մագի, թայտարէ նորոգանեղներին էլ աղաս ապրելու իրենց ծննդագյուրում մնացեալ այլակիրոն ցեղակիցների հետ։ Բայց բարի վարդապետութեան ռամկավարական հոգին, զինաթուփութիւնն և զինուրականութեան չնշումը հիմնովին հակառակ լինելով Զահնշահների անուանման իշխանութեան, այդ պատճառով ոչ միայն թէհայի թուղթը շահին ներկայացնողը գլխատելու պատահասին արժանացաւ, այլ թէհային էլ պատասխան շպրեց։ Այստեղից զրեց եւրոպայի արքունիքներին իւր յայտնութիւնը և հրաւեր կարգաց գէտի իւր կլոծութեանը։

39. Թէհայի հետ եզրայրը-եղէլին էլ աքսորւած էր Աղրիանուպօլիս։ Էղէլին իւր խորհրդակից Խաֆահանցի Սէկդ-Մէնմէզի, Միրզա-Ազաջանի և Թաւրիզեցի Բզմ-Ղուլիի հետ միացած՝ խորհուրդ արին և բողոքից թէհայի յայտնութեան և քարոզութեան գէմ, առարկելով թէ բարի էղէլին է անւանել իւր վարդապետութեան «Արշալոյը» (Առփ-էղէլ), նրան է յայտաբարել իւր «Մէրաթը» (Հայելին) և նրան է կարգել իւր հետեղների Խնամակալը (Վէսին), թէ եղբայրը իրաւունք չունի իրեն թէհա-Ռևլահ անուանելու, «Լոհ» տալու, կամ բարի գրութիւնների մասին բացատրութիւն գրելու։ Այսպէս եղէլին հերքելով եղօր յայտակնութիւնը, բողոքելով նրա ընթացքի գէմ, բաժանեց եղօրից և նրա հետեղներից, առանձին հերձւած կազմելով վերապարձաւ Կ. Պոլիս։ Այստեղ նա կարողացաւ ներկայանալ Օսմանեան պաշտօնականութեան, յայտաբարեց թէ ինքն է Բարիների առաջնորդը, եղբայրը յափշտակել է իւր իրաւունքը և ինդքեց, որ, որպէս աքսորական, պետական գանձից նրան թոշակ յատկացնեն։ Այդ օրինը Օսմանեան գինուրականներից մէկի մօտ գաել էին թէհայի «Լոհերից» մի քանիսը, որոնց բանակի մէջ տարածւիլը, մըտ-

քեր յուղելը, նորանոր գաղափարների արծարծելը մեծ յազում էր պատճառել բարձր պաշտօնականութեան, որոնք եզելի այս խոստավանութիւնից օգտւելով, թ. Դոնից հրաման հանեցին և երկու եղբօրն էլ աքսորեցին. եզելին՝ Կիոլոս, իսկ Բէհային՝ Աքէա 1868 թուականի օգոստոսին: Բէհայի հետեւորդները շըցանկացան քաժանւել իրենց առաջնորդից, այնպէս որ կառավարութիւնը նրանց էլ աքսորեց երկու եղբայրների հետ, թուով 80—90 հոգի: Պարսից գեսապանը յաջողեցրեց, որ եզելիի հետեւորդներից երեք հոգի կցին Բէհայի խմբին և Բէհայի մարդերից երեք հոգի եզելիի խմբին, որպէսզի կարսդանա զրանց միջոցով պառակտում գցել և քայլայել աղանդաւորներին: Յանկարծ Աքէյում, եզելիները մի օր երեքն էլ անյայտացան, այնպէս որ կառավարութիւնը որբան խուզարկեց, ինչ քննութիւնների չփիմեց՝ հնար չեզաւ զրանց զանելու ենթաքրում էին, որ զրանց սպանել, աներեսութացը էին Բէհայի 75 հոգուց աւելի բանտակիցները. իսկ կառավարութիւնը որեէ գրական փաստ չկարողանալով գտնել, մոռացութեան տւեց խնդիրը: Իսկ Կիոլոսը անգլիացիների ձեռքը անցնելուց յետո, երեք Բէհայիները 1878 թ. վերտարձան իրենց առաջնորդի մօտ:

Սոմանեան կենդրոնական գարշութեան կարգադրութեան հանձայն Աքէի բերդի հրամանատարը Բէհային և հետեւորդներին բանտարկեց բերդի մեծ զօրանոցում, ուր վերեի յարկում ապրում էր Բէհան ընտանիքով և սպասաւորներով, իսկ ներքեի յարկում ընակւում էին հետեւորդները, առանց որեէ կապանքի: Այս պատճառով Բէհան իւր գրութիւնների մէջ իր անձը—մարմինը կալանաւոր, անհջուած էր անւանում: 1868—1870 թւականը, զըհթէ երկու տարի աքսորականները ապ-

րեցան զօրանոցում, բայց երբ պահեստի զօրքը զէնքի կանչւելով կառավարութիւնը զօրանոցի պէտք ունեցաւ, նրանց թոյլատը եցին քաղաքում ապրելու: Աքէյի բանտից Բէհան նորից զրեց իւր թղթերը ինչպէս եւրսպայի նշանաւոր արքունիքներին, պապին, նոյնպէս և աշխարհի ամէն կողմի հետեւողներին: Բանտից աղատւելու պէս՝ նա զրեց Բէհայիսների Առար-Գիլը (Քիթարի-Ազգէս), Փարսիքէն, ապա միւս զրութիւնները, որոնք երեք հարիւր հատորից աւելի կարող են կազմել: Բաղդադում գրած «Իգանից» (առացոյց) յետո, նրա գրածներից նշանաւորներն են «Միւրին» (թագաւորների թղթերը), Խըրագաթ (գատաստանագիլք), Իզմիլարաթ (զօրութիւնն), Մարիւմնիւլ Էսֆէր (աւետիսների հաստատութիւնը), Քիւլի-Թատամ-Հէլլէն—Բէնի-Խորայէլ (ամէն կերակուր հալալ է իսրայէլի զաւակներին), բացարութիւն Ղուրանի, Աղամի, Էյուբի սուրբիչների, ևն, ևն, ևն:

40. Բէհան (Հիւէյն-Ալին) ծնել է 1233 թ. Հեջըի Մուհամեմի—2-ին (30 Հոկտեմբերի 1817-ին): Աքէա աքսորւելիս Բէհան արդէն յիսուն տարին անցկացրած էր: Մանուկ հասակից նա ցոյց էր տւել իւր հանճարեղ սրամատութիւնը և ընաձիր տաղանդը: Եօթը տարեկան հասակում եղած ժամանակը հայրը ստացել էր Ասրավատականի ֆինանսի կառավարչից պետական ելեմտից տարեկան հաշւեցուցակը: Հիւէյն-Ալին ձեռքըն առաւ կարդալու այդ հաշիւը և խաղալով պտառակց, մանրեց, թափեց: Երբ հայրը շւարած չէր իմանում անելիքը, երեխան նոտեց, զրեց իսկութեամբ ամրողի հաշւեցուցակը և յանձնեց հօրը: Միծ եղաւ տանեցիների զարմանքն ու ապշարութիւնը, երբ Ասրավատականից ստացւած երբորդ պատճէնի հետ համեմատելով զրւածի բոլորովին ճշտութիւնը ստուգեցին: Մի անգամ աղա Բուլգուզը-Աբրամը իւր ընազիւական

հմտութեամբ պարծենալիս, ասաց, որ եթէ Քրիստոսը ներկա լինէր, պիտի հաստատէր, թէ ինքը աշխարհի եղեան ամէնից բարձր բնագէտնէ, Եւրոպացի գիտնականներից աւելի մասնադիտ և աւելի խորաթափանց: Եյդ ժամանակ մանուկը նրան պատասխանելով ասաց.—«Միթէ գու կարող ես աներկիւզ զիմել շահին, եթէ նրա տասը ֆարաւաները յանկարծակի քեզ առաջնորդեն աշխարհի հրամանակալի ներկայութեան»: Ապա յանդիմանեց հօրը, որ նա շյանդկնի պարծենալ ու խրօսալ, որ կարող է Յիսուսի նման Սսառուծու պատգումաւորին—հսկուն մօտենալ և կամ նրա մասին անվայել կարծիքներ յայտնել: Հիւսէյն-Նլին մօտնկուտ ծանրաբարս էր, միշտ խորառութեամբ անուանման մտածութիւնների մէջ և անշափ սակաւախօս էր: Նա անշափ համեստ էր, երկար ժամանակ թէհրանի և բաղդապի հասարակութեան չէր պարզում: Իւր քաջողութիւնները, իւր գրութիւնները, իւր արտադրութիւնները էզէի միջոցով, կամ նրա անունով էր յայտարարում: Փոքր հասակում դաստիարակւելով հմուտ ուսուցիչների հոկողութեամբ, հրաշալի կերպով ուսումնասիրել էր պարական և արարական շեզունները, որմեց զրականութիւնը, մտնաւանդ խլամի և նրա ազանգաւորների պատմութիւնը, վարդապետութիւնները և փիլիսոփայական տեսակէտները: Բարինները թէհայի ասաւած այայտնութիւնը խոստավունել են, հիմւեկով նրա տաղանդաւոր զրական արտադրութիւնների, վում մտքերի, հրաշալի զեղարւեստական ոճի ու աբայայտութիւնների վրա: Նրա գրած երեք հարիւր հասոր երկերի մէջ, չէ կարնլի մի նախողասութիւն զանել, որ ոճի, դաստորութեան, կամ բառերի կազմութեան և ձեերի մէջ նմանութիւն ունենաւ Հուրանում, Խլամի զրականութեան, կամ կոտակարանների մէջ: Նա նայնպէս ուսումնասիրել է յունա-

կան և Հառմէական կլասիքները, Սոկրատը, Երիստոսէլը, Պլատոնը, Հիպոկրիտը և ուրիշները, որոնք թարգմանւած են արաբականի Արբատոնների շրջանում, բայց շատ քիչ զաղափար ունէր Եւրոպական զրականութեան, պատմութեան, գիտութիւնների և արևոտի հոկայական առաջադիմութիւնից: Յէհան հեռաւանու մտքով, խորաթափանց հայեացքով, արևոտի, գեղարւեստի և գիտութեան կատարած արակարգ յազթանկները նկատել, զգացնել և իւր բնական բնդունակութիւններով որոշ զաղափար կազմել էր զբանց ապագայի մասին, որանց օգտակարութիւնը պատւիրել էր: Նա անշափ անգամ կրկնել է հետեւրդներին, պատւիրել է, անպայման աշակերտել այդ գիտութիւններին և արևոտներին, տքնել իւրացնել և գործադրել կեանքի ուղարքում, մանաւանդ բնական գիտութիւնները, որոնք մարդկային ազգին անբաւ բարիք են խոստանում:

41. Բարի և Յէհայի քարոզած Սսաւածը Եհովան է, որ Մի է, անսկիզր, անզուզակից, անփառակից և յաւիտենական անվախճան: Բարը ընդունելով Սսաւածաշնչի և Ղուրանի բոլոր քարոզիչներին, խոստավանելով նրանց երկնքից տրամադրութիւնները, պատզամները, իւր յայտնութեամբ ջնջել էր նըրանց պատւիրանների ոյժը և հրամայել էր ժամանակի կարիքներին համապատասխան իւր բերած օրէնսդրութեան հըպատակել: Նա փոփոխեց վերացական-աներեսոյթ աշխարհի մասին եղած ենթադրութիւնները, աշխատեց համաձայնեցնել զերբնականութիւնը ընական օրէնքներին: Հետեւելով Բարին, Յէհա-Մւլլահը քարոզեց սէր, միութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն և անխորութիւն: Բայց Յէհայի քարոզութեան ամենավսին կէտն այն է, որ նա մարդկութեան հրաւէր կարդաց մշանչենաւոր խազագութեան, հանրամարդկային զինա-

թափութեան, կատարելութեան վայել պարսաճանաչութեան, ցեղերի, ազգերի, տոհմերի, դասակարգերի տարրերութեան ջնջման, համերաշխութեան և համայնացման։ Աշխարհի վրա բարեասատիկ վիճակ ստեղծելու, բանութիւնը, խարութիւնը ջնջելու համար, թէհան իւր հետեւրդներից պահանջեց՝ ամբողջ հողագնդի ազգերին իրենց հարազար, տրիւնակիցը ընդունելով, երբէք նրանց գէմ, որեէ մարդու գէմ զէնք չբարձրցնել, մարդկային արիւն երբէք չողոզել։ Հոշակելով իր յայտնութիւնը, նա աւետում էր աշխարհին, որ շուտով լոյսը պիտի սփռւի և մարդիկ պիտի զգաստանան, վայրենութիւնից, գագանավայել արիւնահեղութիւններից ձեռք պիտի վերցնեն։ Թէհան բարի վարդապետութեան՝ թէյանի պատիշանների մէջ նկատած բոլոր խօսութիւնները մեղմացրեց, ժողովրդի վրա դրւած պարտականութիւնները և տուժերը թեթեացրեց, ջնջեց զնասակարները, զժւարիները վերացրեց, հաստատելով մնացորդը։ Թէհան թոյլատրեց օգտւել և վայելի աշխարհի բերքն ու բարին, հաճոյքը, միայն թէ չվնասել, շվատացնել, շուտել տալ ուրիշներին։ Նա ինքն իրեն լոյս էր անւանում, լոյսի (թէհա) ծնունդ, արշալոյս և հետեւրդներից պահանջում էր միշտ դէպի լոյսը ձգտել, թափանցել խաւարի, աղջամուղջի ամէն մի խաւը, տարածել լոյսը ճրշմարտութիւնը ամէն մի անկիւն, ձգտել անվերջ դէպի առաջ դիտութիւններով և արւեստներով, բարձրացնել պայծառացնել մարդկային միտքը զսեմ գագափարներով։

Թէհան անվերջ քարոզում էր հետեւրդներին։

— «Ո՞վ հետեւրդներ, աշխարհի ցեղեր, ամէն կրօնի հետեղ ժողովրդի հետ սիրով, անկեղծ հոգւով յարաբերութիւն կապեցէք։

«Գիտութեան ծառի ամենավսիմ խորհուրդն այն է, որ

զուք բոլոր ազգերդ մի ծառի պտուզ էք, միհնոյն ոստի տերեներ։

«Հայլենասիրութիւնը առաքինութիւն չէ, ամբողջ աշխարհը պարտաւոր էք բնդունել ձեր արիւնակցի, սրտակցի նման։

«Ո՞վ թէհա-Աւլահի հետեւրդներ, զուք սիրո արևելքն էք, բարեսրտութեան արեածազը։ Մի վաբժեցնէք ձեր լիզուն որեէ անարգանքի, կոմ հախատինքի։ Աշքերդ զգուշացէք անարդ տեղեր հայեացք զցելուց։ Ոչ որի վշտին պատճառ մի գառնաք, ուր մնաց թէ կուել կամ ապստամբել մէկի դէմ։ Աստուծու օրէնքն ու հաւատքը միմիայն համերաշխութեան համար է երկնքից երկիր իջել, այդ բանը երբէք հակառակութեան և հերձւածի տոարկա մի դարձնէք։

«Այս խօսքերը նման են ջրի, որը պիտի հանգնէ սրտերի խորքերում ծածկւած կուտակած կրօնական ատելութեան բոցերը։

«Աւելի լաւ բան ցանկացէք ուրիշների համար, ինչպիսի հաճելի բաներ ցանկանում էք ձեր անձի համար, այս է Ալտահի պատգամը, եթէ դուք կարողանաք ըմբռնել։

«Ո՞վ իմ բարեկամներ, զուք ձեր անձի համար շէք ստեղծւել, այլ աշխարհի համայնքների համար, Թողէք այն բարորը որտեղ տեսնում էք ձեր անձնական շահը, կապւեցէք նրան հետ, որտեղ ընդհանրութեան շահն էք ահսնում։

«Ո՞վ մարդու որդի, եթէ ուզում ես առաքինի լինել, թնդ քս անձնական շահները, հետեւիր և ձեռքումդ պինդ բըսնիր ընդհանրական շահները։

«Եթէ արդարութեան ես հետեւմ, ուրիշներին էլ տար ան իբաւունքները, արտօնութիւնները, ինչ որ իւրացըել ես քո անձիդ համար։

«Երանի՛ այն մարդու վիճակին, որ պառկած տեղը նրա հոգին լուսաւորւում է ընդհանրական սիրով։ Երանի՛ այն մարդուն, որ ծառայում է ընդհանրութեան շահներին։

«Ով որ իւր, կամ ուրիշի գաւակներին զառափարակէ, Աստուծո սրբիներին կրթած կլինի։ Նրան հասնի իմ լոյսը, իմ ճառագայթը, իմ ողորմութիւնն ու օբհութիւնը։

«Եշխարհի յասաջաղիմութիւնը, զառափարակութիւնը, զարգացումը մարդկային կեանքի ապահովութեան և խաղողութեան համար է, որն Աստուծո պատիբանի ամենազլիստը կէտն է։

«Կեանքի իսկական ձաշակը պարու մշակութեան մէջն է։

«Կա ժամանակ, երբ գահները թափուր կմնան, ոչ որ չի ցանկալ նրանց տիրանալ։

«Լրագիրը կեանքի հայելին է, երանի այն խմբագրին, որ եղելութիւնները քննում է, փնտում է և ճշմարտութիւնը նկարագրում։»

42. Եյսպիսի յորդորներ, խրատներ և կոտակներ անթիւ են Բէհա-Ռուլահի գրուածքների մէջ, որոնցից իննը հատորը 1890—2 թ. տպագրուած է Բոմբէռում։ Արանից աւելի օրինակներ տալը կարիք չհամարելով, մի քանի խօսքով էլ որոշենք Բէհայի սկզբունքը։

Հետեւով քիսատնէտական վարդապետութեան հիմունքին, Բէհայի հետեւողների համար գոյութիւն շունի՝ ոչ աղզ, ոչ ցեղ, ոչ առնձ, ոչ իդու, ոչ դասակարգ, ոչ սեռ և ոչ էլ սարկութիւն, մարդիկ համահաւասար են ծնւած և համահաւասար էլ մեանելու են։ Նրա վարդապետութեան համաձայն ամրող հողագունդը համայն մարդկութեանն է պատկանում, մարդիկ անխոտիր հաւասար եղան, համահաւասար ժառանգորդ այն բոլոր բարիքին, բերքին, ինչ որ չնոդհւել է

ընդհանրութեան։ Նա հակառակ է սարկութեան. և այս մասին Վիկտորիա թագուհիի գրած թղթում իւր զսհունակութիւնն է յայտնում զերեվաճառութեան դէմ ձեռք տած միջոցների համար և տանձնին համակրութիւնն է ցայց տալիս որ թագուհին ժողովրդին իրեն հետ հաւասարելով, նրան է յանձնել պետութեան վարչութեան ղեկը (պարլամենտին)։ Նապոլէօն III-ի գրած թղթի մէջ հրամայում է հեռանալ զահից, փառքից, մերկանալ յափշապահ կարողութիւնից և երկիրը յանձնել ժողովրդին, որ ինքն իշեն կառավարէ (խորհրդարանով)։ Զանոսու դէպքում, սպառնումէ Կեսարին խայտառակ անել թշնամիների ձեռքով, որոնք գրդացնելով ու զոգոզացնելով պիտի պաշարեն գեղարքեսաի մայրաքազաքը և նրան մատնեն սոսկալի անարգանքի։ Ալի փաշային գրած նամակում յորդուած է Ծրգուլ-Ազիզին ժագագրդի նեղկայացուցիչներից ժողով գումարել և արդարութեամբ գատել աղքարակութիւնը։ Երեն Ազիտանուալու աքսորելու համար արած անիրաւութիւնը յիշեցնելով, յորդուում է զգաստանալ, հակառակ պարագային մերձաւորների ձեռքով խողխոզիլը, մինհատնալը իմացնելով, յայտնում է, որ Ազրիանուալոն էլ, սրա նման ուրիշ շատ քաղաքներ էլ, պիտի անջատեի նրա իշխանութիւնից, որիտի յանձնել նորանոր կառավարիչների ու թագաւորների։ (Այս երեք նամակն էլ գրւած է 1866-7 թ. Ազրիանուալոի արասրավայրից)։ «Թէհան» վերնազրով տւած և ոչի մէջ Բէհան բացատրելով, թէ մարդկութեան թշնամինը կրկին են։ —Ա. խստավահանջ կզերը իրենց երեակայական տեսիլներով և գժուխքի տանջանքներով սարսափեցնելով ժողովրդին կորզում են թշնամին ու այլիքին իրենց մարմինը ծածկող ու

տաքացնող հակուստից: Այս թղթով նու աւետում է Թէհրանք քաղաքին, որ շատ մօտ է նրա ռամկավարական իշխանութիւնը, որով ժողովուրդը ինքն իրենց պիտի կառավարէ, պիտի ցամաքեցնէ թշւառի արտասունքը և պիտի յազեցնէ ու տաքացնէ ոլբին ու այրին, վերջ տալով նրանց մըմունչներին:

43. Ռամկավարական սկզբունքի աւելի զրական ազացոյցն է նայնպէս, Յաջի և Քէհա-Ռւլահի հաստատած «Թիջալի» և «Եգիլ» ժողովները, որոնք ընտրում են ժողովուրդից համայնքից: Քիթարի Ագդէսի մէջ զրւած է.—

«Ալահը հրամայեց ամէն քաղաքի-աւանի համար մի մի արդարութեան տուն հիմնել, (տասն) ինը մարդ ընտրէ ժողովուրդը, եթէ աւելի լինի՝ անվետու է: Այդ մարդիկ ժողով մտնելիս այնպէս շարժւին, որ իբր Աստուծո ներկայութեանն են դիմաւորում, Աներեոյթը տեսնում են: Այդ մարդիկ Աստուծո հաւատարիմները համարւին մարդերի մէջ, երկրի վրա Ալահի փոխանորդները լինին ընդհանուրի համար: Աստուծո սիրո համար՝ նրա ծտուաների զործերի առթիւ խորհուրդներ կատարեն, ինչպէս իրենց սեփական զործերի համար ջանք են գործ դնում: Ժողովրդի շահերին վերաբերեալ ամենաօպտակար ձայներին ձայնակցելով վճիռներ արձակին»:

Թէկ անդել, կրկնել է Քէհան Նասր-Եղիշ շահի զրած թղթերում, թէ իւր վարդապետութիւնը ամփոփւած է սոսկ մարդու հոգեկան-կրօնական հայեացքների սահմանաւորութիւնով, նա աշխարհային-քաղաքական ինդիբների, իշխանութիւնների շի միջամտել, արգելել է հետեսրդներին հետամտել քաղաքական հարցերի: Բայց նա, որպէս հետեսրդ Մովսէսի, Յիսուսի, մահաւանդ Մահմէդի, ծնած ու արագբաւած դրանց օրէնսդրութիւնից, չէր կարող կրօնա-քաղաքական օրէ-

նոգրութիւնը բոլորովին բաժանել քաղաքացիական կողէքսից: Նրա «Քիթարի-Սպդէսը», «Նշանաւոր միապետներին», «Թէհրանին» և «Ալմին» ուղղած թղթերը որոշ կերպով ծրագրում են համայնտական և ռամկավարական վարչութիւն, որ կառավարէ, գատէ հետեսրդներին, Յայտնի բան է հետեսրդները անպայման ձգտելու են իրագործել իրանց արւած աշուղամը: Ի՞նչ կարող է անել այս գէպքում Բէհայի հետեսրդը, եթիւ նրան արգելւած է ոչ միայն Ահաթը (կրօնական պատերազմ) գինելը, պատերազմի գնալը, մարդկային արիւն թափելը, յարձակելը, այլ շատ խիստ ու որոշ օրէնքով արգելւած է «Էկֆան» (ինքնապաշտպանութիւնն) անգամ, անձը որեւէ բռնութեան գէմ պաշտպանելին անգամ: Բէհականը և ոչ մի գէպքում բռնութեան գէմ զինւելու իրաւունք չունի, շպիտի դիմադրէ. այսպիսի պարագային նրա զէնքը միայն լեզուն է, որսկ պիտի համոզէ՝ առանց նախատինքի և հայրայինքի:

Բէհան շատ յաւ ուսումնասիրած լինելով իսլամի աղանդները, նրա տեսնչանքն եղել է, որ հետեսրդների մէջ հաջուկների նման տեսութիւններ, Դարասի-Գիւրզինների նման նենգամիտ առիւնուշաններ, Էօմէրի նման բանակալ իսլամացնողներ և յաջորդական իշխանութեան համար Ըլիի նման արիւնահեղ մարտնչողներ չյառաջանան: Նրա ամենապլիւտոր և միակ նպատակն է եղել հետեսրդներին իսպառ ազատել ազգիսի զարհութելի և բարբարոսական կոտորածներից:

43. Նոյնպէս նորադանդների Բէլթ-Իւլ-Աղլ (արդարութեան համայնքի), որ իսլամի Բէլթ-Իւլ-Մալի (Հասարակական գանձի) նմանողութիւնն է, որտեղ կուտակւելու և որտեղից բաժանելու է ժողովրդից ստացւած 19-րդական տուրքը, Հարկը, տուգանքը, ժամանկութիւնը են, մի այնպիսի հիմ-

նարկութիւն է, որ միայն քաղաքական իշխանութիւնը կարող է գործադրել: Բէհայի վարդապետութեան քաղաքական առաւասի մի նշանաւոր կէտն էլ այն է, որ նա առաջարկում է աշխարհի բոլոր ափսողներին միանալ, մի գերազանց ժողով կազմել, դաշնաւորւել մշտնչենաւոր «Մեծ խաղաղութեամբ», ջնջել զինուրականութիւնը, զէնքը, զինաթափութիւ և զօրանոցները յատկացնել զինութեան տաճարներին: Նա մի այնպիսի զաշնակցութիւն էր երազում, որ բոլոր զաշնակիցները ինարկին միահամուռ ոյժով ճշշն նրան, որը որևէ ընթացրով մտածէ վրդովել ընդհանուր խաղաղութիւնը: Այս առթիւ «Ալէմին» (ընդհանրական) ուղղած թղթում յորդորում է, որ զիտնականների մի վեհաժողով այնպիսի միջոց ձեռք առնե, որ համայն մարդկութիւնը պարտաւորացնէ միենոյն լեզով կարդալու, զրելու, խօսելու, միենոյն տառերով և միենոյն ուղղութիւնով գաստիարակելու ավտոգ սերունդը: Այս թղթի մէջ հրամաւած է հետեւողներին աւելի սերտ կերպով կապւել այն իշխանութեան հետ, որն իրենց ազատութիւն կատ ճշառութեամբ, կատարել օրէնքներն ու պատիքանները, հաւատարիմ հոգւով և անկեղծ եռանդով աշակցել ու ջանալ որ այդպիսի իշխանութիւնը զարգանա, պայծառանա առաջանա և իւր իշխանութիւնը տարածէ իրենց կեղերիշների, հարստահարսողների, հալածողների և բարբարս առնջողների վրա:

44. Այս քարոզութիւնների տարածւելուց և ամէն կողմ քարոզելուց յետո, Բարիները իրենց տների բոլոր զէնքերը ցըւեցին, խաղաղութեան զէնքով—համբերութեամբ. զինւեցան և լուելայն տարածեցին իրենց վարդապետութիւնը: Մի տառնեակ տարի այլ սա չկրկնեցին արինահեղութիւնները, թէի մասնակի հալածանքը, առնչանքը, կողոպուտը անպակաս էր,

բարիները ենթարկուում էին անարգանքի, զրկանքի, բայց որիէ ընդգիմութիւն չնկատելով, ամէն բան շուտով վերջանում էր: Բայց այս հլու հպատակութիւնն և ծայրահեղ համբերատրութիւնը դարձեալ չօպնեց, նրանց չփրկեց: Խոփահանցի երկու եղբայր՝ Սէիդ Հասան և Սէիդ Հիւսէյն 18,000 թուման (մօտ 50,000 բուլի) պահանջ ունէին քաղաքի տուածին կղերականից՝ Խմամ-Առումա Միրզա-Հիւսէյնից, որը պատրւակներ էր վնասում այդ զումարը կլանելու: Նա մատնեց երկրի կառավարչապետին, թէ այդ Սէիդ եղբայրները բարիական են, նրանց անհերում ժողովակ է կատարում, քարոզութիւններ է լինում հակառակ շիական վարդապետութեան: Խոկոյն սկսեցին քննութիւնը, կալանաւորեցին եղբայրներին, կեղերեցին, կողոպտեցին, տուն ու վաճառատուն աւարի մատնեցին, ցըւեցին և նրանց էլ զարհութելի տանջանքներով սպանեցին (1295 թ., հիջ. 1879 թ.), որոնք մինչի մահ սիրով, համբերութեամբ զիմացան ամէն մի տանջանքի: Այս վերքը թէի շատ խոր խոցեց Բէհայի սիրտը, բայց նա դարձեալ անվրդով կրկնեց—սիրով ու համբերութեամբ տանին այդ տանջանքները և զինւել համոզիչ լեզուով: Յաւում էր, որ իսկզ եղբայրների հարիւր հազար թումանի կարսութիւնը անիրաւարար Փշացրել էին աւաղակաբար պաշտօնեաները և նրանց անմեղ արինուով ողողել, ներկել իրենց զսները, բայց կրկին ու կրկին պատէր էր զրել և շըջարերական տարածել, որ և ոչ մի զէպքում, ոչ մի պարագայում շղինել, շըղիմազրել դահիճ-հալածողներին: Միայն համբերութեամբ թշնամիներին զիմաւորելը անշափ զժւար լինելով, հետեւզները անվերջ զիմել, բացարաւթիւններ և արտօնութիւններ էին ինպրել, բայց անողոք զատաւորը վճիռը շէր փոխել:

45. «Ալէմ» ընդհանրական թղթի յառաջարանի աւետիս-

9. Վաղ ժամանակներից մինչև անցեալ XIX դարի առջին կէսը Յարպատականի կալւածները գրեթէ ամբողջապէս գտնւում էի խան-խաւանի—տղնւականութեան ձեռքում, որը կազմում է պետութեան վարչական մարմինը: Բայց երբ քաղելուած չէ եղել ժողովրդին, կղերին էլ կալւածներ ձեռք բերելը, քանի որ Դուրանը դասակարգ չի ընդունում և ամրօնից խաւանի դասն անցնելը շատ սովորական երեսի է եղել: Եթէ վաճառականը, կամ կղերը աչք չէ տնկել կալւածառախբութեան, պատճառը երկրին տիրող տնվերջ իր ոսկութիւններն են եղել: Թէ իրանը մի քահնչան է ունեցել, բայց երկրի տմէն մի նահանգում, գաւառում, աւանում, նոյն խոկ զիւղում անպակաս են եղել ինքնակոչ բանակալ օսմերը: Այս բանաւորների անընդհատ իրար դէմ մզած կը ուիւներից, յափշտակութիւններից աւարտութիւններից ոչ ոք չէ յանդգնել զրամագլուխը կալւածքի վերածել և բնիտով տպելու ըիսկ անելու: Բայց երբ վերջին դարում շահնշահները մահաւանդ նասրէզգին շահը կղերջ տւին այդ անդուսպ շահերին, կոտորեցին և ընկճեցին «դէրէրէյի»—ներին և երկրի վարչութիւնը (administration) գցեցին իրենց զիրիշխանութեան տակ, խաղաղութիւն և ընշից ապահովութիւն տիրեց, այդ ժամանակից սկսեալ կղերը, վաճառականները կամաց

կամաց զնեցին և սեփականացրին խաւաններից շատերի կարածները: Այս խաղաղութիւնն հետեւեց անտեսական զարգացումը, քամբակի, բրդի, մրգեղինի և գործածների արտահանութիւնը բարձրացրին կալւածների նշանակութիւնը: Ամբարներում փթող հացահատիկների արակերը՝ այգեստանների և պարտէղների փոխարկեցան, սրանց բերքի փոխարէն երկրում ներմուծւած զրամը բարձրացնելով մթերքի գինը, բանուորի օրականը, բարձրացրեց նոյնպէս կալւածների արձէքը: Վաճառականները և կղերը ուշքերը կենդրուացրին կալւածների վրա և այսօր Ատրպատականի գիւղերի կէսից շատը խաւանի ձեռքից կղերի ու վաճառականների ձեռքն է անցել:

10. Ներկայումս Ատրպատականի կալւածների նշանաւոր մասն արդէն անցել է յալտնի կղերի ձեռքը և սէիդներին: Հարիւրաւոր զիւղ ունեցող միւշտէիղները ստկաւաթիւ շին: Մհծամհծ կալւածառէր շահնաղատները, խաւանները ու սարսափները օրից օր ձգտում են ընդարձակել իրենց միւլքերը: Մի, կէտ, քառորդ և վեցերսրդ բաժին զիւղատէրները հետզհեաէ կորցնում են իրենց կալւածները: Փոքրամաս (խրգումալիք) սեփականութիւններն էլ ուղղակի և անսուղղակի միջոցներով անցնում են մեծ կալւածառէրների ձեռքը: Փոքր կալւածները կլանում են ազան կղերը և նենդամիտ վաճառականները: Տկար, թոյլ կտլւածառէրները, փոքր կապիտալի տէրները, գորիղ կղերի մհծամհծ խաւանների հետ կապ շունեցող հովանաւորից զրկւածները՝ չին կարողանում կալւած պահպան ել և ակամա—պարտաւորւած են ծախելու:

11. Ներկայումս էլ Պարսկաստանին, բառի բան նշանակութեամբ, իշխում է զօրեղը: Մյժի առաջ խոնարհում են բոլորը: Ոյժ են կազմում օտար պետութեան հպատակները.

սրոնց հովանաւորում են գեսպանատները, պետական բարձր առաջինաւորները, զրամատէրները, և մանաւանդ կղերը: Գերազանցութիւնը կղերի կողմն է, սրոնք շէրիաթի սպասաւորներն և բացատրագներն են համարւում: Թէ պետական պաշտօնականները և թէ կապիտալիստները ընկնում, կործանեւում են, բայց կղերը անդրդեւի են և երրէք մտադիր շեն կամովին զիջանելու: Եւ կղերն էլ ժառանգական են—միծ միւչաէիդների որդիքը յաջորդում են ծնողներին: Կալւածական ինդիքներում ոչ միայն բարձրաստիճան ծառայողները, այլ մինչև անգամ շահերը միւչաէիդների վճռին կարօտ են: Նշանաւոր վեղիները, իրենց սեփական կալւածների ապահովութեան և պաշտօնութեան համար, ստրկանում են կղերի առաջ և ամէն մէկը, սրանցից հովանաւորութիւն ակնկալելով, պարաւորւած է կղերի քմածոյքներին միշտ բաւարարութիւն տալ: Արգարութիւնը և իրաւունքը միշտ զօրեղին է պատկանում: Ամենալիբաւ թոյլի կայքերը, ամենախայտակ պատճառաբանութիւններով յափշտակում են զօրեղիները: Մինչև անգամ զիւղական ժողովուրդը շի ցանկանում ամենաբարեխիզ, բայց թոյլ կալւածատիրոջ հողի վրա ընակիլ: Զօրեղ կալւածատիրոջ ամենաբարդ հարկերը տանիլի է երկրամշակի համար, քանի որ վերջինիս մօտ մնացած ընշրի ապահովութիւնը ոչ ոք շի յանգնիլ խանգարել: Արտաքին պետական ծառայողների ստնձգութիւններից, արտասովոր և անօրոշ հարկերից զիւղացուն պաշտպանելու անկարող կալւածատիրոջ զիւղերը շատ շուտ ամայանում են: Յաճախ զիւղացին ինքը դանական ինտրիգներ է սարքում, ընդդիմանում է թոյլ կալւածատիրոջ և սախում կալւոծքը զօրեղին յանձնելու—ծախելու: Հարուսաները, մանաւանդ կրղերը, անընդհատ բորբոքելով զիւղացիների նախանձուու-

թիւնը և կալւոծատէր ժառանգների վէճերը, ստիպում են կարւածքը աճուրդ հանելու: Այն ակար ժառանգորդները, կամ մասնաւէրերը, երբ չեն կարստանում իրենց իրաւունքները ձեռք բերել, տքնում շնչին գնով ծախում են իրենց մասները զօրաւոր կղերին, գէթ իրենց հակառակորդներից վրէծ լաւծելու համար:

12. Զօրեղ կարւած ժախիրոջ զիւղերը ոչ միայն ապահովւած է զբացիների ստնձգութիւններից, ալլ մինչև տնգամ ոչ մի կառավարչական պաշտօնակալ չի յանգնիլ նրանց զիւղերը զօրծակալ ուղարկել որեէ հարկային, քաղաքացիական, քրէտական, կամ զատասահական գործով: Ստորին ծառայողները գանակուծւելու երկիւղից՝ երրէք շեն զիջանիլ լըսել իրենց մեծամեծների հարմանները և որեէ միւչաէիդի կամ մօլլայի զիւղ մանել: Ստորին պաշտօնեաները և սրանց ծառաները զօրեղ կալւածատիրոջ զիւղերում պատահած քըրէտական գործերը աշխատում են միշտ բարդել զբացի ամենաթոյլ կալւածատիրոջ ժողովարդի վրա, որպէսզի հնարաւորութիւն ունենան կողովունենք ձեռք բերել: Պարսիկ պաշտ նեաները անդադար զօրծ են որոնում, գանգատներ յօրինում, որպէսզի զօրծակալ պաշտօնեա ուղարկին այս ու այն կողմը մի բան շահելու նպատակով: Պարսիկ զօրծակալ զիւղերում կատարած սիրագործութիւնները, ժողովուրդին հասցրած վնասները անհաւատալի են: Տասը թումանի մի գանգատի տաթիւ, զատասահական հրաւէր տանող զօրծակալը երեք չըրս ձիաւորով մի շարաթ, մի ամիս նստում է պատասխանատի տունը, ուժում, խմում, չարդում, փշրում և վերջը հարիւր յիսուն թուման իրենց աշխատաւթեան վարձ է պահանջում:

13. Կառավարչական միջին և ստորին պաշտօնական-

ները, որ միշտ արանջում են մեծ և զօրեղ կալւածատէրների ընթացքի մասին, մանաւանդ կղերից, որ կաշկանդել են իրենց եկամուտի աղբիւրները, այդ պաշտօնականները իրենց անիջաւ և կեղեքից վարմանքով թոյլերին և նրանց կալւածները սահատակ են տալիս, որով նպաստում են մանր կալւածատիրութեան խոպառ ընկճւելու և կործանելու Այս անհետառես պաշտօնականները, երբէք չեն մտածում, չեն զգում, որ իրենց կործանիչ ընթացքով թէ իրենց և թէ իր ենց յաջորդների հնոցն են մարում, եկամուտի, շահի աղբիւրները ցամաքեցնում: Ներկայի հոսանքը եթէ անարգել իր ընթացքը շարունակէ, կասկած չկա, որ 20—30 տարուց յետո, Ատրպատականում ոչ մի մանր կալւածատէր չի մնալ: Այս շարիքի առաջն առնելիք ոչ միայն չի մտածում մանր պաշտօնականութիւնը, այլ նշանաւոր պիտական կտուավարշապետների և մինիստրների մաքովն անդամ չի անցնում պետութեան այս կործանիչ պարագան: Ինչպէս կապիտալիստական երկներում անխուսափելի կերպով թոյլերին կուլ են տալիս զօրեղները և կապիտալները կենդրոնում են մի քանի ձեռքերի մէջ, այլպէս ճակատազրւած է երեսում Ատրպատականի վախճանը, շուտով 5—10 զօրաւոր ճանկեր կը զբաւեն Ատրպատականի ամբողջ տարածութիւնը: Մանաւանդ որ բոլոր բարձրաստիճան ծառայողների ձգտումը, նշանաւոր բոլոր բարձրաստիճան ծառայողների ձգտումը, նշանաւոր բոլոր բարձրաստիճան ծառայողների ձգտումը իրենց ձգտումով արկարց- թարձրաստիճան ծառայողները իրենց ձգտումով արկարց-

կալւածների յափշտակաղների յայտնելուն:

14. Դրական օրէնքի բացակայութեան պահանառվ, իրանում անհատի իրաւունքը ոչնչով չէ պահանովուած, թէ պետութեան և թէ կղերի կողմից: Մանաւանդ այս երկու մարմնի իրաբ դէմ բանած ներհակ ընթացքի պատճառով՝ տելի մեծ անորոշականութիւն է տիրում, են իրաքանչիւրը իր իրաւունքը—աւելի լաւ է ասել իւր ոյժը՝ զերիշանացնելու համար, անխնա ամէն սրբութիւն ստնատակ է տալիս: Առանց որեւէ քննութեան, առանց որեւէ որոշման, մի պաշտօնակալի քմահաճոյքին, մի ակնթարթի նշանով, կարող է դոհ զնալ ինչպէս մի վաճառական կապիտալիստ, կալւածատէր, զրագէտ, նոյնուոք և ամէն մի բարձրաստիճան պաշտօնեա: Զորս հինգ տարի առաջ հոչակաւոր Սաղբաղամի անմեղ արսուրիլ զրպատիչների նենուութեան մի փարբիկ նմոց է: Այսպիսի դէպքեր սկզբներում աւելի յաճախ և աւելի խիստ կերպար էր կատարւած: Թէի աւժմ նւազել է, բայց և այնուոք Սմիր—Թումաններին (Գեներալ Լեյտինանտ) ֆալախի կապելը և կապիտալիստներին զնդաններում փակցնելը, առանց որեւէ օլինական վճար, հագրագէպ չէ: Կառավարչական պաշտօնականները գտխենում են միայն իւրէմաններից—միւշէիդներից, որոնց հետ խիստ զգույշ և ակնածութեամբ են վարում: Կղերը—միւշէիդները չեն հպատակւում կառավարչապետներին: Յաճախ կղերը բացարձակալիս քարոզում են, զրզւում են ժողովուրդին և խոսվութիւններ բարձրացնելով զլորում են զաւասպետներին, նահանգապետներին և երրեմն նոյն իսկ կառավարչապետներին. և կառավարութիւնը այնքան քաշում է կղերից, որ սակաւած է զիջանելու: Ոչ մի բարձրաստիճան պաշտօնական չի յանդկնել կղերի վճար դէմ զործ պաշտօնել և կղերից հովանաւորածներին հալածել:

սղերը՝ աղատ պետութիւն ունի պետութեան մէջ։ Մի բոզորդի կամ ամբաստանողի աղերսի համաձայն միշտէիդր անալրգել ուղարկում է իւր ոպասաւոր «ուիլիներին» ամբաստանաւծին քաշելու, բերելու, ծեծելու և մինչեւ անդամ արդեւելու կամ սպանելու։ Կղերը իրենց վճռով քանզում են, կործանում են, խլում այս ու այն անհատի ձեռքից տունը, խանութը, կայքը, կալւածքը և գանդատառը ին յանձնում։ Պղերի, յանուն չէրիաթի տւած վճռին, անպայման խոնարհում են վարչական բոլոր պաշտօնակալները։ Այս պատճառով Յարտատականում ամենամեծ կազիտալիստ—կալւածտաէրը, և ամենազլխուոր պաշտօնականն անդամ, իւր զիլի և զրցի ապահովութեան համար, հովանաւորութիւն է վնասում էղերի սպիտակ արած տակ։ Ըեւի նպաստաւոր է կղերի, քան թէ կառավարչական հովանաւորութիւնը, թէ ի խոհեմարդիկ երկուսն էլ փայփայում են։

15. Կղերը և զօրեղ կալւածտաէրները ոչ միայն պաշտօնականների անկոչ այցերից, անորոշ հարկերից, վիշքեաշներից, քրէական պատահական տուգանքներից, դատական պահանջներից աղատում են իրենց ույաթին, ոչ միայն մասնակի յարձակումներից, աւաբառութիւններից, բարձր պաշտօնականների ջակերից, կարաւաններից և հօտերից ուղղակի պաշտպանում են և ապահովում իրենց գիշերի սահմանները, այլ մինչեւ անդամ կասավարչական աղէտ, աղիկար և զսոշի ետեից ընկած պաշտօնականներից հետզհետէ խլում են պետութեան իրենց կալւածների վրա ունեցած իրաւունքները։ Կննդընական վարչութիւնը ամէն մի զիւղի ստանալիք պետական արգիւնաբերական և զբամական հարկի գանձումը յանձնում է նահանդապայտեաններին։ Յաճախ զանազան պաշտօնականներին, կամ ժառանգութիւններին իրենց ուղարկի

փոխարէն, շահի յատուկ հրովարտակով արւում է այս ու այն զիւղի պետական հարկը, որպէսզի թոշակառուն մշարն-ջենաւորապէս—ժառանգաբար օգտուի այդ եկամուտի ալրիւրից։ Թոշակառուն էլ զործ չամի զիմելու կառավարութեան, նա էլ դառնում է մի ահսակ տէր զիւղի վրա, որն համարում է իւր Թույուլը։ Զօրեղ կալւածտաէրը ամէն միջոցի զիմում է և նահանգապետի, կամ Թույուլի արքոջ հետ իւր զիւղից վճարելիք հարկի հաշիւը մտքում։ Եթէ ցորենի խալւարը 25 թուման էլ արժենատ, զօրեղ կալւածտաէրնախընթաց տարիների արժէքը պատճառարանելով, զանազան ինտրիկների զիմելով խալւարը 4—5 թուման փողով վճարում է և սուացականները ստանում համաձայն պետական հարկացին դրերի քանակին։ Տկար կալւածտաէրը ոչ միայն բերքով է վճարում հարկը, երբ հացանատիկը թանկ է, փողով է վճարում՝ երբ քերքն արժան է, այլ պարտաւորած է պետական, կամ Թույուլի արքոջ պաշտօնեան իւր կալւածտաէրում հիւրասիրել, նրա սպասաւորին կերպելու, ձիերը դարձանել, նշանակւած հարկը տասին մէկ վրագրով (յաւելածը լիազօրի—պաշտօնականի վարձն է) նրան յանձնել և ճանապարհել։ Յաջող տարին պետութեան, կամ Թույուլի լիազօրը ստանում է տասներսորդ բռւսական բերքը շափելով, իսկ անրերը կատալիստին ժամանակական արձանագրութիւնների մատեանի քանակով։

16. Բնդհանը պատու կալւածտափրոջ հաւանութեան, կառավարութիւնը մշտնջենաւոր Թույուլի շի յատկացնում նրա զիւղի պետական հարկը, բայց այս պարագայից օգտում են զարձեալ զօրեղ կալւածտաէրները։ Կառավարութիւնը շի կարողանում ստիպել կղերին և զօրեղներին, որ իրենց վճարելիքը—կալւածների հարկը տան այս ու այն

պաշտօնականին, նրա թոշակի հաշվին։ Այն ինչ դօրեղ կարւածաէրները իրենց ցանկացած թոյլ անձնաւութիւններին յատկացնել են տալիս իրենց վճարելիք հարկը և ձնում են հարստահարում այդ օրական ապրուստի կարօտ թոշակառուներին։ Այն ինչ թոյլ կալւածատէրները հպատակում են բարձր կառավարութեան հրովարտակներին և յանձնառու են լինում զօրեղ Թույուլի տէր պաշտօնականներին յանձնել իրենց կալւածներից վճարելիք հարկը, Թույուլի տէրը, կամ կառավարչական հարկահաւաքը մի չորսրդ իրաւատէր է գասնում կալւածքի վրա։ Եթէ կալւածատէրը տկար է, հովանաւոր չունի, նրա հետ զուգընթաց իրաւունքներ է բանեցնում, առանց գիւղական անտեսական ծախսերին և բնական պատահարների տոյժերին մասնակցելու։ Այս պատճառով զօրեղ կալւածատէրները՝ թէ կզերը և թէ պաշտօնականները ամէն միջոցի դիմում են, որ պետութեան գանձարանից նրանց հաստանելի թոշակի փոխարէն իրենց կալւածների պետական հարկերը շահի հրովարտակով իրենց Թույուլի վերածեն։ Կառավարչապետներն ու բարձր պաշտօնականները կզերի հետ աջակցած իրար են շնորհում պետական գանձարանին հաստանելի կալւածական հարկերը։ Տարեկան պետական գանձարանից հաղարաւոր խալւարներով ցորեն և թուրման թոշակ ստացող կզերն ու պաշտօնականները ամէն մի քաղաքում բազմաթիւ են։ Եւ շպէաք է մտածել, որ այդ թոշակաւորները պետական ծառայութեան մէջն են, կամ պետութեան ծառայել են և արժանացել այդ վարձարարութեան։ Երբէք, զբանք, կամ զբանց պապերը, կամ պապերի վապերը ինչ որ ծառայութիւնների համար կորպել են այդ շնորհները։ Զատերը մինչեւ անդամ փողով—կաշառքով են գնել և առասութեան մէջ լողալով, նորանոր կալւածներ են գնում, այն ինչ

ներկայիս պետական իսկական արժանաւոր ծառայողներին վարձատրելու հնարաւորութիւն չունի կառավարութեան գանձարանը։ Կալւածատէրների միակ երազը ու ձգտումը իրենց կալւածների պետական հարկը իրենց թոշակին Թույուլ վերածելն է։ Այսպէսով Սարպատականի կալւածներից մեծապոյն մասը չէզոքացել են պետական պաշտօնակալութեան յարաբերութիւններից։

17. Պետական արգիւնաբերական և գրամական հարկերի մատեանները Սարպատականում կազմւել է Նախք-Սալթանէ Արաս-Միրզա Գահաժառանզի օրով, սրանից գրեթէ 70 տարի առաջ։ Այս եօթանստուն տարւու ընթացքում այդ մատեանները թէ և երկու — երեք տեղ, շորս — հինգ տնկամ յատուկ կոմիսիանների միջոցով վերաբնուել է, փոփոխութիւնների յաւելածների և կրճատումների ենթարկել է, բայց ընդհանրապէս երեք անգամ տասնական տոկոսով է բարդւել նախկին մատեանների հարկի քանակի վրա։ Այդ քննութիւնների ժամանակ զօրեղ կալւածատէրների աւերակ կալւածների եկամուտները կրճատւել, զեղչւել են, այն ինչ թոյլ կալւածատէրների աւերակների հարկերը անփոփոխ են մնացել, կամ հարկի բարգութեան ենթարկել, շնորհիւ անբարեխիղճ, երկշոտ և կաշառակեր պաշտօնականների։ Իսկ զօրեղ կալւածատէրները, կաշառի, վայելած ակնածութիւնների և ոպառնալիքների շնորհիւ, շեն թողել, որ իրենց շորս, վեց, տասն ու քսան անգամ ճոխացած գիւղերի հարկերը նոյն քանակներով բարգւին։ Այն գիւղերը, որոնք 70 տարի առաջ 20-30-50 ընտանիք, բնակիչ են ունեցել, զըրանք այժմ հարիւրից մինչեւ շորս հարիւր ընտանիք են ամփոփում իրենց սահմանի մէջ. բաժան--բաժան լինելով շորս հինգ գիւղերի են վերածւել, այն ինչ պետական հարկը մը-

նացել է զբեթէ անփսփոխ: Այն կալւածները, սրտեղ 40-50 արօր էին անեցել 70 տարի առաջ, ներկայիս 3-400 չութ ունին բայց պետական զբաժանական հարկը զարձեալ հին չտփով են վճարում: Կառավարութիւնը ամէն տարի նահանգապետներից հարկի գանձումը պահանջում է ոչ պակաս պետական վերսպրեալ մատեանների քանակից, իրաւունք տալով պաշտօնակալներին տրդիւնարերութիւնը չափել և տառանորդը գանձել իրենց օգտին: Նահանգապետները իրաւունք ունին ազգաբնակութիւնը, սրանց արօրները և հօտերը համրել և սրա համեմատ զբաժանան տուրքն ստանալ: Նահանգապետները և սրանց ստորագրեալները պիտի օգտին—իրենց բարձր պաշտօնակալների հասցրած նւէրների, ոռոճի և վարձարութեան փոխարէն—այս հարկերի յաւելւածով, չափով և համրելով տրտագրւածից: Կղերը, զօրեղ կալւածատէրները ընդդիմազրում են նահանգապետներին, կառավարչապետներին և ստիպում են իրենց ոյժի առաջ խոնարհելու: Վճարում են միայն պետական մատեանների արձանագրութիւնների քառակով, կամ առ առաւելն գաղտնապէս այդ քանակի վրա 3-6 տոկոս կանխիկ յաւելումով: Այն ինչ զօրեղ կալւածատէրների զիւղերը այնպէս են ճռիացել, որ ինքը՝ կալւածատէրները պետական տասնորդական մթերքը և զբաժական հարկը հնգից մինչև քսան անգամ աւել են վերցնում զիւղականներից: Թոյլ կալւածատէրների զիւղերն են մանում կառավարչական, կամ թուլուլի տէրերի զօրծակալները, բերքը կը ունի, դաշտի խոտերը չափում, արօրներն ու անառունները համբում եալա վերցնում իրենց բաժը:

18. Զօրեղ կալւածատէրները, չէզոքացրել են իրենց կալւածները կառավարութեան միջամտութիւնից, ձգտում են իսպառ ազտելու զիւղերը կառավարչական յարաբերու-

թիւններից, նոյնպէս աքնում են խուզել ուղաթի (կալւածքում բնակուող երկրամշակների) չնչին արաօնութիւնները և բոլորովին ստրկացնել զիւղական համայնքը: Ձէրիաթի արամազրութեան համաձայն ուղաթին ազատ է, նրա կամքը կաշկանդել, բննարարել չէ կարելի: Ամէն մի երկրամշականհատ կամ ընտանիք կարող է բնակած հողը թսղնել, գաղթել և կամ պանզիսել: Կալւածատէրը երկրամշակին, բացի բուսական և յետակա հարկերը, ոչնչով ծանրաբեռներու իրաւունք չունի, նրա կեանքի, զոյքի, ընտանիքի անդամների վրա և ոչ մի զիւղիսանութիւն: Եթէ կալւածատէրն ստիպէ իւր որևէ ուղաթին թսղնել իւր կալւածքը, հեռանալ, նա պարտաւոր է առա երկրամշակին նրա «ուիշան» (հողի մէջ տնկածը, կամ ցանածը): «Թիշան» գիահատում է ձեռնահատ շինականների և զրացի կալւածներում բնակուող զիւղական ծերերի միջոցով: Զօրեղ կալւածատէրները այնպիսի ձնչումներ են զործ զնում իրենց սայաթի վրա, որ զանազան յանցանիների մոռացութեան և տուգանքների զիջումի համար, ստիպում են թուղթ տալու «ուիշան» ձեռք քաշելու և բաւարարութիւն ստացած լինելու համար: Զօրեղ կալւածատիրոջ զէմ ոչ միայն չի յանդզնի սայաթը պահանջներ բարձրացնելու, այլ կալւածատէրների հաճոյակատար պաշտօնակալները, զործականները, իրենց յիրիւրած ամբատանութիւններով, միշա լիմոս շինականներից կանխապէս կարեսը ստորագրութիւնները կորզելով, տղանովում են իրենց տէրերից անձեռնմխելի իրաւունքները: Եթէ կալւածատէրը սայաթին զուրս հանէ զիւղից, վերջնը իրաւունք ունի իւր բնակարանի ծածկով տանեն, պատերը կալւածատիրոջ թողնելով: Յանական զանազան երկարացական յանցանիների ուղաթառով սայաթը այս իրաւունքից է: Ճեռք քաշելու թուղթը

է տալիս ճարպիկ զործակալներին։ Այս պատճառներով ազատ և այլաթը կաշկանդում է կալւածքին—տանը և «ոիշախին», պարտաւորած խոնարհում է կալւածտիբոջ զործակալների ապօքինի և անահղի պահանջների տուած, տուանց մըրմունջ տնկոմ բարձրացնելու։ Յաճախ ույաթը հինգ—տաս—քսան տարսի աշխատում է, այլի է տնկում, կամ նուշի, մըրգեղնի ծառեր առաջացնում և կամ անտառներ է զցում, չի—նութեան ատաղձ հասցնում ուռի, բարտի, այն էլ ահազին տարտծութիւններով։ Յանկարծ թոյլ կալւածտէրը սնանկանում է, կայքը անցնում է մի զօրաւորի ձեռքը, որն ազառութիւնից աչք է անկում հողագործի դառն աշխատանքով հասցրած ծառաստանի վրա և ուղում է զրանց զնով եա սատնալ կալւածքի համար վճարած հազարները։ Երկրամշակը շի զուր զալիս կալւածտիբոջ, հենց իւր ջանքով հասցրած ծառաստանների պատճառով, սահմանում է զիւզը թողնել։ «Ոիշախ» զինը խաղաղութեամբ շի վերջանում և անդութ վաշխառուն—կալւածտէրը, հակառակ շէրիաթի և կարգերի, տուաջարկում է կացինը զնել ծառերի արմատին։ Թէ շէրիաթը «Ոիշախ» տիրոջ իրաւունքները սկաշտպանում է զօրեղ կալւածտիբոջ դէմ, բայց ոյժը Պարսկաստանում ամենակարող է և օրէնքով սրան կաշկանդել, սրա մեքենայութիւնները փշրել շատ զժւար է, եթէ բոլորովին անհնար չէ։ Եթէ կալւածտէրը չկարողանա էլ կարսել տալ այլեստանները, ծառաստանները և անտառները, կոկոր իւր զիւզում չինելիք ապարանքի, ամբարների, տիտուների համար անվճար տարագձ փերցնել շինականի անտուից, վասելիք վերցնել և կամ մըրգերից անխնա օգտւել...։

19. Խնչողեռ տոի, Ասրպատականի կալւածտէրի զիւզուկան հասարակութիւնից ստոցած հարկի քանակը, տեսակը,

շափերը և պայմանները այնքան բազմազան են, որ դրանց մանրամասն նկարագրութիւնը մեզ շատ կհեռացնի որին յօդւածի ծրագրից։ Ուստի սրբան որ հնաբարու է այդ զանազան ձեռերը ամփոփելով, որոշենք և եզրափակենք։ Ընդհանրագիտ զրափականից օրէնքի՝ Ղուրանի տրամադրութիւնը իրաւունք ունի բուսականութիւնից մի տասաներորդ ստանալ, պիտական և հասարակական ծախոսերի համար։ Բայց իսկապէս այսօր պիտագութիւնը աշ թէ տառաներորդ, այլ մի քառասաներորդ, մի վագուներորդ հազիւ է ստանում։ Խնչողէս վիրե նկարագրեցի, կասավարութեան բուսականութիւնից ստանալիք հարկը ընդհանրապէս հաւաքում են իրենք՝ զօրեղ կալւածտէրները, կամ զօրեղ թույուլի տէրերը և շատ հազիւ է պատահում, որ կասավարչական գործակալները կարսուանան մանել այս ու այն խեղճ կալւածտէրների զիւզերը։ Թէ նախր-Սալթանէ Արրաս Միրզաի օրսկ գազմւած ցուցակները, թէ վերաբնիշ կօմիսիանների ցուցակները ենթագրութեամբ են սրաւած, զօրաւորների եկամուտները անհամեմատ նւազեցրած, իսկ թոյլերի կալւածների սովորական բերբի—տառաներորդ մի երրորդն ու մի չորրորդն է հազիւ նշանակւած։ Կան զիւզեր, որտեղ կալւածտէրը պիտական տասաներորդական հարկ վերցնում են երկրամշակներից 300—400 խալւար, այն ինչ կառավարութիւնը իւր անունով ժողոված—ժողովրդից գանձած այդ եկամուտից ստանում է մի վաթառներորդ, մի քառասուներորդ բաժինը։ Այսպէսով պիտական հարկի մեծ բաժինը կլանում են զօրեղ կալւածտէրները, թույուլի տէրերը, կամ կոռավարչական զործակալները։

20. Դիւզացին իւր դառն քրտինքով զատած հացանատին կալի մէջ չի կարող ձեռ մեկնել, մինչեւ որ կալւած

տիլոչ ներկայացուցիչը շպա, շշափէ այդ բերքը: Դեռ օր առաջ կալի աէլքը մի նոէր, մի տատմի վարձ պիտի տուածաբկէ ամենակաբող մաւրածիրին (կալւածատիրոջ զսրծակութին), նրա թոյլտութիւնը սատանա կալը էրնելու: Եյս նոէրը չի հաշւաւմ ընդհանուր հարկերի մէջ, չնայելով որ մի նշանաւոր բաժին է կարւում սանչպարի ապրուստից: Մուրաշիրը որ սայաթին որ խէթ աշքով է նայում, կալոցին է նախից գալիս: Կալը ծեծւած պատրաստ է, քամին ամորեր է զիզում, անձրելը, կարկուալը, նոյն իոկ ձիւնը սպասնում են զիզացու ամբողջ տարւա զառն զատումով առաջացրած բարուն, այն ինչ մուրաշիրը անդժաբար տարածւած ծխում է իր գայլոնը. շի ուզում տեղից շարժւել, գնալ կալի զլուխը կոնկնել էրնել տալու, շափելու: Էնդ զիզացու ամէն մի ազերսին ու մրմունչին նա վէս կերպով պատասխանում է— զործ ունիմ, քէյֆ շաւնիմ, դեռ այսօք Ելիի, Վալիի կալն են շափելու: Երկնքի պատուհասից կալն ազտաելու, ամրագջ բերքը ապականելուց ու փթելուց փրկելու համար, զիզացին սատիճանաբար աւելացնում է կաշասի քանակը, մինչև որ հասնում է նպատակին: Մուրաշիրը վերցնում է կալից տասից երկուս, մինը կառավարութեան՝ միւսը կալւածատիրոջ անունով: Յորեն, զարի, հաճար, կորիկ, նոյնպէս «սէյֆի» կոշւած հատիկներից՝ սառ, սիսո, կտաւատ, կանեփ և այլն, բոլորից երկրածակը տալիս է տասնից երկուս: Նոյնպէս կալի զարմանից այդ շափով:

21. Զբարբի հանգերի պայմանը բոլորավին փսխում է: Եյսակա կալւածատէրը ընդհանը բարձր տասներորդը վերցնում է կառավարութեան անունով, միացորդը երկիր բաժանելով՝ մէկը ինքն է վերցնում, եթիւ երկրամշակին թողնելով: Տեղ աեղ կալւածատէրը ^{1/10}րդ է վերցնում, բացի

պիտական տասներորդից, թողնելով երկրամշակին բերքի միւս կէսը ^{5/10}-րդ բաժինը: Մայտաթը իւր սերմով, իւր զսրծիներով, իւր անսուններով և բանւորներով աշխատում է, առկարով բնութեան տմեն տեսակ ծանրութիւնների ու պատահաների տակ և արդիւնաբերածի կէսը տալիս է, տանում յանձնում է ջրաբրի կալւածատիրոջ ամբարին:

22. Բացի պիտական տասներորդական հարկը—աշաբը, բացի կալւածատիրական տասներորդական տաւբքը, սանչպարը վճարում է կալւածատիրոջ մուրաշիրին, կամ թույտի տիրոջ և կամ նահանգական վարչութեան զսրծակալին սրոշեալ տասնորդական հացահատիկի հարկը, մի տասներորդ, այդ քանակի վրայիրով: Օրինակի համար, եթէ մի հոգազործ իւր հարիւր խալւար բերքից տալիս է տասը խալւարը թույտի տիրոջ զսրծակալին, տասը խալւարն էլ կալւածատիրոջ մուրաշիրին սովորական հարկը, նա յաւելացնում է մի խալւար թույտի տիրոջ զսրծակալի համար և մի խալւար էլ կալւածատիրոջ մուրաշիրի համար վարձ, աշսպէսով ոտքաթը քսան տակոսի փոխարէն վճարում է 22%:

23. Եթէ կալւածատէրը իւլէմա—կղեր, կամ սէիդ է (մարգարէի սերունդ), նա բացի վերոգրեալ հարկերը, ուրիշ կամունք բաժ էլ է պահանջում—կորզում նախալաշաբած ուտաթից: Կալւածատիկան հարկերի վճարումից, սերմ ու երկրամշական մշակների, բանւորների վարձերը բերքից զուրութեանուց յետոյ, երկրամշակին ինչ զուր բաժին—շահ որ մինում է, զբանից իւլէմա կամ սէիդ կալւածատէրը 5—10% է պահանջում շէրիաթի համաձայն կարօտեաններին, շքաւորներին բաժանելու: Գիցուք թէ հարիւր խալւար բերք ունեցող երկրամշակը 22 խալւար հարկը վճարելուց, 16 խալւար սերմը զուրութեանուց յետոյ և 22 խալւար էլ մշակի—բանւորի՝ զըլ-

սից թէ տան անդամներից, վարձերը յանձնելուց և անոլէտքացած անասունների և գործիքների զինը տառը խալւար էլ գուրու գալուց յետոյ, տիբանում է իւր զուտ շահին—երեսուն խալւար բերքին։ Այս 30 խալւարից 3, կամ 6 խալւարը պարտաւոր է տալու իւլէմա, կամ սէիդ կալւածտիրոջ, իրր իւր զուտ արդիւնքի ասաւաներորդ, կամ խումսը՝ հինգերորդը, ողորմութիւնը (զէքեաթ) աղքատ, կարօտ և արժանաւոր հաւատացեալ թշտաններին բաժանելու։ Եթէ կալւածտաէրը ոչ մօլլա է, ոչ էլ սէիդ, այդ դէպքում իւլէմաների, կամ սէիդների ներկայացաւցիչները զալիս, բազմում են զիւդի թըմբերում, իրենց անվերջ թախանձանքներով, սպառնալիքներով, չէհնէթի և չէհնէմի ոյժերի քարսդներով ստիպում են շինականին, հոգու փրկութեան համար այդ ողորմութիւնը վճարելու։ Ամենատկար և ամենաժլատ հոդագործներն անգամ իրենց զուտ արդիւնքից 3—5% վճարում են հոգերածին այդ տղբակներին, որոնք աղքատի, կարօտեալի անսւնով հաւաքում և իւրացնում են։

24 Մուրաշիրը զարնան սկզբին ոայտթին տիրոջ ամբարից մատակարարում է սերմնացու, որքան որ պահանջ ունենան։ Կալւածտաէլները շատ խիստ պահանջում են իրենց ոայտթից, որ կալւածքում բաց տեղ չըսդնեն, բոլորը մշակեն, մինչեւ անգամ կարեսը դէպքում փոխառութեամբ լծկան անասուններն էլ են տալիս։ Խոլ ոայտթը փոխառութիւնը՝ սերմնացանը շուտ ստանալու համար՝ պարտաւորւծ է մուրաշիրի շըմսներին մեղք քսելու։ Եյս կաշտաքն էլ փոխառութեան զումարի 1—2% ից պակաս անկարելի է յուսալ։ Սերմնացուն էլ աղախ ամբարից տանց տոկոսի շի տրւում։ Ընդհանրապէս սերմնացուն փողի վերածում է (21%) մի արասի թումանին վրա գալով վեց ամսով մուրհակ ևն

անում հոդագործից։ Զատ տեղ էլ խալւարը քառորդ խալւարով են տոկոսով (25%) տալիս ցանքից մինչև քաղ, տասնեկից խալւար սերմնացուի համար չորս խալւար տոկոս է վճարում զիւդացին։

25. Երկրամշակը պարտաւորւած է առոյտի, խոտի և դարմանի հուրկը գալարի քաղաքը տանել յանձնել կալւածտիրոջ ցոյց տւած տեղը, նոյնպէս հացահատիկի հարկի մի որոշ մասը։ Այս ծառայութիւնը կոչում է «բարգեարդ» և ամենից անտանելին է զիւդացու համար, որպէս կալերը զիս չփերջացրած, աշնան ցանը չոկտած, աշնան անձրեին, սարերի բքին, ցեխին ու սասնամաններին ոայտթը պարտաւոր է իւր ձին, էշը վտանգի մասնել և այս բէգեարը հասցնել իւր տիրոջ։

26. Այս բոլորից յետո ոայտթը «աւաշիգ» կոչուծ մի հարկ ևս ունի, որը նոյնպէս ընդհանուր հարկի 10—20% է կազմում, համաձայն տեղական պարագաների և աղայտկան պայմանների։ Բայտթը պարտաւոր է աղաի տանը՝ նւէրներ ուղարկել, աօնական դառներ, մսացու ոչխարներ, տուն զըլուին 5 վասեկ, 25 ձու, 3 ֆունտ իւզ, 2 ֆունտ պանիր, մածուն, սեր, և այլն և այլն։ Կալւածտիրոջ մուրաշիրի մածուն, սեր, և այլն և այլն։ Կալւածտիրոջ մուրաշիրի շաքարը, մուրաշիրի հիւրերի, աղաի, պետական գործէյը և շաքարը, մուրաշիրի հիւրերի, աղաի, պետական ծախսականին սերմնացութիւնները, սրանց ձիերի կերը, զիւդականների հիւրասիրութիւնները, սրանց ձիերի կերը, զիւդականների հիւրասիրութիւնները, սրանց ձիերի օրավարձր, պատահական ծախսական, աղաի տան, ամբարի, ախոսի և վրանների նորոգութիւնները բարդւելով՝ բաժանում է զիւդական համայնքի վրա «աւաշիրը» հարկ անւան տակ։

27. Կալւածներում գտնւած ազբիւրներին, տուտկներին շրջապատող մարդկանաները կալւածափրոջ անձնական սիմվոլիստիւնն է համարւած, որոնք ամէն տարի առանձնապէս են վարձով արւում: Կան այնպիսի տգան կալւածատէրներ, որ իրենց զիւղերի ամենաբերբի, ամենարգաւանդ հողերը իրենց համար են ցանել տալիս, իրենք են օգտառում: Ըստիսի զիւղերում համայնքը իւր անդամներով՝ հերթով այդ արտերը ցանում, քաղսում, կալսում և յանձնում է կալւածատէրոջ ամբարին: Այս ծառայութիւնը արժան չի նստում ու այտաթին:

28. Ամէն մի հողագործ իւր մաքրած, վարած, պարագած հողի տէրն է, նրա այդ իրաւունքը անձեռնմխելի է: Ո՛չ միայն դրացիները, այլ մինչև անդամ կալւածատէրը իրաւունք շունի մէկին իրացրած—մշակած արաից ու հողից հեռացնել: Բայց եթէ մի երկրագործ մի քանի տարի շաբունակ անմշակ թողնէ իւր հողը, տէրն իրաւունք ունի հողը յանձնել մի ուրիշին, որպէսզի անմշակ չմնա: Այս պատրակով մուրաշիրները յաճախ մեծամեծ կաշառներ են վերցնում զիւղացիներից, ուժեղները խլում են թուլերի հողերը և վարւում: Այս պարագաներում արւած կաշառն էլ մի նշանաւոր տեղ է բանում սայաթի կեանքում և մուրաշիրները ծծում են թշւառներին սնունդը:

29. Բացի բուսական մթերաճարկը, սայաթը վճարում է ծխական, կամ անական հարկ հնչիւն դրամով: Նախք-Սալթանէ, Արաս-Միրզաի օրով կազմւած կառավարչական հարկային ծխականների ցուցակի համաձայն, ամէն մի զիւղականանիք (աճուտնացած մարդը իր կիսչ և զաւակների հետ միասին) պարտաւոր է մի թուման (մօտաւորապէս երեկու բուրի) պետութեան ծխահարկ վճարելու: Իսկ ամէն մի

շտփահաս, զործելու ընկաւնակ ամուլից (տառնելից տարանից բարձր) կէս խռուման: Ներկայիս կալւածների աղաների զործակալները զիւղական արձանազրութիւնների մատեանները ձեռքերին կէտ առ կէտ զործազրում են այս կտնօնը: Բայց ինչպէս նախարդ համածներում յիշեցինք, այս ծխականների մատեաններն էլ պարսկի կաշառակիր պաշտօնականները մատների ուրանիքից զննելով են զբել, իսկ հօթանասուն տարւա խազագ կառավարութեան աճեցողութիւնը քոզի տակով են զիտել: մեծամեծ կալւածատէր զիտաւոր կառավարչապէտները, վեզիրները և շեն ցանկացել կալւածատէրների քսակին կալչել:

30. Բացի ծխահարկից, երկրագործը հնչիւն դրամով է վճարում նոյութու իւր անասունների հարկը (Մէրափ-Մաւաշ, կամ գեօր-ալ): Երկրագործի արօրին, կամ զութանին լծող եղներն ազատ են ամէն ահասուկ հարկից: Երկրագործը իւր ունեցած ամէն մի ոչխարի, այծի, կավի, իշու, ձիու, ուզու, մատակի (գոմէշ) համար հարկ է վճարում: Այս հարկն էլ, նախընթաց հատածի հարկի համաձայն, պետական է, բայց հաւաքւած զումարի տառներորդը, քսաններորդը հազիւ թէ արձանազրուած է պետական մատեաններում: Այսօր կալւածատէրը կառավարութեան անունով գանձում, մթերում, լըդրում է իւրի, մեզրի մէջ, չզշղում է ոսկու, մարզաբարի ու զոհարի մէջ, իսկ շինականը քրտնաթօր զիշեր—ցերեկ տանչւում է, թէ մատեղից մի քանի սկ փող կորդէ որ, որից մուրաշիրի երեսին շպրտէ, համին ազատէ: Գիւղացին ամէն մի ոչխարի, այծի համար 12 շահի (մօտ 12 կոտ.) է վճարում արեկան, իշու համար 1 զր, 5 շահի (25 կոտ.) կավի համար 1 զր, 10 շահի (30 կ.): ուզափի համար 5 զրան (1 բուր.) մատեանի համար 2 զրան (40 կոտ.), մատակի հա-

մար 1 զբան 10 շահի (50 կող): Առառնական այս հարկը ամէն տեղ համահաւասար չէ, առանելով թէ սրբան դարձացած է անառնապահութիւնը և սրբան ընկած է հոգագործութիւնը, այնքան էլ բարձրանում է անառնական հարկերը:

31. Տեղ տեղ կալածատէրները ծխահար'ն ու անասունների հարկը միացնելով, փոխանակել են շութի (աբօրի) հարկի: Ընդհանրապէս զիւղերում բնակում են «Պարա» կոչում բազմաթիւ ընտանիքներ, որ ոչ ցանք ունին, ոչ հօտ, ապրում են օրավարձով, արհեստներով, մուրացկանութեամբ և ըլլան է խարար թէ էլ ինչով: Այս ընտանիքների անառելի աղքատութիւնից ոչ ծխահարկ, ոչ անառնահարկ և ոչ էլ մի կաշառք կարող են գանձել ամենազօրեղ միւշտէրների ամենաճարպիկ մուրաշէրները: Բայց քանի որ սրանց զոյսւթիւնը անհրաժեշտ է ունեսը շինականների անտեսութեան դարպացման համար, սրանց կաւածից հնաայնելը նպատաւոր չէ կալածատէրների համար: Ուստի «Պարաների» հարկը «համբաներից» գանձելու նպատակով առաջացել է շութի (աբօրի) հարկը: «Պարաները» սովորաբար մշակութիւն են անում «համբաների» մօտ, օրավարձով կամ տարով—հօտող և հողիւ գառնալով, սրանք անհոմմատ չնչին վարձերով առաւոր ծառայութիւններ են մատուցանում երկրագործներին և մանաւանդ կալածատիբոջ, ուստի բնական էր, որ սրանց հարկերը մի կերպ բարդւէին արդիւնաբերութեան վրա: 2ութի հարկը իւր քանակով տարբերում է ամէն մի զիւղում ամէն մի գաւառում: Սովորաբար ամէն մի շութի համար վրանարում է ունչպարը աղաթին 2-ից մինչև 10 թուման (4 ր. մինչև 20 սուբլի): Ոչ մի զիւղի այս հարկի քանակը չի կարելի համեմատել հարկան զիւղերի հարկերի հետ: Նոյն ձորի մէջ մի զիւղ 2 թուման է վճարում շութին, միւսումը 8

թուման: Պատճառը հողի ծաւալն ու սրակն է, սրովհեան 2 թուման վճարող զիւղի արօար փոքր է, մարգաստան չունի. այն ինչ 8 թուման վճարողը մեծ քանակութեամբ անասուններ պահելուց զատ, իսու ու առույթ է ծախում իւր զրացի զիւղացիներին և քաղաք է տանում մեծ քանակութեամբ առոյտ: Բայց այս կան զիւղեր, ուր չօրս եղը մի շութ է հաշում, տեղ տեղ երկքը և յաճախ երկուուր մի շութ է համարում և հարկը հաւաքւում: Եյս բոլորը կապ ունի զիւղի ծաւալից, հողի սրակից ու քանակից:

32. Թէեւ ամեն զիւղի սահմանում ջրտրի տեղերում գտնւած բանչարանոցները, բօստանները, պարաէզները և բրնձի արտերը կալածատէրները տիրանում են և իրենք են մշակել տալիս, կամ վարձու տալիս, բայց եթէ զանում են երկրամշակներ, սրոնք կարսղացել են զիւղի սահմաններում բանչարանոցներ, բօստաններ և պարաէզներ առաջացնել, կալածատէրները զրանց համար յատկացրած տմէն մի խալւր հողից (2½ զիւղատի մօտաւորապէս) վեց թուման (12 սուբլի): Հարկեն ստանում Գրեթէ Արբատականի ամեն մի կողմում, բոլոր խալողի այդեստաններից, նշի, խնձորի, սալորի և ամեն տեսակ մրգեղիների պարտէզներից կալածատէրները հողի շափով են հարկ ստանում: Եյս հարկը կարելի է համարել ընդհանրական, որովհետեւ զրեթէ ամեն կողմ խալւրից* ընդհանրական, որովհետեւ զրեթէ ամեն կողմ խալւրից:

*) Ատրպատականում հողերը շափում են լարով: Ամեն 20 արշին երկանութիւն և 10 արշին լայնութիւն, կամ 200 քառակուսի արշին տարածութեամբ հողը կազմում է մի լիտր Եյս լիտր հողը (բազման) կոչում է 200 զինարանոց լիտր, կամ արբասի բաթման: Հարիւր լիտր հողը կազմում է մի խալւր: Տեղ տեղ 125 քառակուսի արշինն է համարում մի խալւր (բազման), որ կոչում է 125 զինարանոց, կամ երկուուր կոչում է 125 զինարանոց լիտր: Մրա խալւրը դարձեալ 100 լիտր և կոչում է 125 զինարանոց լիտր: Ատրպատական արշինը Ատրպատականում պատական մի արշին և 9 զիրշով է: Տեղ տեղ մեծանում է այս արշինը, կամ փոքրանում:

զից թուման են սահման կարած տուքը բարը տմջն տարի, բերբի թէ անբերբի դէպրում:

33. Անտառների (առաղձի—չինութեան) համար յատկացւած հողերից կալւածատէրը իրաւունք չունի տարեկան հարկ պահանջելու. բայց անտառից կարած ծառերից տասնից երկուսը, աեղ տեղ տասնից երեքը կալւածատիրոջն է: Բայց այդ կալւածատէրը կարիք ունեցած դէպրում չի խնայում կոցինը իւր սայաթի անտառների մէջ անինա բանեցնելու. Զօրաւոր կալւածատէրները տասից երեքի փոխարէն, երրոն տասնից չորս են վերջնում անտառից կարած փայտից, հիմնելով այն փատի վէա, թէ իինց սեփական ջրերից է օգտաել ու աճել անտառը:

34. Թէ ծխահարկն ու անտառահարկը, իամ թէ չութի ու շափով հսկերի հարկը ժողովով մուրաշիրը (գործակալը,) սովորական հարկի իրաքանչիւր բառառուն թումանի վրա մի թուման յաւելած է անում, կամ $2\frac{1}{2}$ % ով աւելացնում է, որպէս իրեն վարձ: Դրամական բոլոր հարկերը գիւղացին պարտաւորէ $2\frac{1}{2}$ % յաւելածով վճարելու: Գիւղացին մեծահոգութեամբ—մեծամեծ զրկանիներ կրելով տալիս է այդ յաւելածը, բայց մուրաշիրը սորան որ շատ է մաշկում հոգացը ծին, այնքան խրախուսւած անինա տմին մի առիթից օգտաելով, դանագան տուղանքների և կաշառաւութեան է դատապարտում ռայտին: Ռանչպարը անակնկալ տոյժերից խոյս տալու, զրպարտութիւններից աղատելու և գլխացաւի շը մտանելու համար միշտ մուրաշիրին, նրան հասանելի $2\frac{1}{2}$ % փոխարէն 5 % է վճարում այն էլ գաղանարար, մինչեւ իսկ զրացիներից, գիւղացին առնուաէրներից թարուն:

35. Անգործ ձեռքերը այնքան շատացել են, ամէն մի կալւածատիրոջ այնքան բազմաթիւ մուրաշիրներ են շրջապա-

տել, որ սնդհանրապէս կալւածատէր աղաները մուրաշիրներն յատուկ 2% հացահատիկը և $2\frac{1}{2}\%$ զրամական յաւելածները երբէք չեն թողնում, որ զրանք իւրացնեն: Սովորաբար մուրաշիրները ստունում են 2—3 խալւար ցորեն և 20—30 թուման փող, իսկ կալւածքում հաւաքւած մուրաշիրական ցորենն ու գարմանը առուղան ու խոտը, համաձայն ցուցակների և հաշւագրերի մնում է տղաի ամբարում: Մուրաշիրներին յատուկ եկամուտով աղան կարող է իւր զրանք հինգ տաս ծառա պահել, էլ նրբ թոյլ կտա, որ մի մուրաշիր այդ բարին իւրացնէ: Այս պատճառով մուրաշիրների վարձատրութիւնը այնքան շնչին է, որ նըանք ստիպւած ամէն մի առիթից պիտի աշխատին օգտաել և կաշառակերութեան դիմել: Իսկ կաշառքն այնքան անմեղ սովորութիւն է այս երկրում, որ և ոչ մի ազա իւր սպառաւորին չի մտածիլ մեղաղըել, եթէ առիթից օգտաել է վերջինը և մաշկել թոյլերին: Ընդհակառակը այսպիսի գործակատարը, որպէս աշքաբաց մարդ, աւելի մեծ աստիճանների է հասնում, աւելի վստահութիւն ներշնչում և աւելի ճոխ գործերի գրաւում:

36. Վերոգրեալ սովորական և ուղղակի հարկի ձեն ստացած պեատիկան կամ թույուկի, կալւածատիրական, մուրաշիրի, կրօնական—ողորմութեան և համայնական հարկերով եթէ կարսողանար զլուխն աղատել Ստրպատականի սակաւապէտ ռայտաթը, նրա ձեսին գարձեալ կմնար իւր արդիւնարեծից մի այնպիսի բաժին, որով հնարաւոր լինէր գարի հացով և ցնցոտիներով մի կերպ կեանք քաշ տալ: Բայց այս սոսկ գարի հացից էլ զլուխն է, լիռնական վայրի խռախ ու արմաթիրի դիմելու է պարտաւորում, երբ աեղի-անտեղի կառավարչական աղայտկան, մուրաշիրական և տանուաէրական սուգանքների է մատնում, ապօրինի—արտակարգ վճարում:

ների է ենթարկւում: Որևէ գիւղի սահմանում կատարւած սպանութեան և հազարառումի համար պատասխանատու է նոյն սահմաններում ապրող գիւղական համայնքը: Այս օրէնքը թէն իւր լաւ կողմն ոչի, ամէն մի գիւղական հասարակութիւն մեծ դպուշտեամբ հոկում է իւր սահմանները, հասարակական ամէն մի անդամ հետամառում է շարագործներին, բայց վատ կառավարչինների չնորհիւ այս օրէնքը մեծամեծ դիզումների և կաշառակերութեան առիթ է տալիս: Ճշմարիտ է մի գիւղական հասարակութիւնը 50—60 ծուխ մի սպանութեան, կամ մի կողոպումի պատճառով վճարելիք 2—300 թումանով չի կործանելի և ոյցն օրէնքի սարսափից իր բոլոր անդամներս միշտ աշալուրջ կհոկէ սահմանները և կհալածէ շարագործներին, բայց կաշառ—փող վաստակելու տենչով կուրացած խանի, մէմուրի, մուրաշիրի ձեռքում այս միջոցը սոսկալի դէնք է: Պաշտօնականները մի զօրեղ աղափ վրա երբէք չեն յանդինիլ իրենց տատանները փորձելու—փշրելու, ուստի նրա սահմաններում պատահած շարագործութիւնը սահմանակից մի ուրիշ գիւղի վրա բարդելուց էլ չեն խուսափում և նրա հասարակութեան ամէն մի ընտանիքին 5—25 թուման տուգանիքի ենթարկելուց էլ չեն խղճահարւած: Այս պատճառով էլ ույաթը ուրախութեամբ գլուխ է խոնարհում զօրեղ կալւածատիրոջ ծանը հարկերի առաջ և դատարկում, ամայանում են ակարների կալւածները:

37. Սղջիկ փախցնելու սովորութիւնը գրեթէ ընդհանրացած է այս երկրում, որի ընթացքում վիճաւորութիւններն և սպանութիւններն անպակաս են: Այս պարագաներն էլ մեծ տուգանքների պատճառ է զանում, բայց արմատացած սովորութիւնների առաջն առնելը զըեթէ անհնար է, այս դեռ բարբարոս ժողովրդի մէջ: Սովորութեան համաձայն

փեռան մի նշանաւոր «Բաշղ» (Գլխագին) է տալու աղջկա ծնողներին: Վերջինների դիրքի, աղջկա գեղեցկութեան և ժրաշանութեան աստիճանների համաձայն «Բաշղը» բարձրացնում են նորա ծնողներին ու եղբայրները: Ճարահատեալ զիմում են փախցնելու և աւելի մեծ տուգանքների են ենթարկում: Կարածատէք աղան իւր հարկն առնում է աղջիկ մարդու տալու դէպքում, առանց նրա հբամանի և սովորական փէցիաշների հարսանիք չի բռնում, իսկ փախցնելու դէպքում էլ այդ հարկը, մանաւանդ եթէ փախուսաը կապւած է ոճիրների և սպանութեան հետ, աւելի մեծ առնում է:

38. Ատրպատականի վարչութիւնը ստատիստիկի մասին դադափար անգամ չունի, բոլորովին անհնարէ որոշ թւեր զըտնել և երկրամշակի վիճակի մասին ընթերցողին ճշգրիտ գաղափար տալ: Որքան հնարաւոր էր բերանացի հարց ու փորձերից, կալւածատէրներից, մուրաշիրներից, գործակալներից, գիւղական ժողովրդից աշխովս տեսածից և վարչութեանս տակ գանւած գիւղերի հաշիւններից՝ հետեւեալ եղբակացութեան եմ հասել:

Ա. Ատրպատականի գիւղական հասարակութիւնը ընդհանրապէս վորք ընտանիքից է կազմւած, քանի որ երկու ամուսնացած եղբայրներ, կրօնի վարդապետութեան համաձայն, մի և նոյն յարկի տակ ապրել չեն կարող: Մինչն անգամ ամուսնացած որդիքը իսկայն ծնողներից բաժանելու պարտաւորած են: Այս պատճառով ամէն ծխի ընտանիքի անդամները 4—6 ի մէջ է տարուրերւում, հայր, մայր և 2-4 զաւակներ: Միջին թիւ կարելի է ընդունել 5-ը.—ծնողները 2 տղա (դեսահաս և երեխայ) և մի աղջիկ, քանի որ աղջիկները վաքրահա, ուակ են ամուսնացնում: Այսպիսի ընտանիքը մի շութից տեելի չի կարող կառավարել (չորս եղ—երկու լուծ): Եթէ շութից

աւել ունեցողներ լինին, պարաս ունեցողներն էլ նրանցից սակաւաթիւ չեն, քանի որ ծանրահարկի տակ ճնշւած է Սաղատականի ունչպարը: Տան գլուխ 1-2 կով, մի մատեան, 1-2 էշ կամ ջորի, 3-10 կթան ոչխար կամ այժ հաղիւ է պահում ամէն մի ընտանիք, զբանք էլ դժւարութեամբ են կառավարում:

Յ. Ամէն մի չութով երեք խալւար սերմից աւել ցանել չի կարելի: Հողի պառաւութեան, չէկութեան պատճառով շատ նուր են ցանում: Մանաւանդ որ երկրի փոքր մասում (Սալմաստ—Ռւրմիի կողմիրը) գործածում են գութան, մեծ մասը արօր են բանացնում: Ռւսուի 3 խալւար սերմը (2 ցորեն, մի գարի սովորաբար) ցանում են մօտաւորապէս երեք խալւար (արբասի) հոգում (մօտաւորապէս 6 /³/₄ դեսեատինում): Ամեն մի չութի տիրոշ ոյժից վեր է 3 խալւարից աւելի հող խոզան թողնել և վարել: Տան գլուխ էլ հաղիւ մի մի խալւար առոյտի տեղ գրաւեն: Հետեաբար ամէն մի չութի տէր ծխական խրացնում է մօտաւորապէս 7 խալւարից ոչ աւել հող (15 դեսեատին մօտաւորապէս), բացի համայնական արօափից:

Գ. Ատրպատականի մեծագոյն մասը շիկահող է, սկահողը շատ քիչ է, ուստի ցանքը արտադրումէ տռատ տարիներում 7-8, շատ անդամ հաղիւ տասը, սովորաբար 4-ից մինչև 6, իսկ ստերջ տարիներում 2-1-ից էլ պակաս: Մանաւանդ որ արհեստական պարարտացում գոյութիւն չունի, միքենաներ, կատարելագործւած գութաններ չեն գործադրւում: Միջին թուով բերքը կարելի է առ առաւելն 5 հաշւել: Հետեաբար մի չութի տէր ընտանիք գէմի տեղերում սովորաբար 3 խալւար ցանելով վերցնում է ոչ աւելի քան 15 խալւար: Ընդհանրապէս երկու բաժին ցորեն և մի բաժին գարի են ցանում, իսկ լեռնային, բարձրադիրը կողմերում ընդհակառակը:

Դ. Տանիհինգ խալւար բերքից կամ 1500 լարից ուայթը վճարում է պետական և կալւածատիրական հարկը 300 լիտր, մուբաշիրի և գործակալի 30 լիտր: Սերմը 300 լիտր և որա տոկոսները, եթէ աղափից է ստացել, առնւազն 75 լիտր: «Աւարդի» հարկը միջին թուով միշտ 2-3^{0/0}-ից աւել է բարդում, մօտաւորապէս 45 լիտր: Ծխահարկի, անառնահարկի փողը, ընտանիքի մի հասած տղի, մի կով, մի մատեան, մի էշ և 5 ոչխարի համար 25 զրան, բերքի վերածելով 37 լիտր, մուբաշիրին գաղտնի վնասներ 2^{0/0}, երեսուն լիտր, աղայական բերքի մի մասը քաղաք տանելու (բարգեաբդա) 10 լիտր, զոհաբերութիւններ աղքատներին և կղերին 3^{0/0} հաշւելով 45 լիտր: Քաղին ու կալին 2 մշակի վարձ 64 օրական (բացի կերածից) 128 լիտր: Տանուտիրոջ, համայնքի հանդի պահապաններին, հովիւններին և զգրին ես-50 լիտր: Երկրամշակին մնում է 15 խալւար բերքից մօտաւորապէս կէսը՝ 7^{1/2} խալւար, որից պիխի բաժին հանէ տղաին հարսանիքի, աղջկան օժիտի, սև օրւան, անբեր տարւան համար: Խոկ մնացորդով պիխի իւր ընտանիքը կերակրէ, հազցնէ, տաքցնէ, յայտնի բան է, եթէ պարաւարւած շը լինի այդ գումարից մուրտշիրին, աղափին, դիւանին տուգանքներ վճարելու և կոտորւած անասունների փախարէն նորերը գնելու:

Ե. Կալից աղափին և մուբաշիրին հասանելի գարմանը և քաղից տրւելիք առոյտը, խոտը փոխարկելով փողի, ինչպէս ներկայումս շատ տեղ գործադրւում է և վճարը միջին թուով 25 զրան (տեղ տեղ 30-35 զրան են առնում) հաշւենք, նոյն պէս փողի վերածենք հացահատիկի հարկերը, լիտրը միջին թուով 12 շահի հաշւելով (36 կոպէկ), երկու մասը ցորեն և մի մաս գարի, այնժամանակ աշքի տռած կարող ենք ունենալ Ատրպատականի երկրագործ գասի ամեն մի ծուխի վճա-

բածը մօտաւորապէս.

1. Հայահատիկից տրւած կրկնակ աշարը	2 ½ ₁₀ -րդ			
	300 լիտրը	180 զրան:		
2. Գործակալի-մուրաչիրի				
գարձը 2 %	30	»	18	»
3. Մրանց կաշառը 2 %	30	»	18	»
4. Սւարդ (մանր ծախուր և նուրսներ) 3 %	45	»	27	»
5. Աղայական բերքի քլէն- բարգեարդա 1 %	10	»	6	»
6. Աղքամներին և կղերին զոհարիք 3 %	45	»	27	»
7. Մերմի փոխառութեան տոկոսը աղախն	75	»	45	»
8. Ծիահարկ և անտառնի հարկը	»	25	»	
9. Դարմանի, առուստի և խոտի հարկը	»	25	»	
			371 զր	

Առքպատականում ամեն մի գիւղական երկրագործ ընտանիք, որ մի շութով է ապրում, երբէք չի կարնի ենթադրել, որ այս թւից 371 զրանից պակաս հարկ վճարէ, որը միը փողով մօտաւորապէս 68 լուրլի է կաղմում։ Այս թւից եթէ, զեղջենք սերմնացանի տոկոսը 45 զրան և կղերին աղքատների բաժը 27 զրան, ընդ ամենը 72 զրան, գարձակ 299 զրանը, կամ մօտաւորապէս 57 լուրլին այնչափ մեծ է, որ ոչնչով չի թիթեանալ սայաթի վիճակը։ Մանտանդ որ ուանչպարը ոչ միայն միշտ սերմնացու փոխ առնելու պարտա-

ւորւոծ է և կղերը բանութեամբ քաշում տանում են իրենց բաժը, այլ նա տալիս է բանուըի վարձ առնեաղը 128 լիտրը, կամ 77 զրան, որով ապրում են նրա չենքի կից «գարաները»։

Զ. Ինչպէս վերեն լիշեցի, ամեն մի շութի աէր ծովի չի կարող 7 խալւար հողից աւել վարել—ցանքի, խողանի և տուսյուի համար։ Գիւղական համայնքի անտառների արօտատեղը, եթէ հաշեենք մօտաւորապէս ամէն մի ընտանիքի համար 2 խալւար, այնժամանակ խրաքանշիւր շութ ունեցող ծխի օգտաւծ հողը 9 խալւարից (20 գեսհատինից) աւելի շի կարելի համարել։ Ուրեմն երկրամշակի վարած հողերի, արօտակերի և խոտհարքի համար վճարումէ իւրաքանչիւր խալւար տարածութեան 41 զրան մի-արտօի (մօտաւորապէս 8 լուրլի), կամ ամէն մի զեսեատինի համար 3 լուրլի 17 կոպ. մօտաւորապէս, որ շատ զգալի է հողագործի համար։ Իսկ բանչարանոցների, բոսանների, պարտէնների, այդեսանների և պտղատւ ծառաստանների հողի համար ամէն մի խալւարին 6 թուման, կամ մօտաւորապէս 11 լուրլի 20 կոպ. որ իւրաքանչիւր գեսեատինի համար կազմում է մօտաւորապէս 5 լուրլի։

39. Թէի ծանր է Առքպատականի երկրամշակի լուծը, անշափ է նրա տւած հողային բէնտան, գմւարտար է նրա վիճակը, քանի որ երկիրը պառաւել է, ոչ պարարտացնելու միջոց ունի, ոչ էլ երբողական դործիքներով աշխատանքը թիթեացնելու հնարաւորութիւն։ ոչ երկաթուղի, ոչ գոնէ սալլի ճանապարհ ունի, որ կարողանա հեշտութեամբ փոխագրել իրեն բերքը մեծ վաճառանոցներ ծախելու, բայց աւելի տանելի է, քան թէ զբացի Ցաճկաստանի հողագործի վիճակը։ Մը զլխաւոր պատճուն այն է որ Ցաճկաստանի գիւ-

զական երկրադարձ համայնքին բացարձակապէս կեղեքումնն
կառավարչական հարկածանները, միւլթէղիմներն ու գարթի-
էները և մանաւանդ լիւնական տնզուսպ քուրդ բէկերը, որտեղ
հողագործի կեանքին ու գոյքին իսպառ ապահովութիւն շկա:
Ատրպատականում զօրեղ կալածատէրների շնորհիւ, կառա-
վարչական զործակալները և լեռնային աւագակները չեն յան-
զըզնիլ մօտենալ գիւղական հաստրակութիւններին և սրանց
գոյքը ապահովւած է: Բացի այս, ամեն մի կալածատէր
աղա, իւր զիւղը ճոխացնելու համար, իւր կրծքով պաշտօպ-
նում է սայաթին պատահաբներից և սանձգութիւններից
կարեսը դէպքում երկրամշակին լուծ ու լծկան է տալիս, սեր-
մըն է մատակարարում, ջուր է բարձրացնում հանգերը ոսոզի-
լու, մի խօսքով իւր կալածքն ու սայաթը ճոխացնելու, ե-
կամուտի ազբելները ընդարձակելու համար աքնում է զօր
զիշեր: Այն ինչ Տաճկաստանում անտէր մշակից անընդհատ
յափշտակում, պահանջում և մինչ անդամ լծկանները խլում
մորթում են, առանց որեւէ օգնութեան ձեռք կարկառելու,
առանց վիճակը ապահովելու և հրամայում են, որ իւր ռւոզի
արօրը քաշէ և բերը հասցնէ աղաներին հաց մատակարարելու:

Ա Տ Ր Պ Ա Տ Ա Կ Ա Ն Ի Ա Գ Մ Ի Ն Ի Ս Տ Ր Ա Ց Ի Ա Ն

ԱՏՐՊԵՏՈՎՆԻ

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՆ

I

Արտասում է „ԱՐՁԱԼՈՅՑՈՒ“ № 24 - 37 1905 թ.

Վերջին ամիսներում, երբ չի ա թաւրքերը կովկասի քաղաքները հայի արինով ողողեցին, երբ մեր գրացիները թաթախւեցան և ներկւեցան քրիստոնէական արինով; երբ սահմանակից գաւառներից աւարի ծաբառվ կարացած լեռնական հրսուակացին խմբերը անցան Ծբաքսը և ընկերակցեցան իրանց կրօնա-ցեղակիցներին, քաղաքակիրթ երկիրների բնիկները սրտատրսի հետևում, սոսկումով թերթում են լրագիրները, հեռագիրները և մասնաւոր նամակները և վրդապւած սպասում են, թէ ի՞նչ է կատարելու մեր գրացի—Ատրպատական աշխարհում մի բուռը հայ քրիստոնեաների գլխին:

Այս սպասողական ջղայնացած մաքերը ապշած, չեն կարողանում բացարել, թէ ինչի երկու միլիոնի չափ ատրպատականցի թաթարները մի քանի ժամում չեն ջարգում ու բրնաջինջ անում երեսուն հազարի չափ հայեցին, որոնք ապաստանած են զանշահի լայնատարած թների ընդարձակ հավանու տակ: Այդ երկրից ուղարկւած ամեն մի գիր ուշի աւշով քննում են բոլորը և անբացարելի է մնում այս հանելուկը, թէ ի՞նչի կովկասից ու Թիւրքիանց այդ երկիրը մատադրիւրաւոր պրօպագանդիստները, խոսվարաբները չեն կարողանում բորբոքել ու փոթորկել իրանց տարպատականցի ցեղակիցներին:

Այս ինդիբը բացատրելու համար՝ հարկ համարեցի ընթերցողին ծանօթացնել Ատրագատականի ազմինիստրացիայի հետ, որի մասին որոշ գաղափար կազմելուց յետո, հետաքրքրուղները իրանք էլ կարող են այդ մութ ինդիբը լուծել և որոշ եղակացութեան հասնել:

1. Ինչպէս յայտնի է՝ պարոկական կառավարութիւնը գրեթէ կանոնաւոր զինուորական ոյժ չունի, նրա հեծելադօրը լիոնական—ֆէօդալական անզուսպ բէկերի հրոսակային իրմբերից է կազմւած, իսկ սոստիկանութիւնը գեռ անդրջնեղեկան սաղմային վիճակումն է։ Այս պարագան աւելի ես զարմացնում է հետաքրքրողներին, թէ ինչպէս պարսիկ պետական վարչիները կարողանում են զսպել ընշաքաղ, ագէտ և մոլի հպատակներին, որ չեն յանդգնում մօտենալ անդէն ու թոյլ հայ քրիստոնեա հպատակներին ջարդելու և կողոպեալու։ Առանց զինուորական ու սոստիկանական ոյժի մի թոյլ կառավարութիւն ինչպէս է սանձում ահաւոր մուեւանդ ազգաբնակութիւնը՝ և մոլեգնած պրօպագանդիստները այնպէս են սանձւած, որ չեն կարողանում նոյն իսկ որիէ տերբօր կատարելու...

2. Ատրպատականի—նոյնպէս ամբողջ Պարսկաստանի գրեթէ բոլոր գիւղերը, մասնաւոր սահմանափակ սեփականութիւն են կազմում։ Խոլամի հասկացողութեամբ ամբողջ երկիրը մուսուլման համայնքի ընդհանրական սեփականութիւնն է կազմում և ընդհանրութեան վերատեսուչը ամբողջ համայնական գոյքի իշխանը, տէրը, գատաւորը և սոստիկանն է։ Որսպահան պետութեան դեկավարը շի կարող ամէն մի գիւղի գործերը անձամբ գարել ու գատել, այդ պատճառով իւրաքանչիւր գիւղ այդ պետի կողմից չնորհւած է որիէ խանի, որ իր անսունով իշխէ, կառավարէ, բարենորոսգէ, դատէ, պատժէ

և համայնական հարկերը հաւաքելով յանձնէ պետական սընդուկին։

Վեհապետի բոլոր իրաւունքների լիազօրն է ամէն մի գիւղաէր խան և որա իրաւունքների սահմանները կրնաեկու, ընդարձակելու ոչ ոք լիազօրութիւն չունի։ Գիւղատէրը ինչպէս անսահման իշխանն է իր կալւածքի, այնպէս էլ անմիջական պատասխանատու է այնաեղ կատարւած բոլոր սճրագործութեան։ Իւրաքանչիւր կալւածքի—գիւղի սահմաններում կատարւած ամեն մի շարագործութեան համար գաւառապեար, նահանգապետը կամ կինդրոնական վարչութիւնը ճնշում է կալւածատիրոջ, որը կատարւած սճրի միակ պատասխանատուն է ճանաշւում։

II

3. Ամէն մի կալւածատէր խան իր գիւղում ունի համայնքից ընտրւած ազսպալիների ժողովը և իր զործակալը—մուբաշիր, որոնք վարում են բոլոր հասարակական և մասնաւոր զործերի քննութիւնները և զեկուցանում են կալւածատիրոջ, որ տալիս է վերջնական որոշումը։ Ա են մի կալւածքում կատարւած շարագործութեան վնամները պարտաւոր է կալւածատէրը անմիջապէս յանձնել գաւառապետին կամ նահանգապետին, եթէ չի կարողանում շարագործին բռնել ու յանձնել իշխանութեան։ Կառավարութեան լիազօրները ամենայն խստութեամբ կալւածատէրից պահանջում են շարագործին, եթէ չեն յանձնում սճրագործներին, այդ ժամանակ առողակի և վնասների ցուցակը կազմում է կառավարութեան լիազօրը քմահաճոյքի համաձայն։ Ընդհանրապէս թոյլ կալւածատէրները աւելի են տուժում, քանթէ ուժեղները, գորեղ դատաւորները լաւ են քամում իրանց որսի ոսկորների ծուծը,

քանթէ անկարողները:

4. Այս պարագան ինկատի սևնենալով՝ ամեն մի զիւղական համայնք աշալլջութեամբ հետամտում է, որ իր վիճակում որ և է արտաքոյ կարգի դէպք չպատահի, կամ կատարած դէպքում, նա անմիջապէս աշխատում է շարագործին կալանաւորել, յանձնել վարչութեան, որպէսզի ադառէի ջարիմաներից (տաւգանիքներից): Ամէն մի համայնքի մէջ կատարած շարագործութեան համար պատասխանատու լինելով համայնքը, ամէն տուգանք բաժանուամ է զիւղի ծխերի վրա, որոնք այդ պարագը վճարելու պարտաւոր են համերաշխութեամբ: Կալածատէրը ոճագործութեան տուգանքի և վնասների գումարի վրա աւելացնում է իր և իր զործակատարների բաժը և ամեն մի ծխի անդամների կաշին մարտկի տակ մաշկով գանձում է զրամը: Ննդութ զատաւորների անողում դահիճների, անխիզմ կալածատիրոջ մտրակների տակ կեղերած ու ատանջւած շինականը իր կեանքը—գոյքը փրկելու համար, ուրիշ հնարաւորութիւն, չունի, կամ պէտք է արգելու որ և է դէպք չպատահի իւր սահմանում, և կամ պիտի բռնէ ու յանձնէ ոճագործին պետական դահիճներին: Այս պարագան է որ սահմանաբում է ընշաքաղյ, աղքատ ու թշւառ թաթարներին, որոնք հնարաւորութիւն չունին ուրիշ միջոցի դիմելու:

5. Ոճագործին կառավարութեան յանձնելով՝ թէն մասմբ պաշտում են կարածատէրն ու համայնքը, բայց եթէ ոճագործը կարողաթիւն չունենա, նրա մօտաւոր աղքականները չկարողանան իրանց գոյքով բաւականացնել—լրացնել տուգանքի, վնասի քանակը և դատաւորների պահոնջները, շին պատաւմ պատասխանաւորութիւնից: Այդ գումարների պակասողը անպայման կերպով պարտաւոր է լրացնել կալածա-

ալը և ապա գանձել զիւղի ծխերից: Պարսից աղմինիստրատորները այս զերագոյն բարբարոսական օրէնքով միայն կարողացել են թաթար խուժանին սահմանաբարելու և երկիրը խաղաղութեամբ կառավարելու: Եթէ որ և է կալանաւորած սճրագործի զոյքը չի բաւականացնում տուգանքի, վնասի և տուժերի համազումարը, շարագործի ամենանեռաւոր արինակիցները գատապարտում են լրացնելու այդ գումարը: Իսկ եթէ դրանց գոյքով դարձեալ չի լրանում պահանջւած գումարը, այն ժամանակ համայնքը պարտաւորած է իր միջոցներով ծածկել բաց մնացած մասը:

6. Տուգանքի և վնասների քանակը սրոշելու իրաւունքը թէն վերապահւած է շիա կղերին, բայց ճարպիկ պարսիկ աղմինիստրատորները միշտ նորանոր պատճառաբանութիւններով այց գումարը տասնապակելու և հարիւրապատկելու հնարաւորութիւն ունին վճարելու: Ոճագործին կալանաւորելուն պէս, նախ մոռացւում է իսկական գոյքը, սկսում են քննել, թէ շարագործը որքան կարողութիւն ունի և ինչ շափով հնարաւոր է նրա հարազատներին կեղեկել ու կողովտել: Երբ արդէն զալիս են որոշ եղբակացութեան, նոր սկսում են քննել իսկական գործը: Քննութեան հետեանքը բղիսում է կորած գումարների քանակից և որքան կողապատելու հնարաւորութիւնն ընդարձակ է, այնքան էլ երկար ձգձգւում է զործի որոշումն ու վճիռը: Թաթար խուժանը երբէք այնքան չի սարսափում մտրակից, ֆալախկից, սրից, զընդակից ու թնդանօթից, որքան սոսկում է գրպանների թեթիանալուց և տրինակիցներին թշուառութեան մատնելուց:

7. Ամէն մի զիւղում պատահած գոյտթեան, որածութեան, վերքերի խնդիրները զիւղական համայնքը աշխատում է

անմիջապէս վերջացնել իր ազագալիների միջոցով, որպէս զի շինի թէ կողմերը դիմեն կալւածատիրոջ գործակալին կամ դատաւորին: Ողջ զիւղը միաբերան խնդրում, աղերսում է կողմերին, հաշտեցնում է, որոշում է տուգանքի մի չնշին շափ, խաղաղացնում է, որպէսզի գործը շհանի իշխանութեան: Յանցաւորը զիջանում է և վճարում է պահանջը, որպէսզի գործակալը, կամ կալւածատէրը այդ տուգանքի կրկնապատիկը շափշակեն: Եթէ գործը համուռմ է գործակալին, նա հաշտութեան զէսքում ստանում է յանցաւորից իր վարձը—զուը կամ քսան առկոս վրադրով: Եթէ կողմերը պարտաւորում են զիմել կալւածատիրոջ, նա իր յիսուն առկոսն է բարդում, եթէ համուռմ է գաւառապետին, նա վճարում է վնասուածի պահանջը և կրկնապատիկն է ստանում կալւածատիրոջից: Իսկ եթէ նահանգապետին է համուռմ գործը, այդ զէպքում քառապատիկը վճարելու է պարտաւորում յանցաւորը և վնասուած կողմից էլ որոշ մաս են վերցնում պաշտօնականները: Այս սոսկալի տուգանքը և խիստ պատիմները ստիպում են թութար խուժանին զսպելու իր կրքերը և ամէն աղէտի առաջն առնել, որպէսզի կրկին համայնքը արտակարգ հարկերից ու տուգանքներից ազատի, որի առկը ծանրաբեռնած ամրոխը անքում է սոսկալի շքաւորութեան և զրկանքների մատնուած:

III

8. Գիւղական աղմինխստաբացիայի բոլորսվին հակապատկերն է աւանների և քաղաքների ստիկանութիւնը: Գիւղերի ժառանգական աէրերը մշանջենաւոր իշխան ու դատաւոր են իրանց կալւածքում, նրանք միայն այն դէպքում են փոփոխում, երբ ծախտում է կալւածքը: Այն ինչ քաղաքի ստիկա-

նական աստիճանաւորները յաճախ փոփոխում են, երբ փոխում են գաւառապետները, նահանգապետները և կառավարչապետները: Քաղաքների իւրաքանչիւր թաղի քէղիտուգան (թաղապետ) անմիջական կախումն ունի աւաններում՝ գաւառապետից, իսկ քաղաքներում՝ բէլլէրբէլից (ստիկանապետ):

9. Քէղիտուգան ոչ միայն կառավարութիւնից որոշ սոճիկ չի ստանում, ոչ միայն կանցելաբիայի, բնակարանի, զրագիւնների, սպասաւորների, պոստի, հեռազրի ծախսերը իր գրանից է վճարում, ոչ միայն պարտաւոր է ծառայել գաւառապետի, կամ ստիկանապետի քմահաճոցներին՝ այլեայլ նւէրներով սիրաշահել նրանց ստորագրեալներին, այլ տարեկան որոշ հարկ է տալիս մեծաւորներին, իր իշխանութեան յանձնեւած թաղի որակի ու քանակի համեմատ: Քէղիտուգան ստանձնելով թաղապետութեան պաշտօնը, նա տէր է զառնում այդ թաղի ազգարնակչութեան բոլոր գատաստանական, բլէսկան, ստիկանական գործերին, այնպէս որ՝ ոչ մի պաշտօնակալ, առանց թաղապետի անմիջական մասնակցութեան, չի կարող որեէ անձնաւորութիւն կալանաւորել, խուզարկել, բանապարկել, կամ գատապարտել: Կառավարչական ատեաններից զրաւած ամէն մի հրաման գործադրում է թաղապետի անմիջական միջնորդութեամբ:

10. Քէղիտուգան թաղապետութեան պաշտօնը իւրացներու համար՝ գաւառապետին, կամ ստիկանապետին վճարած հարկի գումարը անմիջապէս ստանում է իր ֆարած-բաժից (ստիկանների աւագից), որով ծածկում է իր խոշոր բացը: Փարած—բաշին էլ թաղը կառավարելու համար հաւաքած ֆարաչներից (ստիկաններից) ստանում է պաշտօնի համար թաղապետին վճարած գումարը: Ինչպէս թաղապետը, նոյնպէս ֆարաչները, կամ ֆարաչ-բաշին ոչ մի կոպէկ ոսճիկ չեն

ստանում պետական գանձից, այլ այդ պաշտօնները պահպանելու համար պարտաւորած են, բացի տարեկան նուիրատը-ւութեան անվերջ նուէրներ ցըւելու: Այս էլ պէտք է յիշել, որ պաշտօն ստանալու նուիրատութեան քանակը միշտ ստակարկում է, մըցակիցների մէջ զաղանի աճուրդի է զրւում և ապա պաշտօնը յանձնուում է նոպաստաւոր նուիրատին: Թէ և սովորաբար թաղերին լաւ ծանօթ և փորձառու թաղապետներին են յաձնուում թաղերը, բայց սրանց զրպանները լաւ մզելու համար մեծաւորները անվերջ փոփոխութիւններից և աճուրդներից օգտում են:

Խ

11. Ամէն մի ֆարաշ իր զրամագլուխը պաշտօնին յատկացնելով՝ մարդարաբար չի ծառայում թաղին. յայտնի բան է. նա ատամներ ունի, որոնք վարժ են կրծելու, երեխաներ ունի, որոնք հաց են պահանջում, կիներ ունի, որոնք հազուստ են ուզում և ծախսեր, որոնք հեշտութեամբ չի կարողանում բաւականացնել: Այս պարագան ստիլում է ֆարաշին գիշեր-ցերեկ տքնելու, որպէսզի կարողանա սովից քրկել ընտանիքը, զբած զրամագլուխը կրկնապատկել, որպէսզի կարողանա էլ նոպաստաւոր պաշտօնի համնել: Փարաչն առաւալից մինչև գիշեր վաղում է, ամէն ծակ ու ճեղ մըտնում, զննում է, քիթը միսած հոտհոտում է, աչքերը չուծ սպասում, թէ որաեղից իրան որս է զալու: Այսպիսի սոտիկանը շատ պարզ է, որ իր թակարդից որսին բաց չի թողնիլ:

12. Մանաւանդ որ ֆարաչը ոչ միայն առանց ոռնկի պաշտօնը որոշ գնում է, ոչ միայն առանց որեւէ

վարձատրութեան ծառայում է թաղապետին ու ֆարաշ-բաշին, այլ նա զեռ պայմանաւորած է թաղապետի հետ, որ եթէ իրանց սահմանում որեւէ շարագրութիւն պատահի և շկարսղանան շարագրութը գանել ու կալանաւորել, պարտաւոր է գողծոնի գինը, վնասը, կամ արեան գինը ընկերակիցների հետ հաւասարապէս վճարել: Փարաչը իր զիւով և ամբողջ զոյքով երաշխաւորում է, ապահովացնում է թաղապետին իր ստանձնած պաշտօնի համար: Թէ և այդպիսի վնասների անմիջական տատանիսատուն թաղապետն է, բայց վերջինս, ինչպէս զիւով աէրը, այսպիսի վնասները զանձում է զիւղական համայնքից, իր կորուսալ պահանջում է և ստանում իր ֆարաչների իմրեց:

13. Ամէն մի շարագրութեան ենթակա զիմում է ֆարաշ-բաշին, կամ թաղապետին, որոնք աշխատում են ամէն կերպ անմիջապէս գոհացնել վնասաւծին: Կամ զտնում են յանցաւորին և նրանից վնասը կրկնակ քանակով ստանում և կիսում են գանգատաւորի հետ, և կամ իրենց զրպանից վրաբում են վնասաւծին: Հակառակ պարագային, եթէ վիասների ենթարկողը զնա բաղրէ գաւառապետին կամ սատիկանապետին, որանք ոչ միայն կրկնակին են վճարելու իրենց մեծաւորին, ոչ միայն զըկելու են իրենց հասանելի բաժից, այլ յաճախ պաշտօնանկ են լինում, կամ շարաշար տուժում: Այս պատճառով թաղապետը, նախապատիւ է համարում իր զըրպանից վճարել կորուսաների և շարագրութիւնների ենթակա անձնաւորութիւններին և ապա հետամակ շարագրութիւնների հեղինակներին, քան թէ թողնել որ վնասի ենթարկածները պարտաւորեն բարձր ատեան զնարակ իրեն վնասել և իր ձեռքից խլել շարագրութեան հեղինակներին:

14. Թաղապետը իրեւք չի տուժում, եթէ որիէ ֆարաշ չկարսպանա վճարել նրան հասած տուժի մասը, ֆարաշ-բաշին իր մնացեալ ֆարաշներով պատասխանառու և երաշ-խառու է ամբողջ խմբի համար, այնպէս որ՝ սրանցից կոտա-նայ կորուսալը: Ֆարաշ-բաշին այսպիսի անկարող, կամ ըմ-բռուտ ֆարաշի ամբողջ գոյքը դրաւելուց յետո, նրան էլ կը բանտարէ, կտանչէ, մինչև որ բաւականութիւն ստանա: Այս պարագաները զարգացը են Պարսկաստանում այնպիսի խուզարկու ֆարաշների խմբեր, որ քաղաքներում և աւաննե-րում կատարւած ամէն շարագործութիւն իսկոյն պարզում է և ոճրագործները իրանց արբանիակներով մատնեռում են պար-կական դահիճներին, դնդաններին և տանջանքներին:

▲

15. Քանի որ ամէն մի շարագործութեան ամբողջ պա-տասխանառութիւնը լնիկնում է տղմինխստրացիալի վրայ, սա պարտառու է բաւականացնել լնասների և կորուսաների են-թարկածներին, կարելի է ենթադրել, թէ ինչ խստութիւն-ներ են գործ գնում ֆարաշները, թաղապետները, ոստիկանա-պետները, որպէսզի կարողանան զսպել կամ զտնել շարագործ-ներին: Ըստհանրապէս բարբարսական է ֆարաշների և ոստի-կանական պաշտօնեակալների ընթացքը: Ոճրագործը գող, ա-ւազակ կամ մարդասպան, ֆարաշների ճանկը մատնելուն պէս՝ նրա ամբողջ գոյքը յափշտակում են, տանջանքների տակ կոր-դում են նրանից բոլոր թագցրած իրերը, կամ ստիպում են ծախել անշարժ կայքը և յանձնել դրամները:

16. Փարաշների, թաղապետների, ոստիկանապետների դլաւուր եկամուտի աղբիւրը—աղբուսալը մատակարառում են

շարագործները: Ոստիկանութիւնը անսանձ կրզպառում է շա-րագործներին: և զլսաւոր պաշտօնակալները, քանի որ իրանց շաղ բաժինները ունեն այդ կողոպուտափց, ամեն կերպ խը-խուսում են ստորին պաշտօնեաններին: Ընթերցողը կարող է գուշակել ոճրագործի սղումնի վիճակը, նրա տագնապները, նրա հարազատների հոգեկան տանջանքները, եթէ միշտ նկա-ամի ունենա, որ Պարսկաստանի աղմինխստրացիան իւր գոյու-թիւնը պահպանում է գողերին, աւազակներին, ոճրագործնե-րին և եղեռնագործներին կողոպաելով: Ո՞ր կատաղած ու բոր-րոքւած աէռօրիսալը իր շարագործութեան բոպէին կարող է մոռանալ պարսիկ գահիճներին և չյիշել անմեզ ազգականնե-րին, որոնք իր արարքի պատճառով ցմահ չքաւորութեան, տանջանքներին են մատնելու: Այս ըմբռնելուց յետո, պարզ-ում է այն գաղանիքը, թէ ինչի Ապարատականի թաթարնե-րը գովաթիւններով, աւերածութիւններով, արկնահեղութիւն-ներով չեն զերազանցում իրանց Թուրքիայի և Կովկասոյ ցե-զակիցներին, քանի որ պարսիկ կառավարութիւնը, ոչ զինու-րական ոյժ ունի, ոչ կազմակերպւած ոստիկանութիւն նրանց սահմանու համար, ճշմարիտ որ շատ զարմանալի է, քանի որ 75, 000 տուն ազգաբնակութիւն ունեցող Թաւրիդի նման մի քա-զարում տարւա ընթացքում եօթը եղերական զործ չի պա-տահում, այն ինչ Կովկասի ամէն մի գաւառական քաղաքում տմիսը մի քանի գէպքեր է պատահում:

▲

17. Թէի իսլամը ազգ չի ճանաշում, ազգայնութեան գաղա-փարը իսպառ զյութիւն չունի Պարսկաստանում, բայց երկ-չի բնակչութիւնը բոլորովին իրարից տարբեր ցեղերից է կազմ-

ւած, որոնք լեզով, սպասութիւններով, բարքով կատարելապէս միմեանցից տարբերում են: Ատրպատականն էլ աղքատ չէ այդպիսի իրարից տարբեր ու ներհակ ցեղերից, որոնք դարերից իվեր իրար սիսրիմներն են և միմեանց արիւն են խմել: Այս ցեղերը կատարելապէս ընկճելու և ստրկացնելու համար կառավարութիւնը իւրաքանչիւր ցեղի վիճակի վարչութիւնը յանձնում է իրանց տօհմական ցեղապետներից մէկին, որը պատասխանատու է ամբողջ ցեղի արարքի համար, ինչ ովտ որ և է գաւառապես կամ թաղապետ իր վիճակում: Ճշմարիտ է XIX դարում պարօկական կառավարութեան կեղունացումը սահմանարեց այդ իրար բունն ու օջախը քանիող հորդաների ասպատակութիւնները, բայց չկարողացաւ հանգնել նրանց սրառում ընկալած սիսակալութեան ոգին: Յաճախ այս այլացեղերը ընդհարւում են անշափ անմեղ արիւն է թափւում: Կառավարութիւնը չունենալով կանոնաւոր դատաստանական, ոստիկանական և զինուրակուն ոյժ, չի կտրողանում սահմանարել այդ այլացեղերին իրար դէմ վարած տոպատակութիւններն ու աւարառութիւններն անմիջապէս, բայց նա հետամառում է և վերջիվերջոյ այնպէս է խաղաղացնում, որ կուսդիները քանի-երեսուն տարի հազիր կարողանում են իրանց տնաեստական վիճակը բարոքել:

Այս ներքին հորդաների կատարած թաթարական աւերածների մասին կառավարիչները այնքան էլ շատ չեն մտածում, քանի որ սրանց արարքի դէմ ոչ կողմերն են զանգատում, ոչ էլ երօպական դիպլոմատիան է բողոքում ու բաւարարութիւն պահանջում: Ոչ ոք էլ չի հետաքրքրուում. թաղ իրար որածնեն, չարգեն և ոյժերը ջլատեն, այս ձեռնատու է կառավարութեան: Մանաւանդ նահանգապետները և կառավարչապետները անշափ գոհ են այս արիւնհեղութիւններից, քանի

որ սրանք հնարաւորութիւն են զանում երկու կողմերին էլ կեղեքելու, քամելու և իրանց քառկը լցնելու: Եյսպիսի դէպքի ժամանակ կառավարիչները խուլ ու կոյր են ձեռնում, քանի որ այնքան ոյժ չունեն, որ կարողանան տաշջն տոնել: Պէտք է այս էլ զիտեհնալ, որ նահանգապետները իրանց անձնական միջոցներով են զինելու, ձիւորելու և ուղարկելու սատիկանական կամ զինուրական ոյժ խլբառմները խաղաղացնելու համար. արարքո կարգերի ծախսերը կեղրոնական կառավարութիւնը չի ընդունում, կամ բաժանում է նահանգապետների վրա, որ լրացնեն: Թւոտի արիւնահեղութիւնը, յափշտակութիւնը, աւեզածն ու եղեալ վերջանալուց յետո, նահանգապետի պաշտօնակալները ստիպում են ընկճած կողմին: զանցագատ ներկայացնելու: Վերջինս անմիջապէս պաշտօնեա է ուղարկում աւերիչների գլխին՝ բացարարութիւն և առւզանք պահանջելու: Եթէ ցեղի զլլաւորը անմիջապէս չի հպատակուում և չի բաւականացնում, պաշտօնեան ցեղապետի մրցակիցներից զօրեղագոյնին առաջ է քաշում և սրա նւէրները նահանգապետին սւղարկելով, պահանջում է նախկին բմբասա ցեղապետին պաշտօնանկ անել, վերջինին պետ հրամարակել: Եթէ կարողանում է նահանգապետը՝ կալանաւորում և Թաւրիդ է ուղարկում ըմբոստ ցեղապետին, հակառակ դէպքում նրան այնքան ձնչում է յաջորդ ցեղապետը, որ նա պարաւորեալ անձամբ զիմում է կառավարչապետին որ իրան ներէ և Գահաժառանգից վերստին հրավարտակ ստանայ: Եյսպիսի ըմբոստ ցեղապետներին Թաւրիզում բանաւարկում, այնքան են տանջում, մինչև որ կալանաւորը իր բոլոր ունեցածը նրանց է բաժանում: Եթէ կատարած ասպատակութիւններն ու չարագործութիւնները ծանր է, ըմբոստ—ցեղապետին սպանում են, թեթէ է, առւգանքներով պատաւում, նորից հրավարտակ է ստանանում է ցե-

դպրեառութեան պաշտօնը և վերադասնում հարազատներին: Այս պարագաներից, այն անսահման տուգանքներից սախալած՝ ցեղերի առաջնորդները սանձում են իրանց ույաթին, կամ ույաթը ընտառում է այնպիսի ցեղապետ, որ կարողանա զբաղել համայնքին և ահաւոր տուգանքների պատճառ շգառնալ: Տուգանքը միշտ բաժանում է ամբողջ ցեղի վրա, որի անդամները հաւասարապէս տուժում են:

Ստրպատականի այս թաթարական ցեղերի մեծագոյն մասը շիա կամ շիփոմին հակած աղանդաւորներ են, որոնք պարսկաստանից գուրս որեէ յինման կէտ շունենալով, պէտք է անպայման կերպով ստրկանան իրանց հովանաւորող ծահնչահի կառավարութեան: - Բայց տարբեր են թուրքական ահմանների մօտ ապրող սիւննի քուրպերը, մանաւանդ Որմիի լճից հարաւարեմուտք ատրածւած Սօուշ-Բուլադ նահանդի քուրպերը, որոնք թէ ցեղով, թէ կրօնով և թէ բարբով բոլորովին թաթարական ցեղերի հակապատկերն հննեցկայացնում, տառմ են շիաններին էլ, նրանց պետութեան ներկա ոէժիմն էլ: Զնայելով որ Սօուշ-Բուլադի ահաւոր նահանդին (300 000 բնակիչ) գրեթէ միայն քուրպերն են աիրապետում, որոնք իրանց ցեղակեցներից—թուրքիայից ոչ միայն բարոյական քաջակառութիւն, այլ առառ զէնք ու մթերք են ստանում, զըրգուում և բորբուում են իրանց տիրող կառավարութեան դէմ, բայց պարսիկ ազմինիսաբատորները սրանց էլ սանձահարած են և շին թոյլ տալիս խլբառելու, ինչպէս ընկճած ու ստրկացրած են իրանց կրօնակից ու ցեղակից թաթարներին: Ամբողջ Սօուշ-Բուլադի և Սարգացցի կիրպերը քուրդ ցեղապետների սեփականութիւնն է, որոնք իրանց վիճակում անկախ իշխում են, անսահման իրաւունքներով: Ամէն մի գիւղատէր զինած է իր ույաթին—քուրդերին ամենակատարելագործւած զէնքերով,

ձիով և քուրզը մեծ հաշակ է վայելում իր զսրծածած զէնքով և քաջութիւնով: Երկրի բնական անառիկ լեսները, անմատչելի ձորերը շին թոյլ տալիս, որ պարսիկ կառավարութիւնը կարսղանա սրանց ընկճել և հպատակեցնել: Կառավարութիւնը շկարսզանալով սրանցից շատերին կատարելապէս նւաճել, հարկերը չի պահանջում, այլ պարտաւորացրել է սահմանապահ հեծելագոր պահել—հարկի փոխարէն: Բայց այս բոլորը աննպաստ պայմաններում անկամ նահանգը այնպէս ինեղճացած: Է կառավարութեան առաջ, ինչպէս ընկճած է Սալմաստի, Մարանդի, Մարաղալի և Հաշտարույի դաշտային ստրկացած և օպիտումից ապուշ զարձած ժողովուրդը: 1881 թ. Ջէլի-Իրազուլլահի և 1899 թ. Ղազի-Փէթթահի ապստամբութիւնները պարսիկներն ինչպէս ընկճեցին, ծանօթ է արդէն Կովկասի լրագրութեան: Կառավարութիւնը ամրող ցեղի յանցանքի ու ոճի պատասխանատւութիւնը զցում է ցեղապետների վրա և նրանցից բաւարարութիւն է պահանջում: Այս բաւարարութիւնը երբեմն տասնեակ և հարիր հազարների է հատնում: Այդ տուգանքը ստիպում է ցեղապետներին զսպել իրանց ցեղը: Հակառակ դէպօւմ կառավարութիւնը իշխանութիւնը յանձնում է ցեղապետների հակառակորդ մրցակիցներին և սրանց այնքան է իրար դէմ կուեցնում, մինչեւ բոլորին էլ ընկճում է:

20. Պարսիկ ազմինիսաբատացի միակ սիսերիմ ներքին հակառակոցն եղել է շիա կղերը, որը յաւակնել է միշտ իրան վերապահել երկրի գտառատանական, քաղաքական և անտեսական գործերը և ջանացել է զահերի զիբքը ուզուապտուի, կամ լոկ զինուարական սպարապետի աստիճանով սահմանափակել: Արքունիքը խուլ կերպով անվերջ շարունակել է կղերի դէմ մի ներքին կոխ, բայց և այնպէս Պարսիկ

աղմինիստրատորները իրանց խորամանկաւթեամբ և կեղծիք-ներսվ կղերին էլ են ընկճել ու իրանց շահերին ծառայեցրել, ինչպէս խոնարհեցրել են անզուսպ խաներին, արիւնարբու ցեղապեաներին և անխիղ աւարտուներին։ Կղերի բարձրացրած յանկարծակի ամբոխային ցոյցերի առաջն առնելու համար՝ կառավարութիւնը դիջել է ամբոխի պահանջներին՝ անմիջապէս բարականութիւն տալով ու ցըւելով։ Եսկ խաղաղութիւնը վերահաստատելուց յետո գաղանի քննութիւն է կատարել և գրւ խառը խոռվարաներին հեռացրել է, աքսորել կամ սպանել։ Եյս ցոյցը կեկտվարող, ծրագրող միւջթէհիգներին առաջարկել է մայրաքաղաք՝ Շահին տեսութեան, կամ Քէրրալա—Օսմանեան երկրում ուխտի գնալու։ Եյս քաղաքավարի աքսորը մերժող կղերը շարաշար տուժում է։ կամ թունաւորում են, կամ նրանց ընակարանը ումբակոծում։ Գարերի փոքրերը սափել է նրանց հպատակւելու։

21. Պարսկաստանում կատարւած ցոյցերը ընդհանրապէս արհեստական են եղել։ Ժողովուրդը սոտիկանուկան և կառավարչական այնպիսի խոսա կապանքների մէջ է, տպիտութիւնը նրան այնպէս է սարկացրել, որ սա ինքնարերաբար ամրոխելու հետ հնարաւորութիւնից գուրկի է։ Ժողովրդին ամբոխում են կղերը թալարաների (ուսանողների) միջոցով, նահանդատպեաները, կառավարչապետները իրանց լրտես լօթիների միջոցով։ Այսպէս օրինակ։ 1898 թ. Սարպատականի կառավարչապետ Գերուսացի Հասան-Ալի-Խանը ուղարկել է աղատւել տեղացին նշանաւուցանում ունեցած աղքեցիկ եղբայրների միջոցով կաշկանդում էր կառավարչապետի քայլերը։ Կառավարչապետը իր լրտես լօթիների միջոցով գրգռեց ամբոխին, իբր թէ նիդամ իւլէման ահաւոր քանակութեամբ ցորեն սևի ամբարած Թաւրի-

զում և աժան չի ծախում, որ հայթուխները կարողանան չքառոր հասարակութեան հաց մատակարարել։ Ամբոխը աներկիւդ յարձակւեց նիզամ-իւլէմախտան վրա, կողոպտեց, ամբարները ցրւեց, անպատիժ և առանց պատասխանաւութեան մնաց մինչև օրս։ 1899 թւին կեզրոնական կառավարութիւնը չէր ցանկանում Սարպատականից հեռացնել կառավարչապետ Հասան-Ալի խանին, իսկ նրա կաշառակեր ընթացքից դժգոհ էր գահաժառանձը։ Նոյն թւականին Հասան-Ալի-Խանի կարգադրութեամբ Ղարաբաղցի աւազակ Ռահիմ-Խանը որմբակոծեց Սրբարիլի միւջթէհիդ-Միրզա-Ալէքբերի տունը և նրան բերեց Թաւրիկ։ Թաւրիկի միւջթէհիգները ժողովրդին աղմրկեցին կառավարչապետի դէմ, որը գուրս եկաւ քաղաքից և հրաժարական ուղարկեց Թէհրան։ Ուչժիի գործի ժամանակ 1891 թւին, թէն ամբողջ աշխարհին հոչակեցին, թէ Թաւրիկի միւջթէհիդ Հաջի-Միրզա-Զաւադ աղան դիմագրեց և շթուզեց դաշնագրի գործադրելուն, ամբողջ երկրի ազգաբնակութիւնը կառավարութեան դէմ գրգռելով, բայց այս բանը այն քանի էլ ճիշտ չէ, քանի որ Շահն էլ զզջացել էր և ձգուում էր մի կերպ քանդել տւած դաշնագրիը։ Գործին շատ մօտ մարդիկ Շահին հասկացրել էին, որ այդ ընկերութիւնը Շահի զանձին խոստացած տարեկան վճարի հարիւրապատիկն է զանձին խոստացած ժամանակից, ուսափ Գերուս-Հասան-Ալի-Խանն էլ ոչ պաշտօնապէս օգնում էր միւջթէհիդին, սրպէսզի մի կերպ սչնչացի դաշնագրերը և երկիրը շկողոպտի անգլիական ընկերութիւնից։ Ամբոխը հետեւց Հաջի-Միրզա-Զաւադ-աղային, աղմկեցին մի քանի քաղաքներում, պայմանը քանդեցին և խոպագեցին։

Խոռվութիւնների և խոռվարաների զովանակը աղմինիստրացիայի ձեռքին է։

Յղմինիստրացիայի մասին աւելի սըոչ գաղափար տալու համար, կարեսը ենք համարում Ստրպատականի վիշիքար նիզամի Սալթանէի Թաւրիդ գալու, երկու տարի պաշտօնավարելու և պաշտօնանկ հեռանալու ժամանակ հետաքրքիր արկածների նկարագրութիւնը տալ ընթերցողներին:

ՆԻԶԱՄԻ ՍԱԼԹԱՆԵ

1. Ստրպատականի վիշիքարը (Երանի գահաժառանդի գլխաւոր գործակալը), կամ ինչպէս ստրպական է գարձել նրան անւանել կառավարչապետը—կուսակալը. Ամիրի. Նիզամ Հասան-Ալի-Խան Դերտուր պաշտօնանկ էր եղել և հեռացել վիճակից, 1899 թ. Սպրիլին: Այդ անձնաւորութիւնը խիստ վարչական մարդ էր, նոյն իսկ ծերութեան ժամանակ՝ երկրորդ անգամ վիշիքարի պաշտօնավարութեան ընթացքում, որին Մուզաֆիլը-Էդգին շահը ուղարկել էր Ստրպատական, երբ իսկովութիւնների առաջն առնելու կարիք կար, երբ հարկաւոր էր նի ազգեցիկ մարդ, որ կարողանար զսպել Թաւրիդի խոսվարներին, որոնք համեկն վիշիքար՝ Ղայմազամի առնելը առարի էին մասնել, նիզամիւլիւլէմա հոգեստրականի ցարենի ամբարներն էին ցըւել և սպառնալիք էին կարգում քաղաքի կուտածառէրներին: Հասան-Ալի-Խան Դերտուր երբէք չէր պիտի, որ պիտի առաջնական նենդամառութեամբ, նա հմտութեամբ իրեն յահճնաւծ գործերը այնպէս խելացի կերպով էր գլուխ բերել, որ միշտ աւելի բարձրացել էր, աւելի ուժեղ զիրք էր ստեղծել իրեն համար, թէ իւրայինների և թէ օտարների աշքում:

Ների օրէնքին ու զաւանանքին, նա մինչեւ անգամ ամէն ճիզ թափառմ էր. որ չէզոքացնի միւջթէնիզներին և նրանց դերը սահմանափակի զուտ կրօնական, ծիական գործերով:

2. Մի անգամ երբներկա շահը գես գահաժառանդ էր, Ամիրի Նիզամ Գերուսից կրկնակի թախանակով խնդրել էր, որ մի մարդասպան բանտարկեալի իրեն յանձնէ, վիշիքարը զգալով որ գահաժառանդին շրջապատողները կաշառւուծ են և ձգտում են իր միջոցով բանափաց զուրս կորդել շարագործին, նա պատասխանել էր, որ շուրջավ կը կատարի գահաժառանդի կամքը և իր սպասաւորներին հրամայել էր անմիջապէս կախել մահապարտին: Գահաժառանդը գիտենալով վիշիքարի բնաւորութիւնը, շաապել էր անձամբ գալ՝ կալանաւորին ազատելու, բայց ճանապարհին ոճրագործի գիակը կախւած էր տեսել: Բայց Ամիր-Նիզամը այնպէս ուժեղ մարդ էր, այնքան յարգւած, որ ժամանակը չէր նկատել անգամ, որ նա իւր կամքը չէր կատարել, իսկ գահ բարձրանալուց յետո, կրկին նրան էր յանձնել Ստրպատականի վիշիքարի պաշտօնը, շնայելով նրա ծերութեան: Ամիր-Նիզամը խիստ խելացի աղմինիստրատութ էր, հակառակորդները որքան թակարդներ էին լարել նրա դէմ պարսկական նենդամառութեամբ, նա հմտութեամբ իրեն յահճնաւծ գործերը այնպէս խելացի կերպով էր գլուխ բերել, որ միշտ աւելի բարձրացել էր, աւելի ուժեղ զիրք էր ստեղծել իրեն համար, թէ իւրայինների և թէ օտարների աշքում:

Ճէլի-Երադուլահի ապստամբութիւնից յետո, երբ Պարսկի կառավարութիւնը ձգտում էր բոլորովին քայլացի քրդիրին, Ամիրի-Նիզամին հրամայեած էր ոչնչացնել ապստամբների ամենաուժեղ բէղին: Խաղաղութեան զաշը կաերւուց և երկիրը անգործելուց յետո, այդ բէղին իւր մօտ կանչեց Ամիրի-

Նիդամը և դուրանը նրան աւանդ ուղարկեց տակով. որ—,,Քանի ինքը՝ Ամիրի-Նիդամը երերի երեսին է, աչ ոք չի յանդգնիլ նրա կետքին դիպուիլ:“ Հաւատաց երդումին պարզութիւ քուրդը, եկաւ, մտաւ Ամիրի-Նիդամի վրանը: Ամիր-Նիդամը վաղօրօք մի խոր հոր էր փորել աւել և ինքը մաել էր երկրի հոգի տակը. սրպէսպի երգմնադրուժ չը լինի, իսկ ծառաները վրանում զնդակահար արբին անդէն քուրդ բէզին:

3. Ամիր-Նիդամի քաջութեան, խելքի, հմառութեան և վարչականութեան առաջ խոնարհում էին բոլոր պարսիկ մեծամեծները, նրանից անշափ զոհ էին և՛ նասր-էզդին և՛ Մուղաֆէր-էզդին շահերը, նրանից ակնածում էին աչ միայն պարսիկ մինիստրները, այլ նոյն իսկ Սադրազմ-Եթարէզ-ադամը. բայց կեդրոնական վարչութիւնը նրանից օգուտում և մայրաքաղաքից հեռացնում էր, որ նա իրենց ապիկարութիւնը չը մերկացնէ, իրենց զիմակները չը պատուի և շիայտառակի: Թէ և երկրուդ անդամի կառավարչառեսութեան ժամանակ անշափ վիսիւել էր Ամիրի-Նիդամը, որ հին այմինիստրատորի միայն շուրն էր մնացել, ծերութիւնը նրան ընկճել և թուլցը էր, ժողովուրդը վիտառում էր նախկին բարեկամին, կաշառակերութիւններով անշափ դեզում էր կատարում, այնպիսի իրար ներհակ հրամաններ էր արձակում երկու հակառակորդների մէջ, որ ակնյայտնի ընշաքաղց կաշառակերութիւնը պարզութաւ էր կողմերին, մինչև այն աստիճան, որ բոլոր գանդատառները նրանից խոյս էին առլիս, բայց և այնպէս նա երբէք իւր սկզբունքին հակառակ ընթացք չը բրոնեց և այդ յամառութեան էլ զոհ զնաց:

4. Արդարիում մի յայտնի մոլլա՝ Միրզա-Ալէքրէր անունով երազում էր միւջթէ հիդրների գերիշխանութեան խոնարհեցնել գարսկական վարչութիւնը: Սա հասկացող, իսկոտ կրօնամու,

անկատու, արդարասէր, բանութեան զէմ մարտնչող և ծայրայիկ ժողովրդասէր հոգեւորական էր: Սա ուխտել էր իւր կեանքը ժողովրդի վիճակի բարօրութեան ներել և տակունութեամբ զիմում էր հապատակին: Նա այնքան կայր հաեւազ էր իրենց վարդապետաւթեան և անշափ մանրաքնին, որ ուխտել էր երբէք շուտել—շիմել ուրիշի վառտակից, չէր ընդունում աչ մի հրատէր, և աչ մի նէր: Միրզա-Ալէքրէրը ամրող տարբին հաւաքում էր սևեցողներից տասներորդը և ցըսւում էր կարօտեալներներն, առանց որիէ զինար իւրացնելու, կամ որիէ վարձ ստանալու իւր բոլոր պաշտօնակառարութիւնների համար: Միրզա-Ալէքրէրը աչ զատ էր վարում, աչ թուզթէ էր վաւեկացնում, աչ էլ, ներկայի Յարզատականի կղերին հետեւելով. կալւածներ ձեռք բերելու էր արնում: Նա անշափ զոհ է իւր տարեկան մի-երկու հարիւր թումանի եկամուտով, որ ստանում էր ժառանգական կարածներից, և զբանով էլ ապրում է: Այնպիսի զիքը է ընդունել, որ Միրզարիի ժառավորը Միրզա-Ալէքրէրին պաշտում է, աչ միայն անշափ յարգանքի է արժանացը նրան, այլ ընդունում է, որ նրա մէջ բռն է զրել իրենց աներեսութացած հմամի հոգին և նրա համար կեանք զսհելը սրբազն պարտականութիւն ևն համարում իրեն հետեւրդները՝ շիա-հաւատացացեալները: Միրզա-Ալէքրէրը իւր վարքով ներկայի Յարզատականի դասակիցների այնպիսի հակառակ պատկերն է ներկայացնում, որ նրան իւրացնոր ևն հրատարակել նախանձորդները, չեն թսպնում, որ հետեւրդների մէծ բազմութիւն հաւաքէ զլախն: Նա էլ ասանձնացած իւր վիճակում, ջանում է սովածներին կշուցնել, նեղութեաներին սկսորել և ճնշածներին զուրս կորզել բանաւորների ճիբաններից:

5. Միրզա-Ալէքրէրը ընթացքը ծայրահեղութեան հասց-

րեց, նա ոչ միայն միջամտում էր ամէն ահօակ գատառատանական զործերի, հովանաւորում էր մնանկներին և պարագը վճարելուց խոյս աւողներին, այլ համարձակ մէջիդում անարդում էր գատառորներին, սրանց ուղարկադ Դաշտներին: Արդարին նահանգագետները անվերջ զանգատում էին, թէ Միքայ. Ալէքրերը խոնդում է զառնում, չի թողնում զործերը վերջացնել և կենարսնական վարչութեան հրամանները կարգադրել: Ամիբ նիզամը հրամայեց նրան կալանաւորել, բերել Թաւրիզ քննութեան: Եթզ վերջնը ընդդիմացաւ, յայտնի աւագակ Բահիմ խան Զէլէքրանիին ուղարկեց նրա վրա, ձիւորներով և թնգանօթով, սրանք մոլլա Միքրզա. Ալէքրէրի տան վրա ուումբեր արձակեցին, տեղ տեղ քանդեցին, ձնշեցին, այնպէս որ նա անճարացած անձնաւուր եղաւ: Թէ Արտարիլէները, մանաւանդ վիճակի ժողովուրդը անշափ վրդգովեց, բայց Բահիմ խանի անողորմ ձիւորների կեղեռումներից սոսկալով, մանաւանդ թնգանօթների ուումբերից ահարեւած, լսեցին, սպասելով զործի վախճանին:

6. Միքրզա. Ալէքրէրին Արդարիլից Թաւրիզ բերելիս, մի խլսում բարձրացաւ իւլէմաների. միջթէհիդների մէջ, սրոնք ոկացին բողոքել կառավարչապեաի բանած ընթացքի դէմ: Ամիբ. նիզամը թէ կարող էր անմիջապէս սրանց արներն էլ ումրակոծել, իրենց էլ կարանաւորել, բայց, որպէս Պարսիկ հեռատես մարդ, զգաց թէ կզերին զբգողն սփ էր և հրամատական աւեց: Երիտասարդ գահաժառանդը ցանկալով հեռացնել Ամիբ. նիզամին և իւր անմիջական իշխանութեան առակն առնել Ստրպատական աշխարհը, նա կզերին պաշտպան հանդիսացաւ: Ամիբ. նիզամը պնդեց հրամատականի վրա, հեռացաւ Ստրպատականից, բայց կզերը աւելի կորցրին իրենց դիրքը, աւելի օտրը խաղալիք դարձան Ազմինիստը:

առների ձեռքին

7. Ինկատի սննենալով, որ գահաժառանդը ցանկանումէ անձամբ կառավարել Ստրպատականը, Պարսիկ մեծամեծներից ոչ ոք չէր զիջանում յանձն առնել Ստրպատականի կառավարչութիւնը: Ոչ ոքի հաճելի չէր՝ թէ յիսուն հաղար թուման վճարել այդ պաշտօնի համար կենարոնական վարչութեան և թէ ապագան վատանգել՝ գահաժառանդի կամքին հակառակ ընթացք բանելու պարտաւորութեամբ: Ամրող երկու ամիս թափուր էր վիճակը և դեռ յաճախորդ չէր յայտնում այդ պաշտօնի համար: Աթարէկ. Ազամը, որ ամէն ճիգ թափելով ուղում էր հեռացնել մայլաքաղաքից իւր նենդամիտ և վտանգաւոր ախոյեաններին, այդ պաշտօնը առաջազրեց նիզամի. Սալթանէ Հիւսէին. Ղուլի խանին: Իսկ վերջինը չուղենալով ընդհարւել թագաժառանդի հետ, ամէն միջոցի դիմեց, որ աղատւի այդ կոչումից, բայց շահի հրամանը այնպէս անդառնալի էր, որ թագաժառանդը հեռագրեց ընդունել և ճանապարհու դէպի Ստրպատական: Այս հեռազրից աղահովւած նիզամի. Սալթանէն, թէ զարձեալ նազ էր անում ընդունելու պաշտօնը, որպէս զի պաշտօնի վճարից՝ յիսուն հաղար թումանից աւելի բան չը պոպկեն նրանից, բայց Թաւրիզում նրա ազէնաները արդէն լուր տարածեցին, թէ առանց որիէ վճարի առաջարկում են նրան փիշիքարի պաշտօնը, բայց նա յանձն չի առնում, չի զիջանում ընդունել: Վերջապէս վաթուն հաղար թուման կանխիկ նւէր յանձնելով նիզամի. Սալթանէն՝ ճանապարհ ընկաւ գէպի Ստրպատական:

8. Նիզամի. Սալթանէ Հիւսէին. Ղուլի խանը մի շատ խորտմիտ, հասկացող, շրջապատը ճանաչելու անշափ ընդունակ և ուշիմ անձնաւորութիւն է, որ մաքսատան ամենասառըին

զրագրի աստիճանից բարձրացել է աստիճանաբար մինչև Բուշիրի մաքսատան գլխաւոր կապալառուի և մինչև անկայ ջիրավի՝ Փարսիստանի ընդհանուր կառավարչապետի պաշտօնին։ Նա իրեն չըջապատող պարսիկ մեծամեծներից բոլորից հեռատես մարդ է, շատ լաւ է իմանում շէրիաթը, անշափ նուրբ կերպով ուսումնասիրել և իրացրել է Պարսկաստանի վարչական եղանակները և, որ ամենագլխաւորն է, մեծ կարողութիւն է դիզել, որի առաջ խոնարհուում է ամբողջ աղբարևակութիւնը։ Ինչպէս ասում են՝ սիրւած է Սինացի քըրդական էլլիքներից, բայց վարքով բարքով նման է զուտ Պարսկի-Փարսի, անշափ նախանձախնդիր է հայրենիքի անկախութեան, մանաւանդ զարգացման, որոնց պատճառով միշտ ընդհարւի է Պարսկական մեծամեծների հետ, որոնք իրենց հաճոյրի, փողի համար միշտ պատրաստ են իրենց ծննդավայրերը աճուրդի դնելու և մատնելու։ Նիզամի-Սալթանէն անձնական շահի տռթիւ ընդհարում է ունեցել Անգլիացիների զիվլումացիայի հետ, որի պատճառով նասր-Էղին շահի ժամանակ պաշտօնանդ է եղել և երկար ժամանակ անզօրծ է մնացել։ Այս պարագան երկար մտածութիւնների պատճառ էր դարձել և նա հոգով ու համոզմունքով անզօրծի է դարձել չնոշհիւ այդ ընդհարման։ Նա յաճախ կրկնում էր, որ—իրենց յարաբերութեան մէջ Ռուսները Պարսիկների հետ աշառութեամբ (բազարէդ) են վերաբերում, այնինչ Անգլիացիները անտշառութեամբ (բիզարէդ)։ Թէև վագուց նիզամի-Սալթանէն հաշտւել էր Անգլիական զիվլումացիայի հետ, բայց դարձեալ, որան Սարապատականի փիշիքար նշանակելու համար, Պարսիկների կենտրոնական վարչութիւնը պարտաւորւած էր Անգլիացիներից յատակ թոյլտութիւն խնդրել, իսկ Սթարէդ-Ազամը չիւսէին Ղուլի խանին մայրաքաղաքից

հեռացնելու համար, նրա օպերօպիցիալից ազատւելու համար, զիջաւ Անգլիական զիվլումացիային զիմում անելու և յաջուացրեց ծրագիրը։

9. Գեռ Թէհրանից գուրս շէր եկել, չիւսէին Ղուլի խանի ազէնաները սկսեցին Թաւրիկում զրւատել նըտ արդարասիրութիւնը, անկողմնակալութիւնը և մանաւանդ տոկունութիւնը։ Ատրպատականցիներին յայտնի էր, որ նիզամի-Սալթանէն այնքան օրէնսդէտ էր, որ կարող էր միւջթէհիդներին շէրիաթից դաս կարգալ, այնքան խիստ էր, որ կտրող էր ամենագործ կրօնաւորներին էլ աքսորել, այնքան ճարպիկ էր, որ կարող էր այծի եղջիւրից կաթ կթել, այնպէս խորաքնին էր, որ ամէն մի նենգութիւնու խարէսութիւն կարող էր քննարկան ակնարկով պարզել և ոշնչացնել ամէն տեսակ կեղծւած զոկումէնտներ, ուստի սարսափը պատեց ամէն մի կարւածատիրոջ, հարուստի և կապիտալիստի որտին։ Ներկայիս Ատրպատականի զիւղակոն կալւածատէրնէրից որ մէկը նենգութեամբ, կամ խարէսութեամբ, կամ կեղծիքով և կամ բանութեամբ շէ իրացրել, չէ սեփականացրել տասը, քոան, յիսուն, հարիւր գիւղ։ Ո՞ր զատաւորի, կամ միւջթէհիդի գոնեներին, վաթուն զանգատաւորներ շնն թոլորւած, որոնցից ամէն մէկը չի ողբում իրեն հասցրած վնասների, զրկանքնեների կեղեքումների զէմ։ Որը կեղեքրւած է ազգականից, որը կողոպատած է բանակալից, որն էլ զոհ է գնացած նենգամիտ կդերի վրա տածած վասահութիւնից, որոնք որեէ կերպով յափշտակել են այդ թշւառների կարողութիւնը, չկա արդարագատութիւն, որ քննէ ու պաշտպանէ այդ թշւառների բողոքը։ Սրանց կոծից ու մոլմորից տանշւած և բորբոքւած ուրատերը վրդովւած, խաղաղութիւնից զրկւած, սկսեցին պատրաստութիւններ տեսնել գիմաւորելու և դատաւորին սիրաշ-

հելու, որ քաղցր հայեացքով նայի իրենց վրա և ներողամիտ սրտով զանցառութեան, մոռացութեան տա անցեալը: Դեռ նիդամի-Սալթանէն Ղազվին չը հասած, Թաւրիզից, Ռւբմիկց, Խօսչ-բուլազից, Մարազայից, Ըրդաբիլից և Ղաբազազից կալուծատէրների և կապիտալիստների պատգամաւորները ճանապարհ ընկան գէպի Զէնջան, ընդառաջնորու փիշիքարին, նրա սէրը գրաւելու, նորողամտութիւնը հայցելու իրենց տէրերի համար: Այս բոլոր պատգամաւորները իրենց հետ տանում էին զանազան նուէրնէր, ձի, ջորի, զորք, կարպետ, զահարէդէն, մարգարիտ, մանտանդ ոսկի հնչուն զրամ: Ինչպէս պատմում են, նիզամի-Սալթանէն մինչև Թաւրիզ հասնիլը երեք հարիւր հազար թուժանի փէշքեաց էլ ստացել, բացի զորքերն ու կարպետները. Նժոյգներն ու զարդերը: Այս նուէրները—, Բարի զալստեան զոհարերութիւնն է՝ համարում, պարագաների, պաշտօնականի անձնաւորութեան զիրքի և հմտութեան համեմատ կարող է բարձրանալ և իջնել.

10. Հիւսէին Դուլի խանը ահաւոր սիմայով էր զալիս Թէհրանից. Նրա հետն էին ինչպէս որդին, երկու եզրօրսրդիները մօտաւոր աղդականները, նոյնպէս քարտուղարները, հաշւապահները, զբագիրները, Փարաշ-բաշին (ոստիկանապետ) ախսապետը, զահիճները, բանգավետները և անթիւ սպասաւորներ: Այն նուիրարերները իրենց նպատակին հասնելու համար, պարատաւորած էին նախապէս զրաւել շքախմբի անդամներին, որպէսզի կարողանային մօտենալ Հիւսէին-Ղաւլի խանին: Այս բազմութեան մէջ կային և այնպիսի աստիճանաւորներ, զօրականներ ու կարողութեան տէր մարդիկ, որոնք իրենց հաշւով, իրենց զորքով հետեւում էին փիշիքարին, Եարգատականի այլեալ նահանգների և զաւաների կառավարչութիւնը ձեռքբերելու յօյսով: Ինչպէս նիզամի-Սալթանէն վաթսգւն հազար

թուժան վճարելով ստացել էր պաշտօնը, նոյնպիսի որոշ զոհարերութիւններով այս պաշտօնականները պիտի գնէին նըրանից գաւառապետի և նահանգապետի պաշտօնները:

11. Նախկին փիշկարը հեռանալիս, սովորութեան համաձայն, իրեն հետ տարել էր, կամ ցրւել իւր գիւտնատան բոլոր ծառայողներին, նրա վարչական ատեանները, բանար, ամէն բան գագարել էին գոյութիւն ունենալուց: Դիւանատան գործեր, արխիւ, հինգործեր ստանձնելու, յանձնելու սովորութիւնը գոյութիւն չունի այս երկրում: Որեէ պետական հիմնարկութիւն չկայ, նահանգական, կամ գաւառական վարչութիւն չկան, որոնց վարչութիւնը վերատեսութիւնը յանձնեած լինի պաշտօնակալի, այլ պաշտօնակալի անձնաւորութիւնը իւր մէջն է ամփոփում ամէն բան, բացարձակ ինքնակալ իշխանութիւնով: ԱՇ Ամիրի-Նիզամը մի բան ստացել էր, որ յանձնէ նիզամի-Սալթանէին, ոչ նրա զործակիցները կապ կարող էին ունենալ նիզամի-Սալթանէի հետ, ոչ սա որեէ կարիք ունէր նրա անւան կամ նրա նախորդների անւան գըրւոծ ֆէրմաններից և բազամներից, ոչ էլ սրա հրօվարտակը որեէ առնչութիւն ունէր նախորդների հետ: Գուցէ ընթերցողները երեակային, թէ կառավարչապետը յատուկ գիւտատուն կարող է ունենալ, որտեղ գուցէ կենտրոնացրած են բոլոր հրամաններն ու գործերը, այդ մասին կանխօրէն ըգգուցացնենք, որ սրեէ հիմնական գիւտատուն չկայ Պարսկաստանում, բացի արտաքին-գործերի մինիստրութիւնը, որտեղ գիսլումատիկական մաշմիների և այլ հպատակների վերաբերեալ գրագրութիւնները պահուում են, երբէք էլ Զանշանների ֆէրմանների ու հրօվարտակների ժողովածու, կամ որեէ քայլացիկական կողէքս չէ հրատարակւած, որով կարողնային, կամ պարտաւորւթիւն առաջնորդելու կառավարչա-

պետները: Միահնեծան շահի կողմից նշանակւած բոլոր կառավարչապետները անպայման աւստահման են, որքան որ ոյժերը ոգատէ:

12. Թաւրիդ հասնելու պէս Հիւսէին-Ղուլի-Խանը՝ կառավարչապետը, իւր եղբօր մեծ որդուն յայտարարաբեց Ասրպատականի ներքին դործերի վերտահոււշ, իսկ որա փոքր եղբօրը Ասրպատականի արդարագագատութեան տահանի ընդհանուր նախագահ: Ամրոջ երկիրը կախւած էր նայն ընտանիքի երեք անդամի կամայականութիւններից և որանց կոմքը օրէնք ու անդասնալի պատգամ էր ազգաբնակութեան համար, որոնցից գրեթէ ոչ ոք չէր կարող յանդկնիլ բարձր տահան՝ Ջանհանին դիմել, քանի որ բոլորը համոզւած էին, որ իրենց բոլորը կարդալու համար՝ փող էին պահանջելու, իսկ հրամանը գործել տալու իրենք անկարող պիտի լինէին: Նիզամի-Սալթանէի Թաւրիդ հասնելուց դեռ մի տարի էլ շանցած, նրա մեծ եղբօր որդին հանեց վրայից «լեբադէն», քաղաքացիական շորերը, հագաւ զինուորական համազեստ, ընդունելով ամրոջ Ասրպատականի գորքերի ընդհանուր հրամանատարութիւնը: Մի 30-32 տարեկան մարդ, մարէշալի համազգետով սկսեց կառավարել «Արև—Առիւծի» Ասրպատականի բանակը, առանց զինուորականութեան «այբ ու բէնի» հետ ծանօթ լինելու, իսկ նրա առաջ խոնարհում էին 60-70 ծերունի զօրականներ, որոնք զուցէ իրենց կաշինները փթացրել էին կաւի դաշտում, քամիի, անձրէի և արեի տակ, ուումբերի խլացնող որոտների և վասօղի շշմեցնող ծուխի մէջ: Այսպէս զինուորական իշխանութիւնն էլ իւրացըն և Արագատանից հետները բերած իրենց սպասաւորներին, գրադէտներին և գործակալներին յանձնեցին երկը վարչութիւնը:

13. Կառավարչապետին տեսութեան և խորհրդակցութեան կանչւեցան Ասրպատականի բոլոր նահանգապետներն ու գաւառապետները: Ոչ մի զարմանքի, կամ բողոքի աեղիք չէր կարսդ այն բոլոր փոփոխութիւնները, որոնք հէնց առաջին ամօին իսկ կատարեցան: Եյս փոփոխութիւնները նահանգապետների, կամ գաւառապետների կատարած գեղծումների, կամ նրանց երկարատե և տշալուրջ ծառայութիւնների համար չէր, այլ լոկ փող կորդելու նպատակով էր: Հիւսէին Ղուլի խանը ցանկանում էր իւր հետ բերած պաշտօնականներին ահղուուրել այս ու այն վիճակում, կամ որանց միջոցով բարձրացնել վիճակից իրեն հասանելիք նւէրները: Բոլոր նահանգապետները և գաւառապետները հաւաքւել էին Թաւրիդ, մանրամասն հաշիւ տալու իրենց վիճակի մասին և խորհրդակցելու ապագա ծրագրների մասին: Առաւօտից մինչև իրիկուն զանազան սէրթիբներ (dénérail) և Ամիրի թաւմաններ d'énéral լինունան) մօտենում էին փիշքարի եղբօր մեծ որդուն, սակարկելու այս ու այն վիճակի վարչութեան գինը և ամէն մէկը մի մի խալաթ, հրովարտակ ստանալով՝ զիմում էին իրենց նոր վիճակին: Որանցից ոչ ոք չէր կարող զժգուհի, քանի որ ամէն բան տճուրդով էր, աւելի տւողը, կանխիկ վճարողը հասնում էր ցանկութեան:

14. Թէկ նահանգապետները 3-4 տմիս առաջ, նօվրուզին (նոր տարի) էին ձեռք բերել իրենց պաշտօնները՝ վիճակները նախորդ փիշքարից ահաւոր նւէրներով, բայց անտրասունչ երկրորդ անգամ համբում էին այդ հարկը, ըջանից ետ շընկնելու համար: Նահանգներից փիշքարանները, որ վճարում էին նահանգապետները՝ վիշնքարին երկու աեսակ է, կանխիկ և ամսակտն: Կանխիկը վճարուում է պաշտօնը ստանալու համար իսկ ամսակտնը ամէն տմիս պաշտօնակալը պիտի հասցնէ կա-

ոտվարշապեաին, որքան որ մնա զործում: Կարսդ ևն նահանգապեաին մի ամսից յետո էլ պաշտօնանկ անել, եթէ արտաքս կարգի մի բան պատահի, թէի այսպիսի գէպքեր հազիւ է պատահում, այդ ժամանակ նա միայն փէշքաշը և մի ամսականը պարտաւոր է վճարել: Յայտնի բան է այս բոլորը կատարում է ծածկաբար, բայց գաղտնի չէ երկրի սովորական կարգն է, որ սրբագործւած է դարերից իվեր: Թաւըրիդ քաղաքի սոտիկանապեար, նահանգի ֆինանսական պաշտօնակալը: վաճառականական գատարանի նախագահը և սրանց կցորդները ենթարկեցան նահանգապեաների և զուտապեաների վիճակին:

15. **Փորձառու Աղմինիստրատորը** չէր կարսդ բաւականահար սովորական եկամուտներսի, նրան Թէհրանից հրահանգ էր տւած Ատբպատականը խաղաղել այն աւաղակապեաններից, որոնց կեղերումից հանգստութիւն չունէր կենդրոնական վարչութիւնը: Այս պարագան այնպիսի լայն անցք էր բացած անսահման կառավարչապեաի առաջ, որ նա լիուլի կարսդ էր յագեցում տալ իր ցանկութիւններին, փող կորզել՝ որքան որ ցանկար: Եսկ նա նպատակին համնելու համար այնպիսի միջոցներ գործածել գիտէր, որ երբէք նրան ոչ ոք չէր կարող մեղազքել: Ամէնից առաջ Նիդամի-Սալթանէն մտածում էր զաւառների յայտնի տւաղակներին կողսպաել, որոնք աներկիւզ, աղատ կեղերում էին ազգարնակութիւնը, յափշտակել էին ուրիշների անշարժ գոյքը, գիւղերը և անարգել հաւաքում էին եկամուտները: Պէտք է իմանալ, որ այսպիսի աւաղակներ չի կարելի զանել և ոչ մի երկրում, սրանք միայն նրանին են յատուկ: Այս տւաղակները ոչ միայն տուիճանաւորներ, զօրականներ են, այլ զահնշահից տիտղոսներ էլ ունեն: Կան զըրանց մէջ այնպիսիները, որ իրենց տոհմի—ցեղի առաջնորդ-

ներն են, ինչպէս Զալարեանի, Զահսէվին եայլն, եայլն, ձիաւոր գնդեր են պահում և կառավարութիւնից թոշտկ են ստանաւմ: Յանախ այդ աւաղակները իրենց ձիաւորների զնդերով իրար զէմ կուի են մղում, աւերում, տարօւմ ոտնատակ տալիս խեղճ ժողովրդի ցանքը, տունը, տեղը: Երբեմն միևնոյն ցեղի մէջ կուսակցութեան են բաժանուում առաջնութեան խնդրով և առանին ընդհարումների ժամանակ դարհութելի արիւնահեղութիւններ է կատարւում, մինչև որ մէկն ու մէկը կորպում է էլլիգի (ցեղի) զեղավարութեան դպշտոնը: Այս աւաղակապեաններին կառավարչապեանները կալանաւոյում, քամում և կրկին բաց են թողնում, որ գնան կաշին ժողովրդի վզին և ծծեն նրանց արինը: Սրանք մի քանի տեսակ օգուտ են տալիս: Նախ որ ժողովրդին այնպէս են կեղերում, որ նա ցամաք հաց հազիւ է զտնում ապրելու, որով բոլորովին նրան ստրկացնում են: Մրանց ձիաւորները պետութեան համար պատրաստի ոյժ է, երբ կարիք ունենա, օգտում է շատ մեծ շափով: Եթէ աւաղակ առաջնորդներից մէկը ապստամբում է, կառավարութիւնը միւտներին՝ քիչ թոշակ տալով, աստիճանը բարձրացնելով, տիտղոս տալով, նրանց արձակում և զարում է յանգուցն անդաւապին: Նահանգապեանների և կառավարչապեանները ամէն տարի սրանց կթում են, որը նրանց բիւզչէի նշանաւոր մտոն է կազմում:

16. Նահանգապեաններին փոփոխելուց յետո Նիգամի-Սալթանէն նորանոր հրահանգներ աւեց, որ իրենց վիճակում ապրող այս առաջակապեաի հետ ինչպէս փարւեն և ինչպէս նրանց կալանաւորելով յանձնին փիշիքարին: Նահանգապեանները իրենց վիճակը հասնելուց յետո, վճարած փէշքեաչների տեղը լցնելու համար, արդարն ու մեղաւորը զանաղանելունկութիւնը չէին կարող յանձն առնել, միմիայն աջ ու ձախ պա-

հանջում և կորզում էին, որ լրացնեն իրենց բացը։ Աւագա կապեաները իրենց վիզը կենաքօնական վարչաթեան ճանկերից աղատելու համար չէին մերժում գոհացնելու նահանգապետների համեստ պահանջները։ Այս պարագային Արդարիլի նահանգապետը Հահուէվանի առաջնորդ Խոսրովից իւր բաժինը կորզելուց յետո, նրան նենգութեամբ յանձնեց չիւ սէին-Դուլի- խանին, որը կալանաւորեց և շղթայակապ զլուրեց իւր բանտը, որաեղ հինգ վեց ամուտ տանջանքից յետո, քսանը հինգ հաղար թուման տւեց, խալաթ ստացաւ (պարգի), վերադարձաւ ծննդավայրը՝ իւրայիններին, որ նորից կողոպտէ ազգաբնակութիւնը ապագա փիշիքարի համար փէշքեաշ պատրաստելու։

17. Մեծամեծ աւագակներին զարհուրեցնելու, նրանցից պատկառելի գումարներ կորզելու, ժողովուրդին, ազգաբնակութեան սոսկացնելու, ընկճելու աենչով, իւր հառավարութեան սկզբնական ամիսներում նիզամի-Սալթանէն շատ խիստ վարւեց ձեռքն ընկած սրիկա-աւաղակների հետ, մերկ ու տկոր սճրագործների հետ, որոնք Խոյի, Մարազայի ճանապարհներին մարդիկ էին կողոպտել և սպանութիւններ կատարել։ Այս աւաղակներին թնդանօթի բերանին կապել աւեց և ցըւեց, կամ մորթուել տւեց։ Այս անգութ խսառթիւններից յետո, որոնք աղատելու համար ոչ գրամ ունեին, ոչ միջնորդ, որ կարսցանային ծախու զնել իրենց կեանքը, երբ Խոսրովին էլ այն աստիճանի տանջնց, էլ աւաղակապետներին ոչ մի խօսքով հնար չեղաւ համոզելու, նրանցից ոք անձնատուր չեղաւ, Թաւրիդ չեկաւ։ Աւաղակապետները գիշեր-ցերեկ զինւած թափուում էին այս լեսից միտօք, անտառից՝ անտառ, գիւղից՝ գիւղ և պարսիկ պաշտօնակալները երրեք չէին յաղգնիլ նրանց դիմաւորել։ Նոյն-

իսկ բանակով։

18. Այս պատճառով Ահարի-Ղարաջաղաղի հաքիմը (նա հանգապետը), համաձայն նոյն իսկ գահաժառանգի պարբերական հրամաններին, շըկաբողաւ ձեռքակալել Բահիմ-խանին՝ Հերէրիանների առաջնորդին։ Ըմբողջ տարւան ընթացքում Ղարաջաղաղի նահանգապետը մինչեւ անգամ իրեն համար բան չկարողացաւ կորզել այս յանգուգն աւազակապետից։ Բահիմ խանը, որ մի Պարսկական գénéral է, Նուսրէթ-Էլ-Սուլթան տիպոսով, Պարսկական անւանական սահմանապահ զնդի հրամանատար է Արաքսի ափին։ Սա ոչ թէ սահմանն է պահ պանում մաքսանենքերից, փախստականներից, այլ երկու սահմանում էլ ազատ աւազակութիւններ է կատարում և ըրունաբարութիւններով սպացնում ողջ Ղարաջաղաղի ազգաբնակութիւնը։ Այս աւաղակապետը յափշտակել է երեսուն-քառոսուն զիւղ, ստրկացրել է ամբողջ նոհանգի ազգաբնակութիւնը կառավարութիւնը հնարաւորութիւնը չունի որան զրոպելու։ Որա ձեռքից միշտ 30-40 գանգատաւորներ շրջապատած են իրենց նահանգապետին, Ատրպատականի կառավարչապետին, շահին, միւջթէնիզներին, բայց ովկ կարսող է զսպել աւաղակապետին։ Նիզամի Սալթանէն թէն չը կարողացաւ զսպել, կալանաւորել Բահիմ-խանին և պապկել ինչպէս հարկն է, բայց այնպիսի միջոցների գիմեց, այնքան ձիւորներ ուղարկեց նրա զէմ, այնքան զրգուեց շրջակա աւաղակութիւններին և ուղարկեց Բահիմ-խանի յափշտակած կալւածների վրա, որ աւաղակը անճարացած, Թաւրիզի իւր Սարբաֆի՛ Հաջի-Փարաջի միջոցով մի մեծ գումար հասցրեց փիշիքարին, շահնց նրա սիրաը և աղատւեց հալածանքներից։ Հաւատացնում են, որ Բահիմ խանը բանտից աղատելու, չիւտէին Դաւ-թի խանի ձիրաններում չը դոզգողալու համար, Խոսրովի փէշ-

քեաշի կրկնապատճեն է տւել, բայց մուլթ անզում կատար ւածների մասին չի կարելի խօսել, գուցէ դրանք բամբառանք լինին:

19. Բայց և այնպէս, այս չնչին գումարները շէր կարող յագեցնել նիդամի Սալթանէի ծարաւը, գիշերը քունը կարած նու ծրագիրներ էր կաղմում, որ ամէն կողմից այնպէս ծծէ, այնպէս քամէ, որ Ասրպատականցիների երակներում արեան հետքը միայն թողնէ, որ չկազմականան սթափւիր: Ասրպատականի ամենահարուստ և ամենաբարերեք նահանգը Սօուշ-թուլադն է, որ տարածւում է Կապուտան լճի հարաւային ափերից դէսի հորաւ, ուր ապրում են շիաների հակասակորդ սիւննի քրգերը: Այս նահանգի քուրդ ազգաբնակութիւնը զեռես սարկան վիճակումն է, կալւածատէրները Ասրպատականի միւս նահանգներից անհամեմատ մեծ մասն են վերցնում երկրի բելքից, հողից և հողագործի ամբողջ վաստակը ամբարում է քուրդ տոհմական բէզերի, խաների և պղաների ամբարներում: Ասրպատականի կառավարչապետի գլխաւոր եկամուտը զոյանում է այս նահանգից: Նիդամի-Սալթանէն իր տեղի ու անտեղի հրամանագրով և կարգագրութիւններով սկսեց ճընշել Սօուշ-թուլադի կալւածատէրներին, որոնք արտակարգ վճարումներից անշափ բօրբաքւած՝ բողքեցին նահանգապետների դէմ: Երբ բաւարարութիւն շատացան, յուզումը սաստկացաւ, քուրդ աղայականները, խաներն ու բէզերը արդէն վաղ զգացել էին իրենց լժի ծանրութիւնը և վաղուց մատածում էին եղջիւրները ցոյց տար:

20. Քիւրդերը երգմամբ միաբանեցան: Ղազի-Փէլթանի և Ղաղբ-աղայի առաջնորդութեամբ մի դրաւոր առաջարկ արին Պարսկական կառավարութեան՝ նիդամի-Սալթանէի միցցով, որով ձգտում էին սահման դնել անսահման դատաւոր-

ների ընչափաղց կրքերին: Քուրդ աղայեանները պահպանելով իրենց անսահման, ինքնակալական իրաւունքները իրենց աայաթի վրա, յինեւելով Պարսիկ կառավարութեան՝ կեղեքում են զարհութելի կերպով այդ լիզւանի անասուններին (քրգերի աղայանները սայաթին այսպէս են անւանում), բայց չէին զիջանում, որ կալւածատէրներին էլ համանման սիստէմով կողապաէ: Պարսկական իշխանութեան ներկայացուցիչը՝ հաքիմը: Յայանի բան է, Պարսիկ կառավարութիւնը անպայման հպատակութիւն պահանջեց կալւածատէրներից: Թէ վարչութիւնը և թէ քրգերը տատանուում էին զէնք բարձրացնելու և խռովութիւնը սաստկացնելու: Քիւրդերին գոհացնելու համար փափոխեցին նահանգապետներին: բայց զուր, անմուռնչ կուրը չարունակում էր, անապահովութիւնից Սօուշ-թուլադի բագարը կապւած էր ամիսներով, ժաղովուրդը քաղաք շէր գալիս, իսկ կալւածատէրները առանձնացած իրենց կալւածները կամ զէնքերն էին կարգի, սարգի զցում, կամ խորհուրդներ էին կատարում: Նիդամի-Սալթանէն բոլոր ձիքքը գործազրեց, քուրդերից պատզամաւորներ պահանջեց, նրանց առաջարկութիւնները գոհացնելու խռովութով: Թաւրիզում ամէն խորսամանկութիւն զործ դրեցան և սրանց իրարից բաժանեցին, Ղազի-Փաթահին կալանաւորեցին՝ աքսորեցին: Թէ հրան, միացեալներին ցրւեցին: Նիդամի-Սալթանէն այսպէս նրանց մէկ-մէկից հեռացնելուց յետո, ձեռքն ընկած կալւածատիրոջ վետրեց և ճանապարհեց: Պարսիկ կառավարութեան դիմաւոր գործիշների երկրում խազաղութիւն պահպանելու ամենաղլխաւոր զէնքը կալւածատէրներին կազոպակին է, նրանց պարտքի տակ ընկճելով աւելի լաւ են սարկացնում, քանիթէ զէնքով ու մահով:

21. Բայց նիդամի-Սալթանէն նպատակին չհասաւ, քանի որ

Թէհրանից՝ կենտրոնական վարչութիւնը, գժգոհ Սօուշ-բռւլաղի խլրտումներից և Նիզամի-Սալթանէի ընթացքից, զուրս հանեց նրա իշխանութեան սահմանից Սօուշ-բռւլաղի նահանգը, այնտեղից ուղարկեց Մուզաֆէր-Միւլքին՝ նահանգապետ, որին արտած իրաւոնքները—արտօնութիւնները բալորովին շէզոքացնում էին Ստրափատականի կառավարչի գերիշխանութիւնը: Ընկաւած, յուստիաբ քուրդ կալւածատէրները իրենց կեանքը, զաքը վիճելու աննշավ ոչինչ չխնայեցին Մուզաֆէր-Միւլքից, որպէսզի վաստերով ապացուցանեն իրենց հրա հաղատակութիւնը: Խոկ Մուզաֆէր-Միւլքը իւր տարի ու կէսւա նահանգապետութեան ընթացքում կորզած հարիւր հազարներից ոչ մի մաս չաւեց Նիզամի-Սալթանէին, և ինչպէս սրամում են շատ չնշին բաժին էր հասցրել Թէհրանի իր պաշտպաններին: Այս պարանութիւնը այնպէս էր վրզովի նի զամի-Սալթանէին, որ նա մի քանի անդամ ուղղից հրաժարականը, բայց Թէհրանի վարչութիւնը նրան չէր ուղաւմ տեսնել իւր շրջանում և մաքառել զրա կուսակցութեան դէմ:

22. Երբ նահանգական վարչութիւնները կարգի զրեց և կարնոր հրահանգները տւեց, Նիզամի-Սալթանէն սկսեց անձամբ քննել, միջամտել և հմտութեամբ ուսումնասիրել կարածական խնդիրները, կալւածատէրների և որանց կայքերի յափշտակողների մէջ: Այս անվերջանալի վէճերն այնպիսի ահաւոր եկամուտի ազրիւր է մարզւած և հմտա վականի ձեռքում, որ սա կարող է նահանգական վարչութիւններից ստացւած զումարների քառալպատիկը հասցնել կառավարչականի: Թէկ առակ է զարձած Ստրափատականում, թէ «չկա գիւղ, որին տիրէր իսկական տէրը կոմ ժառանգը և շկա կարւածտակը, որ իւր ձեռքում զտնւած կարւածքը յափշտակած չը լինի», բայց այս առածը եթէ բառացի ճշշ-

մարիտ չէ, ճշմարտութիւնից էլ այնքան հեռու չէ: Ներկայիս Ստրափատականում կան այնպիսի կալւածատէրներ, որոնք 100-150-200 գիւղ ունին, որոնք իրենց ծնողներից կամ մի և կամ կէս գիւղից աւելի շեն ժառանգել, որտեղից են իւրացքեր, ուկականացքեր այդ կալւածները: Եթէ քննելի, եթէ հնարաւոր լինի արդարութեամբ զատել, շատ յափշտակիշների գիւմակը պիտի պատառուի և շատ սրբացած մոլլաների ստափանայտական ճիբանները պիտի երեխն: Մինչև անգամ «վազը ֆները» ջնջւել և սոսկ կալւածներ են դարձել, չնորհիւ ազան միւջթէնիպների ապօքինի վճիռներին, որպէսզի կարողանան այզպիսի «վազը ֆները» յափշտակիւ և իւրացնել: Գիմիւլիկների Զանիւրեի 370 գիւղերից՝ որոնք մօտ երկու հարյուր տարւան «վազը ֆ» են, այսոր միայն 12 կասր գիւղ է մնացել «միւջթէվէլինների» ձեռքը, որոնք զուցէ 5-10 տարի յետո այլևս գոյութիւն չեն ունենալ, այնինչ «գուրանսվ» և «հազիսով» յատուկ հբամաններ կան, որ «վազը ֆը» շի կարելի ծախել և շի կարելի յափշտակիւ ժառանգութներից, մինչև Մէհթիի յայտնութիւնը: Եթէ եզր, նազարբէզեանների և Զարգարեանների «գիւանիտանէսվ» հաստատւած պայմանագրերը չը լինեն, վազուց այդ 12 կասր գիւղն էլ «վազը ֆից» զուցս զցւած և խաները, կամ մոլլանները յափշտակած էին ինչպէս յափշտակիւ են 360 կասր գիւղերը:

23. Կարւածների յափշտակութեան վէճերը կարելի է բաժանել երեք ձեիւ: Ա. Մի որեէ կալւածատիրոջ աւժեղ ժառանգը խրացում է կալւածները և զրկում միւս եղբայրներին, քոյրերին և մայրերին: Այսպիսի ժառանգութները անձարացած, երբ հնար չեն զտնում արդարութիւն ձեռք բերելու, յուսահատութիւնից տանում ծախում են իրենց բաժինը կամ զօրաւոր խանից պաշտօնականի և կամ մի յայտնի մոլլայի:

Այսպիսի գէպքերում ընկհանրապէս ծախողներին խոստանում են վճարել, երբ կալւածքին տիրանան, բայց մինչեւ տիրանալը այնքան ծախսեր է լինում, կամ զնորդների խղճանքը այնքան լայն է լինում, որ կալւածքը ետ ըերելոց յետո մոռացւում են խոստումները և զրկւածները կողոպտել են տալիս իրենց հարազար զրկողներին։ Զօրեղ կալւածատէրները որիէ կերպով մի կալւածքից մաս են զնում, այդ կալւածքի ժառանգորդներից մէկի բաժինը, կալւածքում այնպիսի զիրք են բոնում, ույաթի հետ այնպէս են վարում, որ մնացորդ բաժնի աէքերը կամ շատ չնշին զնով ծախում են իրենց բաժինը և կամ դատից ու դատաստանից յուսահատուծ, մերժուած՝ ձեռք են քաշում և կամ ուղղակի զբանից իսպաս հեռացնում են իրենց բաժնից զօրեղները և յափշտակում կալւածքը։ Բ. Որիէ կալւածք յափշտակելու համար ուժեղ կալւածատէրները՝ խաները, կամ մոլաները այդ կալւածատիրոջ անակնկալ այնպիսի տուգանքի են մաքնում, որ նա սպարտաւորւած 3—4000 թումանով կալւածքը կամ նրա մասը թիշարթ է զնում (պայմանական-զբաւական) և ժամանակին. օրին փողը չը վճարելով, կամ այնպիսի արգելքներ են բարձրացնում, որ չեն ստանում և զնում տիրում են կալւածքին պայմանաժամկետ լրանալոց յետո։ Ամէնից շատ այս միջոցավ են կալւածներին տիրանում մեծ կապիտալիստները և մոլաները։ Գ. Զօրեղ խաները, որիէ վիճակի դինորսական, հեծելազօրի սահմանապահ և կամ նահանգապետները բոնութեամբ յափշտակում են և մի տարի, երկու տարի եկամուտներին աիրելոց յետո. այլես փոքր կալւածատէրները, կամ թոյլերը չեն կարողանում ետ ստանալ նըանցից իրենց կալւածները։ Այս ընթացքով Սուլէյման-խանը Աֆշարը իւրացրել էր Աֆշարի գաւառի կեսից աւելին, Խոսրովը Մուղանի

մէջ ահաւոր կալւածներ ձեսք բերել, ներկայիս Բահմիմ խանը իւրացրել է Ղարադաղի կէսից աւելին, Ալի-խանը՝ Մաքուն և ուրիշները Քիւրդիստանում։

24. Նիղամի-Սալթանէն այսպիսի գանկատների առթիւ խնդրազրեր էր ընդունում, իսկոյն կարգադրութիւններ էր անում, հրամաններ էր արձակում նահանգապետներին՝ զործերը քննելու և արգարի իրաւոնքի պաշտպան հանդիսանալու։ Յայտնի բան է, այսպիսի հրամանների համար Նիղամի-Սալթանէն բաժ չէր վերցնում, բայց նրան շրջապատզ պաշտօնականներին՝ նահանգապետներին ճարպի բաց չէին թողնում խնդրատուններին։ Նահանգապետները ճարպի զբանները և արգարութիւնը սակարգում։ Յայտնի բան է, ծանրակշիռ նէլքներ՝ հնչուն զբամ համրովները միշտ յաղթուակում էին, իսկ գանկատուորների ահաւոր տանջանքով և որոշ ծախսեսով զուրս բերած հրամանազրերը յաճախ մնում էին մեռած տաս, քանի որ յափշտակողները շխայտակելու համար զբաւած կայքերի եկամուտներից շադրագ բաժինը զցում էին պաշտօնակալների ատամների տակ։ Նիղամի-Սալթանէն գերասանի նման նուրբ զիմախաղերով այնպէս էր ձևացնում իւր արգար զայրութը անհնազանդ նահանգապետների մասին իրեն բողոք ներկայացնողների առաջ, որ անփորձ օտարականը շատ զիւրին կերպով կարսղ էր խարւել, թէ կառավարչապետը երբէք համախոհ չէր կարսղ լինել այդ անիրաւ նահանգապետների հետ, այն ինչ բոլոր մանրամասնութիւնները նրան զեկուցանում էին բողոքազների վեցարձից շատ առաջ և ստանում կարեւը հրահանգները։ Եթէ բողոքազները ուժեղ անձնաւորութիւններ էին լինում, կամ հակառակորդի խոստման կրկինը զարպելու յօժարանում էին, այդ ժամանակ կառավարչապետը նորից

հրամանագիր էր գրում, նախատում էր ըմբռոս նահանգապետին և նրա մօտ ճանապարհում խնդրաաւին, վերջինիս ձեռքը յանձնելով կարեոր կարգադրութիւնը կամ հրամանագիրը, սրոնք նախկին հրամանագիր նման անգործութեան զատապարտելուն երբէք կասկած չունենալով։ Նիզամի-Սալթանէն երբէք յատուկ պաշտօնակալներ, յանձնակատարներ չեր ուղարկում զանազան նահանգներ, նա ամէն զործ կատարում էր նահանգապետների միջոցավ, որով վերջիններս աւելի սերտ կերպով կապում էին իրեն հետ։ Այն ինչ Պարսկաստանի մէջ այսպիսի գործերը զլիաւոր կառավարիչները քննում, վճռում են առանձին յանձնակատարների միջոցով։

25. Նահանգապետներին իրենց վիճակներում անսահման արտօնութիւններ տալիս և զործ յանձնելիս, պայմանաւորում էր, որ նրանք մասնաւոր հրամանագրերի վրա ուշք չը դարձնեն, այլ վարւին ամէն չարաթ ուղարկուած հրահանգների համեմատ։ Խղճալի զատավարները զայրութից և յուսահատութիւնից չէին կարողանում բացատրել, թէ ինչ պատճառով նահանգապետները ոչ միայն իրենց կառավարչապետի անմիջական հրամանները չէին զործագրում, այլ նրանք կամքի հակառակ մեքենայաթիւններ էին սաբրում։ Յաճախ Թէհրանից՝ կենարոնական բարձր իշխանութիւնից հրօգարտակներ էին բերել տալիս անարդարութեան և զրկանքի մասնւածները, որոնց ձեռքում գտնւած մինիստրակոն, Աթարէկ ազամի և բարձրագոյն հրամանագրերն ու ֆէրմանները դարձեալ նոյն մեռելութեան էին զատապարտում։ Այսպիսով մի քանի տասնեակ տարիներով զատ վարսդները, նորանոր հրահանգներ և վճառներ ձեռք բերողները, տուանց նպատակի համելու, ընկճում, մասնկանում, յուսահատութիւնից կաթւածի և թարկում, իսպառ մոռացութեան տա-

լով իրենց դատը—վէճը, առանց վերջնական վճռի կամ ցանկութիւններին հասնելու։ Եսկ նահանգապատեանները յափշտակիչներից ամէն տարի կորզած կաշառ վէշքեաշը բաժանում էին կասափարչապետների հետ։

սրաբէտի իրենք քննեն ու հաշաեցնեն բողոքովին իրենց թեւարկեալի հետ:

16. Քիչ թէ շատ գատարանի և զիւանատան նմանութիւն ունեցող մի հիմնարկութիւն եթէ կա Պարսկաստանում, այդ բարգուզարարն է, (աբտաքին գործերի մինիստրի բաժանմունքները ամրող Պարսկաստանում կոչւում է քարգուզարաթ), որոնց նահանգական և գառառական լիազօր գործակալները կոչւում են սերփեւս: Թուրքմանչայի վաճառական գաշնագրի գորութեամբ Պարսիկները պարտաւորւցան պիտութեան գլխաւորքնահներում գատառանական բարձրագոյն դիւանխանեներ հիմնարկելու, որանց յատակ մատեաններում արձանագրւում, հաստատւում, պահպանում են մուլհակների, պայմանագրերի, զբաւագրերի, կալւածագրերի պատճենները, քննեւում և վաւերացւում են վաճառականների ներկայացրած մատեանի գրքերը և իհարկին տրւում են պատճեններ և վկայագիրներ: Վելոյիշեալ գաշնագրի գորութեամբ այս հիմնարկութեան մէջ արձանագրւած և վաւերացւած ամէն մի փաստաթուղթ. անժխտելի ապացոյց է, որը չի կարելի ներքել վկաների ցուցումավ: Այսաեղ հաստատւած փաստաթուղթերը վաւերացնում են նոյնպէս իւրաքանչիւր օտարականի կօնսուլատները, որոնց գործագրութիւնը անպայման պահանջում են զեսպանատները և պարտաւորեցուցիչները, նոյնպէս պարսկական պաշտօնակալութեան համար:

17. Խոլամի և քրիստոնէի, պարսկաստանի և օտարականի բոլոր գործերը քննեւում և վճռուում են բարգուզարարներում, օտարականի կօնսուլատի լիազօրի ներկայութեան: Դատարանում թէկ գործը քննեւում են քարգուզարաթի անդամները, կօնսուլի լիազօրի հետ, որանց մասնակցում են նոյնպէս Պարսկական և օտար վաճառականների ներկայացուցիչները,

բայց վերջնական որոշումն ու վճիռը տալիս է քարգուզարը: Այս վճուին եթէ համերաշխ չէ կօնսուլատի լիազօրը, նա իւր վէտօն դնում է, վճիռը մնում է անզործազրելի, մինչեւ արտաքին գործերի մինիստրի զիւանատունը զեսպանատան լիազօրի ներկայութեան երկրորդ վճիռ կայացնելը, որի դէմ վճուարեկ բողոք չի կարելի ներկայացնել, եթէ գեսպանատունը համակերպել է, համաձայնել է Պարսկական վճուի հետ: Սյս պատճառով քարգուզարները միշտ թէքւում և կօնսուլների արամագրութեան համաձայն են սրոշում կայացնում, որպէսզի իրենց վճուի դէմ չկարսղանան բողոքել և քանզի տալ, զեսպանատունն էլ ստանամ է համարեա իրեն ցանկացած վճիռը, եթէ կամք ունենա վճիռ ձեռք բերել: Մանաւանդ Պարսկական պաշտօնականները անչափ ագէա են, օրէնողրութիւնից ոչինչ չեն հասկանում, իրենց մեծաւորների վրա փատահութիւն չունին, քանի որ ախոյեանները առթի են սպասում, որ կօնսուլների բողոքի համաձայն դրանք պաշտօնանկ լինեն և իրենք նրանց տեղը բռնեն: Այս նպաստաւոր պարագաները կօնսուլներն ունենալով, գարձեալ պարսիկ պաշտօնեանների խորամանկ հնարքները նրանց ծուզակ է գուրսում և օտարականների իրաւունքը վշացնում են, մանաւանդ չնորհիւ անընդունակ և թոյլ կօնսուլների:

18. Քարգուզարաթը կամ արտաքին գործերի մինիստրի զիւանատունը, որանց քննեւում է, վճռուում օտարանզատակների պարսկահպատակների հետ ունեցած գանկատները, ոչ թէ զատարան—իրաւարան է, այլ մի մրցաւան, ուր պարսիկ խորամանկ պաշտօնականները ամէնք չանք գործ են զնում, որպէսզի կարսղանան վշացնել օտարականների իրաւունքը—պահանջը, իսկ օտարականների կօնսուլատի ներկայացուցիչները ոքնում են իրենց հպատակների որահանջները ապա-

յուցել, հաստատել և ստանալ։ Այն քարգուղարը միայն կարդ է երկար ժամանակ վարել իւր պաշտօնը, սրբ կարողանում է կօնսուլատների անդամներին սիրաշահնել, խարել, կուրացնել, սխալացնել և օտարականների գանկատները կաշկանդել, կամ վչացնել։ Եթէ կօնսուլատի անդամները իրենց կոչման բարձրութեան վրա կանգնում են, պարսիկները պարտաւրում են բարդած զործերը աւելի ձգձգելու համար շուա քարգուղարները, կամ սէրֆէրէստները փոփոխելու, որ դոնէ ժամանակ շահին և ապագա պատեհառիթի ըսպասեն, որպէսզի պարագաներից կարողանան օգտւել։ Նենդամիա քարգուղարները դատաստանական գործերը այնքան ձգձգել են, որ այսօր Յարգատականի Ռուսական կօնսուլատում վեց-եօթ հարիւր գործ է կուտակւել մի քանի միլիոն պահանջի, որոնց վճահատութիւնը պարսիկների նենդամիա պաշտօնականները և կօնսուլատի ձրիակեր շինովնիկները թողել են Մէհթիկ վերագրածին, որ գա ու վճռէ։

Կան այնպիսի գործեր, որ 1870 թւականից մինչեւ այսօր հերթի են սպասում, բայց աշ քննուում են և աշ էլ ուշադրութեան արժանանում։ Խորամանկ քարգուղարները կօնսուլներին հաճոյանալու համար, նրանց խոսիւ պահանջած գործերի վճիռը խստանում են արագացնել և վերջացնել այն պայմանով, որ միւս գործերը առժամանակ ետաձգւին, ձգձգւին և առաջ չգան մինչև իրենց պաշտօնանկանութիւնը։ Այսպէսով նոյն գործերը, որոնց աէրերը հաճելի են եղել կօնսուլատների ծառայողներին մի քանի ամսում վճռւել, պործել և գոհացում տրեւ են, իսկ այն գործերը, որոնց աէրերի գէմքերը ահած են եղել կօնսուլատի ծառայողներին, ձգձգւել, ետ են մնացել 20—30 տարի և այժմ էլ հնացած գործերի դասը գլուխած արժանի չնն համարւում քննու-

թեան առնելու։ Պարսկաստանում ժամանց (десятилѣтная давиость) շկա:

19. Պարսկահարատակների օտարականների վրա ունեցած պահանջները շատ շուա են վճռւում և գործադրուում։ Կօնսուլները և աշ իսկ մի շարաթ ժամանակ կտան իրենց հպատակներին պարատարութիւնները վճարելու, այնինչ օտարականների վճռւած պահանջների գանձուումը տաս—քսան տարիներ են առնում և յուսահատութիւն պատճառելով մոռացութեան են տրուում։ Քարգուղարները իրենց այս ագեղ վարմունքի համար պարծենում են իւրայինների շրջանում իրենց գիպոմատիկական նենդամտութիւնով և պոլիտիկական խորամանկ ընդունակութիւնները չատագովելով։ Օտարականի գործը յափշտակելը, պահանջը վշացնելը, կօնսուլներին խարելով գործերը ձգձգելը մի վեցին աստիճանի զոշադուրին է քարգուղարի համար, ինչպէս սարի գլխի աւաղակը կողոպտում է ճանապարհորդին։ Պէտք է խոստավանել, որ ընդհանրապէս այս խորամանկ ու ներքնագործ քարգուղարները ծայրանդ անկիրթ, ագէտ ու ապիկար են։ Եթէ կօնսուլներից մէկը ցանկա որեւէ քարգուղարի վրա ճիշում գործ դնել և կտմ անկեզծ ցանկութիւն ունենա խճողւած գործերը վճռել տալ և պահանջները գանձել, նա կտրող է նպատակին հասնել և շարաչար պատժել տալ քարգուղարներին։ Այսպիսի մի ինքնարաւական քարգուղար, որ իւրայինների շրջանում պարծենում էր, թէ կօնսուլին ստրկացրել և իւր դաւակների սափեշի պաշտօնին է (դալլարի) արժանացրել (որովհեան կօնսուլը երբեմն երբեմն խուզում էր քարգուղարի երեխանների մագերը), երբ թէ էֆօնի ձայնն էր լուսում, թէ կօնսուլին ուզում է նրան այցելել, ամբողջ ութ-տաս ժամ հոգեկան խաղաղութիւնը կորցրած մտածում էր, թէ արդիօք էլի ի՞նչ

նոր հրամաններ պիտի արձակէր կօնսուլը։ Այս մտաբանքից այնքան էր բորբոքում, որ մոռանում էր խօսքն ու գրութիւնը և բարկութիւնից եղունգները կրծում էր։

20. Սրանից երեք տարի առաջ (1904 թ.) Սարպատականի Ռւբմի նահանգում Մէկդները սիսկալով, ինչ որ Ռմելիկացիքարոզի գէմ, նրան սպանել տւին Սալմաստի ճանապարհին։ Անգլիական կօնսուլը Ամերիկայի Միացեալ նահանգների լիազօրի պաշտօնով խիստ քննութիւն րացեց և ապացուցեց որ այդ ոճիրը կատարւել է Մէկդների սխակալութեամբ։ Ռւբմի նահանգապետը թոյլ էր հետեւում գործին, իսկ Ռուբատականի փիշքարը հովանաւորում էր Մէկդներին, որոնց պատճելու հակամէտ էր կառավարութիւնը։ Քարգուզարը ուղղում էր խաղացնել կօնսուլատին և զործը ձզձկել։ Բայց Ծնգլիական կօնսուլը Պարսիկ պաշտօնակալների ձեռքը խաղալիք և ծաղրի առարկա գաւնալու երեք շէր զիջել, այնպիսի դիրք բռնից, որ Թէհրանի դեսպանատունը խիստ միջոցների դիմեց, Մէկդներին կալանաւորել տւեց Զահնշահի յատուկ հետագրներսկ, Թաւրիկ առանձին հրովարտակով պաշտօնակալ եկաւ, Գահաժառանգից և Ռւբմիայի նահանգապետից յիսուն հազար թուման (90,000 բուք.) տուգանք առաւ յօդուտ սպանութիւնիքին։ Դեռ սրանով չբաւականացան, որոշեալ օրը պաշտօնակալը զբամը բանկին հասցրած չլինելու պատճառով, Պարսկական ծոցի Բուշիր նաւահանգիստը զբահակիր էին ուղարկել, որի արաւակարգ ծախսերն էլ ստացան Պարսկական կառավարութիւնից։ Աղա ստիպեցին, որ չարգործին Թէհրան ուղարկեն և առաժանակիր աշխատութեան պատպահեն։

21. Այս թւտկանին Սարպատականի նահանգներում հօթը ոռուսհապատակ գաճառականներ սպանեցին Մարտանի

ճանապարհին, Ղարազագում՝ Խոյում և Ռւբմի քաղաքի հրամարակում ցերեկով։ Այս սպանութիւնների մասին ոռուսական կօնսուլը քննութիւնները բացանել աւեց և պարսիկներից պահանջից պատժել չարգործներին և բաւարարել նրանց ընտանիքին։ Սպանւածները բոլորն էլ ոխակալութեան էին զոհւած և չարգործները համարձակ ման էին դալիս։ Պարսիկ նենդամիտ պաշանականները ոչ միայն պաշտպանեցին շարագործներին, ոչ միայն որիէ զրօշի բաւարարութիւն չտվին սպանւածների ընտանիքին, այլ համարձակ և յանդգնաբար ծաղրում էին Ռուսական կօնսուլատի պաշտօնականներին։ Այն կօնսուլատը որ գաթուուն տարի ակնածութիւն էր վայելած, չնարհիւ մեղկ ու ապիկար պաշտօնականների, արհամարհանքի ու ծաղրի էր մատնել։ Աարբապատականի քարգուզարը, որ առերես կեղծ բարեկամութիւն էր պահպանում կօնսուլատի շինովնիկների հետ, անվերջ նըրաւէրներ էր տալիս, կերուխումի ընկերակցութիւններ էր կաղմում, պարսիկ խաների և վաճառականների շրջանում պարծենում էր, թէ ինքը իւր նուրբ փոլիքիքույով մի մի բաժակ վօդիկայով բաւականացրեց Ռուս չինունիկներին և եօթը սպանութեան գործի համար շթուկեց, որ պարսիկները եօթը շահի տուգանք վճարեն։ Փոխանակ իւր նման խորտմիտ և կեղծաւոր պալիտիկոսներին յանձնելու երկրի արարքին գործերի մինիստրի պօրտֆէոյը—սադրը, կառավարութիւնը պորտարոյժներին է թողել պետութեան քաղաքականութեան զեկը, որոնք մի մուրտարի արիւնի համար յիսուն հազար թուման փող գուրս տւին մեր հարստութիւնից։ Այսպիսի խօսքեր այնքան էր կրկնել, որ Թաւրիկի թէյարաններում Մէշէզիներն էլ ջատագովում էին քարգուզարին։

22. Ինչպէս ամեն վարիչ, քարգուզարներն էլ տարեկան

որոշ վճարով են դնում իրենց պաշտօնը: Ատրպականի քարգուղարները բարաքին զործերի մինիստրին տարեկան 5—6 հազար թուժան հարկ են վճարում իրենց պաշտօնը ձեռք զցելու համար, բացի անուղղակի նույներից, որը ուղարկում են ինչպէս մինիստրին, նրա օգնականներին, նոյնպէս սաղբազմին ու պաշտօնակիցներին: Մեծամեծ զործեր կարգաւորելու դաշտեալ բաժին են հասցնում ուղղակի զործից: Պետական գանձարանից քարգուղարներին էլ ոսճիկ չեն տալիս, միայն Ատրպատականի քարգուղարը վեց հարիւր թուժան ըստանում է, որ ճաշ տա պաշտօնականներին և զրագիրներին: Քարգուղարը վճարում է դիւնատան քրէն մօտաւորպէս հազար թուժան: Ծառաներին, խօհանոցին, ախոռապանին, կառապաններին, ձիերին և սրանց կերը առնւազը հինգ հազար թուժան: Հրաւերներ դիպլոմատիքական շրջանին, նույներ, սէիզներին, ֆարբաշներին և գահաժառանդի սպասաւորներին տարեկան ոչ պակաս երեք հազար թուժան: Ընտանիկան, զաւակների կրթութեան և ուրիշ ծախսերի հետ միասին քարգուղարը տարեկան ելք ունի առնւազը քսան հազար թուժան (մօտ 35,000 բուրլի), բացի այն գաղտնի և արտաքս կարգի փէշքեաշները, որ նա վճարում է մեծամեծներին թաւրիզում, թէհանում, Քէրբէլայում, Մէշէզում, որպէսզի դիրքը բարձրացնէ, գոյութիւնը պահպանէ և անդունեցը շգլորւի: Այս մութը վճարումները կարելի է նոնթագրել, որ սովորականից պակաս չէ, որոնք խնայողութեամբ կատարողը շարաշար կիսալի, անարնակ խաների գասը կանցնի:

23. Յայտնի բան է այս բոլոր ծախսերը վճարում է քարգուղարը, որպէսզի տարեկան մի զգալի շահ ստանա, նա ձրի չի ծառայում, հայրենասիրութիւնը չի զրդում նրան զօհողութիւններ կատարելու: Մատրիք հաշիւը այնքան գաղտնի է,

որ զրա մասին զրական բան չի կարելի տաել, բայց ինչ նրկաների է, ինչ կարելի է ականջից ականջ լոել առանց փաստերի, նոյնն էլ զերպահութեամբ կարելի է ընթերցազին ուսամել, որոշ գաղափար կազմելու համար: Ատրպատականի քարգուղարն է նշանակում նահանգների սէրփէրէսաններին. Արտարիլ, Սալմաստ—Խոյ, Ռեմի, Մարզգար, Սունչ-բուլազ և Սարգաշտ: Այս սէրփէրէսանները ստացած պաշտօնների համար կանխավճար տալիս են ամէն տարի—փէշքեաշի ձեռվ մօտաւորպէս 3—4 հազար թուժան և ամսավճարով տարւարնթացում 7—8 հազար թուժան: Աւրեմն Ատրպատականի քարգուղարը անխախտ եկամուտ ունի 10—12 հազար թուժան: Աբարո կարգի գաղափառանական գործերից կամ ոճագործներից քարգուղարներին մաս հասցնում են սէրփէրէսանները տարւարնթացում աշ պակաս 3—5 հազար թուժան:

24. Թաւրիզում քննիւած գանգատներից քարգուղարն ըստանում է տասը տոկոս պարսկահպատակներից և հինգ տոկոս օտարականներին վճարւած գումարներից: Եթէ պարսկահպատակը պարտաւորում է վճարել օտարականին որևէ զամար, կօնսուլտացից այդ գումարի 5% յանձնում է քարգուղարին զատաստանական հարկ, եթէ օտարականից յօդուապարսկահպատակի օգտին փող է գանձում, քարգուղարն ըստանում է 10%: Եթէ քարգուղարը կարողանում է պարսկահպատակին ազտակը օտարականին վճարելիք պարտաւորութիւնից, նա կանխավճար ստանում է 10% և զործի աւարտից կրկին 10%: Պարսկահպատակները որպէսզի ազատւին օտարականներին վճարելիք պարտաւորութիւնից, որոնք յանձնալու առաջ տոկոս էլ զործավարութեան ընթացքում են վրձարում, որպէսզի կամ ձգձգէ զործը և կամ իսպառ աղատէ: Եթէ ի նկատի առնենք, որ անշափ մեծ գանգատաներ է մըտ-

նում քարգուղարի զիւանատունը, այդ աեղ տարւա ընթացքում տռնւազը հարիւր հաղար թումանի զործ է վճռւամ, այն ժամանակ հնաբաւոր կլինի ըմբանել, թէ լինչ մեծ զումար է մտնում քարգուղարի զրպանը:

25. Ճշմարիտ է, որ շահնշահի միահեծան իշխանութեան տակ քարգուղարն էլ իւր զիւանատան հասոյթի միահեծան տէրն է, բայց հիմնարկութեան միւս ծառայողներն էլ օգով շեն կերակրում, կամ «միւֆթ» շեն աշխատում: Քարգուղարաթի մէջ կան 3—4 ծառայողներ, որոնք տարեկան 2—3 հաղար թումանի բիւդչէ ունին, քսանի շափ զբագիրներն էլ տարեկան ամէն մէկը հինգ հարիւր թումանով հաղիւ ապրին: Յայտնի բան է այս գումարն էլ զուրս է զալիս զանգատարեների և պատասխանատունների զրպանից: Քարգուղարը պահում է տասնից աւելի փիշխոդմէթներ (սենեկապան), որոնք յաճախ զանգան զաւառներ են զնում զործով, կամ դաշտաբանից խոյս տւողներին բանելու, բերելու, կամ վճիռները գործադրելու: Սրանք իրենց եկամուտով ոչ միայն ընտանիք են կերակրում, այլ քարգուղարին և պաշտօնականներին բաժին են տալիս, որ իրենց յանձնւի այդ պաշտօնները: Տասնից աւելի մանկլաւիկ է պահում, որոնք զիւանատան ծառայութիւններն են կատարում, թէյ, սուրճ, կալիոն են մատակարարում և խռովարում են այցելուների զրպանները: Սրանց շշահողը ոչ նստելու տեղ կգանի զիւանատանը, ոչ էլ մի բաժակ թէյի կարժանանա հակառակորդի ներկայութեանը: Այս մասին թուրքերն այնքան բծախնդիր և մեծասիրտ են, այսպիսի մի արհամարհանք նրանց համար հայնուանքից ծանր է, նախատինքից նւաստացուցիչ: Հապա քարբառշները, զանտպանները, պարտիզանները, մատակարարը, զալիքաջին, զանկատառը շւարում է, չզիտէ որ մէկին վճա-

րէ, որին յիշէ: Խնդրում են ամեն կողմից, պահանջում են աներեսաբար, կորզում են բառնցքի հարւածների տակ և մերկացնում են անողորմաբար: Վայ պարսկահպատակին, որ ընկնում է որանց ճանկը և թշւաս է այն ողորմելին, որ հովանաւոր չտնի: Պարսկահպատակից վրէժ լուծելու ամենապլիսաբ միջոցը նրան քարգուղարի ֆարբաշ-բաշուն յանձնելըն է, ոչ մի խոհարար չի կարող այնպէս մաքուր փետրել ճանկում բռնած մորթած սագին, ինչպէս ֆարբաշները թեպում են կենդանի մարդուն:

26. Թէկ ձգւում է—երկարում է յօդւածը, բայց միայն իրական օրինակները կարող են տւելի պարզ ներկայացնել կենդանի պատկերը, ուստի տւելուրդ շենք համարում երեք օրինակ ես պատմել:

ա. Սրանից հինգ տարի ասած կ. Պօլոսցի մի վաճառատան գանկատը մտաւ քարգուղարաթ, որը թաւրիպեցի մի մոլլայի ժառանգներից մանուֆակտուրային ատրանքից մնացորդ հաշիւն էր պահանջում շուրջ տասը հաղար լիբա, 90,000 բուրլի: Քարգուղարը սկսեց տրօսել մոլլայի ժառանգներին, սպասնալ և գումարը պահանջել: Նրանք սւրանում էին պարտքը, ուրանում էին ստացած ապրանքները և ունեցած զբաւոր յարաբերութիւնները: Մոլլայի ժառանգներից զժւար էր փող պոկել, ուստի առաջին շորս հինգ մոլլայի բռնում քարգուղարի մօտ հաստատեց, թէ այդ համակները, ապսպրանքի թղթերը, մաքսային ստացականները, կօմիսիօներական հրամանագրերը բոլորը պատկանում էին մոլլայի ասետրական տան և անգայման տպրանքները մաել էին նըրանց վաճառատունը: Այս հաստատութիւնները վաւերանալուց յետո, քարգուղարը երբ կարողացաւ պայմանաւորւթիւն մոլլայի ժառանգների հետ, ստացաւ կանխավճար 10%-ը, ամ-

բողջ երեք տարի կօնսուլատին թախանձեց, խնդրեց գործը հաշտութեամբ վերջացնելու: Ա'չ սպառնալիք, ոչ բողոք, ոչ էլ խնդիրը չեր ուզում լսել քարգուզարը, աղերսում էր կօնսուլից—խնդիրը հաւտուրեամբ վերջացնել եւ երկու հազար լիրայով հաւտւել: Փոխանակ կօնսուլը ստիպելու, որ մոլլայի ժառանգները 10 հազար լիրան հինգ տարւան տոկսով վճարեն, նաև էլ մոլորեց քարգուզարի նենգտմիա քարսղներով և սկսեց պահանջատէրին յորդորել, ստիպել. որ համաձայնի երկու հազար լիրայով: Առարկում էր, թէ մոլլայի ժառանգներին չի կարող կառավարութիւնը ճնշել, թէ նրանք ոշինչ չունին, իսկ անշարժ կայրերը ծախած ու բաժանած են ժառանգները, թէ գանկատը ապացուցւած չէ և ուրիշ սպառնալիքները: Քարգուզարը տարաւ յազթանակը, վաճառատունը կորցրեց մօտ 7500 լիրա զրամազլիսից, 5 հազար լիրա առկոսը: Իսկ քարգուզարը, ինչպէս պատմում էր մոլլայի ժառանգների հաւտատարմատար ազգականը, այս գործից կերել էր մօտ երեք հազար լիրա, բացի զիւանատան պաշտօնակաների բաժնից:

թ. 1882 թւականից մինչև 1893 թւականը ոսւստհատակ 8էր Դադարեանց ժառանգների պահանջը, 7000 թուման գանձելու համար, Սօւշ-բուլազ նահանգի Հաջի-Հասան զիւղը քարգուզարից տամներիու հրաւիրակ պաշտօնեաներ էին ուղարկել, որ զիւղի տիրոջ բռնի թաւրիկ ըերեն, նրա պարագը վերջացնելու համար: Գիւղատէր քորդ աղան զիւանատար հաստիած էր մի կամաց պահանջի շահելու համար գանձարէից 1893 թ. զահաժառանգից պաշտօնական ուղարկեց, որ անսպայման գտնի ու բերէ քորդին: Արգէն քուրզը յուսահատւել էր տասը տարւան քարգուզարի և նրա պաշտօնականի խարէութիւններից, զիւկել էր տառներիու տարւան եկամուտից, տառնց բան շահելու, իսկ գանձառանգի պաշտօնականից ահաբեկ, իսկապէս փախել էր անցուսպ յեռնականների մէջ: Վերջապէս վստահելով իմ հրաւիրական նամակին, ուրիշ պարտապանների հետ կայացըստու զիջող համաձայնութիւններից խրախուսւած, եկաւ ինձ մօտ գործը խաղաղութեամբ վերջացնելու: Առաջարկեցի կալւածքի կէս բաժինը թողնել պահանջատէրս իշխանութեան տակ քառասուն տարի, մինչև պարագի առկոսիքով վճարւելը և բաւոկանանու միւս կիսով, առանց զրկելու հայրենի ժա-

ընկնի զէպի Թաւրիդ: Քուրզը համոզւած էր, որ այնուեղ քարգուզարը նրան շպիտի կարողանար պաշտպանել, անձարցած բանախց ու տանջանիրից ազգաւունելու համար կարածքը պիտի ծախւէր: Աւստի աղերսում էր հրաւիրակին իրեն օգնել: Տասը տարի շաբունակ չորս զիւղի եկամուտը քուրդ աղան ուսիցնում էր հրաւիրակի ձեռքով քարգուզարին, որպէսզի մի կերպ գործը ձգձգեն և նրան պարտքից աղան: Գիւղից պաշտօնականը տարեկան ստանում էր մօտ հազար թուման, որի կէսից աւելին ուղարկում էր մեծառորին: Մեծառորի հետ ստացած և բաժանած եկամուտի մասին մասնաւոր թղթեակցութիւն էր պահում պաշտօնեան, իսկ պաշտօնապէս գրում էր, թէ զիւղատէրը փախել է Մանգուբ կամ Գուրզի քուրդ լեռնականների մէջ, սպասում է վերադարձին, կամ մարդիկ է ուղարկել, որ նրան համոզին, բերեն և շուտով կվերադառնա պարտապանի հետ: Քարգուզարը այս թղթերով խարում էր կօնսուլին և ձգձգում գործը: Վերջապէս 1893 թ. զահաժառանգից պաշտօնական ուղարկեց, որ անսպայման գտնի ու բերէ քորդին: Արգէն քուրզը յուսահատւել էր տասը տարւան քարգուզարի և նրա պաշտօնականի խարէութիւններից, զիւկել էր տառներիու տարւան եկամուտից, տառնց բան շահելու, իսկ գանձառանգի պաշտօնականից ահաբեկ, իսկապէս փախել էր անցուսպ յեռնականների մէջ: Վերջապէս վստահելով իմ հրաւիրական նամակին, ուրիշ պարտապանների հետ կայացըստու զիջող համաձայնութիւններից խրախուսւած, եկաւ ինձ մօտ գործը խաղաղութեամբ վերջացնելու: Առաջարկեցի կալւածքի կէս բաժինը թողնել պահանջատէրս իշխանութեան տակ քառասուն տարի, մինչև պարագի առկոսիքով վճարւելը և բաւոկանանու միւս կիսով, առանց զրկելու հայրենի ժա-

սանդութիւնից: Համաձայն տրակտատի պիտի 12% վճարէ պարտապանը, բայց եռ միագլուխ 6% հաշւեցի, պարաքը դարձաւ մօտ 16,000 թուման, որը 6% ով տարեկան մօտ հազար թուման շահ պիտի տար: Եսկ կայքը որքան լաւ բարեկարգէք, տարեկան հազիւ 1500 թուման բերէք, այն էլ Պարսկաստանում: Քուրզը չզիջաւ քսան տարուց աւել թողնել կէս կայքը պարտափրոջ իշխանութեան տակ, ուստի գնաց, մտաւ միւջթէնիդ Զաւադ ազաի տունը, տապատանեց: Եսկ քարզուղարը չէք ցանկանում կայքը քառասուն տարսի թսղնել օտարի ձեռքը, սահպում էք ծախել կէսը և պարտքը վճարել:

Ամբողջ երկու տարի տանջւելուց յետո, քուրզը ծախեց կալւածքի կէսը տաս հազար թումանի, որ պարտքից աղատուի: Քարզուղարը զրամները իւր իշխանութեան տակն առնելուց յետո, սկսեց կօնսուլատին թախանձել, որ ինձ վերա ձնշում գործ զնեն և գործը վերջացնեն չորս հազար թումանի: Երբ եռ մերժեցի կօնսուլի և զեսպահատան առաջարկները, քարզուղարը անձարացած բարձրացրեց առաջարկը հինգ և վերջապէս վեց հազարի: Ես ժխտում էին ամէն առաջարկ, պահանջում էի 15 հազար: Ցանկարծ քարզուղարը պաշտօնանկ եղաւ, քիչ էք մնում այդ գումարը ամբողջապէս կուլ տա, ուստի քուրզը և կալւածքի կէսի գնողը դարձեալ ինձ դիմեցին և եռ վերջացրի 7750 թումանով, որը կօնսուլատ մացրին, աղատեցին գրաւականը, իսկ քարզուղարը կերաւ աւելեալ 2250 թումանը: Եթէ մտնրամասն հաշւենք, տառնեշորս տարւան ընթացքում քարզուղարն ու արբանեակները քրգից աւելի քան 15 հազար թուման էին կերել, բացի նրան տած տանջանքները: Գործն այնակ հասաւ, որ քուրզը կարտծէի երեք քառորդից զրկեց և այսօր տպրում

է մի քառորդում:

Գ. 1900 թւականին ամառը մի առաւօտ վաղ գնացել էի քարզուղարի մօտ, որը բաղնիս էր գնացել և սա պարաւորւած էի զիւանտանը սպասել մինչեւ վերադարձը: Ամբողջ զիւանտանը բանւած էր ինչպէս ծառայողներից, նոյնպէս և բողոքողներից: Քարզուղարը ներս մտաւ պաշտօնատան պարակնը ահազին գոռում զոշումով: Ուշքու զբաւեց նրա անտեղի աղաղակները և սկսեցի զիւել լուսամուտից ու լըսել: Նա անվերջ զոռում էր.

— Ո՞ւր է այդ Ղարաբաղցին—Քէլվանցին, հայր համարձակւի իոլամի իմամգաղենեւին (սէլիզներին) ծեծել. բերէք, շուտ բերէք: Կաւթում կանգնած, բերել տւեց ճիպոնները: առաջ եկան դահիճները և զուրս բերին ինձ ծանօթ Տէր-Գրիգորեանցին, որը յայտնի արտահանութեան տուն ուներ Թաւրիզում և պասկացրին, Փալախկա զըին: Խսկոյն աեղիցս թուա, մինչեւ սանդուխներից իջնելս և գաւիթ հասնելս, արգէն 4—5 հարւած հասցըին Տէր-Գրիգորեանցի ուարիբին: Խսկոյն առաջ գնացի, մօտեցաւ և խնդրեցի քարզուղարից, որ ինձ բաշխէ յանցաւորին:

— Գուք մեր ներքին գործերին միք միջամտի, առայդարացած քարզուղարը, սա սէլիզի է ծեծել:

— Ես աչ թէ միջամտում, այլ խնդրում եմ, տսացի, որ վաճառականի հետ այդպէս կոպիտ շվարտիք, զբանից ձեզ կարող է մնաս գալ:

Քարզուղարը զայրացած հրամայեց շարունակել ծեծը, բայց օգնականը ականջից ինչ որ փսխուց և արձակեցին: Խսկոյն Տէր-Գրիգորեանը բողոք ներկայացրեց Նիղամի-Սալթանէ, կասավարչափետին և Գահաժառանդ իշխանին: Քարզուղարը երկուղից ուրացաւ, որ ծեծել է տւել Տէր-Գրիգոր-

հանցին և ինձ մօտ երեք անգամ ըրգուն, աներորդուն և օգնականին խնդրանքի էր սովարկել, որ ես ցուցում շտամ, Գործը մեծացաւ, Թէհրանից Սաղբ-Եղամը և արտաքին զործերի մինիստրը ստիպեցին, որ քարպուզարը դնա Տէր-Գրի-զորեանցի տունը ներոգութիւն խնդրէ և սիրու շահի: Այդպիս էլ եղաւ, զես մի բարս տալ էլ նույր աւեց, որ զործը հաշտութեամբ վերջացաւ: Խոկ այսպիսի մի վճիռ ձեռք բերելու համար, ամբողջ մի տարի խնդրազրեք արւեցաւ և մօտ հաղար թուման ծախսի տակ ընկաւ Տէր-Գրիզորեանը, որը ոչ միայն Սէրփի չէր ծեծել, այլ Սէրփի երեսն էլ կեանքում չէր տեսել:

27. Քարպուզարից պակաս չեն կեղեքում սէրփէրէսաները գտաւաներում: Վերջին տասնենինգ տարւա լինթացրում սէրփէրէսաները, օգտուելով հայկական հայդուկների խմբումներից, տարեցարի քարպուզարական տարեկան վճարը-վէշքաշը աւելացնելով, հինգ հարիւր թումանից հասցրին հինգ հաղար թումանի: Սալմաստի սէրփէրէսաը բացի այս հինգ հաղար թումանից, կանխանգամ է տալիս քարպուզարին և փիշիքարին հրովարտակի համար, մօտ մի հաղար թուման: Պրակչողի բարձր իշխանութեան հասցրած բողոքազների պատճառով շուտով պաշտօնանկ չգառնա, նա փիշիքարի, քարպուզարի և կօնսուլտաների աւագ միջրաներին (քարտուզար) ամսավճար է տալիս, իւրաքանչիւրին ոչ պակաս 25 թուման, բոլորին տարեկան 1200 թուման: Սէրփէրաստը իւր անձնական ծախսի, ընտանիքի ապրուստ տարեկան վճարում է սոնտազը երեք հաղար թուման: Սէրփէրէսաի քսանի շափ զրագիր, սպասաւոր ձիաւոր և ֆարբաները առնեափն ամէն մէկը տարեկան 3—500 թուման, բոլորը միտուին ութ հաղար թուման սորպերում են թշւառ Սալմաստեցուց, որոնք

բոլոր այս ծախսերը, մօտասորապէս 18 հազար թուման վճարում են: Եյս պատկառելի զումարը ահա տասնընինդ տարի է, որ վճարում է Սալմաստեցին, որի ծանրութիւնից ընկածած շատերը գաղթում, փախչում են իրենց ծննդավայրից: Դնու չեմ յիշում այն սպանութիւնների, տոհանգումների, պղծութիւնների մասին Սէրփէրէսաի և քարպուզարի ստացած արտաքս կարգի կաշանները, վէշքեանները, որոնք կործանում են թշւառ շնուրանին, որը տարեկան դարձեալ 4-5 հազար թումանի են հասնում: Այս էլ պիտի իմանայ, որ Սալմաստում 1800 տուն հայ կա, որա կիսից պակաս էլ Ըսուրի և այս 20 հազար թումանը վճարում են մեծ մասմբ շարատանի հայերը:

28. Ընդհանրապէս քարպուզարաթում էլ զործեր շի վըճառում, սրովհետեւ վճարի խոյս է տալիս քարպուզարը, քանի որ վճիռը յանկարծ կարող է բողոքի տարեկա զառնալ կօնսուլտափի ներկայացուցչի համար, որից կարող են ընդհարւիլ: Եյս պատճառով զարծերը քննում են, փառտերը լոււմ են, դոկումէնտները ուսումնասիրում են և ապա փոխարձ զիջապութիւններ անել տալով, հաշտութեան վճիռ են կայացնում: Միշտ այնպիսի սրոշում է կայանում, որ էլ ոչ մի կողմը չկարողանա բողոքել: Խոկ քարպուզարը ընդհանրապէս աշխատում է զարծերը որիէ պատրակավ ընդհատել, որպէս զի միջոց ունենա պարսկահպատակի հետ առանձին տեսնել, պայմանաւորել և սպարացնել խօսելիքն ու բռնելիք ընթացքը: Քատավարութեան ժամանակ այնքան կեղծել, փոխել, ծռմռել են վճիռների արձագրութիւնները, որ այժմ կօնսույնների միջրաներն են (քարտուզար պարսիկ) գրում զատավարութեան արձանագրութիւնը, որոնց հետ զագընթաց նստած քարպուզարի միրզան բառ առ բառ արտազը

րում է կօնսուլի միբզափ ձեսազբից: Դատը քննում ու արձանագրում՝ ին կսղմերի ներկայութեան, սրսնք ներկայացնում ին իրենց վասահը զբաւոր: Թուրքմանչայի դաշնագրի դօրութեամբ օտարահպատակների զործերի քննութեան ժամանակ զոկումնաների զբա ևն հաստատելու ամէն բան, բերանացի վկառութիւն շեն ընդունում:

29. Քարգուզարի պաշտօնին ու զիրքին թէկ շատ խստո աշքով են նայում Ատրպատականի փիշիքեարը, նահանգապետները, մանաւանդ միւջթէհիգները, նախանձում ին նըստ եկամուտի, մանաւանդ զիրքի զբա, բայց սրսնք էլ նըստից պակաս շեն կեղեքում իրենց ստորագրեալ թշւաս ժողովուրդին: Ամէն մի քրէական զործից աշխատում ին օգտել չաքիմները, փիշիքեարը և միւջթէհիգները, սրսնք արնում են իրար ձեռքից խլել զործերը և իրենց ատեաններում դատել: Եթէ քարգուզարը անկարող է, զիրքը բարձր պահել չգիտէ, փիշիքարը, միւջթէհիգները և նահանգապեանները միջամտում են քրիստոնեաների, նոյն իսկ օտարականների զործերին և առիւծի մասը յափշտակում են քարգուզարի ճիբաններից: Եթէ քարգուզարը զօրեղ է, մանաւանդ եթէ թիկունք ունի զահաժառանգից ու մինիստր նախադադանսներից շըջանում, այս զէպրում նա շէղորացնում է բոլորին, մենակ իւրացնում է հասոյթը: Բայց և այնպէս զանկատաւորները եթէ ճնշում են, զիմում են միւմներին, այս զէպրում նըստ էլ բաժ է հասնում ընդհանուր աւարից: Գործերը իրենց ատեանները քաշելու, կամ ընթացքին միջամտելու օգտելու համար մեծ կոիւ կա փիշիքարի, միւջթէհիգների և քարգուզարի մէջ, այնպէս որ հետահո քարգուզարը միշտ շահում է բոլորին, մանաւանդ միւջթէհիգների ախունդների: Խոյի հարիմը չաջի-Սատդիւլ-

Միւլը միջամտել էր Արմասար Ալրփէլսարի իշխանութեան տակ ապրող Գանձակեցի թուրքերի խնդրին, որի ֆարբաշները կողոպտել էին Գանձակեցիների (սուսահպատակ) տունը: Արտկողի ընդմիշտ նահանգապեաններին չէզգրացնի, Ատրպատականի քարգուզարը միացաւ կօնսուլի հետ, պնդեց և 2—3 հազար թուման փող առաւ չաջի-Սատդիւլ-Միւլից յօպուտ Գանձակեցիների, սրով քարգուզարը իւր իշխանութեան զեմակը ութիւնը ցոյց տվեց Ատրպատականի բոլոր պաշտօնեկաններին, որից սկսան ակնածել և հեռու փոխչել:

30. Արքան զործ սր մանի քարգուզարի, կամ սէրփէլստի զիւանատունը, քառասուն անգամ աւելի զործ է ընկնամ փիշիքարի և նահանգապետների ճանկը, քանի որ ներքին միւլիմանների զործերին քարգուզարները միջամտելու արտօնութիւն չունին: Փիշիքարի և նահանգապետների զիւանատուն մտած զործերից 90 տոկոսը կալւածական ինդիր է, մնացեալը քրէտկան և սնանկութեան: Քրէական զործերը բոլորն էլ վճռահատում են նահանգապետները և փիշիքարը իրենց հայեցողութեամբ, պատիմները անգութ են, տուգանքները անսահման: Ենչպէս փիշիքարը, նոյնպէս նահանգապետները լիազօր են չարագործներին կախելու, թնդանօթի բերան դնելու, մօրթելու, գնդակահար անելու կամ անդամահատութեան ենթարկելու, զատապարտածի ինչը զրաւելով: Պէտք է խոսավանուծ, որ իբենց իշխանութիւնը չարաշար շեն զործազրաւմ աղմինիստրատորները, տւելի ձըգտում են կողոպտել չարագործի ընտանիքին, ազգականներին, փրկանքով մահան պատճից ազատել նըստ: Պատիմների շափր, սահմանը, ահսակը որոշ օքէնքներով չի սահմանած, կախում աւնի նահանգապետի կամ փիշիքարի կամքից: Թէկ սրանք պատիմը զործազրաւմ կամքութիւնը պատճ երբեմն դիմում են չէ-

բիաթի վճռին, միւջթէնիզներից օրինական որոշաւումն են բատանում, բայց այս որոշումը այնքան էլ պարտաւորեցացիչ չէ, քանի որ նահանգապետների կամքից է կախած իրենց ցանկացած գոյնը առև ոճին: Երբեմն պատնկութեան, զողութեան, աւաղակութեան համար մի դատարկապորափ մօրթել, սպանել են տալիս, երբեմն էլ արինարբու հրէնիերին իրենց կատարած մի քանի արինահեղութիւնների համար երեք չորս տարւոն բանտարկութեամբ ապաշխարեցնում և բաց են թողնում: Ամէնից շատ մանւան դատապարտում են այն աւաղակներին, կամ էլ—աղաներին (համայնական առաջնորդ) սրոնք ապսաւամբում են, իշխանութեան դէմ զէնք են բարձրացնում: Ոյժ, հովանաւոր, մանւաւանգ փող ունեցող ոճրազործը ամէն տեսակ պատժից, պատասխանաւութիւնից կարող է ազատւել, բաւականացնելով դատաւորի ընչաքաղցութիւնը:

31. Ամէնից կենոսա գործերը Պարսկաստանում կարածական վէճերն են, որոնց պանկատները երբեմն մի քանի տասնեակ, նոյն իսկ զար է առաւմ: Թէի ըստ չէրիտթի շիան, իրաւոնք շանի յափշտակած կալւածքի եկամուտը ուտելու, իւրացնելու, որեէ խարէւութեամբ, բանի և կիզծումներով խւած կայքի տիրոջ ազօթքն անընդունելի է, ծոմը ապօրինի, կինը թողնուած, ծնւած զաւակները պառնկորդի, ինքն էլ իսլամի համայնքից արագուած է համարւում, զրկւելու է ինչպէս այս, նոյնու յաւիտենականութեան մէջ միւլիմանների համար պատրստած երանութիւններից. բայց ամրոջ Սարպատականում չի կարելի զնել որեէ կայք քաղաքներում թէ գիւղերում, որի տէրը այշ ձեռք բերած լինի արդար ճանապարհով կամ տիրոջ յօժար կամքով, բոլորն էլ յափշտակութիւններ են իրարից խլած: Անցեալ դարերում միծ կալւա-

ծատէրները իրենց յափշտակած կայքերը ուրիշի կամայական յափշտակութիւններից ազատելու համար, «Էվլադի-Վագֆ»-ին էին յատկացրել, որին օրէնքի համաձայն չի կարող մօտենալ որեէ իշխանութիւն: «Էվլադի-Վագֆ» կոչում են այն կալւածները, որոնց տէրերը կտակով իրենց կալւածքի հասոյթի որեէ մասը յատկացնում են սրոց մզկիթների առաջնորդ ախունդների թոշակին, կամ մեղրէսէների (դպրոցի) ուսուցիչներին, որովէսզի գրանք ապահովւած իրենց պաշտօնը, ժողովուրդի դատերը, կիթուութիւնը անվճար կատարեն և անկախ կեանք վարելով արդարութեան շաղի վրա կանգնած մարտնչին անիրաւ զատաւորների զէմ: Կալւածատէրը կտակելով կալւածքի եկամուտի ½ կամ որեէ աւելի նւազ մտաց այսպիսի բարենպատակ կրօնուական հաստատութեան, կատակի քողի տակ ձգաւում է աղանովել իւր սերունդի ապազան, նրանց զորքի անձեռնմխելիութիւնը, քանի որ «Էվլադի-Վագֆի» կալւածների կառավարութիւնը (միթէվէլիութիւնը) մընում է ընդմիշտ կտակովի արու զաւակներին յաջորդաբար, որոնք իւրացնելով եկամուտի մեծազոյն մասը, փշրանքը թափում են ախունդներին: Խոլամական հիմնական օրէնքով «Էվլադի-Վագֆ» հրատարակւած կալւածքը շի կարելի ծալել, փոխել, զբաւ զնել կամ բաժանել, որով յաջորդների ժառանգների պարտքի, յանցանքի կամ որեէ ուրիշ պատճառով անհնար է իւր, զբաւել, յափշտակել կալւածը անսահման ժամանակական անգամ անգամ յափշտակած և կեզ ծուժներով օտարացած «Էվլադի-Վագֆ» կայքը դարձնում է օրինական ժառանգներին: «Էվլադի-Վագֆ» հրատարակւում է կալւածատիրոջ կամքով, հոգիսրականութեան վճառվ և խալիքի, կամ շահի հրաժարականի, որով կալւածքը անձեռնմրելի ժառանգական է զառնում: Թէի Առարպատականի կալւածի

ւածներից—զիւղերից մեծագոյն մասը եղել է «Եվլադի-Վազգի», բայց վերջին 25-30 տարւու ընթացքում գրանց մեծագոյն մասը ծախւել, յափշտակել ճանաւորւել են և աչ ինկ երկու տոկոսը մնացել է «Վազգի»։ Մի յայտնի վեղիր Դիմիել անունով պրանից երկու դար առաջ կտակած «Եվլադի-Վազգի» երեք հարիւր վաթուն զիւղից այսօր միայն տասներկուուն է մնացել ժառանգների ձեռքին, այս էլ շընորհիւ Խուսահպատակ եղր, Նազարբէգեանների և Զարգարեանների, որոնք սրանից 40 տարի առաջ դիւանխանելում հաստատած կապալագիրների ուժով ստիպել են կառավարութեան-քարգուզարին յարգելու իրենց հաստատած պայմանագիրը, տպա թէ աչ, այս տասներկու զիւղերն էլ վազուց ծախծիւած և փոփոխւած էին։ Սրանից հինգ տարի առաջ Թաւրիկի երկու յայտնի միջթէհիգներ իրար զէմ կոիւ էին վարում այս «Դիմիչկիէ» Վազգի Քիւր զիւղի համար, ձգտում էին իրար ձեռքից յափշտակել, որոնցից մէկը շատ շնչին գնուվ իւրացըք այդ կարւածքը, ընդդէմ չէրիի օրէնքներին։

32. Ամէն մի կալւածատէր իրանում հաստատ համոզւած է, որ իւր իշխանութեան տակ գտնւած (թէսսարուֆ) կալւածները ինքը յափշտակել, իւրացըքը է նենգութեամբ, իւարգախութեամբ և բանութեամբ։ Այս հիման վրա բոլորի խզի վրա ծանրացած է ապաստի նման այն բռոր, թէ իրենք դուրս են գտնւում իսլամի զասից, իրենց ծոմն ու աղօթքը, բարեկարծութիւնն ու ոգորմութիւնը ընդունելի չեն, կանաքը թողնւած և զաւակները պառնկարդի են։ Բայց միիթարում են միայն այն մաքսով, որ ամբողջ երկիրը իրենց համանմաններն են յափշտակած, այս պատճառով աշխատում են խղճերը թեթեացնել, կամ համանմանների հետ չէնքնիմ ուրիշելուր աշնորհ առաջարկում։ Ասինք կալւածատէրը

ներից շատերը, սկսուծ միւջին էնիրներից, խաւանից մինչեւ վերջին սարբաֆն ու վաճառականը անհաւատ են, նրանք ժըլտում են ամէն սըրութիւնը և կատարում են ծիսական աղօթքները, իսլամական ծիսակատարութիւնները լոկ ձեի կամ քարիզմական ուժուուց աղատ մնայու համար է։ Ամէն կալւածատէրաշքի առաջ ունենալու իւր կատարած յափշտակութիւնները, չի կարսոց հաստատ համոզւած լինել, որ ձեռքում զանուած (թէսսարուֆ) կալւածները իր անձանմիների սիփականութիւնն է։ Որիէ յափշտակուդի ձեռքից մի յանկաբծական հրամանով, կամ կառավարչական վճոսով քաշում, խլում են զիւղը, յանձնում են մի ուրիշին։ Այս պատճառով կալւածատէրը զիւղը ցերեկ ուշխատում է անխղելի կապերով միանալ իւր հսկանաւորի հետ և սիրաշանի հաճանգապետ-կատարուին, կամ միջթէհիգին։ Արտէսզի չփանցէ իւր կարսութիւնը։ Միայն կառավարութիւնը և միջթէհիգները չեն սպանում կալւածատէրոջ, զեռ մինչեւ անգամ որիէ ըմբոստ խանքէզ, որ ապստամբել է իշխանութեան զէմ, չի հպատակուած կառավարութեան, ինչպէս Զարգաղի Բահմիմ-խանը, Մուղանցի Խոսրով-խանը, մանում է որիէ զիւղ և իւրացնում է կալւածքը, տասը, քսան տարի չի զուրս զալիս այսպիսի յափշտակութիւնից։ Պարսկական զօրավար Սիւլէյման խանը անցեալ զարում վաթսուն տարի Սիշարի զօրքերի հրամանակալութիւնը իւրացնելով, բռնութեամբ յափշտակեց մօտ հարիւր զիւղ, որոնցից մեծագոյն մասը «Վազգիներ» էին, որոնց ժառանգները մինչեւ այսօր բողոքները շարունակում են Սիւլէյման խանի ժառանգների զէմ։ Կալւածների հասոյթը կլանում են Սիւլէյման խանի թոռները, իսկ «Եվլադի-Վազգի» միւթէվէլի սէիզները իւրաւազուրկ չափչփում են դատաւորների զաները, արգարաւութիւնն են որոնում։

33. Եղանում ոչ մի վճիռ չի կարելի վերջնական համարել, եթէ հիմնած է որիէ սխալանքի վրա, նրա զէմ կարելն է բազոքի տասը, քանի, յիսուն տարի յետո, երբ պարզի սխալանքը, և ստիպել զատաւորներին նորից քննել ու վճաել: Այս մի հահանգապետ-զատաւորը լիտոր է իր նախորդի վճիռները նորից քննելու, եթէ այդ պահանջում է կողմերից որիէ մէկը, բհկանելու և փօխելու, եթէ զրական փաստ ներկայանա: Այնպէս որ՝ մի զատաւորի վճաւածը երկրորդը բեկում է, երբորդը նորից վաւերացնում, չըսրպը հիմքից փոփախում է և շարունակաբար: Բաւական է որ զատաւորը դանկատուած, նա պատասխանատին պարտաւոր է կանչել, կողմերի թղթերն ու քաւեկերը քննել, խուզարկել և հնար մտածել միջից օգուտ զուրս բերելու: Տկարի, անփողի բողոքը միամարտական խօսքից, օգային յոյսերից աւելի բաւարարութիւն չի կարող ստանալ, բայց նա միջաց է զատաւորի ձեռքում ճնշելու յափշտակողին և թեթեացնելու նրա զրպանները: Քսաներեսուն տարի շարունակաբար յափշտակուած զիւղերի եկամուաները անփերջ բողոքների տուածն տանելու համար վճարւում են զատաւորներին, մինչեւ խօսքա յուսահատուունները:

34. Ուժեղները ոչ միայն յափշտակում են թոյլերի կարուածները, այլ խիզճը այնպէս է թուել խանի, սարբաթի ու վաճառականի սրտից, որ զրկում են նոյնպէս հարսնաւ եղբայրներին, քոյլերին, մայլերին, հօրեղոր զաւակներին և թուռներին, այնպէս որ՝ ոյժը շափազը, զօրութեան վրա վըստահացողը, հովանաւորից տպահովածը անխնա զբկում է նոյնպէս մերձաւորին, ինչպէս կողոպտում է զբացուն և օտարականին ինքանից մորմորացողները, հարսնաւուների մեքենայու-

թիւններից թակարթւածները, հայրենի ժառանգութիւնից զբկուածները գնուում, մանում են ամենազօրիղ միւջթէհիզի հովանու ատկ-տպաստանի: Տասնեակ տարով յամառ կուից խոցուած-վիրաւորւածները, յուսահատ-ընկճւածները անվերջ թախանձանքներով վերջապէս կարողանում են զիջել տալ միւջթէհիզներին պաշտպան հանգիսանալ իրենց արդար զանկատին: Միւջթէհիզը քննում է զործը, փառաերը, զսկումէնաները, ուսումնասիրում է խնդիրը, պատրաստում է կարեսը վկայականները, բանակցութեան մէջ է մանում նահանգապետի, կամ կառավարչապետի հետ, համաձայնութիւնը, կապակցութիւնը կայացնում է, և երբ պատեհ առիթը հանուում է, ստիգում է յուսակուը ապաստանողին իւր անւանը փոխանցել վիճելի կայքը, կամ բաժինը: Վիրաւը զանկատաւորը այրւած որոշով, ապագային իրեն խօսքա սպառնացող վատանգն անդամ նախատեսած, զոնէ վրէժը լուծելու տենչով, կնքում է վաճառման պայմանապիրը, վաւերացնել է տալիս ուրիշ կղերականի և միւջթէհիզը իր սպասաւոր սէիզներին ու ձիաւորներին ուղարկում է վիճելի կալւուծքը զրաւելու: Սրանք զրաւում են ոչ միայն վիճելի կայքի պահանջաւած մասը, այլ տիրում են ամբողջապէս: Այս զէպը համոզում է բռնաւոր յափշտակիչին, որ նա մեծաւոր իշխանութիւնից պիտի յուրը կարէ, քանի որ միւջթէհիզը առանց կանխաւոր ներքին համաձայնութեան չէր յանգինի այդ խիստ միջոցին զիմելու: Եթէ բարձրագոյն իշխանութիւնից, կամ հսկանաւորից օկնութեան յօյսը կարում է, նա անձամբ զիմում է միւջթէհիզի զուուը, նախատեսմ, երբեմն թակում էլ է և ապա հաշտութիւնը կայանում է վերադարձնելով անիրաւի իւրացըրածը: Այսպէսով կալւուծքը զուրս է զալիս արջի ճիրանից, ընկնում է վազրի ճանկը:

35. Միջթէնիզը երկու երեք տարի զիւղի հասոյթից մաս տալիս է հալածական զբկւածին, հետզհետև, կրծատում և մի որ պատասխանում է, որ արդէն նրա հաշիւը փակւած է: Այսուել արդէն հրամայում է զբազրին, որ հաշի մանրամատնութիւնը ներկայացնէ զբկւածին, որը կարգում է եղած ծախսերը, վճարւած կաշառները, դատավարութիւնը և դատաստանական ծախսերը, նրան տրւած նպասաները և զիւղի գնից դուրս գալով այս վճարումները դեռ մի բան էլ պարագ է մնում չարատանչ գանկատաւորը: Երկար բարակ քարոզներից, միջթէնիզին շրջապատող թալարաների թախանձանքից ստիպած գանկատաւորը խսդառ զրկում է զիւղից, թողնելով այդ յօպուտ միւջթէնիզի: Զեռաց ծախոփ հինգ տասը թուման ստանալով, հրապարակով իւր հաճութիւնն էլ յայտնում է, որ նա լիսկին ստացել է բաւականութիւնը, հեռանում է քաղցած ընտանիքի մօտ, հայհոյելով բաղզին էլ, միջթէնիզին էլ, չէրիաթին էլ, զրքին էլ և յուստատութեան մէջ կամ խելագարւում է, կամ ցնորսում: Միջթէնիզը այս խաղով խիզն էլ է խաղաղացնում, շրջապատուների առաջ արգարացնում է իւր արարը և համարձակ հետեւրզներին առած գնում է մղկիթ աղօթելու, ցանկալով Ալլահին էլ խարել: Խնչպէս հաւատացնում են, միջթէնիզների զիւղերի մեծագոյն մասը այսպէս յափշատկողներից յափշտակւած կարւածներից է կաղմւած: Ուրիշ կերպ չի էլ կարելի մտածել, քանի որ քսան տարւան ընթացքում միջթէնիզները ուզգակի եկամուտներով չէին կարող հարիւր, հարիւր յիսուն զիւղ սեփականել և ժառանգութիւն թողնել ճեաերին: Այսուտ Առաքատականի կարւածտէր միջթէնիզները ժառանգութիւն կամ ընաւ չեն ստացել, կամ մի երկու զիւղ են ստացել: Միջթէնիզները եթէ այսպէս են վարւածականի:

Ենչ ընթացքով են կուտակել սեղանաւորները, վաճառականները և խաները իրենց հարփերուր զիւղերը՝ ընթերցողը կարող է մակարերել, եթէ ուշազրութեամբ քննէ: Այս էլ պիտի զիւղենալ, որ զիւղատիրութիւնը Առաքատականում դարգացել է և այս ծայրահեղութեան հասել է, վիրջ 30 տարւա ընթացքում, 1870 թւականի սովից յետոյ, որով աշ որ չի կարող պարծի, թէ կարածները իրենք ժառանգութիւն են ստացել ծնողներից, կամ պապերից: Իսկ այսքան կարճ ժամանակամիջացնում այլքան կարւած իւրացնողի բարյականի սահագութեան սահմանը չեմ կարծում, որ մաթեմաթիքական թւերով հնարաւոր լինի հաշւել:

36. Կալուծատիբական այս խայտառակ եղծումները՝ շերիական նորանոր կիզծումներ (Հիլլէի-շէրի) է առաջացրել որոնց մանրամատնութիւնները մեղ շատ հեռու կտաներ նըստակից, ուստի զաղափար տալու համար մի օրինակով ընթերցողին ծահօթացնենք խորամանկ ախունդների այս հանհարամութեան հետ: Վերել յիշեցինք, թէ որեէ հաշտութիւն, համաձայնութիւն կատարելիս, պայմանագիր վաւերացնելիս ախունդը կամ միջթէնիզը կարգում է զուրանից որոշ այտթ (սիզա), որով վաւերացնում է կատարւած գործողութիւն և նրա զէմ որեէ ընթացք ահօրէնութիւն է համարւում: Այդպէս է և ասուտուրի համաձայնութիւնը: Մէկը երբ կարւածք է ծախում, կարւածագիրը վաւերացնելուց առաջ կողմերի համաձայնութիւնը ստանում և ապա աղօթելով կնքում է: Այս աղօթքը կատարելուց յիտո, կարւածքի իշխանութիւնը անցնում է գնողին, համաձայն չէրիաթի, որի անկապտելի սեփականութիւնն է գառնում: Երբ մէկը ճնշւած պարտաւորում է իւր կայքը ապահովցնելու, կամ յափշտակողից ետ ստանալու համար փոխանցել որեէ միջթէնիզի

անւանը, նա նախապէս գնում է իւր տան առաջնորդ, վառահութեանը արժանացած տիտղոսի, կամ միջթէնիդի մօտ, խոսուվանում է վիճակը և կայքը ծախում է կնոջը կամ սրբուն, կամ աղջկան, և կամ որիէ ուրիշի անւան, վաւերացնել է տալիս կարածագիրը սիդայով (աղօթքավ): Այս փաստաթուղթը նոր տիրոջը յանձնելուց մի քանի ժամանակ յետո, երկրորդ կարածագիրը կնքել է տալիս ու յանձնում է միջթէնիդին: Երբ զիւղը յափշտակողից եաւ ստանալով զրաւում է միջթէնիդը, առաջի թղթի աէքը հրապարակ է գալիս և ետ է պահանջում կարածքը: Համաձայն շէրիաթի հին կարածագիրն է տիրում զիւղին, իսկ երկրորդի վրա կարգացւած աղօթքը անզօր է, քանի որ կայքը երկրորդ վաճառման օրը առաջինի սեփականութիւնից դուրս է եկած: Համաձայն շէրիաթի, ճնշւածը անձարացած իւր իրաւունքը ձեւք բերելու համար կարող է կեղծիքի դիմել և նրա արարքը պատճի ենթակա չէ, քանի որ զոյութիւնը պահպանելու համար արարածուատ կեղծելը (թաղվիաթ) պարտաւորեցուցիշ է: Զիարուսը աղանդների հոգեուրականները պաշտպանում են նախկին—հին թւով հաստատուած դոկումէնտի տիրոջը, իսկ եկրորդ տէրը զըկում է: Այնքան այսպիսի կեղծիքներ է կատարել, որ այժմ կարածք զնողը ստիպում է ծախուզին, որ նա կնոջը, զաւակներին և մերձաւորներին ներկայացնի ամունդին, որպէսպի նրանք էլ խոսուվանին. թէ համաձայն են այդ վաճառումին և իրենց կողմից արգելք չկա, որպէսպի եթէ զբանք ունին ներքին ծածուկ կարածագիր, նրա ոյժը ոչնչանա և բողոքելու հնարաւորութիւնից զըկւին: Բայց ճընշւածները այնքան խորամանկացել են, որ նստանոր միջոցներ են հնարում, որ կարողանան բռնակալների և յափշտակիչների դիմակները պատասնեն և զոյութիւնները պահպանեն:

37. Այս պարագաներից ստիպւած, Պասկեիիք գաշնագրութեան մէջ Թուրքմէնչայում 1829 թ. փետրւարին, վաճառականական գաշնագրի 2 յօդւածում որոշեցին, որ երբ սրիէ պարոկանպատակ իւր կալւածքը ծախէ կամ զրաւ զնէ սուսահպատակի մօտ, պարոկական դիւնատունը պիտի քննէ թէ արգելօք կալւածքը ծախւած կամ զրաւական չէ ուրիշի մօտ և ապա հաստատէ: Իսկ կառավարչական այս հաստատութեան գոյութեան դէպքում մոլաների վաւերացրած, միջթէնիդների սիզա կարգացած թղթերը կորցնում են իրենց այժը: Այս դաշնազը օդաւում են բոլոր եւրոպական ազգերը:

38. Պարսկաստանում բազմաթիւ շիտ աղանդաւորներ կան, որոնք իրար դէմ ատելութեամբ են համակւած: Այս աղանդաւորները որքան որ համածւում են, այնքան էլ ատրածւում են: Բոլորն էլ շիտ են հրապարակով, բայց նախտում են իրար ընթացքը: Տիրող կը ծնը, —միթէլէրիները հալուծում են ոչ միայն բարիներին, չաշի-Քէրիմ իսանիներին, Շէլիսիներին, այլ անվերջ նախատաւած Ալիուլահները, Խոմայիլիզները, Սօֆիները, Դաւուզիները, Գորանները և ուրիշները: Բոլոր աղանդաւորների ներկայացուցիչ միջթէնիդները նստում են քաղաքներում և վարում են իրենց հետեւզների գործերը: Ամէն մի աղանդաւոր իր դատասնական գործը իր աղանդապեատին է բերում քննելու ու վճռելու: Տարբեր աղանդաւոր, գանկատաւոր թէ պատասխանատու, աշխատում են զործը իրենց աղանդապեատին հասցնելու, որպէսպի նրա հովանաւորութիւնը վայելին, զործերը շահեն: Դատավարաթեան ընթացքում միջթէնիդները միշտ օգնում են իրենց անձնէր հետեւզներին, որից ծագում է աւելի կատաղի վէճ և սրակալութիւն: Այս դէպքին ընկետածը դիմում է միթէ-

շերի միջթէհիդի հովանաւըստթեան, որի ուժեղ ձայնը խեղում է նոյն խկա արգալութիւնը, քանի որ նրա հետեւը ների թիւը մեծ է, նա ամէնից հզօր է և բռնաւոր, Այս պատճառով աղանդաւորները կապւած են աւելի կառավարչական ծառայողներին, աւելի խսրամանկութեամբ են զործում և յենւելով կառավարչական ուժին, միշտ տապալում են հակառակորդներին: Եյխան չերմ կերպով են ծառայում Ալիուլահիները, Գօրանները, որ մինչեւ անդամ շահի, գահաժառանդի վատահութիւնն են զբաւել և նրանց ուտելիքի, խմելիքի, հազուստի և ուրիշ ծախսերի զսրծերի վերատեսուչների պաշտօնը նրանք են զբաւել:

39. Բայց պարսկական դատարանները, Առավատականում գոյութիւն ունին նոյնպէս օտարականների դատարանները: Ամէն մի պետութեան կօնսուլատը դատում և վճռում է անկախ իւր հպատակների գործերը իրենց երկրի օրէնքների համեմատ, քաղաքական թէ քրէտական: Տարբեր երկրացի օտարականների մէջ եղած գործերը, նոյնպէս վարում են իրանց կօնսուլները, պահանջատէրը և իւր կօնսուլի ներկայացուցիչը գնում են պատասխանատւի կօնսուլատից բարարարութեան վճիռն ստանալու: Կօնսուլները վաւերացում են, հաստատում իրենց հպատակների մատեանները, մուրհակները և պայմանագիրը: Կօնսուլատներն ունին արիթւ, բանտ, գաղանի սստիկանական հսկողութիւն և յանցաւորներին ուղարկում են իրենց հայրենիքի դատարանները դատաւու: Ըրջակա քաղաքներում և աւաններում կօնսուլներն ունին աղէնտներ և կամ վաճառականութիւնը ընտրում է տապ իրենց ներքին զարծերը վարելու, դատելու և պաշտպան հանդիսանալու պարսիկների սանձգութիւնների դէմ:

40. Քրիստոնեա սարսկահպատակները ունին իրենց

եկեղեցական և ժողովրդական ժողովները, որոնք վարում են համայնքի ներքին գործերը հաշտարար որոշումներով: Պատում են զանկատիները, բաժանում են ժառանգութիւնները և վաւերացնում են մուրհակներ և պայմանագրներ: Ատրպատականի Հայերի առաջնորդարանը գործակալական ժողովների արարքը վաւերացնում կամ բեկանումէ, թէ քաղաքացիական, թէ ընտանեկան և թէ նոյն իոկ բըէական գործերը մտնում են օրանց ժողովները, ենթարկում են քննութեան, եթէ կողմերը անպայման համաձայնին կատար ւած որոշումներին: Հակառակ պարագային զարծը հասնում է կառավարութեան և քարգուղարները հարստանալում կողմերի քսակները:

Դատաստանական այս սստիկալի վիճակը անշուշտ ժողովուրդի արգար բողոքին տեղի պիտի տար, տրատնջներն ու մրմունջները պիտի խոռոչէին, ինչպէս յափշտակողների, նոյնպէս պետական բարձր իշխանաւորների հանգիստը: Բայց այնպիսի խոր տգիտութեան մէջ է թագւած երկիրը, որ շորատանջ ժողովուրդը մոլորւել է, առաջնորդող տասք չոնի, որ հետեւ: Կան մի դաս աղքատ կղեր—իւլէմաներ, որոնք անվերջ քարտղներ են կարգում ժողովրդին սթափւելու, աղտաւելու ոչ միայն անիրաւ, կաշառակեր դատաւորներից—քաղաքական թէ կրօնական, այլ թօթափել հողատիրական լոււծը, որը զուրանի և շէրիաթի հակառակ նրա վղին գրւել է ձրիակերների և հարամնորների (հարամ ուտողների) ձեռքով: Ժողովուրդի բերանը այնպէս է վասել ախունդներից և թալարաններից, որ նրանց քարոզութիւնը նպատակի չի հասնում, քանի որ սրանք—անփող կղերը հնարաւոր եղած զէպ-

Քում թշրւակի պատասը կլանելուց չեն խզմահարւում և կայւածներ զբաւելուց չեն երես զարձնում: Եթէ պատահի, որ աղնիւ ընթացքով՝ մի ախունդ կարսղանա զբաւել ժողովրդի սիրտը, սպառնալ միւջթէնիդներին, այն ժամանակ վերջինների զաւավ այգպիսիներին կառավարութիւնը աքսորում է, կամ ոչնչացնում, որպէսզի ամբոխը չկարսղանա խրատ: Իսկ իրենք իրենց ինտելիգենտ համարող երիտասարդ պարսիկները այնքան փոքրաթիւ են, այնքան տգէտ ու ասլիկար, որ բարոյական ուժ չեն ներկայացնում, որ կարսղանան կռիւ զուրս զալ և իրենց փայփայած «Թանգիմ-արը» (թէֆօրմ) պահանջել և ստիպել գործազրելու: Պարսիկ աղմինիստրատորների անսահման իրաւունքները, բարբարոսական պատիժներն ու պատուհասները այնքան զարհուրելի է, որ թոյլ երիտասարդութիւնը չի կարող երկրում զոյտթիւնն անզան ցոյց դնել: Սմբռջ Պարսկաստանի իննը միլիոն ժողովրդի կառավարութիւնը, շահնշահի իշխանութիւնը, չունի նոյն իսկ մի հատ ուսումնաբան, ոչ թէ բարձրագոյն, նոյն իսկ միջնակարգ կամ տարրական, որ կարսղանա կրթել բարոյապէս ազգարնակութիւնը, իսկ ախունդների մզկիթներում աւանդած այրութենով լ'նշ սնունդ պիտի կարսղանա ստանուր մատադ սիրունդը:

Բայց իրանի զատասանական վիճակն այնքան սոսկալի է, քաղաքների միջնակարգ և բանւոր զասը այնպիսի անիրտութիւնների ենթաքրւած է, զբկանքները նրա սրտում այն պիտի խոցեր են զըել, թռքերն այնպէս են վիրաւորել, որ կամա ակամա պիտի ցոյցեր կատարէր և պարտաւորացնէր կառավարութեան դրական օրէնքներ հիմնել և պաշտապանել ժողովրդի շահները բռնաւորների կամայականութիւններից: Եյս ցոյցերը սահպեցին և շահնշահի հրամանով Թէնրանում

կազմւած մասնաժողովը խմբավրում է նոր զատասանական ատեանների օբէնսպրութիւնը: Պէտք է յաւալ, որ կօժիտիւալի երիտասարդ իրաւարան նախագահը Միւշիլ-իւլ-Միւլը, որ աւարտել է Մոռկալայի համալսարանում, այնպիսի միջնաբների կղիմի, որ ազատէ ժողովրդին բռնակալ խաներից, միւջթէնիդներից, արագ, ուզիղ և արդար զատարաններով այնպէս խաղաղացնէ երկիրը, որ ազգաբնակութիւնը պատւած ձրիակեր-յափշտակիշների ճիրաններից, կուտարական կեանքի շրջանը մանի:

ՀՀ-Կ Մայիսի 1906 թ.

Թ Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

2017



